

ԱՎԱԳՅԱՆ Ա.Ռ.



**ԱՐՏԱՍԱՐՄԱՆՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ
ՍՈՑԻԱԼ - ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

ՄԱՍ II

Ա Ս Ի Ա

ԵՐԵՎԱՆ - 2009

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ա.Ռ. ԱՎԱԳՅԱՆ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ
ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍ II

ԱՍԻԱ

ԵՐԵՎԱՆ – 2009

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՀՏԴ 911.3
ԳՄԴ 65.04+26.8
Ա 770

Խմբագիր՝ աշխ. գիտ. թեկն. Գ. ՅՈՎԱՆՆԻՍՅԱՆ
աշխ. գիտ. թեկն. Մ. ԹՈՐՈՍՅԱՆ

ԱՎԱԳՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

Ա 770 Արտասահմանյան երկրների սոցիալ-տնտեսական
աշխարհագրություն, մաս II, Ասիա: – Եր.: ԵՊՀ-ի
հրատ., 2009 թ., 316 էջ+8 էջ ներդիր:

Դասագրքում Ասիան ներկայացված է որպես բնառե-
սուրսային, աշխարհաքաղաքական, սոցիալ-տնտեսական
մեկ ամբողջություն: Առանձին տարածքային միավորների
սոցիալ-տնտեսական զարգացման գործոնների մեջ կա-
րևորություն է տրվել սոցիալական, հոգևոր, բարոյահոգե-
բանական, հումանիստական արժեքներին, մարդու վար-
քին, աշխատանքային կուլտուրայի խնդիրներին:

Նախատեսված է բուհերի աշխարհագրության, տնտե-
սագիտության մասնագիտության ուսանողների համար: Կա-
րող է օգտակար լինել Ասիայի տնտեսությամբ և աշխար-
հագրությամբ հետաքրքրվող ընթերցողներին:

ԵՊՀ Գրադարան



SU0149600

ԳՄԴ 65.04+26.8

ISBN 978-5-8084-1136-4

© Ա.Ռ. Ավագյան, 2009 թ.

© ԵՊՀ հրատարակչություն, 2009 թ.

ԱՌԱՋԱԲԱՆ

Դասագիրքը ստեղծվել է «Տարածաշրջանների և պետությունների սոցիալ-տնտեսական աշխարհագրություն» առարկայի համալսարանական կրթության ծրագրին համապատասխան: Նպատակն է ուսանողներին տալ համակարգված գիտելիքներ երկրագնդի առանձին տարածաշրջանների և ընդհանրապես ամբողջ աշխարհի վերաբերյալ: Սովորեցնել տրամաբանական կապ տեսնել յուրաքանչյուր տարածաշրջանի բնական ներուժի և հասարակական կյանքի զարգացման մակարդակի միջև՝ այդ կապի մեջ կարևորելով մարդու որակական հատկանիշները, աշխատանքային կարողությունները և նորությունները:

Տարածաշրջան հասկացությունը վերցված է ավելի ընդարձակ մասշտաբի մեջ: Տարածաշրջանները առանձին պետությունների խմբեր են, որոնք միավորվում են իրենց բնառեսուրսային ներուժի, աշխատանքային նորությունների, տնտեսության, հասարակական կյանքի կազմակերպման, պատմական զարգացման ընդհանրությունների հիման վրա: Հաշվի է առնված նաև, որ յուրաքանչյուր տարածաշրջան մեկ ընդհանրություն է տնտեսական, սոցիալական զարգացման ներքին խնդիրներով և դրանք միասնական լուծելու անհրաժեշտությամբ:

Տարածաշրջանների սահմանները և կազմը վերցված է ՄԱԿ-ի կողմից ընդունված սխեմայով, ըստ որի Ասիան բաժանվում է հետևյալ տարածաշրջանների՝ Հարավարևմտյան Ասիա, Հարավային Ասիա, Հարավարևելյան Ասիա, Կենտրոնական Ասիա և Արևելյան Ասիա: Մեկ առանձին տարածաշրջան է Ռուսաստանի Դաշնությունը, որի տարածքի, բնառեսուրսային ներուժի գերակշիռ մասը գտնվում է Ասիա աշխարհամասում:

Տարածաշրջանների, դրանց առանձին ենթաշրջանների՝ պետությունների ու ներքին տարածքային միավորների բնութագիրը տրվում է ռեգիոնալ աշխարհագրության սկզբունքներով:

Ռեգիոնալ ուսումնասիրությունը աշխարհագրության կարևորագույն ուղղություններից է, որ հնարավորություն է տալիս հասարակական կյանքի բոլոր դրսևորումները տեսնել մեկ ընդհանրության մեջ, որոշակի տարածքում, որոշակի սահմաններում: Ռեգիոնում հասարակական կյանքի բոլոր բաղադրիչները գտնվում են պատճառա-

հետևանքային կապերի մեջ: Ռեզիդենդ մարդու և բնության փոխհարաբերությունն է, տարածք, ուր մարդը օգտվում է բնության այս կամ այն բաղադրիչներից հասարակական կյանքը կազմակերպելու համար:

Ռեզիդենդ անհատի, ժողովրդի, պետության գոյատևման դաշտն է:

Ռեզիդենդ ուսումնասիրությունները մարդ-մարդ, մարդ-բնություն, մարդ-պետություն փոխհարաբերությունները տեսնում են մեկ միասնության մեջ: Միասնություն, որը ձևավորվում է որոշակի սկզբունքների, որոշակի գործոնների հենքի վրա, միասնություն, որն ունի իր զարգացման մեխանիզմը: Աշխարհագրության խնդիրը այդ մեխանիզմի գիտականորեն հիմնավորված բովանդակության բացահայտումն է:

Աշխարհագրությունը ռեզիդենդ տեսնում է որպես ընդհանրություն, ուր բնության և հասարակական կյանքի բոլոր բաղադրիչները գտնվում են ներդաշնակության մեջ, ուր կան կայուն զարգացման բոլոր պայմանները:

Ռեզիդենդ իր որոշակիությամբ հանդերձ փոխկապակցության մեջ է այլ ռեզիդենդների հետ: Խնդիրը այդ փոխկապակցությունների նպատակային ձևերի բացահայտումն է: Այստեղ արդեն համաշխարհային գործընթացներին ինտեգրվելու, այդ ինտեգրումից առավելագույնը ստանալու խնդիրն է:

Ռեզիդենդ ուսումնասիրությունները (դասընթացը) ուսանողներին հնարավորություն են տալիս որոշակի գիտելիքներ ձեռք բերել աշխարհի առավել դասական ռեզիդենդների վերաբերյալ, համակարգված գիտելիքներ ստանալ համաշխարհային ռեզիդենդ զարգացումների մասին:

- յուրաքանչյուր ռեզիդենդ զարգացումը տեսնել համաշխարհային զարգացումների հենքի վրա,
- ձեռք բերել կարողություններ՝ տեսնելու, բացատրելու առանձին ռեզիդենդների բացառիկությունը,
- տալ ռեզիդենդ բացառիկությունը բնորոշող գործոնների, բաղադրիչների բնութագիրը,
- համեմատության միջոցով կարողանալ գտնել յուրաքանչյուր ռեզիդենդի հասարակական զարգացման ձևը, միտումները,
- տրամաբանության միջոցով ստեղծել ռեզիդենդի մոդելը՝ սկսած բնառեսուրսային, աշխատանքային ներուժից մինչև տնտեսական, սոցիալական կայուն զարգացման վիճակը:

Ռեզիդնալ աշխարհագրություն դասընթացը ինտեգրում, մեկ ընդհանրության է բերում նախորդ ճյուղային դասընթացների ընթացքում ստացած գիտելիքները, ընդարձակում է ուսանողի տեսադաշտը, ուժեղացնում նրա տրամաբանությունը, օգնում է տրամաբանության միջոցով անցում կատարել փաստական և վիճակագրական նյութերի իմացությունից դեպի գիտականը՝ գիտականորեն հիմնավորելու իրերի և երևույթների փոխհարաբերությունները, փոխազդեցությունները, փոխկապակցությունները:

Սույն դասագիրքը արդեն լույս տեսած «Ռեզիդնալ աշխարհագրություն, Եվրոպա, առաջին մաս» գրքի տրամաբանական շարունակությունն է, որը հնարավորություն է տալիս մեկ ընդհանրության բերել Եվրասիա մայրցամաքը:

Դասագրքում տրվում է նաև Ռուսաստանի Դաշնության բնութագիրը, որը բնառեսուրսային կարողությունների, էթնիկական, կրոնական, տնտեսական, սոցիալական առումով կապող օղակ է Եվրոպայի և Ասիայի միջև:

Դասագրքի հեղինակը իր շնորհակալությունն է հայտնում գրքի խմբագիրներ՝ Գ.Յովհաննիսյանին, Մ.Թորոսյանին, Յ.Պետրոսյանին, գրախոսներ Յու.Մուրադյանին, Է.Թումանյանին, համակարգչային ձևավորողներ Մ.Զիքիլիզյանին, Ա.Ոսկանյանին, նկարների ձևավորող Կ.Շախոյանին, որոնց օգնությամբ իրականացվեց գրքի հրատարակումը:

ԱՍԻԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1. ԶԱՂԱԶԱԿԱՆ ԶԱՐՏԵՁԻ ՉԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Ասիայի քաղաքական քարտեզի վրա առանձնանում են 46 ինքնիշխան պետություններ: Այստեղ կա նաև չճանաչված պետությունների խումբ: Դրանց մի մասին ճանաչել են մեկ կամ մի քանի պետություններ, մի մասը հռչակել են իրենց անկախությունը, սակայն դեռևս ոչ մի պետության կողմից չեն ճանաչվել: Չճանաչված (միջազգայնորեն) պետությունների կազմի մեջ են մտնում Աբխազիան, Չարավային Օսեթիան, Լեռնային Ղարաբաղը, Կիպրոսի թուրքական հանրապետությունը, Պաղեստինը: Իրենց անկախության համար են պայքարում քրդերը (Իրաքում և Թուրքիայում), սիկիսերը (Հնդկաստանում), տիբեթցիները (Չինաստանում): Անկախ պետություն է նաև Տայվանը, որը Չինաստանի կողմից չի ընդունվում:

Ասիայի քաղաքական քարտեզը ձևավորվել է պատմական երկարատև ժամանակի ընթացքում: Ընդ որում որոշ պետություններ՝ Հայաստանը, Վրաստանը, Չինաստանը, Հնդկաստանը, Ճապոնիան, Իրանը, Մոնղոլիան, Կորեան, Հնդկաչինի երկրները ձևավորվել են հազարամյակներ առաջ և մինչև այսօր էլ գոյատևում են: Դրանք հնագույն թագավորության (կայսրության) և քաղաքակրթության երկրներ են և իրենց խոր կնիքն են դրել համամարդկային քաղաքակրթության վրա: Արաբները կարողացան ստեղծել իրենց հզոր խալիֆայությունը, որը բնականոն ձևով տրոհվեց և նրա տարածքում ձևավորվեցին Հարավ-արևմտյան Ասիայի արաբական պետությունները: Արաբները Ասիայի մահմեդականացման գլխավոր ռահվիրաններն էին:

Ասիայի թուրքալեզու պետությունների ստեղծման գործում մեծ դեր են ունեցել քոչվոր ցեղերը, թաթար-մոնղոլները: Թափանցելով Փոքր Ասիա և ծուլելով տեղաբնիկներին՝ ստեղծեցին Թուրքիա պետությունը: Եկվորների և տեղաբնիկների միաձուլումից առաջացան Կենտրոնական Ասիայի ժողովուրդները, ավելի ուշ նրանք ստեղծեցին իրենց պետությունները: Ասիայի քաղաքական քարտեզի ձևավորման վրա մեծ ազդեցություն են թողել Մեծ Բրիտանիան, Ֆրան-

սիան, ԱՄՆ-ն, Ռուսաստանը, Նիդերլանդները: Նրանցից յուրաքանչյուրը Ասիայում ունեցել է իր շահերը՝ տիրելու բնառեսուրսային հզոր կարողություններին, աշխատանքային ներուժին, ընդարձակ շուկային: Այսօր էլ Ասիան գերտերությունների աշխարհաքաղաքական հետաքրքրությունների կենտրոնում է: Գերտերությունների շահերի բախման գլխավոր կիզակետը Հարավարևմտյան Ասիան է, որը ունի շատ կարևոր ռազմաաշխարհագրական, աշխարհաքաղաքական դիրք, հարուստ նավթազազային ռեսուրսներ:

Դեռևս XIX դարի վերջերին Մեծ Բրիտանիան իր իշխանությունը հաստատեց Արաբական թերակղզում, Պարսից ծոցի գոտում, Կիպրոսում, Ադենում: Առաջին աշխարհամարտից հետո Ազգերի լիգայի կողմից Բրիտանիայի հովանավորությամբ հանձնվեց Իրաքը, Պաղեստինը, Անդրհորդանանը, Ֆրանսիային՝ Սիրիան, Լիբանանը: 1919 թ. Օսմանյան կայսրության անկումից հետո անկախություն ստացան Եմենը, Հիջազը և Ասիրը: Նույն թվականին անկախություն ստացավ Աֆղանստանը:

Սևրի պայմանագրով Անգլիան նվաճում է Կիպրոսը: Թուրքիան ճանաչում է Հայաստանը որպես անկախ պետություն: Ըստ պայմանագրի Էրզրում, Տրապիզոն, Վան և Բիթլիս վիլայեթների շրջանում ստեղծվող Հայաստանը ունենալու էր 54000 քառ. մղոն տարածք: Հայաստանի և Թուրքիայի սահմանը անցնում էր Կոտուր քաղաքից հարավ-արևմուտք Վանա լճի հարավով Մուշ և Բիթլիս քաղաքներից հարավ-արևմուտք: Հայաստանը պետք է ելք ունենար դեպի Սև ծով: Մեկ այլ որոշմամբ նա պետք է ունենար 40000 քառ. մղոն տարածք: Ավելի ուշ Հայաստանը զոհ գնաց գերտերությունների շահերին: Սևրի պայմանագիրը չիրագործվեց:

1932 թ. Նեջի, Ասիրի և Հիջազի իշխանությունների հիմքի վրա ստեղծվեց Սաուդյան Արաբիան: 1943 թ. անկախություն ստացան Սիրիան և Լիբանանը: 1947 ՄԱԿ-ը որոշում ընդունեց Բրիտանական մանդատի տակ գտնվող Պաղեստինի տարածքում ստեղծել հրեական և արաբական պետություններ: 1948 թ. հրեական պետությունը՝ Իսրայելը, ստեղծվեց, արաբական պետությունը չստեղծվեց:

1960 թ. անկախություն ստացավ Կիպրոսը: 1974 թ. նրա տարածքի 37 %-ը Թուրքիան գրավեց՝ ստեղծելով Կիպրոսի թուրքական հանրապետությունը:

Սկսած 1970 թ. ստեղծվեցին Եմենը, Օմանը, Բահրեյնը, Կատարը, Ամե-ը անկախ պետությունները:

Հարավարևմտյան Ասիայի տարածքում կրոնական հիմքի վրա 1947 թ. ստեղծվեցին երկու պետություններ՝ Հնդկաստանը և Պակիստանը: 1965 թ. անկախություն ստացան Մալդիվյան կղզիները, 1972 թ.՝ Ցեյլոնը (Շրի Լանկան): Հարավարևելյան Ասիայի տարածքում 1945 թ. անկախություն ստացան Ինդոնեզիան, Լաոսը, այնուհետև՝ Վիետնամը, Ֆիլիպինները, Մյանման, Սինգապուրը, Մալազիան: 1975 թ. ՄԱԿ-ը որոշում ընդունեց ստեղծել Արևելյան Թիմորի անկախ պետությունը, սակայն Ինդոնեզիան գրավեց այն, և որոշումը չիրագործվեց:

Արևելյան Ասիայում 1911-1913 թ. չինացիները տապալեցին մանջուրական միապետությունը և հռչակեցին Հինաստանի հանրապետությունը: Նույն թվականին Հինական առանձին պետություն ստեղծվեց Տայվան կղզում:

Ասիայի քաղաքական քարտեզը այսօր էլ ունի վերածանա միտում: Օրակարգի հարց է Աբխազիայի, Հարավային Օսեթիայի, Լեռնային Ղարաբաղի, Կիպրոսի թուրքական հանրապետության, Պաղեստինի միջազգային ճանաչումը:

2. ԶԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ասիան հնագույն քաղաքակրթությունների օրրան է: Ի տարբերություն Եվրոպայի այստեղ չձևավորվեց մեկ միասնական քաղաքակրթություն. պատճառը ընդարձակ տարածքն էր, առանձին ռեզիդենտների ու ժողովուրդների բնական մեկուսացվածությունը միմյանցից:

Հազարամյակներ առաջ Հուանհե և Յանցզի, Ինդոս և Գանգես, Տիգրիս և Եփրատ գետերի հովիտներում ձևավորվել են քաղաքակրթության հզոր օջախներ, որոնք իրենց ազդեցությունն են թողել համաշխարհային քաղաքակրթության ձևավորման վրա:

Հուանհե և Յանցզի գետերի հովիտներում ապրող չինացիները մշակեցին գոյատևման իրենց փիլիսոփայությունը՝ *Կոնֆուցիականությունը*: Կոնֆուցիականության հիմքում բարոյական վարքի կանոններն են, ընտանիքի, պետության ղեկավարին և ընդհանրապես մեծին անվերապահորեն ենթարկվելու կարգը: Կոնֆուցիականության նպատակը իդեալական ընտանիքի, պետության ստեղծումն է, ըստ որի պետությունը նման է մեծ ընտանիքի, ուր տիրապետում են բարոյական չափանիշները, ներդաշնակ սոցիալական հարաբերութ-

յունները: Ըստ կոնֆուցիականության պետությունը պարտականութ-
յուններ ունի ժողովրդի առաջ:

Ինդու-Գանգես գետերի հովիտներում զարգացավ *հնդկական քաղաքակրթությունը*, որը աշխարհին տվեց խաղաղության և բա-
րության, հանդուրժողականության գաղափարը: Հնդկական քաղա-
քակրթության շնորհիվ ստեղծվեցին բազմաթիվ պատմաճարտարա-
պետական հուշարձաններ՝ պալատներ, տաճարներ, ամրոցներ:

Հնդկական քաղաքակրթությունը տարածվեց Հնդկաչինի երկրնե-
րում, Շրի Լանկայում, աշխարհի այլ շրջաններում:

Միջագետքի բազմաշերտ քաղաքակրթության ժառանգորդները
եղան արաբերը: *Մահմեդական քաղաքակրթության* աշխարհա-
գրությունը դուրս գալով արաբական ժողովուրդների ապրելավայրի
սահմաններից տարածվեց դեպի Կենտրոնական Ասիա, Հարավային
Ասիա, Միջերկրածովային երկրներ: Խալիֆների ժամանակ արաբնե-
րի աշխարհագրությունը, բժշկությունը, մաթեմատիկան իրենց ազ-
դեցությունը թողեցին նաև Եվրոպայում: Համաշխարհային գրակա-
նությունը, հոգևոր աշխարհը հարստացավ պարսկալեզու Նիզամիի,
Ֆիրդուսու, Օմար Խայամի ստեղծագործություններով:

Ասիայում ծագեց քրիստոնեությունը, որը ուներ մեկ նպատակ՝
տարբեր դավանանքներ, սովորույթներ ունեցող ժողովուրդներին
բերել մեկ ընդհանուր գաղափարի՝ մարդկային ու հասարակական
հարաբերությունների կարգավորման փիլիսոփայությամբ: Քրիստո-
նեությունը տարածվեց նաև այլ աշխարհամասերում, սակայն իր
իսկ օջախում միանշանակ չընդունվեց: Ասիան նաև հուդայական-
ության, բուդայականության, մահմեդականության, հինդուական-
ության, կոնֆուցիականության և այլ կրոնների հայրենիք է:

3. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ասիայում հաշվում են շուրջ 2 տասնյակ միջազգային տնտեսա-
կան կազմակերպություններ: Դրանք կարևոր դեր են կատարում աշ-
խատանքի միջազգային աշխարհագրական բաժանման մեջ, օգնում
են առանձին տարածաշրջանների տնտեսության զարգացմանը, կա-
րևոր դեր կատարում մասնակից պետությունների տնտեսական, սո-
ցիալական, բնապահպանական խնդիրները համատեղ լուծելուն:
Միջազգային տնտեսական կազմակերպությունները պետություննե-
րի միջև ստեղծում են հասարակական կյանքի տարբեր ոլորտների

փոխշահավետ համագործակցություն: Սա միջպետական հարաբերությունների կարգավորման, խաղաղության ամրապնդման լավագույն ուղին է:

Միջազգային տնտեսական կազմակերպությունների նպատակն է համերկային խնդիրները լուծել ռեզիոնալ մակարդակով, ամրապնդել, միջռեզիոնալ տնտեսական ու սոցիալական կապերը:

Միջազգային տնտեսական կազմակերպությունների մի մասը զուտ ասիական են, որոնց մասնակցում են միայն ասիական պետությունները, մյուս խմբում ասիական պետություններից բացի ընդգրկված են այլ աշխարհահամասերի կազմակերպություններ:

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (Organization for Economic Cooperation and Development – OESD): Ստեղծվել է 1961 թ. դեռևս 1948 թվից գործող եվրոպական տնտեսական համագործակցության կազմակերպության հիմքի վրա: Նրա կազմի մեջ մտնում են 29 պետություններ: Ասիայից այդ ընկերակցության անդամներ են Թուրքիան, Կորեայի Հանրապետությունը, ճապոնիան:

Նպատակն է՝

- նպաստել մասնակից և ոչ մասնակից երկրների կայուն զարգացման գործընթացին,
- համագործակցել տնտեսական զարգացման զբաղվածության, կյանքի որակի ավելի բարձր մակարդակի հասնելու համար,
- համագործակցել միջազգային առևտրի զարգացման գործընթացին,
- վարել միասնական քաղաքականություն՝ ապահովելու համար մասնակից երկրների տնտեսական աճը, ներքին և արտաքին ֆինանսական կայունությունը,
- համագործակցել գիտության և տեխնիկայի միասնական հետազոտությունների գծով:

Արաբական երկրների լիգա (League of Arab of Arab states-LAS): Կազմավորվել է 1945 թ: Նրա կազմի մեջ մտնում են 22 արաբական երկրներ:

Նպատակն է՝ համագործակցել տնտեսական, ֆինանսական, տրանսպորտային, մշակույթի, առողջապահության ոլորտներում: Կազմակերպության գործունեությունը ուղղված է այն բանին, որ

մասնակից երկրների համատեղ ուժերով ապահովի յուրաքանչյուր պետության ինքնատիպությունը, անվտանգությունը:

Ասիական երկրներից այդ կազմակերպության անդամներ են՝ ԱՄԷ-ը, Բահրեյնը, Եմենը, Իրաքը, Լիբանանը, Կատարը, Չորդանան, Պաղեստինը, Սաուդյան Արաբիան, Սիրիան:

Իսլամական համաժողովի կազմակերպություն:

Ստեղծվել է 1969 թ. Ռաբաթում: Նրա կազմի մեջ մտնում են 50 մահմեդական երկրներ, այդ թվում՝ Ադրբեջանը, Ղազախստանը, Ղըրղզստանը, Տաջիկստանը:

Նպատակն է՝

- զարգացնել համագործակցությունը տնտեսական, սոցիալական, մշակույթի, գիտության բնագավառներում,
- ամրապնդել մահմեդական համերաշխությունը,
- միավորել մահմեդական ժողովուրդներին ազգային անկախության պայքարում,
- օգնել Պաղեստինի ժողովրդին ազգային անկախություն ստանալու:

Զարգացման մահմեդական բանկ (Islamic Development Bank-ISDB):

Ստեղծվել է 1947 թ: Նրա կազմի մեջ մտնում են 47 պետություններ, այդ թվում Ադրբեջանը, Աֆղանստանը, ԱՄԷ, Բահրեյնը, Բրունեյը, Եմենը, Թուրքիան, Ինդոնեզիան, Իրանը, Իրաքը, Կատարը, Չորդանանը, Ղըրղզստանը, Պակիստանը, Սաուդյան Արաբիան, Սիրիան, Քուվեյթը, Օմանը:

Նպատակն է՝

- ֆինանսավորել արտադրական ձեռնարկությունների նախագծերը,
- վարկեր տրամադրել ենթակառուցվածքների ճանապարհների, կապի կառույցների, դպրոցների նախագծման և կառուցման համար,
- ֆինանսական-տեխնիկական օգնություն ցույց տալու մասնակից երկրներին՝ մշակելու տեխնիկա-տնտեսական նախագծեր, պատրաստելու համապատասխան կադրեր:

Նավթ արտահանող երկրների կազմակերպություն (Organization of the Petroleum Exporting Countries-OPEC):

Ստեղծվել է 1960 թ.: Նրա կազմի մեջ մտնում են 12 պետություն:

Ասիայից ՕՊԵԿ-ի անդամներ են ԱՄԷ, Ինդոնեզիան, Իրանը, Իրաքը, կատարը, Սաուդյան Արաբիան:

Նպատակն է՝

- ի մի բերել մասնակից երկրների նավթային քաղաքականությունը ելնելով նրանց տնտեսական, ազգային կայուն զարգացման շահերից:

ՕՊԵԿ-ի կենտրոնական գրասենյակը գտնվում է Վիեննայում: ՕՊԵԿ-ը համագործակցում է միջազգային այլ կազմակերպությունների հետ: Մեծ է նրա համագործակցությունը ԻՊԵԿ-ի հետ:

ՕՊԵԿ-ը զեղչ վարկեր է տրամադրում զարգացող (բացառությամբ մասնակից) երկրներին: Օգնության ֆոնդը ձևավորվում է անդամ երկրների կամավոր ներդրումներից: Առանձնակի մեծ է ֆոնդի միջոցների ուղղվածությունը դեպի արդյունահանող ճյուղերի զարգացումը: Նա ֆինանսավորում է առանձին նախագծերի իրականացմանը, ինչպես տարբեր ռեգիոնալ բանկերին:

Նավթ արտահանող արաբական երկրների կազմակերպություն (Organisation of Arab Petroleum Exporting Countries- OAPEC):

Կազմակերպությունը հիմնադրվել է 1968 թ.: Նրա անդամները 11 պետություն են, որից 7-ը ԱՄԷ, Բահրեյնը, Իրաքը, Կատարը, Սաուդյան Արաբիան, Սիրիան և Զուբեյդը, Ասիայից:

Նպատակն է՝

- համագործակցել նավթարդյունաբերության տարբեր բնագավառներում,
- միավորել ուժերը, նավթի արտահանման ընթացքում հաշվի առնելով կազմակերպության բոլոր երկրների շահերը,
- ստեղծել բարենպաստ պայմաններ նավթարդյունաբերության զարգացման համար:

ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղ օվկիանոսի համար տնտեսական ու սոցիալական հանձնաժողով (United Nations Economic and Social Commission for Asia and the Pacific-ESCAP):

Ստեղծվել է 1947 թ. ՄԱԿ-ի կազմում Ասիայի և Խաղաղ օվկիանոսի ռեգիոնի համար: Նրա կազմի մեջ են մտնում Ադրբեյջանը, Աֆղանստանը, Բանգլադեշը, Բրունեյը, Բութանը, Թաիլանդը, Թուրքիան, Ինդոնեզիան, Իրանը, Լաոսը, Կամբոջան, Չարավային Կորեան, Չնդկաստանը, Ղազախստանը, Ղրղզստանը, Ճապոնիան, Մալդիվները, Մալազիան, Մյանման, Մոնղոլիան, Նեպալը, Շրի Լանկան, Չինաստանը, Պակիստանը, Սինգապուրը, Վիետնամը, Տաջիկստանը:

Նպատակն է՝

- համագործակցել տարածաշրջանի տնտեսական և սոցիալական զարգացման, առևտրի ընդլայնման ուղղությամբ,
- ընդարձակել ներդրումային գործունեությունը, միմյանց փոխանակել տեխնոլոգիաներ,
- համատեղ որոշումներ ընդունել սոցիալական զարգացման, աղքատության և անգրագիտության վերացման, բնակարանային շինարարության, աշխատուժի միգրացիաների, շրջակա միջավայրի պահպանության ուղղությամբ:

ՄԱԿ-ի Արևմտյան Ասիայի տնտեսական և սոցիալական հանձնաժողով (United Nations economic and Social Commission for Western Asia-ESCWA):

Ստեղծվել է 1973 թ: Նրա կազմի մեջ մտնում են Հարավարևմտյան Ասիայի 12 երկրներ՝ ԱՄԷ-ը, Բահրեյնը, Եմենը, Իրաքը, Կատարը, Հորդանանը, Լիբանանը, Պաղեստինը, Քուվեյթը, Սաուդյան Արաբիան, Սիրիան և Աֆրիկյան մեկ պետություն՝ Եգիպտոսը:

Նպատակն է՝

- համագործակցել տնտեսության զարգացման և ինտեգրման ուղղությամբ,
- հետազոտություններ կատարել տնտեսական և սոցիալական խնդիրների բնագավառում,
- համագործակցել՝ մշակելու և իրագործելու ծրագրեր գյուղատնտեսական, մթերքների արտադրության, միջավայրի պահպանության, արդյունաբերության զարգացման, գիտության և տեխնիկայի, տրանսպորտի և կապի բնագավառներում,
- հավաքել, գնահատել և տարածել տնտեսական, տեխնիկական և վիճակագրական տեղեկատվություններ,
- համագործակցել այլ ռեգիոնալ կազմակերպությունների հետ:

Անկախ երկրների համագործակցություն (ԱՊՀ), (Commonwealth of independent State -CIS):

Ստեղծվել է 1991 թ.: Նրա կազմի մեջ մտնում են Ադրբեյջանը, Բելառուսը, Թուրքմենստանը, Հայաստանը, Ղազախստանը, Ղրղզզրստանը, Մոլդովան, Ռուսաստանը, Տաջիկստանը, Ուզբեկստանը, Ուկրաինան:

Նպատակն է՝

- համագործակցել քաղաքական, տնտեսական, բնապահպանական, հումանիտար, մշակութային ոլորտներում,

- պայմաններ ստեղծել մասնակից երկրների տնտեսության ներդաշնակ զարգացման համար,
- շուկայական հարաբերությունների հենքի վրա ստեղծել ընդհանուր տնտեսական դաշտ,
- իրագործել ընդհանուր հետաքրքրություն ունեցող նախագծեր,
- միասնական ուժերով լուծել բնապահպանական խնդիրներ, վերացնել տարերային աղետների հետևանքները,
- համագործակցել՝ զարգացնելու միջպետական ազատ առևտուր,
- ստեղծել ապրանքների ծառայություններ, կապիտալի, բանվորական ուժի միասնական շուկա,
- կազմել արժույթային և մաքսային միություն:

Տնտեսական համագործակցության կազմակերպություն (Economic Organisation-ECO):

Նրա կազմի մեջ մտնում են Ադրբեջանը, Աֆղանստանը, Ղրղզըստանը, Թուրքիան, Թուրքմենստանը, Իրանը, Ղազախստանը, Պակիստանը, Տաջիկստանը, Ուզբեկստանը:

Նպատակն է՝ համագործակցել արդյունաբերության, տեխնիկական օգնության, էներգետիկայի, գյուղատնտեսության, տրանսպորտի, բնական միջավայրի, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի, թմրամոլության և թմրանյութերի տարածման դեմ պայքարի ոլորտներում:

1993 թ. Ստամբուլում ընդունվեց հեռանկարային զարգացման պլան, ըստ որի առանձնակի ուշադրություն է դարձվում տրանսպորտի, ճանապարհային ցանցի, հեռակապի զարգացմանը:

Համագործակցության կազմակերպման ընկերակցության աշխատանքների ինտեգրացման համար ստեղծվել են 4 մասնագիտացված ձեռնարկություններ՝ առևտրի և զարգացման բանկ (Թուրքիայում), ապահովագրական ընկերություն (Պակիստանում), նավագնացության ընկերություն (Իրանում), օդագնացության ընկերություն (Իրան):

Հարավարևելյան Ասիայի երկրների խմբավորում (Association of South East Asian Nations-ASEAN)

Ստեղծվել է 1967 թ. Բանգկոկում: Նրա կազմի մեջ մտնում են Բրունեյը, Թաիլանդը, Ինդոնեզիան, Լաոսը, Կամբոջան, Մալազիան, Սինգապուրը, Վիետնամը, Ֆիլիպինները:

ԱՍԷԱՆ-ի գործունեության հիմնական ուղղություններն են.

- համագործակցել տնտեսական, գիտա-տեխնիկական, սոցիալական մշակույթի բնագավառներում,
- ստեղծել ազատ առևտրի գոտի, հաստատել միասնական մաքսային գներ,
- համագործակցել ֆինանսական, գյուղատնտեսության, տրանսպորտի, զբոսաշրջության, շրջակա միջավայրի պահպանության, հեռակապի ոլորտներում:

Հարավային Ասիայի ռեգիոնալ համագործակցության խմբավորում (South Asian Association for Regional Cooperation – SAARC)

Ստեղծվել է 1985 թ.: Նրա կազմի մեջ մտնում են Բանգլադեշը, Բութանը, Չնդկաստանը, Մալդիվները, Նեպալը, Պակիստանը, Շրի Լանկան:

Նպատակն է՝ համագործակցել տնտեսական, գիտատեխնիկական, սոցիալական, մշակույթի ոլորտներում՝ ապահովելու համար տարածաշրջանի երկրների տնտեսական աճը, բարձրացնելու բնակչության բարեկեցությունը: Նպատակին հասնելու համար մշակել համատեղ ծրագրեր՝ ուղղված գյուղատնտեսության ենթակառուցվածքների, բնապահպանության, գիտության և տեխնիկայի, զբոսաշրջության, տրանսպորտի և բնակավայրերի զարգացմանը:

Արտադրողականության հարցերով Ասիական կազմակերպություն (Asian Productivity organization –AOP):

Ստեղծվել է 1961 թ. որպես միջկառավարական ռեգիոնալ կազմակերպություն՝ խրախուսելու տնտեսական զարգացումը, գործարարությունը, մշակելու, ներդնելու և իրագործելու ծրագրեր արդյունաբերության, գյուղատնտեսության, ծառայությունների ոլորտներում:

Արդյունաբերության բնագավառում օգնել զարգացնելու փոքր և միջին ձեռնարկատիրությունը, բարձրացնելու գործող ձեռնարկությունների արտադրողականությունը, հետևել արտադրանքի որակին, աշխատակազմի ղեկավարմանը:

Գյուղատնտեսության բնագավառում համագործակցել՝ բարձրացնելու բերքատվությունը, զարգացնելու ագրոարդյունաբերական համալիրները:

Կազմակերպության անդամներ են՝ Բանգլադեշը, Թաիլանդը, Թայվանը, Իրանը, Ինդոնեզիան, Կորեայի հանրապետությունը, Չնդկաստանը, Չոնկոնգը, Մալազիան, Մոնղոլիան, Նեպալը, Շրի Լանկան, Պակիստանը, Սինգապուրը, Վիետնամը, Ֆիլիպինները, Ֆիջին:

Արաբական տնտեսական միասնության խորհուրդ (Council of Arab Economic Unity-CAEU):

Ստեղծվել է 1964 թ.: Նրա կազմի մեջ մտնում են արաբական 12 պետություն, որոնցից 7-ը ԱՄԷ, Եմենը, Իրաքը, Հորդանանը, Պաղեստինը, Սիրիան, Քուվեյթը Ասիայից:

Նպատակն է՝

- ստեղծել ընդհանուր շուկա՝ ապահովելով ապրանքների, կապիտալի, արտադրանքի, մարդկանց ազատ տեղաշարժը,
- ապահովել տրանսպորտի ներդաշնակ զարգացումը, ենթակառուցվածքների, օդանավակայանների, ծովային նավահանգիստների, ցամաքային ճանապարհների ազատ օգտագործումը,
- ապահովել սեփականության տնօրինումը:

Պարսից ծոցի արաբական երկրների համագործակցության խորհուրդ (Cooperation Council for Arab States fo the Huef- CCC):

Ստեղծվել է 1981 թ.: Նրա կազմում են ԱՄԷ, Բահրեյնը, Կատարը, Սաուդյան Արաբիան, Քուվեյթ, Օմանը:

Նպատակն է՝ ստեղծել ֆինանսական, տնտեսական, առևտրական, կառավարման, տեղեկատվական, կրթական, մշակույթի միասնական համակարգ: Համագործակցել գիտական հետազոտությունների, համատեղ ձեռնարկությունների ստեղծման բնագավառներում:

ԱՍԻԱՅԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Բնական պայմանների և ռեսուրսների պատմական ու աշխարհաքաղաքական երևույթների, աշխատանքային նորույթների մեծ տարբերությունների հետ կապված՝ Ասիայի երկրների տնտեսությունը նույնպես բազմաբնույթ է:

Երկրների որոշ խումբ՝ ճապոնիան, Կորեայի հանրապետությունը, Սինգապուրը հասել են տնտեսության զարգացման շատ բարձր մակարդակի: Նրանք մտնում են հետինդուստրիալ երկրների կազմի մեջ:


Ասիայում զարգացման իր յուրահատկությունը ունի Չինաստանը: Համեմատաբար կարճ ժամանակամիջոցում այս երկիրը դարձավ Ասիայի առաջին, աշխարհի երկրորդ պետությունը ՀՆԱ-ով:

Մի առանձին խումբ են կազմում նավթ արտահանող երկրները, որոնց ՀՆԱ-ի մեջ կարևոր դեր են կատարում նավթի վաճառքից ստացված դրամական միջոցները:

Խորհրդային Միության կազմից դուրս եկած ասիական պետություններին բնորոշ է մի կողմից՝ արդյունաբերական մեծ կարողությունները, մյուս կողմից՝ դրանց օգտագործման ցածր մակարդակը, աշխատանքի աշխարհագրական բաժանման մեջ հումքային և գյուղատնտեսական ուղղվածությունը:

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՆԱԽԱՐՀԱՆՆԵՐԸ: Ասիայի տնտեսության զարգացման գլխավոր նախադրյալը բնական ներուժն է, սակայն որոշ երկրների և առանձին տարածաշրջանների փորձը ցույց է տալիս, որ հասարակական ներուժը նույնպես կարևոր է, իսկ հաճախ նաև առաջնային: Հասարակական ներուժի գերակայությունը սոցիալ-տնտեսական զարգացման գրավականն է:

ա/ Բնական ներուժի գնահատականը. Ասիան հարուստ է հողային, անտառային քաղցրահամ ջրի ռեսուրսներով, ընդերքը բազմատեսակ օգտակար հանածոներով: Աշխարհում առաջին տեղում է իր հողային ֆոնդով: Անտառները ծածկում են Ասիայի տարածքի 17 %-ը բնական մարգագետինները և արոտավայրերը՝ 22 %-ը: Մշակովի հողերը կազմում են տարածքի ընդամենը 17 %-ը: Տարածքի 42-ը % քիչ արդյունավետ հողեր են՝ ճահիճներ, բարձր լեռներ, սառցածածկ տարածություններ, անջուր անապատներ:



Ասիայի հողային ֆոնդի կառուցվածքը (առանց Ռուսաստանի ասիական մասի) ըստ Վ.Սակսակովսկու

Բնական կարևոր ներուժ են *ընդերքի ռեսուրսները*։ Ասիայում կան բոլոր տեսակի օգտակար հանածոների բավարար քանակությամբ պաշարներ, որ բավարարում են ոչ միայն ներքին պահանջները, այլ մեծ քանակությամբ արտահանվում են։

Առավել կարևորը վառելիքաէներգետիկ ռեսուրսներն են, որոնք ունեն կարևոր տնտեսական և աշխարհաքաղաքական նշանակություն։ Ասիան աշխարհում առաջին տեղն է զբաղում նավթի, քարածխի, գորշ ածխի և բնական գազի պաշարներով։

Քարածխի ռեսուրսներով հարուստ են Արևելյան Ասիան, Հարավային Ասիան և Ռուսաստանի ասիական մասը։ Այս տարածաշրջանների քարածուխը սեփական կարիքների բավարարումից բացի ունի էքսպորտային նշանակություն։

Աշխատանքի միջազգային աշխարհագրական բաժանման մեջ մեծ դեր ունեն նավթի և գազի պաշարները։


Ասիային է բաժին ընկնում նավթի համաշխարհային պաշարների 65 %-ը, բնական գազի 50%-ը (առանց Ռուսաստանի ասիական մասի)։ Եվ նավթի, և բնական գազի ռեսուրսները շատ անհավասար են տեղաբաշխված ըստ տարածքի ու ըստ երկրների։

Նավթով, բնական գազով ամենահարուստը Հարավարևմտյան Ասիան է, երկրորդ տեղում՝ Կենտրոնական Ասիան, երրորդ տեղում՝ Հարավարևելյան Ասիան։

Ասիայում նավթի ռեսուրսներով ամենահարուստ երկիրը Սաուդյան Արաբիան է, որին բաժին է ընկնում նավթի համաշխարհային

պաշարների 20 %-ը: Երկրորդ նավթատեր տերությունը Իրանն է, համաշխարհային պաշարների 10 %-ով: Երրորդ տեղում Իրաքն է՝ 8,5 %: Նավթի պաշարներով շատ հարուստ են նաև ԱՄԷ, Զուվեյթը, Ինդոնեզիան, Ղազախստանը:


96. 2



Ասիայի՝ նավթի պաշարներով առաջատար երկրները (2007թ.)

Բնական գազի պաշարներով առաջատար երկիրը Իրանն է, նրան է բաժին ընկնում գազի համաշխարհային պաշարների 15,3 %-ը, երկրորդ տեղում Կատարն է՝ համաշխարհային պաշարների 15 %-ով, երրորդ տեղում Սաուդյան Արաբիան է՝ 3,8 %: Բնական գազով հարուստ են նաև ԱՄԷ, Իրաքը, Ղազախստանը, Ինդոնեզիան, Մալազիան:

96. 3



Ասիայի՝ բնական գազի պաշարներով առաջատար երկրները (2007 թ.)

բ/ Հասարակական ներուժը: Սեօ է բնական ներուժի նշանակությունը հասարակական կյանքի կազմակերպման մեջ, սակայն կարևոր նշանակություն ունի նաև հասարակական ներուժը: Ընդ որում ընդհանուր միտումը այն է, որ հասարակական ներուժի դերը աստիճանաբար ավելի վճռական նշանակություն է ստանում: Հասարակական կյանքի ձևավորման գործում մեծանում է մարդկային գործոնի, մարդու որակական հատկանիշների դերը: Մարդու որակով է որոշվում հասարակական կյանքի որակը: Իր հերթին մարդու որակը որոշվում է մարդասիրական արժեքների չափով, որը սերտորեն կապված է մարդ-մարդ, մարդ-հասարակություն, մարդ-պետություն փոխհարաբերություններից: Ընդ որում այդ փոխհարաբերությունները հիմք են հանդիսանում կայուն զարգացման համար: Կայուն հասարակական զարգացումը, կայուն հասարակությունը, կայուն պետությունը այսօրվա կյանքի հրամայական են:

Կայուն զարգացումը արդյունք է հասարակական կյանքի ներդաշնակության, ուր ըստ էության լուծվում են տնտեսական, սոցիալական, բնապահպանական, բարոյահոգեբանական խնդիրները, ուր հասարակական կյանքի կազմակերպման գլխավոր գործոնը մարդու վարքն է:

Բնակչությունը: Ասիան աշխարհում առաջին տեղում է բնակչության թվով, բնական աճով, բազմազգությամբ, բազմացեղությամբ, բազմակրոնությամբ:

Ասիայում է ապրում երկրագնդի բնակչության 61.6 %-ը: Այստեղ մեծ չափերի է հասնում բնակչության բնական աճը: Բնակչության կազմում մեծ է երիտասարդների տեսակարար կշիռը, մեծ է նաև գործազրկությունը, որի հետևանքն են արտագաղթի աճի չափերը:

Խնդրի լուծման ուղին բնակչության աճի կարգավորումն է իր բոլոր բարդությներով հանդերձ, տնտեսական ու սոցիալական ոլորտի զարգացումն ու արագացումը: Դրանց կարող է նպաստել ասիական երկրներում զարգացման կայուն գործընթացի իրագործումը, որի երաշխիք կարող են լինել ռեգիոնալ տնտեսական, սոցիալական զարգացումները: Օրինակ կարող է ծառայել ճապոնիայի և Հարավային Կորեայի աստիճանաբար աճող դերը Արևելյան և Հարավարևելյան Ասիայի տնտեսությունների ինտեգրման գործում:

Ասիայում գտնվում են բնակչության թվով շատ մեծ երկրներ՝ Չինաստանը՝ 1314 մլն, Հնդկաստանը՝ 1095 մլն, Ինդոնեզիան՝ 245 մլն: Երեք պետություններ՝ Բանգլադեշը, Պակիստանը և ճապո-

նիւան, ունեն 100-200 մլն բնակչություն: Ասիայում կան բնակչության թվով շատ փոքր երկրներ՝ Բահրեյնը՝ 700 հզ, Մալդիվյան կղզիները՝ 359 հազար, Բրունեյը՝ 351 հազար:

Միգրացիաները: Ասիայում միգրացիաները մեծ չափերի են հասնում: Պատճառը զանգվածային գործազրկությունն է: Ասիայի տասնհինգ երկրներում միգրացիոն հաշվեկշիռը բացասական է: Ամենից ցածր մակարդակը Հայաստանում է՝ -6,1%, Վրաստանում՝ 4,5%, Ադրբեջանում՝ -4,4%: Միգրացիոն հաշվեկշիռը բացասական է նաև Կենտրոնական Ասիայի, Հարավային Ասիայի, Հարավարևելյան Ասիայի երկրներում:

Միգրացիոն հաշվեկշիռը դրական է նավթ արտահանող երկրներում՝ Զուվեթում՝ 1,5 %, Կատարում՝ 14 %: Միգրացիոն հաշվեկշիռը դրական է նաև Իրանում, Օմանում, ԱՄԷ-ում, Բահրեյնում: Պատճառը արագ զարգացող նավթարդյունաբերության մեջ աշխատուժի մեծ պահանջարկն է, որը պայմանավորված է արտահանող երկրների տեղաբնիկների սովորույթներով. նրանք խուսափում են աշխատել նավթարդյունաբերության մեջ:

Միգրացիոն հաշվեկշիռը Սինգապուրում 9,2 % է, որը կապված է արագ զարգացող տնտեսության հետ, երբ մեծանում է աշխատուժի պահանջարկը:

Ասիայի ներքին միգրացիաները հիմնականում ուղղված են ԱՊՀ երկրներից դեպի Ռուսաստան, Հարավային Ասիայից դեպի Պարսից ծոցի երկրներ: Արտաքին միգրացիաները՝ դեպի ԱՄՆ, Եվրամիության երկրներ, Ավստրալիա, Աֆրիկա:

Միգրացիաները բնակչության մեծ թիվ ունեցող երկրներում մեղմացնում են գործազրկության ծանր վիճակը (օրինակ՝ Չինաստանում, Հնդկաստանում, Պակիստանում), միաժամանակ լուծում են գաղթականներ ընդունող երկրների աշխատանքային շուկայի խնդիրը:

Բնակչության բնական չարժեքը: Ասիայում համեմատաբար բարձր է բնակչության ծնելիությունը, միջին մակարդակի վրա է մահացությունը, բարձր է բնական աճը: Բացարձակ թվերով ամենից շատ աճում է Արևելյան և Հարավային Ասիայի բնակչությունը, հարաբերական առումով՝ Հարավարևմտյան Ասիայինը:

Ծնելիության մակարդակը ամենից բարձր է Աֆղանստանում՝ 47 ‰-ը, Եմենում՝ 43,1, Օմանում՝ 36,1 Լաոսում՝ 35, Իրաքում՝ 33 ‰, նաև Սաուդյան Արաբիայում, Սիրիայում, Բանգլադեշում:

Մեկ կնոջ միջին պտղաբերությունը բարձր է Աֆղանստանում՝ 6,7 երեխա, Սիրիայում՝ 4,8, Լաոսում՝ 4,8, Նեպալում՝ 4,1 երեխա: Ծնելիության մակարդակը շատ ցածր է Սինգապուրում՝ 9,3 ‰, Ճապոնիայում՝ 9,4, Հարավային Կորեայում՝ 10, Վրաստանում՝ 10,1, Հայաստանում՝ 12: Ծնելիության չափերը կապված են հավատքի, հասարակական հարաբերությունների, սոցիալական պայմանների, ազգային սովորույթների և այլ պատճառների հետ: Հազարամյակների շարունակ Արաբական անապատներում և Աֆղանստանի բնական սուղ կարողություններ ունեցող շրջաններում շատ մեծ է եղել երեխաների մահացությունը:

Սինգապուրում, Ճապոնիայում, Հարավային Կորեայում ծնելիության ցածր մակարդակի պատճառը ուշ ամուսնությունն է, քիչ երեխաներ ունենալու սովորույթը: Սինգապուրում մեկ կնոջ պտղաբերությունը 1 երեխա է, Ճապոնիայում՝ 1,4: Վրաստանում և Հայաստանում ծնելիության ցածր մակարդակի պատճառը երիտասարդության մեծ արտագաղթն է:

Աղյուսակ 1

Ասիայի բնակչության առավելագույն և
նվազագույն բնական աճ ունեցող 10 երկրները

Առավելագույն բնական աճ		Նվազագույն բնական աճ	
Երկիր	Բնական աճը ‰		Երկիր
1. Եմեն	33,8	0,2	Ճապոնիա
2. Օման	32,4	1,0	Վրաստան
3. Մալդիվներ	27,7	3,6	Հայաստան
4. Իրաք	27,4	4,8	Կիպրոս
5. Սաուդյան Արաբիա	26,8	5,1	Սինգապուր
6. Աֆղանստան	26,3	6,6	Ղազախստան
7. Տաջիկստան	24,4	8,1	Սլովենիա
8. Լաոս	23,9	8,4	Հյուսիսային Կորեա
9. Սիրիա	23,0	6,8	Թաիլանդ
10. Նեպալ	21,7	9,0	Շրի Լանկա

Ասիայի բնակչության մահացության մակարդակը բարձր է Աֆղանստանում՝ 20,7 ‰, Բուրանում՝ 12,7, Լաոսում՝ 11,59, Նեպալում՝ 9,31 ‰:

Մահացության մակարդակը շատ ցածր է Պարսից ծոցի երկրներում՝ Քուվեյթում՝ 2,4‰, Սաուդյան Արաբիայում՝ 2,6, Օմանում՝ 3,8, Կատարում՝ 4,7, Իրանում՝ 5,5 ‰: Ծոցի երկրները այս մակարդակին են

հասել առողջապահական ոլորտի ներդրումների շնորհիվ: Այս երկրներում ներդաշնակ են նաև հասարակական հարաբերությունները:

Բնակչության ամենաբարձր աճ է նկատվում Եմենում և Օմանում՝ 30 %-ից ավելի: Տասնմեկ երկրներում բնակչության բնական աճը 20-29 % է: Բնական աճը ցածր է ճապոնիայում 0,21 %, Վրաստանում՝ 0,98 %, Հայաստանում, Կիպրոսում և Կորեայի համրապետությունում բնակչության բնական աճը չի անցնում 5%-ից, իսկ 7 երկրներում՝ Սինգապուրում, Ղազախստանում, Չինաստանում, Սյանմայում և այլուր բնական աճը չի գերազանցում՝ 10%-ի շեմը:

Բնական աճի կարգավորման համար պետությունները վարում են ժողովրդագրական որոշակի քաղաքականություն, ըստ որի Չինաստանում, Հնդկաստանում, Ինդոնեզիայում և մի շարք այլ երկրներում ձեռք են առնում միջոցառումներ բնական աճը նվազեցնելու համար: Դրան հակառակ Պարսից ծոցի երկրներում, Իսրայելում, Հայաստանում, Վրաստանում և այլ երկրներում բնական աճը խրախուսվում է:

Սղյուսակ 2

**Ասիայի բնակչության առավելագույն և
նվազագույն խտություն ունեցող 10 երկրները**

Առավելագույն խտություն			Նվազագույն խտություն	
Երկիր	Խտությունը մարդ ք.կմ		Երկիր	
1. Սինգապուր	6450	2	Մոնղոլիա	
2. Բանգլադեշ	1023	6	Ղազախստան	
3. Բահրեյն	1000	10	Թուրքմենստան	
4. Հարավային Կորեա	498	12	Սաուդյան Արաբիա	
5. Լիբանան	387	15	Օման	
6. ճապոնիա	342	25	Լաոս	
7. Հնդկաստան	333	26	Ղրղզստան	
8. Շրի Լանկա	306	31	ԱՄԷ	
9. Իսրայել	300	41	Եմեն	
10. Ֆիլիպիններ	298	48	Աֆղանստան	
Աշխարհ	43,8			

Բնակչության տեղաբաշխումը. Կապված բնակլիմայական պայմանների, հողային և ընդերքի ռեսուրսների աշխարհագրական դիրքի, տնտեսական, պատմական և այլ գործոնների հետ՝ Ասիայի բնակչու-

յունը շատ անհավասար է տեղաբաշխված: Դեռևս հազարամյակներ առաջ բնակեցվել են բարեխառն և արևադարձային շրջանների գետահովիտները, առափնյա հարթավայրերը: Նոսր են բնակեցվել տունդրայի, տայգայի, ջրազուրկ անապատների, բարձր լեռնային հասարակածային անտառների շրջանները: Բնակչության մեծ կուտակումներ են առաջացել ընդերքի ռեսուրսներով հարուստ տարածքներում՝ Պարսից ծոցի, Կասպից ծովի նավթաբեր շրջաններում, Կենտրոնական Ասիայի, Հարավային Ասիայի, Արևելյան Ասիայի ածխի, երկաթաքարի խոշոր հանքավայրերին, խոշոր ծովային ուղիներին մոտիկ՝ Սինգապուրում, Ջակարտայում, Հոնկոնգում, Սինգապուրում:

Արևելյան Ասիայի երկրներում՝ Ճապոնիայում, Հարավային Կորեայում, Չինաստանում բնակչության տեղաշարժ է զգացվում դեպի ծովափնյա շրջաններ, կապված վառելիքի և հանքային հումքի ներկրումների և դրանց հենքի վրա արդյունաբերական խոշոր կենտրոնների ստեղծման հետ:

Ըստ երկրների ամենախտաբնակը Սինգապուրն է՝ 6450 մարդ քվմ: Պատճառը հարմար աշխարհագրական դիրքն է, որի շնորհիվ տարածքով շատ փոքր այս կղզին դարձրել է ֆինանսական, տնտեսական խոշոր կենտրոն, ծովային ճանապարհների հզոր հանգույց: Բանգլադեշում բնակչության մեծ խտությունը՝ 1023 մարդ քվմ, կապված է հարթ տարածքի, բերրի հողերի, բարենպաստ ագրոկլիմայական պայմանների հետ, որոնք հնարավորություն են տալիս շուրջ տարին զբաղվել հողագործությամբ:

Նոսր են բնակեցված Մոնղոլիան՝ 2 մարդ քվմ, Ղազախստանը, Սաուդյան Արաբիան՝ 2, Թուրքմենստանը՝ 10, Օմանը՝ 15 մարդ քվմ: Պատճառը անապատային լանդշաֆտի գերակայությունն է:

Ասիայի երկրների *հիմնախնդիրները*

- բնակչության արագ աճի կաճակը,
- գերխտաբնակ շրջանների բնակչության ապակենտրոնացումը,
- միգրացիաների (արտագաղթի նվազեցումը),
- աշխատանքի զբաղվածության մեծացումը,
- գործազրկության նվազեցումը,
- աղքատության աստիճանական վերացումը,
- հասարակական տարբեր շերտերի սոցիալական վիճակի մերձեցումը,

- միջին խավի ստեղծումը
- միջէթնիկական, միջկաստայական հակասությունների վերացումը,
- փախստականների խնդրի լուծումը,
- անգրագիտության վերացումը:

Միայն Հինաստանի, Չնդկաստանի, Բանգլադեշի և Ինդոնեզիայի բնակչությունը միասին տարեկան ավելանում է մոտ 30 միլիոնով: Ընդ որում այս մեծաքանակ բնակչության մեծ մասը գնում են դեպի քաղաքներ, ավելի շատ քաղաքների արվարձաններ՝ բարդացնելով առանց այն էլ սոցիալ-տնտեսական, առողջապահական բազում խնդիրներ ունեցող «արվարձանային շրջանների» վիճակը:

Բնակչության մեծ աճը էլ ավելի է ընդլայնում գործազուրկների շուկան: Բանգլադեշում գործազուրկ է աշխատուժի 40 %-ը (26 մլն - մարդ), Չնդկաստանում՝ 9.2 %-ը (44 մլն մարդ), Հինաստանում՝ 9.8 %-ը (75 մլն մարդ): Գործազուրկների այս հսկայական քանակը մեծացնում է արտագաղթը: Հինաստանից տարեկան արտագաղթում է 520 հզ մարդ, Չնդկաստանից՝ 75 հզ, Բանգլադեշից 100 հազար:

Ասիայում մեծ է բնակչության սոցիալական բևեռացումը: Երկրների մեծ մասում դեռևս չի ձևավորվել հասարակության միջին խավը: Ազգային հարստությունների գերակշիռ մասը գտնվում է փոքրաթիվ մեծահարուստների ձեռքին: Բնակչության առավելագույն հատվածը աղքատ է: Աղքատության շեմից ցածր մակարդակի վրա են Աֆղանստանի բնակչության 53 %-ը, Ադրբեջանի և Հայաստանի 50 %-ը, Բանգլադեշի 45 %-ը, Չնդկաստանի 25 %-ը:

Պոզևոր արժեքները առաջին հերթին կապված են մարդու հավատքի հետ: Հավատք աստծու, հասարակության, պետության, մարդու, շրջակա բնական միջավայրի նկատմամբ: Հավատում ես՝ ուրեմն ապրում ես, չես հավատում՝ գոյատևում ես:

Ասիան հավատքների աշխարհամաս է. այստեղ են ծագել մեկ կամ մի քանի ժողովուրդների սեփականություն հաղիսացող շատ կրոններ, որոնք բոլորն էլ ունեն մեկ նպատակ՝ ներդաշնակ դարձնել մարդ-մարդ, մարդ-հասարակություն-պետություն փոխհարաբերությունները:

Ասիայում մեծ աշխարհագրություն ունի *մահմեդական կրոնը*. Մահմեդականության հենքի վրա են ձևավորվում Քուվեյթի, ԱՄԷ-ի, Չորդանանի, Բրունեյի, Մալազիայի, Սաուդյան Արաբիայի և այլ երկրների հասարակական հարաբերությունները: Դրանով են առաջ-

նորոգվում ԱՄԷ-ի, Քուվեյթի, Սաուդյան Արաբիայի իշխանությունները «նավթային դոլարների» մի մասը իրենց երկրի քաղաքացիներին բաժանելու գործընթացում: ԱՄԷ-ում ծնված յուրաքանչյուր երեխա անհատույց ստանում է մեծ գումար՝ որպես կյանքի ապահովության երաշխիք: Նավթ արտահանող երկրների մի մասում, նույնիսկ անապատում ապրող և նավթագործության հետ ոչ մի կապ չունեցող քոչվոր անասնապահները «նավթային դոլարներից» իրենց բաժինն ունեն: Նավթը ամբողջ ազգի սեփականությունն է. այս է Քուվեյթում, ԱՄԷ-ում ընդունված կարգախոսը: Այդ կարգախոսով ապրող պետություններում աստիճանաբար ծաղկում ապրեցնում են վերածվում անջուր, չոր անապատները:

Կոնֆուցիականության առաջնորդի հեղինակությունը, նրան ենթարկվելու հասարակության անդամների սովորույթը, դասականության «հավասարության» սկզբունքները հզոր ազդակ են հանդիսացել Չինաստանի տնտեսության առաջընթացի համար: Չինացին հասարակության անդամ է և ապրում ու աշխատում է հանուն հասարակության, հանուն ընտանիքի ու պետության: Առաջնորդը հասարակության, ընտանիքի շահերի գրավականն է, անհատի պաշտպանունքի առարկան, հոգևոր, բարոյական բարձրագույն արժեքների կրողը: Իր հերթին անհատը առաջնորդի ենթական է, նրա որոշումները կատարողը: Չինացին աշխատասեր է՝ հասարակության հարգանքին արժանանալու, հասարակության հարստության, առաջընթացի մեջ իրենը տեսնելու բնավորությամբ:

Ճապոնացին բնության զավակն է՝ շրջակա բնական միջավայրը աստվածացնելու աստիճան: Նրա պաշտպանունքի առարկան բնությունն է, գերնպատակը՝ շրջակա միջավայրի ներդաշնակությունը, մարդկային փոխհարաբերությունները բնական ներդաշնակությանը համարժեք դարձնելը: Ըստ նրա դավանած սինտոիստական կրոնի բնության յուրաքանչյուր բաղադրիչ ունի իր որոշակի և կարևոր տեղն ու դերը: Կատարելիության աստիճանի վրա են գտնվում բնության բոլոր բաղադրիչների, երևույթների փոխհարաբերությունները: Նույն կատարելիությանը հասնելու սկզբունքների հենքի վրա են կառուցվում հասարակական հարաբերությունները՝ խիստ կարևորելով յուրաքանչյուր անդամի դերն ու նշանակությունը: Ճապոնացին իր աշխատավայրի, կոլեկտիվի անդամ է, ըստ իր արժանիքների: Փոքր ձեռնարկությունների և գերհզոր մոնոպոլիստական ընկերությունների բաժնեթղթերի մեծ մասը կոլեկտիվի, բո-

լոր աշխատողների սեփականությունն է: ճապոնացին միասնական, սյուվիզմի սկզբունքով աշխատելու դասական օրինակ է:

Չնդուականության գաղափարախոսության մեջ գլխավորը բարոյական և հոգևոր արժեքներն են, մարդու և բնության ներդաշնակության, մարդակային կյանքի ներդաշնակության, կայուն հասարակության սկզբունքները, որոնց գրավականը արագ զարգացող տնտեսությունն է, բարձր տեխնոլոգիաները ապագայի նկատմամբ մեծ հավատքը: Բազմազգ, բազմակրոն, բազմացեղ ժողովուրդների մեջ ընդհանուր համամարդկային արժեքներով հարստացած գաղափարի բերելն է: Հինդիկը աշխատասեր է, հանդուրժող, համակերպվող, հասարակությանը, պետությանը, հայրենի հողին, բնակավայրին նվիրված:

Եվ՝ հնդիկը, և՛ չինացին խոր հարգանք ունեն իրենց նախնիների նկատմամբ. նրանք հիշում են իրենց տոհմածառի հազարամյա պատմությունը: Այս բոլորը հասարակության կյանքը դարձնում է ավելի ներդաշնակ, ուր ավելի ու ավելի են բարելավվում աշխատելու և արարելու հնարավորությունները:

Չուդայականությունը աշխարհում ամենից մեծ աշխարհագրություն ունեցող կրոնն է: Նրա գաղափարներով, ճշմարտացիությամբ դաստիարակված հրեան առաջին հերթին իր հայրենիքի՝ «Ավետյաց երկրի» քաղաքացին է: Նրա բարգավաճմանն է կոչված հրեայի գիտակցական կյանքը: Հրեան իր երկրի տերն է էությամբ, ուր էլ որ ապրի, պատրաստ է օգնելու երկրին, հայրենակիցներին: Այս ամենի արդյունքը հզոր տնտեսություն, բարձր կենսամակարդակ ունեցող Իսրայելն է:

Կենտրոնական Ասիայի զարգացմանը նպաստեցին Սովետական Միության կառավարության կապիտալ մեծ ներդրումները ենթակառուցվածքի ստեղծման, լեռնահանքային ու լեռնամետալուրգիական, մեքենաշինության, թեթև արդյունաբերության, գյուղատնտեսության, մշակույթի զարգացման համար. այստեղ էին ուղարկվում (աքսորվում) աշխատանքային բարձր հմտություններ ունեցող գերմանացիներ, կորեացիներ և այլ ժողովուրդներ:

Հնագույն պետություն ունեցող *Հայաստանի և Վրաստանի* տնտեսական զարգացմանը նպաստեցին ներքին մտավոր հզոր կարողությունները, այլ երկրներից հայրենիք վերադարձած խոշոր գիտնականները:

Այնուհանդերձ Կենտրոնական Ասիայի, Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի տնտեսվարողները չկարողացան հաղթահարել

հետխորհրդային ճգնաժամը. նրանց տնտեսությունը քայքայվեց, իսկ վերակառուցումը շատ դանդաղ է ընթանում:

Ասիական երկրների տնտեսության զարգացման միտումները, զարգացվածության աստիճանի համեմատությունները ցույց են տալիս, որ տնտեսության զարգացման գրավականը բնառեսուրսային կարողություններն են, սակայն ավելի կարևոր են աշխատանքային նորությունները: Ճապոնիայի փորձը վկայում է, որ աշխատանքի կազմակերպման, հասարակական հարաբերությունների ներդաշնակման միջոցով կարելի է հաղթահարել բնության դժվարությունները:

2. ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԵՆՔԱՅԻՆ ՃՅՈՒՂԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ասիայում միմյանց հետ զոյատևում են տնտեսավարման հնագույն, կացութաձևերի մնացորդները, ժամանակակից ձևերը: Որոշ երկրներում դեռևս պահպանվել են ֆեոդալական ձևերը: Առանձին ցեղեր (Աֆղանստանում, Պակիստանում, Ինդոնեզիայում և այլ երկրներում) համատեղ մշակում են հողը, զբաղվում են անասնապահությամբ. ստացած արդյունքը հասարակության անդամների սեփականությունն է:

Տնտեսավարման ամենատարածված ձևը կապիտալիստականն է, վարձու աշխատանքը: Ճապոնիայում ձեռնարկությունների մեծ մասը կոլեկտիվ սեփականություն է՝ բաժնեթղթերի ձևով: Չինաստանի ձեռնարկությունների մի մասի աշխատանքային գործունեությունը որոշում է կոլեկտիվը: Ասիայում ավելի արագ զարգանում են տնտեսավարման կապիտալիստական ձևերը՝ կապված արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ խոշոր մասնավոր ձեռնարկությունների ստեղծման հետ:

ա/ Արդյունաբերությունը բազմաճյուղ է և բազմաբնույթ. մի կողմից՝ գիտատար բարձր տեխնոլոգիաներն են՝ հեռակապի միջոցներ, էլեկտրոնային, էլեկտրատեխնիկական, տիեզերական և օդազնացային սարքաշինության, հրթիռաշինության, ատոմային արդյունաբերության արտադրություններն են, մյուս կողմից՝ հնագույն ճյուղերը:

Արդյունաբերության հնագույն ճյուղերը՝ գորգագործությունը, գործվածքների արտադրությունը, խեցեգործությունը, առաջին անհրաժեշտության ապրանքների արտադրությունը այսօր էլ կարևոր նշանակություն ունեն բնակչության կարիքները բավարարելու համար:


Արդյունաբերության նորագույն ճյուղերը արտադրանքի մի մասը արտահանում են արտաքին շուկա:

Մեծ նշանակություն ունի լեռնահանքային, մեքենաշինության ու սարքաշինության ճյուղերի արտահանությունը: Լեռնահանքային արդյունաբերության մեջ կարևոր են նավթի, բնական գազի, քարածխի, սև և գունավոր մետաղների արդյունահանումը և արտահանումը: Արդյունաբերության հիմնքային ուղղվածությունը ասիական երկրներին տնտեսական, քաղաքական մեծ վնասներ է տալիս, և նրանց գերխնդիրն է վերամշակող ճյուղերի զարգացումը:

Աշխարհում Ասիան նավթ, բնական գազ, քարածուխ արդյունահանող գլխավոր շրջանն է:

Ասիայի *քարածուխ* արդյունահանող 7 առաջատար երկրները տալիս են աշխարհում արդյունահանվող քարածխի 48 %-ը: Ընդ որում միայն Չինաստանը տալիս է ածխի համաշխարհային հանույթի 35 %-ը, Հնդկաստանը՝ 7,3 %-ը, Ինդոնեզիան՝ 2,3 %-ը (մանրամասն տես, գծ. 4):

Գծ. 4



Ասիայի քարածուխ արդյունահանող գլխավոր երկրները (2004թ.)

Համաշխարհային մասշտաբով Ասիայի լեռնահանքային արդյունաբերության առանցքային ճյուղը *նավթի և բնական գազի* արդյունահանումն է: Նավթը և գազը արդյունահանող և արտահանող երկրների ազգային եկամտի գլխավոր աղբյուրն է: Նավթը և գազը դարձել են աշխարհաքաղաքական, միջպետական հարաբերություն-

ների գլխավոր գործոնը: Ասիական նավթը և բնական գազն են համաշխարհային ֆինանսական շուկայի կարգավորիչը: Ասիայում առկա «թեժ» կետերի մեծ մասից նավթի հոտ է գալիս: Նավթով հարուստ շրջաններում բախվում են գերտերությունների շահերը:

ԱՄՆ-ի, Եվրոպայի գերտերությունների ազգային շահերի հիմնական շրջաններից մեկը հազարավոր կմ հեռու՝ Պարսից ծոցի երկրներում է: Այստեղ են ԱՄՆ-ի ռազմածովային կարևոր ուժերը: Արևմուտքի գերտերություններն են որոշում Հարավարևմտյան Ասիայի երկրների ու ժողովուրդների ճակատագիրը: Այստեղ միջպետական, ներպետական, միջէթնիկական բախումների մեծ մասի պատճառը բացահայտված կամ քողարկված «նավթային» շահն է: Նավթն է միջազգային փոխհարաբերությունների հեռահար քաղաքականության կիզակետում:

Նավթ արդյունահանող գլխավոր երկիրը Սաուդյան Արաբիան է՝ 551,3 մլն տ, երկրորդ տեղում Չինաստանն է՝ 210,7 մլն տ, երրորդ տեղում Իրանը՝ 230 մլն տ: Ասիայի նավթ արդյունահանող 11 առաջատար երկրները տալիս են համաշխարհային նավթի 1/3-ը:

Ասիայի նավթը իր վճռորոշ տեղն ունի նավթի համաշխարհային շուկայում: Խնդիրն այն է, որ խոշոր նավթատեր երկրներում համեմատաբար փոքր են վերամշակման հնարավորությունները, որի պատճառով արդյունահանվող նավթի մեծ մասը արտահանվում է: Քուվեյթը արտահանում է արդյունահանված նավթի 85 %-ը, Սաուդյան Արաբիան՝ 83, Իրաքը՝ 77, Իրանը 63: Ասիայում արտահանվող նավթի մի մասը սպառվում է ասիական շուկայում: Խոշոր սպառողներն են Ճապոնիան, Չինաստանը, Չնդկաստանը, Կորեայի հանրապետությունը: Այս չորս պետությունները միասին սպառում են Ասիայում արդյունահանվող նավթի 44 %-ը: Ասիական նավթի մյուս խոշոր ներմուծող տերություններն են՝ ԱՄՆ-ն, Գերմանիան, Ֆրանսիան, Իտալիան:


Առանց Ռուսաստանի Ասիական մասի Ասիային բաժին է ընկնում աշխարհում արդյունահանվող բնական գազի 23 %-ը: Գազ արդյունահանող գլխավոր երկիրը Իրանն է՝ 83,9 մլրդ խմ, երկրորդ տեղում Ինդոնեզիան 77,6 մլրդ խմ: Այնուհետև գալիս են Սաուդյան Արաբիան, Ուզբեկստանը, Թուրքմենստանը (մանրամասն տես գծ. 5):

Սաուդյան Արաբիան և ԱՄՆ-ն արդյունահանվող բնական գազը ամբողջությամբ սպառում են: Իրանը 3,6 մլրդ խմ գազ արտահանում է, սակայն 5,2 մլրդ խմ ներմուծում: Ինդոնեզիան արտահանում է արդյունահանվող բնական գազի 72 %-ը, Թուրքմենստանը 71, Կա-

տարը 60, Մալազիան 42: Բնական գազ ներմուծող գլխավոր երկիրը ճապոնիան է՝ 77,7 մլրդ խմ, երկրորդ տեղում Կորեայի հանրապետությունը՝ 21,0 մլրդ խմ:


Ասիան դարձել է աշխարհի պողպատ արտադրող գլխավոր շրջանը: Միայն 10 երկրներ տալիս են աշխարհում արտադրվող պողպատի 58 %-ը: Պողպատ արտադրող գլխավոր երկրներ են Չինաստանը, ճապոնիան, Հնդկաստանը, Կորեայի հանրապետությունը (մանրամասն տես գծ. 6):

գծ. 5



Ասիայի բնական գազ արդյունահանող գլխավոր երկրները (2006թ.)

գծ. 6



Պողպատի արտադրությունն Ասիայում մլն տ (2007 թ.)

Գյուղատնտեսությունը. Ասիայի գյուղատնտեսությունը ունի հազարամյակների պատմություն: Այստեղ են առաջին անգամ մշակվել են բազմաթիվ վայրի բույսեր, ընտելացվել կենդանիներ:

Գյուղատնտեսությունը ունի իր կարևոր դերը 3.9 մլրդ մարդու կերակրելու գործում: Ասիան ապահովում է համաշխարհային շուկան թեյով, համեմունքներով, չոր մրգերով և այլ գյուղատնտեսական մթերքներով:

Ասիայի երկրներից մի մասում համախառն ներքին արդյունքի մեջ մեծ է գյուղատնտեսության տեսակարար կշիռը: Պատճառը արդյունաբերության և սպասարկման ոլորտների զարգացման ցածր մակարդակն է:

Ասիայի գյուղատնտեսությունը զարգացել է էքստենսիվ ուղությամբ: Տնտեսավարման այդ ձևը այժմ էլ շարունակվում է երկրների մեծ մասում: Սակայն այդ ձևը արդեն իրեն սպառել է. սահմանափակ են նոր հողերի յուրացման կամ անասունների գլխաքանակի (ի հաշիվ բնական արոտավայրերի) ավելացման հնարավորությունները: Ելնելով վերոհիշյալ վիճակից՝ Ասիայի երկրներում աշխատանքներ են տարվում գյուղատնտեսության ինտենսիվացման ուղությամբ: Բարձրացվում է գյուղատնտեսության քիմիացման, մեքենայացման մակարդակը, կառուցվում են նոր ոռոգիչ համակարգեր, կատարվում են հողաբարելավման աշխատանքներ: Այդ առումով զգալի հաջողություններ ունեն Իսրայելը, Ճապոնիան, Թուրքիան, Չինաստանը, Չնդկաստանը: Գյուղատնտեսության զարգացման գլխավոր բազա է մնում հողային ֆոնդը: Ակտիվ հողերի մեջ են մտնում վարելահողերը և բազմամյա տնկարկները: Ակտիվ հողեր ունեցող առաջատար երկրներն են Չնդկաստանը՝ 169 մլն հա, Չինաստանը՝ 143, Թուրքիան՝ 73, Ղազախստանը՝ 22: Ակտիվ հողերը մեծ տարածություն են գրավում Ուզբեկստանում, Իրանում, Պակիստանում, Հարավարևելյան Ասիայի երկրներում:

Գյուղատնտեսության զարգացածության կարևոր ցուցանիշներից է ակտիվ հողերի և հողային ֆոնդի հարաբերակցությունը: Ակտիվ հողերը ամենից մեծ տեսակարար կշիռ ունեն Բանգլադեշի հողային ֆոնդում՝ 65.2%, Չնդկաստանում՝ 51.4, Ֆիլիպիններում՝ 36.0, Թաիլանդում՝ 34.5, Թուրքիայում՝ 33,2: Պատճառը բերրի հողերով ընդարձակ հարթավայրերն են, բարենպաստ բնակլիմայական պայմանները, ոռոգման մեծ հնարավորությունները:

Ակտիվ հողերի տեսակարար կշիռը տարածքի համեմատ շատ ցածր է Օմանում, Քուվեյթում, Մոնղոլիայում՝ մինչև 1%: Սաուդյան Արաբիայում այդ հողերի տեսակարար կշիռը 1.7% է, Կատարինը՝ 1.9, ԱՄԷ՝ 3: Պատճառը անապատային բնակլիմայական պայմաններն են և ոռոգման ջրի պակասը:

Ասիական երկրները միմյանցից խիստ տարբերվում են տարածքի հերկվածության աստիճանով: Ինչպես երևում է 3 աղյուսակից հերկվածության ամենաբարձր աստիճան ունեն Բանգլադեշը, Հնդկաստանը, Կամբոջան, Թուրքիան: Դրանք ընդարձակ բերրի հողեր ունեցող երկրներ են: Հերկվածության ցածր մակարդակ ունեն Օմանը, Եմենը, Բրունեյը, Քուվեյթը, Մոնղոլիան, ԱՄԷ-ն: Այստեղ հերկվածությունը չի անցնում տարածքի մեկ տոկոսից:

Քիչ հերկվածություն ունեցող երկրներից ութը գտնվում են անապատներում, Սինգապուրի տարածքը գրեթե ամբողջությամբ կառուցապատված է, իսկ Բրունեյի տարածքը մեծ մասամբ ճահիճներ և արևադարձային անտառներ են:

Աղյուսակ 3

Ասիայի ամենահերկված և ամենից քիչ հերկված տասը երկրները (2006թ.)

Ամենահերկված				Ամենից քիչ հերկված
Երկիր		Տարածքի հերկվածությունը %		Երկիր
1.	Բանգլադեշ	62.1	0.12	Օման
2.	Հնդկաստան	48.6	0.53	Եմեն
3.	Թուրքիա	29.8	0.57	Բրունեյ
4.	Թաիլանդ	27.5	0.73	Քուվեյթ
5.	Սիրիա	24.8	0.76	Մոնղոլիա
6.	Պակիստան	24.4	0.77	ԱՄԷ
7.	Ղուսիսային Կորեա	22.4	1.45	Սինգապուր
8.	Ադրբեջան	20.6	1.64	Կատար
9.	Վիետնամ	19.9	1.67	Սաուդյան Արաբիա
10.	Ֆիլիպիններ	19.0	2.67	Հորդանան
	Աշխարհում	13.3	13.3	

Բարձր հերկվածություն ունեցող երկրներում կան ընդարձակ գետահովիտներ, հարթավայրեր, սարահարթեր, ուր բարենպաստ են նաև ագրոկլիմայական պայմանները, կան ոռոգման համար բավարար ջրային ռեսուրսներ:


Ասիայի գյուղատնտեսության զարգացման գլխավոր գրավակա-
նը ռոռոզովի հողային ֆոնդն է: Ռոռոզովի հողերով հարուստ երկրներն են
Հնդկաստանը՝ 55.8 մլն հա, Չինաստանը՝ 54.6 մլն հա, Պակիստանը՝
18մլն հա, Իրանը՝ 7.6 մլն հա, Թուրքիան՝ 5.9 մլն հա: Ռոռոզովի մեծ հո-
ղատարածքներ ունեն Թաիլանդը, Ուզբեկստանը, Իրաքը, Վիետնամը:

Բուսաբուծություն. Բուսաբուծությունը Ասիայի գյուղատնտե-
սության գլխավոր ճյուղն է: Պատճառը բուսաբուծության զարգաց-
ման ավելի բարենպաստ բնական պայմաններն են: Այս հարցում
կարևոր նշանակություն ունի նաև ասիական որոշ ժողովուրդների,
հատկապես Հնդկաստանի, Չինաստանի բնակիչների կենցաղում
մեծ տարածում գտած բուսակերությունը:

Ասիայում մշակում են մարդկությանը հայտնի գրեթե բոլոր մշա-
կաբույսերը: Ամենից մեծ տարածում ունի հացահատիկային, տեխ-
նիկական, առույգացնող բույսերի, համեմունքների մշակումը:

Վարելահողերի մեծ մասը զբաղված են հացահատիկային մշա-
կաբույսերով: Ամենատարածված հացահատիկային մշակաբույսը
բրինձն է: Ասիային է բաժին ընկնում աշխարհի բրնձի ցանքատարա-
ծությունների 4/5-ից ավելին: Ասիական տասը երիրների բրնձի ցան-
քատարածությունները կազմում են համաշխարհայինի 8,3%-ը
(127.4 մլն հա): Հնդկաստանի մասնաբաժինը 29% է, Չինաստանի-
նը՝ 18%, (մանրամասն տես գծ. 7): Դրանք տալիս են բրնձի համաշ-
խարհային արտադրանքի 86%-ը:

գծ. 7



Բրնձի ցանքատարածությունները աշխարհում (2003 թ.)


Բրնձի ցանքատարածություններով առաջին տեղը գրավում է Հնդկաստանը՝ 44 մլն հա, երկրորդ տեղում Չինաստանն է՝ 27.4 մլն - հա: Բրնձի բերքով առաջին տեղում Չինաստանն է՝ 166.4մլն տոննա, երկրորդ տեղում՝ Հնդկաստանը՝ 132 մլն տոննա (մանրամասն տես գծ. 7): Չնայած Չինաստանում բրնձի ցանքատարածությունները ավելի քիչ են, քան Հնդկաստանում, բայց այստեղ բրնձի արտադրությունը ավելի շատ է, պատճառը այն է, որ Չինաստանում, Հնդկաստանի համեմատությամբ, բրնձի բերքատվությունը երկու անգամ շատ է՝ 60.7 ցենտ-ներ հա-ից: Բրինձ մշակող առաջատար երկրներ են նաև Ինդոնեզիան, Բանգլադեշը, Վիետնամը, Թաիլանդը (մանրամասն տես աղյուսակ 4):

Աղյուսակ 4

Ասիայի բրինձ մշակող տասը առաջատար երկրները (2003 թ.)

Երկիր	Ցանքատարածությունը մլն հա	Բերքը մլն տ	Բերքատվությունը ց/հա
1. Չինաստան	27.40	166.42	60.7
2. Հնդկաստան	44.0	132.01	30.0
3. Ինդոնեզիա	11.48	52.08	45.4
4. Բանգլադեշ	11.10	38.06	34.3
5. Վիետնամ	7.45	34.52	46.3
6. Թաիլանդ	11.0	27.00	24.5
7. Մյանմա	6.65	74.64	37.1
8. Ֆիլիպիններ	4.09	14.03	34.3
9. Ճապոնիա	1.66	9.74	58.5
10. Պակիստան	2.21	6.75	30.5
Աշխարհ	153.32	588.56	33.7


Եգիպտացորեն: Ասիայի 15 երկրներին բաժին է ընկնում եգիպտացորենի համաշխարհային ցանքատարածությունների 29.3%-ը, բերքի՝ 25.6%-ը: Ամենից շատ եգիպտացորեն մշակող երկիրը Չինաստանն է: Նա առաջին տեղում է նաև եգիպտացորենի բերքով՝ 114.2 մլն տոննա: Ե՛վ ցանքատարածություններով, և՛ բերքով երկրորդ տեղում Հնդկաստանն է, երրորդ տեղում՝ Ինդոնեզիան: Եգիպտացորեն մշակող առաջատար երկրներ են նաև Թաիլանդը, Ֆիլիպինները, Վիետնամը, Թուրքիան (մանրամասն տես գծ. 8):



Ասիայի եգիպտացորեն արտադրող գլխավոր երկրները (2003թ.)

Ցորեն: Ասիական 15 երկրներին բաժին է ընկնում աշխարհի ցորենի ցանքատարածությունների 32.9%-ը, բերքի՝ 42.7%-ը: Ցորեն մշակող առաջատար երկրներն են Չինաստանը՝ 22մլն հա, (բերքը 86.1մլն տոննա), Հնդկաստանը՝ 25 մլն հա (բերքը՝ 65.1 մլն տոննա): Ցորեն մշակող գլխավոր երկրների մեջ են մտնում նաև Պակիստանը, Թուրքիան, Իրանը, Ղազախստանը, Ուզբեկստանը, Սիրիան և այլն (Մանրամասն տես գժ. 9):

Գժ. 9



Ասիայի ցորեն արտադրող գլխավոր երկրները (2003 թ.)

Վարելահողերի մի մասը զբաղված է տեխնիկական մշակաբույսերով: Ամենից շատ մշակվող տեխնիկական մշակաբույսը բամբակն է: Բամբակ մշակող գլխավոր երկրներն են Չինաստանը, Հնդկաստանը, Պակիստանը, Ուզբեկստանը, Սիրիան:

Ջութ մշակող գլխավոր երկրներն են Բանգլադեշը և Հնդկաստանը: Ասիան հայտնի է թեյի մշակությամբ: Սա թեյի հայրենիքն է: Թեյ մշակող գլխավոր երկրներն են Հնդկաստանը, Չինաստանը, Շրի Լանկան:

Հարավային և Հարավարևելյան Ասիայում ընդարձակ տարածություն են զբաղում կոկոսյան արմավենու, ցիտրուսի պլանտացիաները, Հարավարևմտյան Ասիան՝ արմավի, ծիթապտղի, ցիտրուսի մշակության գլխավոր շրջանն է:

Անասնապահությունը. Անապատային երկրներում տիրապետում է ոչխարաբուծությունը, ուղտաբուծությունը. տարածությունը հարուստ է բնական արոտավայրերով: Ոչխարաբուծության առաջատար երկրներն են Մոնղոլիան, Ղազախստանը, Չինաստանը, Հարավարևմտյան Ասիայի երկրները: Թուրքմենստանը հայտնի է կարակուլի ոչխարաբուծությամբ: Խոշոր եղջերավոր անասնապահությամբ նշանավոր են Թուրքիան, Հնդկաստանը: Հնդկաչինի երկրներում բուծում են գոմեշներ: Խոզաբուծությամբ ամենահայտնի երկիրը Չինաստանն է:

Ինքնաստուգման հարցեր

1. Տվե՛ք Ասիայի տնտեսության զարգացման բնական ներուժի գնահատականը:
2. Տվե՛ք Ասիայի տնտեսության զարգացման հասարակական ներուժի գնահատականը:
3. Որո՞նք են արդյունաբերության հիմնական ճյուղերը, որոնք են դրանց ՀՀ զարգացման միտումները:
4. Որո՞նք են գյուղատնտեսության հիմնական ճյուղերը: Տվե՛ք նրանց բնութագիրը:

ԳԼՈՒԽ ԵՐԲՈՐԴ

ՏԱՐԱԾԱՐՁԱՆՆԵՐԸ ԵՎ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ասիա աշխարհամասը գրավում է 44,4 մլն քկմ տարածք: Տարածքի 29 %-ը մտնում է Ռուսաստանի կազմի մեջ, մնացածը բաժանվում է 5 խոշոր տարածաշրջանների՝ Արևելյան Ասիա, Հարավային Ասիա, Հարավարևելյան Ասիա, Հարավարևմտյան Ասիա, Կենտրոնական Ասիա: Այս բաժանման հիմքում ՄԱԿ-ի կողմից առաջադրված սխեման է:

Այս հինգ տարածաշրջանները միմյանցից տարբերվում են իրենց տարածքով, բնակչության թվով, տնտեսության զարգացման մակարդակով: Տարբեր է նրանց զարգացման պատմությունը, բնակչության էթնիկական կառուցվածքը, կրոնը, մշակույթը:

Տարածաշրջաններից յուրաքանչյուրը յուրահատուկ է իր բնառեսուրսային կարողություններով, հասարակական կյանքի կազմակերպման հմտություններով:

Տարածաշրջանում միտումներ կան համատեղ լուծելու տնտեսական, քաղաքական, սոցիալական խնդիրները:

Տարածքով և բնակչության թվով ամենամեծը Արևելյան Ասիան է: Նա առաջին տեղում է համախառն ներքին արդյունքի ընդհանուր ծավալով, մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ով. արտահանման և ներմուծման չափերով: Տարածքի մեծությամբ երկրորդ տեղում Հարավարևմտյան Ասիան է, բնակչության թվով՝ Հարավային Ասիան (մանրամասն տե՛ս աղյուսակ 5):

Աղյուսակ 5

Ասիայի տարածաշրջանի տարածքը և բնակչությունը 2007 թ.

Տարածաշրջան	Տարածքը		Բնակչությունը	
	իզ քկմ	%	մլն մարդ	%
1. Արևելյան Ասիա	11755,0	37,3	1539,1	39,0
2. Հարավային Ասիա	4487,7	14,2	1459,6	37,0
3. Հարավարևելյան Ասիա	4495,3	14,3	580,3	14,7
4. Հարավարևմտյան Ասիա	6780,1	21,5	307,1	7,8
5. Կենտրոնական Ասիա	3994,4	12,7	60,1	1,5
Ընդամենը	31512,6	100	3946,2	100

Մեկ շնչին ընկնող ՀՆԱ ամենից ցածր մակարդակ ունի Հարավային Ասիան, որը պայմանավորված է մի կողմից՝ արտադրողական ուժերի զարգացման ցածր մակարդակով, մյուս կողմից՝ բնակչության մեծ քանակով: Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի մակարդակը ցածր է նաև Կենտրոնական Ասիայում, որը կապված է այս տարածաշրջանում հետխորհրդային տարիներին տեղի ունեցած տնտեսական ճգնաժամի հետ:

1. ՀԱՐԱՎԱՐԵՎՍՅԱՆ ԱՍԻԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Տարածաշրջանը ունի աշխարհագրական շատ հարմար դիրք: Նրա վրայով են անցնում Եվրոպան Ասիային, Ասիան Աֆրիկային կապող կարևորագույն ցամաքային ճանապարհները: Առանձնապես մեծ է Սև և Կասպից ծովերի միջև սեղմված Կովկասի դերը, որը կամուրջ է հյուսիսի և հարավի միջև: Բոսֆորի վրայով են անցնում Ասիան Եվրոպային կապող ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող ճանապարհները: Բոսֆորի նեղուցը Սև և Միջերկրական ծովերի երկրները կապող միակ ծովային ուղին է: Սուեզի ջրանցքը եզակի ու կարճ ծովային ճանապարհն է Միջերկրական ծովի և Հնդկական օվկիանոսի միջև:

Տարածաշրջանը ունի ռազմավարական կարևոր դիրք, որի պատճառով դարձել է մշտական կռվախնձոր դեպի Հնդկական օվկիանոս ելք փնտրող Ռուսաստանի և նրան հակադրվող արևմտյան պետությունների միջև: Հետևանքը այն է, որ տարածաշրջանի պետությունների ներքին, միջէթնիկական խնդիրները «լուծվում» են ոչ թե տեղի ու տեղացիների, այլ խոշոր պետությունների շահերի տեսանկյունից, կամ էլ միտումնավոր ձևով չեն լուծվում:

Տարածաշրջանի պետությունները դեռևս միասնական չեն իրենց տնտեսական քաղաքականությամբ: Նրանցից յուրաքանչյուրը իր տնտեսական շահերը փնտրում և իրագործում է այլ շրջաններում: Սակայն համաերկրային տեղական գործընթացները հանգեցնում են նրան, որ ցանկացած տարածաշրջանում տնտեսական, սոցիալական խնդիրների լուծման լավագույն ձևը հարևանների հետ համագործակցելն է: Տնտեսական ինտեգրումը ավելի մեծ արդյունք է տալիս տարածաշրջանային առումով: Տնտեսական համագործակցությունը նպաստավոր պայմաններ կստեղծի միջպետական, միջէթնիկական հակամարտությունների լուծման համար: Խնդրի լուծման գրավականը կարող են լինել բնական մեծ ռեսուրսները, դրանցից

ստացվող եկամուտները, աշխատանքային կարողությունները, այստեղ ապրող բոլոր ժողովուրդների խաղաղ ապրելու ձգտումները:

Աղյուսակ 6


Հարավարևմտյան ասիայի պետությունների տարածքը և բնակչությունը

Պետությունը	Մայրաքաղաքը	Տարածքը իզ քկմ	Բնակչությունը մլն մարդ
1. Ադրբեջան	Բաքու	86.6	8.0
2. ԱՄԷ	Աբուդաբի	83.7	2.6
3. Աֆղանստան	Քաբուլ	347.6	31.1
4. Բահրեյն	Մանամա	0.64	0.7
5. Եմեն	Ադեն	527.0	21.4
6. Թուրքիա	Անկարա	755.7	70
7. Իսրայել	Երուսաղեմ	20.8	6.3
8. Իրան	Թեհրան	1648.0	68.7
9. Իրաք	Բաղդադ	4.4.9	27.8
10. Լիբանան	Բեյրութ	10.4	3.87
11. Կատար	Դոհա	11.4	0.9
12. Կիպրոս	Նիկոզիա	9.2	0.8
13. Հայաստան	Երևան	29.8	2.9
14. Հորդանան	Ամման	89.2	5.9
15. Սաուդյան Արաբիա	Էր Ռիադ	2240.0	27.0
16. Սիրիա	Դամոսկոս	185.2	18.9
17. Վրաստան	Թբիլիսի	69.7	4.7
18. Քուվեյթ	Էլ Քուվեյթ	17.8	2.4
Օման	Մասկաթ	212.5	31.0

Տարածաշրջանը մարդկային քաղաքակրթության հնագույն օրրան է: Այստեղ են ապրել անդրջրհեղեղյան մարդիկ: Ըստ Աստվածաշնչի համաշխարհային ջրհեղեղից փրկված Նոյը իր գերդաստանով փրկություն է գտել Արարատ լեռան վրա, ջրհեղեղից հետո մարդկային ցեղի շարունակությունը սկսվել է Արարատյան դաշտից: Արաքսի ափին է հիմնվել հետջրհեղեղյան մարդու առաջին բնակավայրը: Բազմանալով՝ Նոյի հետնորդները տարածվել են ամբողջ աշխարհով մեկ: Գուցե և դա է այն պատճառներից մեկը, որ մինչև այսօր էլ համեմատաբար մեծ է այստեղ ապրող նույն ժառանգորդների արտագաղթելու «սովորույթը»:

* Այդ թվում ԼՂՀ 10.1 իզ քկմ

Հարավարևմտյան Ասիան համաշխարհային կրոնների՝ քրիստոնեության, մահմեդականության, նաև հուդայականության ծագման կենտրոնն է: Այստեղ են ծնվել ու իրենց մահկանացուն կնքել Քրիստոսը և Մուհամեդը: Նրանց աճյունները ամփոփած Երուսաղեմ և Մեդինա քաղաքները դարձել են համայն քրիստոնեության և մահմեդականության սրբավայրեր: Հազարամյակների ընթացքում տեղի է ունեցել այստեղ ապրող ժողովուրդների բռնի և կամավոր ծուլում, զուգահեռ՝ առանձին էթնոսների մարում, այլերի հզորացում, նորերի ձևավորում: Սա հայերի և վրացիների, արաբների, հրեաների, պարսիկների բնօրրանն է, եկվոր ցեղերից ձևավորված աղյուսակների, թուրքերի և այլ ժողովուրդների ապրելավայրը:



*Նկ. 1. Սնտիկ ժամանակաշրջանի շինության ավերակներ
Ջերաշում (Հորդանան)*

ա/ Ձարգացման բնական նախադրյալները: Հարավարևմտյան Ասիայի մակերևույթը ունի բարձր կառուցվածք. մի կողմից՝ ընդարձակ հարթավայրեր են, մյուս կողմից՝ բարձր լեռներ: Մեծ տարածություն են զբաղում սարահարթերը:

Ամենախոշոր հարթավայրերը գտնվում են Տիգրիս, Եփրատ, Կուր, Արաքս գետերի հովիտներում: Ամենից ընդարձակը Միջագետքի և Կուր-Արաքսյան հարթավայրերն են: Ոչ մեծ հարթավայրեր կան Սեյխան, Հորդանան, Արածանի, Ռիոն գետերի հովիտներում, Կասպից ծովի հարավային ափերին: Հարթավայրերը՝ շնորհիվ բերրի հո-

ղերի և ոռոգման բարենպաստ պայմանների, հողագործության կարևոր շրջաններ են: Հարթավայրերում բարենպաստ պայմաններ կան նաև ենթակառուցվածքների ստեղծման և ընդհանրապես կառուցապատման համար: Այստեղ են գտնվում խոշորագույն քաղաքային բնակավայրերի մեծ մասը:

Տարածաշրջանի հյուսիսում Պոնտական, Մեծ Կովկասի, Էլբուրսի և Կոպետդաղի լեռներն են: Դրանք դժվարացնում են կապը այլ շրջանների հետ, ավելի մատչելի են լեռնանցքները: Այս լեռնաշղթայից հարավ հայկական և իրանական լեռնաշխարհն է՝ բազմաթիվ լեռնաշղթաներով, միջլեռնային հովիտներով, սարահարթերով: Բնակեցման համար պայմանները ավելի բարենպաստ են Հայկական լեռնաշխարհի լեռնային հովիտներում և սարահարթերում, ուր կան բերրի ոռոգովի հողեր, հարմար պայմաններ ենթակառուցվածքների կառուցման համար: Իրանական լեռնաշխարհում բնակեցման համար հարմար պայմաններ կան սահմանամերձ շրջաններում, թեև այստեղ ռելիեֆը ավելի բարդ է ու դժվարամատչելի: Ներքին շրջանների մակերևույթը մեղմաթեք է, որտեղ տարածվում են ընդարձակ սարահարթեր:

Պոնտական լեռներից հարավ տարածվում է Անատոլիական սարահարթը, որը դեպի հարավ ձգվում է մինչև Արևմտյան Տավրոսի և Հայկական Տավրոսի լեռները: Այստեղ ռելիեֆի ձևերը բարդ չեն և յուրացման պայմանները բարենպաստ են:

Միջագետքի դաշտավայրից հարավ ընդհուպ մինչև Կարմիր և Արաբական ծովերը տարածվում են ընդարձակ սարահարթեր: Կարմիր ծովի առափնյա շրջաններում նեղ գոտիով, իսկ Պարսից ծոցի հարավային, հարավ-արևմտյան ափերին ավելի լայն գոտիով հարթավայրերը: Ե՛վ հարթավայրերում և՛ սարահարթերում մակերևույթի ձևերը դժվարություններ չեն ներկայացնում իրացման համար:

Պարսից ծոցի Արաբական թերակղզու առափնյա շրջաններում բազմահարկ շենքերի կառուցման համար դժվարություններ են առաջացնում ավազի հզոր շերտերը: .

Կլիման: Կասպից ծովի հարավային ափերին, Սև ծովի առափնյա շրջաններում ամբողջ տարին ջերմաստիճանը դրական է, տեղումների քանակությունը շատ, որը հնարավորություն է տալիս զբաղվելու անջրդի հողագործությամբ, ցիտրուսների, թեյի և այլ ջերմասեր ու խոնավասեր բույսերի մշակությամբ:

Ջերմաստիճանը դրական է նաև Միջերկրականի ափերին, սակայն այստեղ տեղումների սեզոնայնությունը զգալի դժվարություններ է առաջացնում հողագործության համար: Կայուն բերքի ապահովման

համար անհրաժեշտ է լինում կատարել արհեստական ոռոգում: Սա ցիտրուսների, թեյի, ծխախոտի, դափնու մշակության շրջան է:

Անատոլիական սարահարթում, Իրանական լեռնաշխարհի ներքին շրջաններում, Միջագետքում ամառները շոգ են, ձմեռները՝ տաք, մթնոլորտային տեղումները մինչև 100 մմ: Այստեղ հնարավոր է զբաղվել միայն ոռոգովի հողագործությամբ: Արաբական անապատներում ամբողջ տարին ջերմաստիճանը դրական է, տեղումների քանակությունը՝ 50-70 մմ: Սա գյուղատնտեսական առումով ռիսկային գոտի է, միայն ոռոգման պայմաններում կարելի է ստանալ կայուն բերք: Անապատային աղքատիկ բուսականությունը հնարավորություն է տալիս զբաղվելու քոչվոր անասնապահությամբ (ոչխարաբուծություն, ուղտաբուծություն):

Լեռնային շրջանների հովիտներում, սարահարթերում բարենպաստ պայմաններ կան հացահատիկի մշակության համար: Կայուն բերք ստանալու համար անհրաժեշտ է կատարել արհեստական ոռոգում: Այդ է պատճառը, որ դեռ հազարամյակներ առաջ և մինչև այսօր տարածաշրջանի նյութական մշակույթի կարևորագույն տարրերից են ջրանցքները, ջրամբարները, ջրհորները քյարիզները (ստորգետնյա ջրանցքներ):

Չողերը: Խոշոր գետերի հովիտներում, գետաբերուկներից առաջացել են *կիսաանապատային գորշահողեր*: Մի կողմից՝ հազարամյակներ շարունակ մշակվելով՝ դրանք դարձել են ոռոգելի հողեր, իսկ մյուս կողմից՝ սխալ օգտագործման հետևանքով դրանց մի մասը աղակալվել է, մի մասը ճահճակալվել:

Լեռնային սարահարթերում ձևավորվել են բերրի սևահողեր, հատկապես Հայկական լեռնաշխարհում և Մեծ Կովկասում ու Անատոլիայում, ուր լավ պայմաններ կան հացահատիկի և տեխնիկական կուլտուրաների մշակության համար:

Անապատներում տարածվում են ավազահողերը, քարքարոտ կավահողերը, որոնք արհեստական ոռոգման և պարարտացման պայմաններում բարձր բերք են տալիս: Անապատներում, հատկապես Իրանական լեռնաշխարհի ներքին շրջաններում մեծ տարածում ունեն աղուտները, որոնք քիչ են պիտանի հողագործության համար:

Անտառները տարածվում են Մեծ Կովկասի, Պոնտոսի, Էլբուսի լեռներում, Հայկական լեռնաշխարհում, Միջերկրական, Էգեյան ծովերի առափնյա շրջաններում, Արաբական թերակղզու ծայր հարավ արևմուտքում, Կիպրոսում: Դրանք ունեն հողապաշտպանական, ջրապաշտպանական, ռեկրեացիոն նշանակություն, հարուստ են վայրի

մրգերով, հատապտուղներով: Արդյունաբերական նպատակներով քիչ են օգտագործվում: Ամենամատառապատ երկիրը Վրաստանն է:

Լեռնային շրջաններում անտառներից վերև տարածվում են ալպյան մարգագետինները: Մեծ արժեք են ներկայացնում Հայկական լեռնաշխարհի մարգագետինները: Դրանք ամառային արոտավայրեր են: Հայկական լեռնաշխարհի ալպյան մարգագետինների շրջանում կան շատ աղբյուրներ, օրինակ՝ Բյուրակնի, Արագածի, Գեղամա լեռներում:

Գետերը և լճերը: Տարածաշրջանի գետերը պատկանում են Սև, Կասպից, Էգեյան, Միջերկրական, Կարմիր ծովերի և Պարսից ծոցի ավազաններին: Բոլոր գետերն էլ սկիզբ են առնում բարձր լեռներից, արագահոս են, ունեն ջրաէներգետիկ մեծ ներուժ:

Խոշոր գետերն են՝ Արաքսը, Կուրը, Տիգրիսը, Եփրատը, Շատ էլ Արաքը, ճորոխը, Ռիոնը, Հորդանանը: Մեծ է գետերի ոռոգչական նշանակությունը: Դրանք վրա կառուցվել են բազմաթիվ ջրամբարներ՝ Քեբանի, Մինգեչաուրի, Ախուրյանի, Նախիջևանի և այլն: Ջրամբարների հզոր ցանց է ստեղծվել Եփրատ գետի և նրա վտակների վրա (հատկապես Թուրքիայի տարածքում): Ջրամբարները ունեն էներգետիկ և ոռոգման կարևոր նշանակություն: Նրանցից սկիզբ են առնում բազմաթիվ ջրանցքներ, ջրհան կայաններ:

Տարածաշրջանում կան խոշոր և բազմաթիվ մանր լճեր՝ Վանը, Ուրմիան, Սևանը, Տուզը, Դերյաջե Նեմեկը: Ձկնաշխարհով հարուստ լիճը Վանն է: Մեծ է Ուրմիա լճի և Մեռյալ ծովի ջրերի բուժիչ նշանակությունը: Վանա լիճը օգտագործվում է նաև նավարկության համար:

Օգտակար հանածոներ: Տարածաշրջանը հարուստ է *նավթի, բնական գազի, քարածխի, սև և գունավոր մետաղների* պաշարներով: Սա աշխարհում նավթագազաբեր խոշորագույն շրջանն է: Տարածաշրջանին բաժին է ընկնում նավթի համաշխարհային պաշարների 55 %-ը (115.89 մլրդ տոննա): Նավթով ամենահարուստ երկիրը Սաուդյան Արաբիան է, նրան է բաժին ընկնում տարածաշրջանի նավթի պաշարների 36.0 %-ը, բնական գազի 41.5 %-ը: Նավթի ռեսուրսներով երկրորդ տեղում Իրանն է՝ տարածաշրջանի ռեսուրսների 18.2 %-ը, համաշխարհայինի՝ 10 %-ը: Բնական գազի պաշարներով առաջին տեղում Իրանն է՝ համաշխարհայինի 15.4 %: Երկրորդ տեղում Կատարն է՝ 14.9 %:

Նավթի և բնական գազի ռեսուրսները ունեն ընդարձակ աշխարհագրություն: Նրանք տարածվում են Պարսից ծոցի ափերից մինչև

Կասպից ծովի ափերը: Միաժամանակ մեծ է նավթի կենտրոնացվածությունը միավոր տարածքի վրա: Տարածաշրջանի վեցը հանքավայրեր ունեն մեկ մլրդ տոննայից ավելի պաշարներ: Գիավարի (Սաուդյան Արաբիա) պաշարները 11.2 մլրդ տոննա են, Ադաջարինը՝ (Իրան) 10 մլրդ տոննա, Մեծ Բուրգանինը՝ (Քուվեյթ) 9.3 մլրդ տոննա, Կիրկուկինը՝ (Իրաք) 3.0 մլրդ տոննա:

Նավթաբեր շերտերը գտնվում են 1000-3000 մ խորություններում, հանքահորերի մեծ մասը շահագործվում է շատրվանային եղանակով: Նավթի որակը շատ բարձր է:

Նավթային ռեսուրսները կարող են ապագայում ավելանալ Պարսից ծոցի և Կասպից ծովի շելֆերում և ցամաքի ներքին շրջաններում նոր հայտնագործվող հանքավայրերի հաշվին:

Նավթը տարածաշրջանի երկրներից մեծ մասի եկամտի գլխավոր աղբյուրն է, ապրելու գործոն: Նավթն է այն գլխավոր պատճառը, որ այս տարածաշրջանում ավելի սուր բնույթ են կրում մեծ տերությունների աշխարհաքաղաքական շահերի բախումները, որոնց հետևանք են միջպետական համակարտությունները:

Ածխի զգալի ռեսուրսներ կան Թուրքիայում, Իրանում և Աֆղանստանում: Թուրքիայի ածխային ռեսուրսները զնահատվում են 7,2 մլրդ պայմանական վառելիք: Ամենախոշոր ավազանը Ջոնգուլդակն է, այստեղի ածուխը կոքսացող է: Գորշ ածխի զգալի պաշարներ կան Անատոլիայի ավազանում: Իրանում ածխաբեր ավազանները գտնվում են երկրի հյուսիսում: Նրանցից խոշորներն են՝ Քերմանինը, Սանգերուդինը և Ախդերբանդինը: Այստեղի ածուխը որակյալ է և կոքսացող: Աֆղանստանի ածխային ամենախոշոր ավազանը Դոխանի Տորն է: Ածխի զգալի պաշարներ կան նաև Վրաստանում՝ Տղվարչելիի և Տղիբուլիի ավազաններում:

Տարածաշրջանը հարուստ է նաև *սև և գունավոր մետաղների* մեծ պաշարներով: Մեծ են նաև հանքային ջրերի ռեսուրսները՝ հատկապես Հայաստանում և Վրաստանում: Թուրքիայում կան *քրոմիտների*, Հորդանանում և Իսրայելում *կալիումական աղերի* (Սեռյալ ծովում), Իրաքում և Սիրիայում *ֆոսֆորիտների*, Իրանում մանգանի, *քրոմիտների*, *ցիկելի*, Սաուդյան Արաբիայում երկաթաքարի, պղնձի, եմենում՝ *ոսկու*, *արծաթի*, *մանգանի*, Հայաստանում *մոլիբդենի* և *պղնձի*, *շինանյութերի*: Վրաստանում մանգանի, Ադրբեջանում *երկաթաքարի* և այլ օգտակար հանածոներ:

բ/ Բնակչությունը. Այստեղ է ապրում երկրագնդի բնակչության 3.1 %-ը: Բնակչության թվով առաջին տեղում Թուրքիան է, երկրորդ տեղում Իրանը, երրորդում՝ Իրաքը:

Մարդաբանական առումով բնակչությունը պատկանում է եվրոպոիդ ռասայի հարավային ճյուղին: Լեզվական առումով բնակչությունը մտնում է իրանական, թուրքական, կովկասյան, սեմական, հունական և այլ խմբերի մեջ: Իրանական խմբի մեջ են մտնում պարսիկները, թալիշները, տաջիկները, բախտիարները, լուրերը, թուրքականի մեջ՝ թուրքերը, ազերիները, թուրքմենները, կովկասյանի մեջ վրացիները, չերքեզները, սեմիթականի մեջ՝ արաբները, ասորիները, հրեաները (Իսրայելի), հայկականի մեջ՝ հայերը, հունականի մեջ՝ հույները:

Ամենից մեծ թիվ են կազմում արաբները: Նրանք բացարձակ մեծամասնություն են 11 երկրներում՝ Ղոզղանում՝ 98 %, Լիբանանում՝ 95%, Սաուդյան Արաբիայում 90 %, Քուվեյթում՝ բնակչության 80 %:

Երկրորդ մեծաթիվ եթնիկական խումբը թուրքերն են, որոնք հիմնականում ապրում են Թուրքիայում: Թուրքերը կազմում են Կիպրոսի բնակչության 18 %-ը:

Տարածաշրջանի հնագույն բնիկ ժողովուրդներից են պարսիկները, որոնք կազմում են Իրանի բնակչության 51 %-ը՝ շուրջ 35 մլն:

Ընդարձակ աշխարհագրություն ունեն քրդերը: Նրանք կազմում են Թուրքիայի բնակչության 20%-ը, Իրանի՝ 7%-ը, Իրաքի՝ 20-25%-ը: Ձգալի թվով քրդեր են ապրում Սիրիայում: Քրդերի ընդհանուր թիվը անցնում է 25 միլիոնից:

Ազերիները կազմում են Ադրբեջանի բնակչության 20.6%-ը, Իրանի բնակչության 24%-ը: Իրանում ապրող ազերիների թվաքանակը կրկնակի ավելի է՝ 16 մլն, քան Ադրբեջանում: Ազերիները զգալիորեն շատ են Վրաստանում:

Ամենից ընդարձակ աշխարհագրություն ունեն հայերը: Նրանք կազմում են Հայաստանի Հանրապետության բնակչության 97.7%-ը: Վրաստանում ապրում է 350 հազար հայ, Թուրքիայում, Լիբանանում, Իրանում և Սիրիայում միասին մոտ 80 հազար: Հայկական գաղութներ կան նաև Իրաքում, Կիպրոսում, Իսրայելում:

Պարսից ծոցի երկրներում մեծ թիվ են կազմում Ասիայից (հիմնականում Հարավային Ասիայից), Աֆրիկայից եկածները: Նրանք Սաուդյան Արաբիայի բնակչության 10%-ն են, Քուվեյթի՝ 9 %-ը, Բահրեյնի 37.6-ը, Կատարի 18 %-ը: Արաբական միացյալ էմիրությունների բնակչության միայն 19 %-ը արաբներ են, մնացածը եկվորներ են (մանրամասն տես աղյուսակ):

Կրոնական կազմը. Տարածաշրջանի բնակչության ճնշող մեծամասնությունը մահմեդականներ են՝ արաբներ, թուրքեր, քրդեր, ազերիներ, փուլտուներ: Շիա մահմեդականները մեծամասնություն են կազմում Ադրբեջանում՝ 93.4%, Իրանում՝ 89%, Իրաքում՝ 60-65%, սունի մահմեդականները բացարձակ մեծամասնություն են կազմում Թուրքիայում՝ 99.8 %, Աֆղանստանում՝ 80 %, Հորդանանում՝ 92 %, Սաուդյան Արաբիայում (մանրամասն տե՛ս աղյուսակ 7):

Աղյուսակ 7

Հարավարևմտյան Ասիայի բնակչության ազգային և կրոնական կազմը (2006 թ.)

Պետություն	Ազգային կազմը %	Կրոնական կազմը %
1. Ադրբեջան	ազերիներ 90.6, դաղստանցիներ, լեզգիներ, քրդեր այլք	շիա մահմեդականներ 93.4, քրիստոնյաներ 2.5, այլք 4.1
2. Աֆղանստան	փուլտուներ 42, տաջիկներ, դազախներ 9, ուզբեկներ 9, թուրքմեններ 3, այլք 4	սունի մահմեդականներ 80, շիա մահմեդականներ 19, այլք
3. ԱՄԷ	էմիրաթի արաբներ 19, այլ արաբներ և Իրանից եկած ժողովուրդներ 23, Հարավային Ասիայից եկած ժողովուրդներ 50, այլք 8	մահմեդականներ 96 (շիա 16), քրիստոնեաներ, հինդուսներ և այլք 4
4. Բահրեյն	բահրեյնցի արաբներ և պարսիկներ 62.4, այլք 31.6	շիա մահմեդականներ 60 սյունի մահմեդականներ, քրիստոնյաներ, հինդուսներ այլք
5. Եմեն	արաբներ, հնդիկներ, հրեաներ, այլք	շիա մահմեդականներ 46 սյունի մահմեդականներ 53, հնդուականներ, հուդայականներ, այլք
6. Թուրքիա	թուրքեր 80, քրդեր, հույներ, արաբներ, հայեր, հրեաներ, այլք	սունի մահմեդականներ 80, շիա մահմեդականներ, 19.8, քրիստոնյաներ, հուդայականներ
7. Իսրայել	հրեաներ 76.4, պաղեստինցի արաբներ, հայեր և այլք 23.6	հուդայականներ 76.4, մահմեդականներ 23.6, այլք քրիստոնեաներ 1.7, այլք
8. Իրան	պարսիկներ 51, ազերիներ 24, մազանդարացիներ 8, քրդեր 7, արաբներ 3, լուրեր 2, բելուջիներ 2, թուրքմեններ 2, այլք 1	շիա մահմեդականներ 89, սյունի մահմեդականներ 9, այլք 2
9. Իրաք	արաբներ 75-80%, քրդեր 8, հայեր, հրեաներ այլք 15- 20	շիա մահմեդականներ 65, սյունի մահմեդականներ 9, քրիստոնյաներ, 3, հուդայականներ և այլք

10. Լիբանան	արաբներ 95, հայեր և այլք 1	չիա մահմեդականներ, սուննի մահմեդականներ, դրուզներ քրիստոնյաներ այլք
11. Կատար	արաբներ 40, հնդիկներ 18, փուշտուներ (պակիստանցի) 18, պարսիկներ 10, այլք 14	մահմեդականներ 95, հինդուներ, այլք
12. Կիպրոս	հույներ 77, հայեր, թուրքեր, այլք	քրիստոնյաներ, մահմեդականներ
13. Հայաստան	հայեր 99, այլք 1	քրիստոնյաներ 100
14. Հորդանան	արաբներ 99, այլք 1	սուննի մահմեդականներ 92, քրիստոնեաներ 6, այլք
15. Սաուդյան Արաբիա	արաբներ 90, այլք 10	մահմեդականներ 100
16. Սիրիա	արաբներ 90.3, քրդեր, հայեր, հույներ, այլք	սուննի մահմեդականներ 74, չիա մահմեդականներ, քրիստոնյաներ, այլք
17. Վրաստան	վրացիներ 83.3, ազերիներ 6.5, հայեր 5.7, ռուսներ 1.5, այլք	քրիստոնյաներ 83.9. չիա մահմեդականներ 9.3,
18. Քուվեյթ	քուվեյթցի արաբներ 40, այլ երկրների արաբներ, պարսիկներ և այլք	մահմեդականներ 85, այլք 15
19. Օման	արաբներ, բելուջներ, աֆրիկացիներ	Հարավային Ասիայի քաղաքացիներ, մահմեդականներ 85, այլք 15

Կրոնական երկրորդ խումբ քրիստոնեությունն է: Այստեղ են ապրում հայերը, վրացիները, հույները, կան փոքրաթիվ արաբ քրիստոնյաներ՝ հիմնականում Լիբանանում և Սիրիայում:

Ազգային ու կրոնական բազմազանությունը այս տարածաշրջանը դարձրել է աշխարհի միջէթնիկական բախումների մշտական օջախ: Միջէթնիկական հակամարտությունների պատճառ են նաև վարչատարածքային, պետական սխալ սահմանները, որոնց մեծ մասը գծել են օտարածին իշխողները՝ ելնելով գերտերությունների շահերից: Այդ շահերի պատճառով է, որ անլուծելի են մնում հայ-ադրբեջանական, հայ-թուրքական, իրայելա-արաբական և այլ խնդիրները:

Բնական շարժերը: Ընդհանուր առմամբ տարածաշրջանում բնական աճը բարձր է շնորհիվ ծնելիության բարձր, մահացության ցածր մակարդակի:

Ծնելիության ամենաբարձր մակարդակը Աֆղանստանում է 47,02 ‰, Եմենում այն 43,1 ‰, Օմանում՝ 36,2 ‰, Իրաքում՝ 33,1 ‰, Սիրիայում 27,7 ‰: Ծնելիության ամենացածր մակարդակ ունեն Վրաստանը՝ 10,2 ‰, Հայաստանը 11,8 ‰: Մահացությունը համեմա-

տաբար բարձր է Աֆղանստանում 20,7 %, Ադրբեջանում 9,7%: Մահացության տեսակարար կշիռը նվազագույն աստիճանի է Քուվեյթում՝ 2,4%, Հորդանանում՝ և Սաուդյան Արաբիայում՝ 0.26 %:

Բնական աճի ամենաբարձր մակարդակը պահպանվում է Եմենում՝ 34,8 %-ը, Օմանում՝ 32,4 Իրաքում 27,4, Աֆղանստանում և Սաուդյան Արաբիայում՝ 27,0 %-ը: Բնական աճի ամենից ցածր մակարդակ ունեն՝ Վրաստանը՝ 0,98 %, Ադրբեջանը 11,0 %, (մանրամասն տես աղյուսակ 8):

Աղյուսակ 8

Հարավարևմտյան Ասիայի պետությունների բնակչության բնական աճը, կյանքի միջին տևողությունը 2006 թ.

Պետություն	Ծնելիութ. (%)	Մահացութ. (%)	Բնական աճ (%)	Կյանքի միջին տևողությունը
1. Ադրբեջան	20.74	9.75	10.99	63.80
2. Աֆղանստան	47.02	20.75	26.27	42.90
3. ԱՄԷ	18.96	4.40	14.56	75.44
4. Բահրեյն	17.8	4.14	13.68	74.45
5. Եմեն	43.1	10.30	34,8	61,7
6. Թուրքիա	16.62	5.97	10.65	72.60
7. Իսրայել	17.97	6.18	11.75	79,4
8. Իրան	17.0	5.55	14.45	70.26
9. Իրաք	33.09	5.66	27.43	52.71
10. Լիբանան	19.31	6.28	13.03	72.35
11. Կատար	15.56	4.72	10.84	73.90
12. Կիպրոս	12.56	7.68	4.82	77.20
13. Հայաստան	11.76	8.16	3.60	71.55
14. Հորդանան	21.76	2.63	19.13	78.24
15. Սաուդյան Արաբիա	29.34	2.58	26.78	75.67
16. Սիրիա	27.76	4.81	22.99	70.32
17. Վրաստան	10.21	9.23	0.98	76.09
18. Քուվեյթ	21.89	2.42	19.46	77.03
19. Օման	36.24	3.81	32.43	73.37
Աշխարհ	20.05	8.67	11.38	64.77

Բնական աճի վրա ազդում են կրոնական, ազգային սովորույթները, սոցիալ-տնտեսական պայմանները: Ամենից ցածր աճ ունեցող երկրներում շատ մեծ չափերի են հասնում արտագաղթերը, հատկապես Հայաստանում, Վրաստանում, Ադրբեջանում: Իրենց երկրից հե-

ռանում են հիմնականում երիտասարդ, բնական աճը ապահովող քաղաքացիները, այն էլ տղամարդիկ:

Սիգրացիոն հաշվեկշիռը Լիբանանում, Սիրիայում, Օմանում 0.35 % է, Բահրեյնում՝ 1.04 %, Կատարում՝ 14.1 %: Ներգաղթողները մեծ թիվ են կազմում Պարսից ծոցի երկրներում: Կատարի և Քուվեյթի բնակչության միայն 40 %-ը արբորիզեն են, մնացածը շնդկաստանից, Իրանից, Պակիստանից եկածներ են:

Դեպի Պարսից ծոցի երկրներ են գալիս նաև Աֆրիկյան երկրների քաղաքացիներ:

Առողջապահության, սոցիալական մյուս ոլորտների զարգացման և ազգային սովորությունների հետ կապված՝ տարածաշրջանի բոլոր երկրներում էլ կյանքի միջին տևողությունը բարձր է. Չորդանանում՝ 78,2 %, Կատարում՝ 73,9 տարի է, Իսրայելում՝ 79.4 տարի: Կյանքի միջին տևողության ամենացածր մակարդակը Աֆղանստանում է՝ 43 տարի:

Ուրբանացման մակարդակը Աֆղանստանում 13 % է, Եմենում, Օմանում՝ 11 %: Պատճառը արդյունաբերության զարգացման ցածր մակարդակն է, գյուղում (անապատում) ապրելու պահպանվող սովորությունները: Սաուդյան Արաբիայում անապատի բնակիչները իրենց համարում են անապատի ազնվականներ և հազվադեպ են լքում անապատը, հեռանում հայրենի բնակավայրից:

Տարածաշրջանին բնորոշ են հազարամյա պատմություն ունեցող հնագույն և անցյալ դարի կեսերից ծովափին ձևավորված նոր քաղաքները: Քրիստոսից առաջ են հիմնադրվել Երուսաղեմը, Երևանը, Բեյրութը, Դամասկոսը, Չալեպը, Նիկոզիան, Ստամբուլը: Անցյալ դարի կեսերի ծնունդ են Սամաման, Դոխան՝ կապված նավթի արդյունաբերության զարգացման հետ: Նավթային փողերով իրենց բուռն զարգացումը ապրեցին էլ Քուվեյթը, Աբու-Դաբին Դոխան՝ կառուցապատվելով ժամանակակից շինություններով:

Գյուղական տարաբնակեցման ձևերը նույնպես կրում են հազարամյակների կնիքը: Գյուղերը խոշոր են՝ հարմարեցված բնական պայմաններին: Անապատներում օազիսային տիպի բնակավայրերն են: Արաբական երկրներում, Իրանում, Աֆղանստանում՝ կապված անասուններին կերակրելու հետ, իրենց վրանային բնակավայրերով դեգերում են բեդվին ցեղերը:


Տնտեսությունը: Պետությունների մեծ մասը անցել է տնտեսական զարգացման տարբեր փուլեր: Տարբեր են տնտեսավարման ձևերը. յուրաքանչյուրն ունի զարգացման իր ուղին, չկա միավորվե-

լու, ինտեգրվելու միտում: Ընդհակառակը, յուրաքանչյուր պետություն ձգտում է տնտեսական համագործակցությունը խորացնել այլ տարածաշրջանների պետությունների հետ:

Այդ առումով ավելի մեծ հաջողություններ ունեն նավթ արդյունահանող և արտահանող երկրները՝ Իրանը, Քուվեյթը, Արաբական Միացյալ Էմիրությունները, Կատարը, Օմանը, Սաուդյան Արաբիան, որոնք որդեգրել են «իսլամական տնտեսության» գաղափարը: Տնտեսական կարևորագույն լծակները գտնվում են պետության ձեռքին, որը երաշխավորում է հայրենական տնտեսության զարգացումը, աշխատանքով ապահովվածությունը, սոցիալական կարիքների բավարարումը, կրթության և առողջապահության զարգացումը:

Նավթաբեր երկրները նավթային դոլարները օգտագործում են վերանշակող արդյունաբերության այլ ճյուղեր զարգացնելու համար, որպեսզի աստիճանաբար ազատվեն այդ դոլարների կախումից: Դասական օրինակ կարող է լինել Իրանը, որը մեծ աշխատանք է կատարում սեփական ատոմային արդյունաբերություն ունենալու ուղղությամբ: Քուվեյթում, Արաբական Միացյալ Էմիրաթներում և ծոցի մյուս երկրներում նավթից ստացված եկամուտների մի մասը ուղղակի բաժանում են ժողովրդին, «Ալաիի տված հարստությունները բոլորին է» սկզբունքով:

Խելամիտ օգտագործման շնորհիվ Արաբական Միացյալ Էմիրությունները, Կատարը, Օմանը, Սաուդյան Արաբիան դարձել են ծաղկուն երկրներ բնակչության բարձր կենսամակարդակով: Մեկ շնչին ընկնող համախառն ներքին արդյունքը Արաբական Միացյալ Էմիրություններում 43400 դոլար է, որը գերազանցում է նույնիսկ գերզարգացած շատ երկրների այդ ցուցանիշը, Կատարում՝ 26100, Քուվեյթում՝ 21300, Օմանում՝ 13200 դոլար:



Նկ. 2. Առասպելական հյուրանոց «Առազաստ» (ԱՄԷ)

Իրանում համախառն ներքին արդյունքի տարեկան աճը 5 % է, Արաբական Միացյալ Էմիրություններում՝ 6.7 %, Սաուդյան Արաբիայում 6.5 %:

Իրենց զարգացման միանգամայն առանձին ուղիները ունեն թուրքիան և Իսրայելը: Թուրքիան տարածաշրջանի առաջին երկիրն է համախառն ներքին արդյունքով՝ 627.2 մլրդ դոլար, առաջատարների շարքում է ՀՆԱ-ի տարեկան աճով՝ 5.1 %: Այս բոլորի գրավականը եվրոպական զարգացած երկրների տնտեսության կազմակերպման առաջատար ձևերի ներմուծումը և կիրառումն է, բարձր տեխնոլոգիաների զարգացումը, արտասահմանյան կապիտալի լայն կիրառումը, պետական խելամիտ տնտեսական քաղաքականությունը:

Իսրայելը ունի զարգացման իր յուրահատուկ ձևը: Արտասահմանյան երկրներից ստացված մեծածավալ գումարների և արտադրական բարձր կուլտուրայի շնորհիվ զարգանում են տնտեսության բոլոր ճյուղերը: Իսրայելը դարձել է բարձր տեխնոլոգիաների կիրառման, գիտական մեծ ներդրումներով ժամանակակից ապրանքներ արտադրող դասական երկիր:

Խորհրդային Միության կազմից դուրս եկած երեք պետությունների՝ Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի տնտեսությունը գրեթե նույն վիճակում է: Միության մեջ եղած տարիներին այս երկրներում ստեղծվել էին ժամանակակից տնտեսության բոլոր ճյուղերը, իրենց ձեռնարկություններով: Զարգացման բավարար մակարդակի վրա էին արդյունաբերության արդյունահանող ու վերամշակող ճյուղերը, գյուղատնտեսությունը, տրանսպորտը: Պետության հովանավորությամբ ապահովվում էր սոցիալական ոլորտի միջին մակարդակը: Հետխորհրդային տարիներին Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի տնտեսական ամբողջ համակարգը քայքայվեց: Այս երկրների տնտեսության վրա ծանր անդրադարձավ պետական ձեռնարկությունների զանգվածային սեփականաշնորհումը: Պետական հովանավորությունը վայելող ձեռնարկությունները զրկվեցին երաշխավորված շուկայից, ֆինանսավորումից, դրանց մեծ մասը կողոպտվեցին, թալանվեցին, վերածվեցին ավերակների:

Գյուղատնտեսության մեջ արդեն ձևավորված պետական և կոլեկտիվ տնտեսությունները պահպանելու, վերակառուցելու փոխարեն կատարվեց հողի մասնավորեցում. անասնապահական ֆերմաները վերացվեցին: Արդյունքը գյուղատնտեսական մթերքների արտադրության անկումն էր: Վերջին տասնամյակներում այս երեք

երկրներում նկատվում է տնտեսական որոշ առաջընթաց, հատկապես արդյունահանող ճյուղերում, ուր իրենց մասնակցությունը ունեն արտասահմանյան ընկերությունները: Ադրբեջանում զարգանում է նավթի հանույթը, Հայաստանում՝ գունավոր մետաղաձուլությունը: Զգալի վերելք են ապրում սննդի արդյունաբերության ճյուղերը: Այս խմբի երկրներում մեծ չափերի են հասնում զանգվածային գործազրկությունը, երիտասարդ բարձրորակ աշխատուժի արտագաղթը:

Խնդրի լուծման ուղին պետական տնտեսական ճկուն քաղաքականության մշակումն է և իրագործումը, փակման եզրին հայտնված խոշոր ձեռնարկությունները պետական հովանավորության տակ վերցնելը:

Արդյունաբերություն. Հարավարևմտյան Ասիայի բոլոր երկրներում էլ տնտեսության զարգացման գլխավոր ուղին արդյունաբերության առաջընթացի ապահովումն է: Այդ առումով առավել մեծ հաջողություններ ունեն Իսրայելը, Թուրքիան, նավթ արտահանող երկրները: Սաուդյան Արաբիայի ՀՆԱ-ում արդյունաբերության տեսակարար կշիռը 67,1 % է, Զուվեթում՝ 48.3 %, Իրաքում՝ 66,6 %, ԱՄԷ-ում՝ 61,9%: ՀՆԱ-ի մեջ գյուղատնտեսության տեսակարար կշիռը ամենից բարձր է Աֆղանստանում՝ 38 %, երկրորդ տեղում Սիրիան է՝ 25.5 %, երրորդ տեղում Հայաստանը՝ 22.9% (մանրամասն տես՝ աղյուսակ 9):

Էլեկտրաէներգիայի արտադրության առաջատար երկրներն են Իրանը, Թուրքիան, Սաուդյան Արաբիան, վերջին տեղում են Աֆղանստանը, Եմենը, Հայաստանը: Էլեկտրաէներգիայի հիմնական մասը տալիս են ջերմաէլեկտրակայանները: Խոշորագույն ջերմաէլեկտրակայաններն են Աֆշին Էլբիստանը, Ստամբուլինը, Սպահանինը, Աբադանինը, Թել-Ավիվինը, Էր Ռիադինը: Էլեկտրաէներգիայի արտադրությամբ երկրորդ տեղում ջրաէլեկտրակայաններն են: Խոշոր ջրաէլեկտրակայաններն են Կեբանինը, Կարակայաինը, Աթաթուրքինը, Ռիոնինը: Միակ ատոմային էլեկտրակայանը Հայկականն է (մանրամասն տես՝ աղյուսակ 10):

Սև մետաղաձուլության առաջատար երկրներն են Թուրքիան, Իրանը, Իսրայելը:

Մեքենաշինության գլխավոր երկրներն են Թուրքիան, Իսրայելը, Իրանը և Կիպրոսը: Արտադրում են ջերմաքարշեր, վագոններ, ինքնաթիռներ, նավեր, ավտոմեքենաներ: Զարգացման բարձր մակարդակի վրա է քիմիական արդյունաբերությունը: Կարևոր տեղ է հատկացված հանքային պարարտանյութերի արտադրությանը: Թուր-

քիան, Իրանը, Իսրայելը և Կատարը արտադրում են ազոտական պարարտանյութեր, Կիպրոսը՝ ֆոսֆորական:

Ամենաավանդական, ամենաընդարձակ աշխարհագրություն ունեցող ճյուղը *թեթև արդյունաբերությունն է*, որի ձեռնարկությունները տալիս են բամբակյա, բրդյա գործվածքներ, գորգեր, կաշվե ապրանքներ:

Աղյուսակ 9

Հարավարևմտյան Ասիայի պետությունների համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) (2005թ.)

Պետություն	ՀՆԱ մլրդ դոլար	ՀՆԱ մեկ շնչի հաշվով դոլար	ՀՆԱ ըստ տնտեսության ոլորտների (%)		
			արդյու- նաբերու- թյուն	գյուղատն- տեսութ- յուն	ոչ ար- տադրական ոլորտ
1. Ադրբեջան	58.1	7300	45.7	14.1	40.2
2. Աֆղանստան	21.5	800	24	38	38
3. ԱՄԷ	129.4	49700	61.9	2.3	35.8
4. Բահրեյն	17.7	25300	38.7	0.5	60.8
5. Եմեն	20.8	900	43.8	12.5	43.7
6. Թուրքիա	627.2	8900	29.4	11.2	59.4
7. Իսրայել	166.3	26200	30.8	2.6	66.6
8. Իրան	610.4	8900	41.7	11.2	47.1
9. Իրաք	94.1	1900	66.6	7.3	26.1
10. Լիբանան	18.83	5000	21	12	67
11. Կատար	22.51	26100	81.0	0.2	18.8
12. Կիպրոս	17.79 ¹ 4.54 ²	22700 7135	19.6 20.5	3.7 10.6	76.8 68.9
13. Հայաստան	15.9	5400	32.8	23.9	43.3
14. Հորդանան	28.89	4900	30.5	3.6	65.9
15. Սաուդյան Արա- բիա	374	13800	67.1	3.3	29.7
16. Սիրիա	75.1	4000	22.1	25.5	52.4
17. Վրաստան	17.79	3800	20	40	40
18. Քուվեյթ	52.17	21600	48.3	0.4	51.3
19. Օման	4388	14100	38.8	2.6	58.7

¹ Կիպրոսի Հանրապետություն

² Դյուսիսային Կիպրոս

**Էլեկտրաէներգիայի արտադրությունը Հարավարևմտյան
Ասիայի պետություններում (2006թ.)**

Պետություն	Էլեկտրա- էներգիա մլրդ կվ ժամ	Ջերմա- էլեկտրա- կայաննե- րում %	Ջրաէլե- տրակայան- ներում %	Ատոմային էլեկտրակա- յաններում %
1. Ադրբեջան	20.3	89.7	10.3	0
2. Աֆղանստան	0,7	36.3	63.7	0
3. ԱՄԷ	49,5	100	0	0
4. Բահրեյն	7,8	100	0	0
5. Եմեն	4,07	100	0	0
6. Թուրքիա	143,3	79.3	20,7	0
7. Իսրայել	46,07	99.9	0.1	0
8. Իրան	155,7	97.1	2.9	0
9. Իրաք	36,0	98.4	1.6	0
10. Լիբանան	8,0	100	-	-
11. Կատար	9,7	9,7	-	-
12. Կիպրոս	4,0	100	0	0
13. Հայաստան	6,3	42.3	27	30.7
14. Հորդանան	8,4	99.4	0.6	0
15. Սաուդյան Արաբիա	145,1	100	0	0
16. Սիրիա	29.6	57.6	42.4	0
17. Վրաստան	6.8	19.7	80.3	0
18. Քուվեյթ	4,4	100	0	0
19. Օման	14.3	100	0	0

Գյուղատնտեսությունը բազմաճյուղ է: Նրա զարգացմանը նպաստել են սպառման ընդարձակ շուկան, բարենպաստ ագրոկլիմայական պայմանները: Գյուղատնտեսության զարգացման գլխավոր գրավականը ոռոգովի հողերն են: Ամենից շատ ոռոգովի հողատարածքներ ունեն Իրանը, Թուրքիան, Իրաքը, Սաուդյան Արաբիան, Սիրիան:

Գյուղատնտեսության գլխավոր ճյուղը **բուսաբուծությունն է**: Սշակում են հացահատիկային կուլտուրաներ՝ ցորեն, գարի, եգիպտացորեն, որոնց տարածման գլխավոր շրջաններն են Թուրքիան,

Իրանը, Լիբանանը: Բամբակի մշակության գլխավոր երկրներն են Թուրքիան, Սիրիան, Իսրայելը, ժխախտինը՝ Կիպրոսը, Լիբանանը, Թուրքիան:

Տարածաշրջանում զգալի տարածություն են գրավում բազմամյա տնկարկները, որոնք զբաղեցնում են Լիբանանի տարածքի 13.98 %-ը, Սիրիայի՝ 4.47 %-ը: Բազմամյա տնկարկները ընդարձակ տարածություններ են գրավում Թուրքիայում, Իսրայելում, Վրաստանում, Ադրբեջանում: Այգեգործական հիմնական մշակաբույսերն են՝ խաղողը, ծիրանը, դեղձը, Սև և Միջերկրական ժովափերին՝ ցիտրուսները, անապատային շրջանների օազիսներում կան արմավենու, ձիթենու ընդարձակ այգիներ:

Անասնապահությունը գյուղական բնակչության հիմնական զբաղմունքներից և ապրելու միջոցներից է: Գերակշռում է արոտային անասնապահությունը, որի համար հիմք են հանդիսանում անապատները, լեռնային շրջանների արոտավայրերը: Ընդարձակ աշխարհագրություն ունի ոչխարաբուծությունը, որը տեղացիների սննդի հիմնական միջոցներից մեկն է: Ոչխարաբուծությունից ստանում են նաև բուրդ և կարակուլի մորթիներ: Թուրքիան անգորական այծերի բուծման գլխավոր երկիրն է: Այս երկրում մեծ տարածում ունի խոշոր եղջերավոր անասնապահությունը: Անապատային շրջաններում զարգացած է ուղտաբուծությունը:

Տրանսպորտը: Կարևոր և արագ զարգացող ճյուղը ավտոտրանսպորտն է: Ավտոճանապարհների ցանցի խտությամբ առաջին տեղում Թուրքիան է, այնուհետև՝ Իրանը, Սաուդյան Արաբիան: Այն թույլ է զարգացած Աֆղանստանում, Եմենում: Ավտոճանապարհների ցանցը խիտ է Լիբանանում՝ 700 մ/քկմ, Ադրբեջանում՝ 690 քկմ, շատ նոսր է Աֆղանստանում՝ 54 մ քկմ: Երկաթուղային տրանսպորտը զարգացած է 11 երկրներում: Երկաթուղիների երկարությամբ առաջին տեղում Թուրքիան է, երկրորդ տեղում Իրանը (մանրամասն տե՛ս աղյուսակ 11):

Տարածաշրջանի երկրների գլխավոր խնդիրը ցամաքային ճանապարհների բարեկարգումը, նոր ճանապարհների կառուցումն է:

Տրանսպորտային միջոցներից են խողովակաշարերը: Խոշոր նավթամուղներն են Էր-Ռիադ-Յանբու, Թել-Ավիվ-Ամման-Դամամ, Բաղդադ-Մոսուլ-Իսկենդերուն:

**Հարավարևմտյան Ասիայի պետությունների ճանապարհային
ցանցը (2006թ.)**

Պետություն	Երկաթուղիներ կմ	Ավտոճանապարհներ հզ կմ	Ներքին ջրային ուղիներ կմ
1. Ադրբեջան	2957	59,1	-
2. Աֆղանստան	-	34782	1200
3. ԱՄԷ	-	1,0	-
4. Բահրեյն	-	3,5	-
5. Եմեն	-	7,1	-
6. Թուրքիա	8697	42,7	1200
7. Իսրայել	853	17,4	-
8. Իրան	7200	17,9	850
9. Իրաք	1963	45,5	5200
10. Լիբանան	401	7,3	-
11. Կատար	-	1,2	-
12. Կիպրոս	-	12,1 ¹ 2,3 ²	-
13. Հայաստան	800	7,6	-
13. Հորդանան	500	7,5	-
14. Սաուդյան Արաբիա	1392	7500	-
15. Սիրիա	2711	91,8	-
16. Վրաստան	1612	20247	-
17. Քուվեյթ	-	5749	-
18. Օման			

Արտաքին տնտեսական կապերը: Արտահանման ծավալներով առաջին տեղում Սաուդյան Արաբիան է, երկրորդ տեղում՝ ԱՄԷ: Նավթն է Քուվեյթի, Բահրեյնի, Իրանի, Իրաքի, Օմանի, Կատարի, Ադրբեջանի արտահանման հիմնական ապրանքը: Այդ բոլոր երկրներում էլ արտաքին առևտրական հաշվեկշիռը դրական է: Նավթային ռեսուրսներով աղքատ, կամ ընդհանրապես նավթ չունեցող երկրների՝ Թուրքիայի, Լիբանանի, Հորդանանի, Հայաստանի, Վրաստանի արտաքին առևտրական հաշվեկշիռը բացասական է (մանրամասն տես աղյուսակ 12):

¹ Կիպրոսի հանրապետություն

² Հյուսիսային Կիպրոս

**Հարավարևմտյան Ասիայի պետությունների արտահանումը,
ներմուծումը (մլրդ դոլար) 2005թ.**

Պետություն	Արտահանում	Ներմուծում
1. Ադրբեջան	12.51	5.17
2. Աֆղանստան	4.71	3087
3. ԱՄԷ	137.1	88.89
4. Բահրեյն	12.62	9.03
5. Եմեն	8.21	5.04
6. Թուրքիա	85.21	120.9
7. Իսրայել	42.89	47.8
8. Իրան	63.18	45.48
9. Իրաք	32.19	20.76
10. Լիբանան	1.8	8.16
11. Կատար	24.9	6.7
12. Կիպրոս	1,34 ¹ 0,67 ²	-
13. Հայաստան	1	1.6
14. Հորդանան	4.7	10.42
15. Սաուդյան Արաբիա	204.5	64.16
16. Սիրիա	6.9	5.9
17. Վրաստան	1.7	3.32
18. Քուվեյթ	56.06	19.12
19. Օման	24.73	10.29

Տարածաշրջանի բոլոր երկրները առանձին առանձին տնտեսական կապերի մեջ են այլ շրջանների պետությունների հետ, ներքին կապերը թույլ են զարգացած: Պատճառը տնտեսական սերտաճման ցածր մակարդակն է:

Արտահանվող հիմնական ապրանքը նավթն է: Զգալի չափերի է հասնում գյուղատնտեսական ապրանքների արտահանումը: Ներմուծում են հիմնականում մեքենաներ ու սարքավորումներ:

Առևտրական հիմնական գործընկերները նավթ ներմուծող եվրոպական երկրներն են ԱՄՆ-ը, ճապոնիան, Չինաստանը:

¹ Կիպրոսի հանրապետություն

² Հյուսիսային Կիպրոս

Ինքնաստուգման հարցեր

1. Ի՞նչ դեր ունեն տարածաշրջանի նավթի ռեսուրսները համաշխարհային տնտեսության մեջ: Ինչպիսի՞ն է դրանց աշխարհաքաղաքական նշանակությունը:
2. Որո՞նք են տարածաշրջանի բնակչության մեծ աճի պատճառները:
3. Ի՞նչ քաղաքակրթություններ են ծագել այս տարածաշրջանում և ի՞նչ ազդեցություն են թողել համաշխարհային քաղաքակրթության վրա:
4. Նշե՛ք նավթարդյունաբերության առանձնահատուկ դերը տնտեսության մեջ:
5. Որո՞նք են արդյունաբերության գլխավոր ճյուղերը, զարգացման ի՞նչ խնդիրներ և միտումներ ունեն:
6. Ի՞նչ խնդիրներ ունի գյուղատնտեսությունը, ինչպե՞ս են դրանք լուծվում:

ԹՈՒՐՔԻԱ

*Տարածքը՝ 779.4 հզ քկմ
Բնակչությունը՝ 70.4 մլն մարդ
Մայրաքաղաքը՝ Անկարա*

Թուրքիայի տարածքի միայն 3 %-ը (Արևելյան Թրակիան) գտնվում է եվրոպայում, մնացածը Ասիայում: Նա սահմանակից է Հայաստանի Հանրապետությանը, Վրաստանին, Բուլղարիային, Ադրբեջանին, Իրանին, Իրաքին, Սիրիային: Ցամաքային սահմանների ընդհանուր երկարությունը 2648 կմ է: Ամենից մեծ սահման ունի Սիրիայի հետ՝ 822 կմ: Հայաստանի Հանրապետության հետ սահմանի երկարությունը 268 կմ է: Ծովային սահմանների երկարությունը 7200 կմ է:

Թուրքիայի ափերը ողողում են Սև, Մարմարի, Էգեյան, Միջերկրական ծովերի ջրերը: Սև ծովի ափերը թույլ են կտրտված, խոշոր ծովածոցեր չկան: Էգեյան ծովի ափերը կտրտված են, և առաջացել են մի շարք ծոցեր, դրանցից ամենախոշորը Իզմիրի ծոցն է: Միջերկրական ծովի ափի խոշոր ծոցերն են՝ Անթալիայինը, Մերսինինը և Իսկենդերունինը:

Երկրի եվրոպական և ասիական մասերը միմյանցից բաժանվում են Բոսֆորի և Դարդանելի նեղուցներով և նրանց միջև ընկած Մարմարի ծովով: Բոսֆորի եվրոպական ծովափին գտնվում է Ոսկեեղջյուր ծովածոցը, որի ափին էլ հիմնվել է Ստամբուլը (Կոստանդնուպոլիսը):

Բնական պայմանները և ռեսուրսները: Թուրքիան լեռների և սարահարթերի երկիր է: Սև ծովի ափերով ձգվում են Պոնտական լեռները, որոնց լանջերը զառիթափ իջնում են դեպի ծով: Հարավում Հայկական Տավրոսի լեռներն են: Նրանք հասնում են մինչև 2500 մ - բարձրության և դժվարամատչելի են, միայն Կիլիկյան դարպասներով է հնարավոր թափանցել ներքին շրջաններ: Այս երկու լեռնային համակարգերի միջև ձգվում է ընդարձակ Անատոլիական սարահարթը: Դեպի արևմուտք լեռները ավելի կտրտված են և Էգեյան ծովի կողմից դեպի ներքին շրջանները թափանցելու ավելի մեծ հնարավորություններ կան: Արևելյան շրջանը զբաղեցնում է Հայկական լեռնաշխարհը՝ բազմաթիվ հրաբխային և ծալքավոր լեռներով: Այստեղ

կան առանձին հզոր հրաբուխներ, որոնք հասնում են մեծ բարձրությունների՝ Արարատը, Նեմրուքը, Սիփանը, Թոնդրակը:

Տարածաշրջանում լեռները երիտասարդ են: Լեռնակազմական երևույթները այժմ էլ շարունակվում են, որի պատճառով հաճախ լինում են կործանարար երկրաշարժեր:

Օգտակար հանածոները. Շատ հարուստ է քրոմիտների պաշարներով. համաշխարհայինի 8 %-ը, պղնձով (4%), վոլֆրամով (5%), ծարիրով (25%), բոքսիտներով, սնդիկով, ածխով:

Կլիման խիստ բազմազան է: Միջերկրական և էգեյան ծովերի առափնյա շրջաններում միջերկրածովային է: Չմեռը մեղմ է, անձրևոտ, ամառը երկարատև, չոր, սակավ տեղումներով: Հունվարյան միջին ջերմաստիճանը $+3+8^{\circ}\text{C}$, հուլիսյանը՝ $+18+25^{\circ}\text{C}$: Մթնոլորտային տեղումները 800 մմ է: Կլիման ավելի ցամաքային է Անատոլիական սարահարթում. ձմեռային ջերմաստիճանը՝ $-4+4^{\circ}\text{C}$, մթնոլորտային տեղումները՝ 300 մմ: Անատոլիական սարահարթի կենտրոնական շրջանում՝ Տուզ լճի շրջակայքում, կլիման դառնում է խիստ ցամաքային: Այստեղ մթնոլորտային տեղումները 200 մմ են:

Հայկական լեռնաշխարհում կլիման փոխվում է ըստ բարձրության: Լեռնային հովիտներում ամառները շոգ են՝ $+22+25^{\circ}\text{C}$, ձմեռները մեղմ են, հաճախ լինում են սառնամանիքներ, բարձրադիր շրջաններում ամառները զով են, ձմեռները ցուրտ ու դաժան: Արարատ լեռը նույնիսկ ամռանը ձյունածածկ է:

Մթնոլորտային տեղումները ըստ բարձրության աճում են: Սև ծովի առափնյա շրջանում ամառը շոգ է, խոնավ, ձմեռը մեղմ է: Մթնոլորտային տեղումները հասնում են 2500-3000 մմ-ի:

Գետերը լեռնային են, արագահոս, սահանքավոր՝ վերին հոսանքներում առաջացնում են խոր կիրճեր, միջին հոսանքում՝ հովիտներ: Թուրքիայի տարածքից են սկիզբ առնում տարածաշրջանի չորս խոշոր գետերը՝ Կուրը, Արաքսը, Տիգրիսը, Եփրատը: Սև ծովի ավազանին է պատկանում Կիզիլ-Իրմակը, ճորոխը: Եվրոպական մասում ամենախոշոր գետը Մարիցան է, որը սկիզբ է առնում Բուլղարիայից:

Հայկական լեռնաշխարհից սկիզբ առնող գետերը վարարում են գարնանային ամիսներին, ամառային ամիսներին դառնում են սակավաջուր: Գետերի ռեժիմը կայունացնելու նպատակով Եփրատի, Տիգրիսի և Ախուրյանի վրա կառուցվել են ջրամբարներ:

Թուրքիայում կան բազմաթիվ *լճեր*՝ Վանը, Բեյշեհիրը, Էգրիդիրը, Տուզը:

Բուսական աշխարհը խիստ բազմազան է: Այդ առումով աչքի է ընկնում Հայկական լեռնաշխարհը:


Անատոլիական սարահարթին բնորոշ են անապատային բույսերը, լեռնալանջերին կան թփուտներ, Միջերկրականի ափերին լիբանանյան մայրու անտառներ: Անտառները և թփուտները տարածվում են Պոնտական, Տավրոսի լեռների ծովահայաց լանջերին, Մարմարի, Էգեյան ծովի մերձափնյա լեռնալանջերին: Անտառներից վերև ալպյան մարգագետիններն են, որոնք ամառային հրաշալի արոտավայրեր են: Այդ առումով լավ պայմաններ կան Հայկական լեռնաշխարհում, որի բարձրադիր շրջանների հյութառատ մարգագետիններում հոսում են շատ աղբյուրներ:

Թուրքիայի բնական լանդշաֆտը տեղ-տեղ խախտված է տարբեր մշակաբույսերի ցանքսերով և պտղատու այգիներով: Մարմարի ծովի առափնյա շրջաններին բնորոշ են խաղողի, ծիթապտղի, ընկույզի, միջերկրականի ափերին ցիտրուսների, թզի, թթնու, խաղողի, Սև ծովի ափերին ընկուզենու, դափնու այգիները: Այսպիսով, Թուրքիայի տարածքի արհեստական տնկարկները լրացնում են բնության «թերի թողած» անտառապատությունը: Մարդու միջամտությամբ կանաչապատ են դարձել նոսր բուսածածկ ունեցող տափաստանները և կիսաանապատները: Թուրքիայի տարածքի 32.3 %-ը ծածկված է կուլտուրական լանդշաֆտով:

Բնակչությունը: Բնական աճը 10.6 ‰ է, որը համեմատաբար բարձր ցուցանիշ է: Երկրի բնակչությունը տարեկան ավելանում է շուրջ 700 հազարով: Ազգային կազմը միատարր է, բնակչության 80%-ը թուրքեր են, մնացածը՝ քրդեր: Կան փոքր թվով հայեր, հույներ, հրեաներ: Թուրքական պետությունը իր ամբողջ պատմության ընթացքում դաժան քաղաքականություն է վարել այլազգիների, հատկապես հայերի նկատմամբ: Ինչպես երևում է 13 աղյուսակի տվյալներից, մինչև 1915 թ. Մեծ եղեռնը 6 թուրքական վիլայեթներում բնակչության մեծամասնությունը եղել են հայեր: Հայերի տեսակարար կշիռը մեծ է եղել նաև Կ.Պոլսում:

Բնակչության միջին խտությունը 92 մարդ է մեկ քկմ վրա: Առավել խտաբնակ են եվրոպական մասը և Միջերկրական ծովի առափնյա շրջանները, նոսր է բնակեցված Անատոլիական սարահարթի կենտրոնական և արևելյան մասերը:

Ուրբանիզացման մակարդակը 70 % է, խոշոր քաղաքներն են Ստամբուլը (10 մլն), Անկարան (4 մլն), Իզմիրը, Ադանան, Բուրսան:



Նկ. 3. Տեսարան Ստամբուլից

Թուրքիայում զգալի չափերի է հասնում արտագաղթը: Արտագաղթում են հիմնականում դեպի Գերմանիա, Ֆրանսիա և Եվրամիության մյուս երկրներ: Պետությունը զգալի աշխատանքներ է տանում կանոնավորելու արտագաղթը, երկրում ստեղծվում են նոր աշխատատեղեր:

Հայերը Թուրքիայում. Հայերը Թուրքիայի բնիկ ժողովուրդն են: Ժամանակակից Թուրքիայի արևելյան մասը Արևմտյան Հայաստանն է, որը XVI-XVII դդ. թուրք-իրանական պատերազմների ընթացքում բռնակցվել է Օսմանյան կայսրությանը: Թուրքիայի արևմտյան մասում, ինչպես Պոնտոսում, հայերը բնակություն են հաստատել V-VI դդ.:

Օսմանյան կայսրությունը դարեր շարունակ վարել է հակահայկական քաղաքականություն: 1894-96-ին Արդուլ-Համիդ II-ի օրոք և Արևմտյան Հայաստանում և կայսրության հայաբնակ վայերում կազմակերպվել են հայերի զանգվածային ջարդեր, որոնք ավելի մեծ չափերի հասան 1914-1915 թթ. և հետո: Արևմտյան Հայաստանից, Կիլիկիայից և Փոքր Ասիայից զանգվածաբար տեղահանվեցին հարյուր հազարավոր հայեր: Երիտթուրքերի իրազործած ցեղասպանության հետևանքով 1915-22-ին սպանվել է 1,5 մլն հայ մոտ 800 հզ-ը դարձել

են փախստական (մանրամասն տես աղյուսակ 13-ում): Այսպիսով, ամբողջ Հայկական լեռնաշխարհը դատարկվեց իր բնիկ ժողովրդից: Այստեղ բնակություն հաստատեցին հիմնականում քրդերը:

Եվ այսօր շատ վիլայեթներում նրանք մեծամասնություն են կազմում: Քուրդ-թուրքական խնդիրները ունեն բարդանալու միտում, հատկապես, երբ քրդերը մեծ թիվ են կազմում նաև հարևան երկրներում: Ներկայումս Թուրքիայում ապրում է 80 հզ հայ, արևմտյան շրջաններում կան նաև հավատափոխ հայեր: Միջազգային հնչեղություն է ստացել թուրքական պետության կողմից հայերի ցեղասպանության ընդունման խնդիրը:

Տնտեսությունը: Համախառն ներքին արդյունքով տարածաշրջանում գրավում է առաջին տեղը: Առաջատարների շարքում է մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ով՝ 8900 դոլար:

ՀՆԱ 35.9 % տալիս է գյուղատնտեսությունը. երկրորդ տեղում ոչ նյութական արտադրության (սերվիսի) ոլորտն է՝ 41.2 %:

Տնտեսության մեջ աստիճանաբար խորանում են ազատ շուկայական հարաբերությունները. մի կողմից՝ թուլանում է պետության միջամտությունը, մյուս կողմից՝ միջոցներ են ձեռնարկվում ապահովելու հայրենական և արտասահմանյան կապիտալի ազատ տեղաշարժը, միաժամանակ պաշտպանելու տեղական արտադրողի շահերը:

Ազատ շուկայական տնտեսությունը ավելի արագ թափով զարգանում է փոքր տնտեսություններում, որոնք հիմնականում զբաղվում են հագուստեղենի, կաշվե ապրանքների, կենցաղային մեքենաների ու սարքավորումների, շինանյութերի արտադրությամբ:

Տնտեսության մեջ կարևոր նշանակություն ունի արդյունաբերությունը, որը ապահովում է մյուս ոլորտների առաջընթացը:

Արդյունաբերությունը: Զարգացած են արդյունաբերության ավանդական ճյուղերը և ժամանակակից բարձր տեխնոլոգիաները: Ավանդական ճյուղերից են լեռնահանքային արդյունաբերությունը, սև և գունավոր մետաղաձուլությունը, թեթև և սննդի արդյունաբերությունը:

Լեռնահանքային արդյունաբերության ձեռնարկություններում արդյունահանվում են քարածուխ, գորշ ածուխ, երկաթաքար, քրոմիտներ, քարաղ, գունավոր մետաղներ: Դրանց բազայի վրա զարգացած է էլեկտրաէներգետիկան, սև և գունավոր մետաղաձուլությունը, քիմիական արդյունաբերությունը:

ՏԱԵԿԱՎ-ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՑ ՎԻՆԱՅԵԹՆԵՐԻ, ԱՆԴՐԻԿՎԱԿԱՆ, ԿԱՐՍԻ ՇՐՋԱՆԻ (1913 թ.) ԵՐԵՎԱՆԻ ԱՄԲԱՆԳԻ
ՄՈՐՄԱՆՈՒԻ (1914 թ.) ԱԶԳԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ (ՀԱԶԱՐ ՄԱՐԿ)

Ազգություն և ցեղ	Էրզրում	Վան	Բաղեշ	Խարբերդ	Դիար- բեքիր	Սեբաստիա	Կարս	Սուրմալու	Ընդ. մարդ	%
1. Տաճիկներ	240	47	40	102	45	192			666	21
2. Քրդեր (նասկյաց)	35	32	35	75	30	35	13		497	16
3. Քրդեր (թախառական)	40	40	42	20	25	15				
4. Եզդիներ	3	25	5	-	4		27	10	74	2
5. Հայեր	215	185	180	168	105	165	114	31	1163	37
6. Թուրքեր և այլ	-	-	-	-	-	-	137	45	182	6
Ախական և այլ ժողովուրդ- ներ	97	21	80	85	87	100	53	-	523	17
Ընդամենը	630	350	382	450	296	507	391	99	3105	100

Ըստ Լինչի և Օսկարի Հայաստանն և հարևան երկրները:
Խմբ. և հրատ. Ա.Աբեղյան քարտեզի, Թիֆլիս 1915

Էլեկտրաէներգետիկ արդյունաբերության ձեռնարկությունները աշխատում են քարածխի, տեղական և ներմուծովի նավթի, բնական գազի հիման վրա: Խոշոր ջերմաէլեկտրակայաններ կան Կառուցված Ստամբուլում, Իզմիրում: Ստամբուլում մեծ հզորություն ունի «Աֆշին-Էլբիստան» ջերմաէլեկտրակայանը: Թուրքիայում են գտնվում տարածաշրջանի ամենախոշոր «Կեբանի», «Կարկայաի», «Աթաթուրքի» ջրաէլեկտրակայանները: Ջրաէլեկտրակայաններ կառուցելով՝ Թուրքիայում լուծվում են նաև ոռոգման խնդիրները: Միայն Կեբանի ջրամբարը Եփրատ գետի վրա հնարավորություն է տալիս ոռոգելու 1.6 մլն հա գյուղատնտեսական հողահանդակներ:

Սև մետաղածուլության ձեռնարկությունները աշխատում են սեփական վառելիքի և հումքի բազայի վրա: Առաջնեկը Կարաթուրքի մետալուրգիական կոմբինատն է՝ կառուցված Ջոնգուլդակի քարածխի ավազանին մոտիկ: Սև մետաղածուլության ձեռնարկություններ կան Էրեզիլիում, Իսկենդերունում, Իզմիրում, Իզմիտում:

Գունավոր մետաղածուլության ձեռնարկություններում արտադրում են պղինձ, կապար, ցինկ: Մետաղածուլության կենտրոններն են Սեյդիշեիրը, Մուրգուլը, Կեբանը, Ստամբուլը:

Մեքենաշինությունը Թուրքիայի տնտեսության ամենաարագ զարգացող ճյուղերից է: Այստեղ կապիտալ մեծ ներդրումներ են կատարվում, բարձր տեխնոլոգիաների կիրառման միջոցով կառուցվել և շարունակվում են կառուցվել բարձրորակ արտադրանք տվող ձեռնարկություններ: Տեխնիկական առաջընթացը ապահովելու համար մշակվել է գիտության և արտադրության զարգացման հեռանկարային փաստաթուղթ: Այդ փաստաթղթում նախատեսվում են.

- վերակազմավորել գիտահետազոտական կենտրոնները,
- զարգացնել տեղեկատվական տեխնոլոգիաների, ծրագրային ապահովման, իմանկարգչային տեխնիկայի, էներգետիկայի, կենսատեխնոլոգիայի, բժշկության, աերոտիեզերական հետազոտության ճյուղերը:

Այս ամենի իրագործման համար նախատեսվում է ստեղծել 16 տեխնոլոգիական գոտիներ երկրի ամբողջ տարածքով մեկ: Տեխնոպարկերի գլխավոր բազաները լինելու են Ստամբուլի, Անկարայի և այլ համալսարաններ: Ստամբուլի գիտահետազոտական «Մարմարա կենտրոնը» ընդգրկում է 9 ինստիտուտներ: Յուրաքանչյուր տարի գիտահետազոտական նպատակներով ներդրվում է 80 մլն դոլար:

Ստամբուլում, Իզմիրում զարգացած է ընդհանուր մեքենաշինությունը, Ստամբուլում, Բուրսայում, Մերսինում՝ ավտոմեքենաշինությունը, Պենդիկում, Գելդժուկում, Ջամիլատում և Խալիչում՝ նավաշինությունը, Սվասում, Ադաբազարում՝ վազոնաշինությունը, Էսկիշեհիրում և Կեսարիայում՝ ինքնաթիռաշինությունը, Անկարայի Մյուրտեղ արվարձանում՝ ինքնաթիռների արտադրությունը:

Էլեկտրատեխնիկական արդյունաբերությունը զարգացած է Ստամբուլում, Բուրսայում, Իզմիրում, Իզմիտում և այլուր: Արագ թափով է զարգանում քիմիական արդյունաբերությունը: Արտադրում են պլաստմասսաներ, ռետինատեխնիկական ապրանքներ, հանքային պարարտանյութեր: Խոշոր կենտրոններն են Իսկենդերուլը, Բաթմա-նը, Կիրկալան, Իզմիրը, Մերսինը:

Թուրքիան ավանդական *տեքստիլ արդյունաբերության* երկիր է: Բամբակյա գործվածքների արտադրության խոշոր կենտրոններ են Իզմիրը, Մալաթիան, Ադանան, Սվասը, Էրզելին և այլ քաղաքներ, որտեղ արտադրում են բրդյա և վշյա գործվածքներ:

Ջարգացած է *կաշվի վերամշակումը*, կաշվե ապրանքների՝ վեարարկուների, պերճանքի ապրանքների, կոշկեղենի արտադրությունը:

Թեթև արդյունաբերության արագ զարգացող ճյուղերից է հագուստեղենի արտադրությունը: Ջարգացած է գորգագործությունը:

Սննդի արդյունաբերության ձեռնարկությունները աշխատում են տեղական հումքի բազայի վրա: Արտադրում են շաքար, չոր մրգեր, ծխախոտ, մրգերի և բանջարեղենի պահածոներ, բուսայուղ, ձկնեղեն: Թուրքիան հայտնի է *ծխախոտի արտադրությամբ*:

Գյուղատնտեսությունը տալիս է ՀՆԱ-ի 11.2%-ը: Այս ոլորտում է զբաղված երկրի աշխատուժի 35.9%-ը: Թուրքիան տարածաշրջանի ամենահերկված երկիրն է: Տարածքի 29.8%-ը հերկված հողեր են: Բազմամյա տնկարկները գրավում են տարածքի 3.39 %-ը:

Գյուղատնտեսության զարգացման համար կարևոր նշանակություն է ունեցել ոռոգման համակարգերի ստեղծումը: Դրանց շնորհիվ ոռոգովի են դարձվել 5.2 մլն հա հողահանդակներ:

Գյուղատնտեսության զարգացմանը նպաստում են հանքային պարարտանյութերի, բարձր տեխնոլոգիաների լայն կիրառումը:

Արևմուտքում և կենտրոնական շրջաններում կան մասնավոր փոքր տնտեսություններ, որոնցում տիրապետող է ձեռքի աշխատանքը: Փոքր տնտեսությունները առավել շատ են քրդերով բնակեցված շրջաններում:

Վարելահողերի մեծ մասը զբաղված է ցորենի, գարու, եգիպտացորենի ցանքերով: Հացահատիկային գլխավոր մշակաբույսը ցորենն է: Այն մշակում են ամենուրեք. ամենից շատ՝ Իզմիրի և Կենտրոնական շրջաններում: Սակավաջուր ներքին շրջաններում տիրապետում է գարին: Սև ծովի առափնյա շրջաններում, ուր առատ են տեղումները, ցանում են բրինձ: Սև ծովի ափամերձ փոքր հողակտորներով լեռնալանջերին մշակում են ծխախոտ: Մեծ համբավ են վայելում ծխախոտի «Սամսոն» և «Տրապիզոն» տեսակները: Սև ծովի ափերին մշակում են նաև թեյ, նարինջ, լիմոն:

Թուրքիայում շատ ընդարձակ տարածություն են գրավում խաղողի և պտղատու այգիները: Դրանք տարածված են ամենուրեք: Մշակում են խաղող, թուզ, ընկույզ, խնձոր և այլն:

Պտղաբուծությունը արտահանության գլխավոր ճյուղերից է: Այստեղ կատարվում են մեծ կապիտալ ներդրումներ, հիմնվում են ընդարձակ, շուկայական պահանջներին բավարարող տնտեսություններ՝ մեքենայացման և քիմիացման բարձր մակարդակով:

Ոչխարաբուծությունը, անգորական այծերի բուծումը, խոշոր եղջերավոր անասնապահությունը հիմնված են բնական արոտավայրերի բազայի վրա:

Թուրքիայի տնտեսության հնագույն ճյուղերից է շերամապահությունը: Նորագույն ճյուղերից է թռչնապահությունը, որի արտադրանքը մեծ չափերով արտահանվում է:

Տրանսպորտը. Չնայած ծովափնյա հսկայական գծին Թուրքիայի տնտեսության մեջ կարևոր դեր է կատարում ցամաքային տրանսպորտը: Երկաթուղիների ընդհանուր երկարությունը 8697 կմ է, ավտոճանապարհներինը՝ 426906 կմ:

Երկաթուղային տրանսպորտը երկրի համար կարևոր դեր է կատարում: Ստամբուլից դուրս եկող երկաթուղիները Թուրքիան կապում են եվրոպական երկրների հետ: Թուրքիան երկաթուղային կապ ունի Իրանի, Սիրիայի, Հայաստանի հետ: Դեպի Հայաստան գնացող Կարս-Գյումրի երկաթգիծը քաղաքական պատճառներով չի գործում: Փոխարենը արագ թափով կառուցվում է Բաքու-Թբիլիսի - Արդահան երկաթուղին, որը կբացառի Գյումրի-Կարս երկաթուղագծի գործարկումը:

Թուրքիայի ավտոճանապարհների մի մասը բարեկարգ է: Առավել բանուկ ավտոճանապարհներն են՝ Ստամբուլ-Անկարա, Ստամբուլ-Էդիրնե-Իսկենդերուն, Տրապիզոն, Էրզրում, Տրապիզոն: Աստիճանաբար մեծանում է Տրապիզոն-Թեհրան ավտոճանապարհի դերը:

Թուրքիան ավտոճանապարհային կապ ունի Վրաստանի, Նախ-իջեվանի, Հայաստանի հետ: Հայաստան-Թուրքիա ավտոճանապարհը փակ է: Ավտոճանապարհային ցանցը նոսր է արևելյան՝ քրդերով բնակեցված շրջաններում:



Նկ 4. Նավահանգիստ Մարմարայի ծովափին

Թուրքական ավտոտրանսպորտը ապահովված է ժամանակակից բեռնատար մեքենաներով, որոնք ներքին բեռնափոխադրումներից բացի կատարում են մեծ ծավալի միջազգային բեռնափոխադրումներ:

Ցամաքային տրանսպորտի նորագույն ձև են նավթամուղները, որոնք Ադրբեջանի, Ռուսաստանի նավթը, գազը հասցնում են միջերկրածովյան երկրներ:

Երկրում հաշվում են 5 տասնյակից ավելի նավահանգիստներ: Ամենախոշորներն են՝ Ստամբուլը, Իզմիրը, Իսկենդերուլը, Տրապիզոնը, Անթալիան, Իզմիրը:

Ծովային տրանսպորտի համար շատ մեծ դեր է կատարում Բոսֆորի նեղուցը, որտեղով բացի սեփական նավերից, լողում են այլ երկրների նավեր:

Ներքին տարբերությունները. Թուրքիան կարելի է բաժանել երեք խոշոր շրջանների՝ Արևմտյան, Արևելյան, Կենտրոնական: **Արևմտյան շրջանը** ընդգրկում է Էգեյան, Մարմարի, Միջերկրական ծովերի առափնյա շրջանները: Սա պատմականորեն ձևավորված Թուրքիայի ամենազարգացած շրջանն է, որին նպաստել են ընդերքի հարուստ ռեսուրսները, բերրի հողերը, բարենպաստ ագրոկլիմա-

յական պայմանները, աշխարհագրական հարմար դիրքը: Այստեղ են երկրի արդյունաբերական հիմնական կարողությունները. խոշոր կենտրոնն Ստամբուլն է:

Ստամբուլը հիմնել են հույները 7-րդ դարում մ.թ.ա.: Այն եղել է Հռոմեական կայսրության կենտրոն, 330 թ. Կոնստանդին Մեծ կայսրը քաղաքը դարձրել է կայսրության մայրաքաղաք, որը նախկին Բյուզանդիոն անվան փոխարեն ստացել է Կոնստանդնուպոլիս անվանումը: 1453 թ. Կոստանտնուպոլիսը գրավեցին թուրքերը և վերանվանեցին Ստամբուլ: Ստամբուլը մինչև 1923 թ. Թուրքիայի մայրաքաղաքն էր:

Բոսֆորի երկու ափերին փռված քաղաքում կենտրոնացած է երկրի արդյունաբերական կարողությունների 60 %-ը: Քաղաքը մեքենաշինական, քիմիական, սննդի, ծխախոտի, ապակու արտադրության խոշոր կենտրոնն է:

Ստամբուլը բազմաթիվ գեղատեսիլ տաճարների, պալատների, մշակույթի այլ արժեքների կենտրոնն է: Դրանցից առավել հայտնին Սուրբ Սոֆիայի տաճարն է: Ըստ ավանդության ռուս իշխան Վլադիմիրը հիանում է այս տաճարի գեղեցկությամբ, միաժամանակ սիրահարվում է հայազգի բյուզանդական կայսր Բարսեղ II-ի քրոջ՝ ազնվագարմ Աննայի վրա: Վլադիմիրը Բարսեղ II-ից խնդրում է Աննայի ձեռքը: Նա ստանում է արքայադստեր համաձայնությունը պայմանով, որ ռուսները քրիստոնեություն ընդունեն: Ըստ լեգենդի Աննան հայ քահանաների հետ մեկնում է Կիև, որից հետո այստեղ սկսում են մկրտել հեթանոս ռուսներին:

Ստամբուլը եղել է հայ մշակույթի խոշոր կենտրոն: Դեռևս 1461թ. հիմնադրվել է Հայաստանյաց առաքելական եկեղեցու նվիրապետական աթոռներից մեկը՝ «Պատրիարքություն հայոց Թուրքիո»: 1859 թ. Կ.Պոլսում կային 39 հայկական վարժարաններ: Կոստանդնուպոլիսը հայ գրականության արվեստի խոշոր կենտրոնն է եղել դարեր շարունակ, ընդհուպ մինչև 1915 թ.: Այսօր Ստամբուլում ապրում են շուրջ 80 հզ հայեր:

Կենտրոնական և արևելյան շրջանները համեմատաբար թույլ են զարգացած: Այստեղ փոքր են արտասահմանյան ընկերությունների կապիտալ ներդրումները, գյուղատնտեսությունը ունի էքստենսիվ բնույթ:

Կենտրոնական շրջանի ամենախոշոր քաղաքը Անկարան է: Այն հիմնադրվել է 7-րդ դարում ք.ա.: 1923 թ. դարձել է երկրի մայրաքա-

ղաք: Քաղաքի հին թաղամասերին բնորոշ են նեղ փողոցները, աղմկոտ շուկան, բազմաթիվ մզկիթներ:

Նոր թաղամասերում կան մեքենաշինական, տեքստիլ և սննդի արդյունաբերության խոշոր կենտրոններ:

Արտաքին տնտեսական կապերը: Արտահանման ծավալները կազմում են 85.2 մլրդ դոլար, ներմուծմանը 120.9 մլրդ դոլար: Արտահանվում են մրգեր, գործվածքներ, մետաղներ, տրանսպորտային միջոցներ, քիմիական ապրանքներ, ներմուծվում մեքենաներ, քիմիկատներ, նավթ, բնական գազ:

Արտաքին առևտրի ամենախոշոր գործընկերներն են Չինաստանի (արտահանման ծավալների 12.9 %-ը, ներմուծման՝ 11.7%-ը), Ռուսաստանը, Մեծ Բրիտանիան, Իտալիան, Չինաստանը, Ֆրանսիան, Իսպանիան:

Ինքնաստուգման հարցեր

1. Ի՞նչ դեր ունի աշխարհագրական դիրքը Թուրքիայի պետության կյանքում:
2. Որո՞նք են տնտեսության զարգացման բնառեսուրսային կարողությունները:
3. Ի՞նչ ազդեցություն է թողել Թուրքիան համաշխարհային քաղաքակրթության վրա:
4. Որո՞նք են արդյունաբերության առաջատար ճյուղերը:
5. Ո՞րն է երկրի ամենազարգացած շրջանը և նրա դերը տնտեսական կյանքում:

ԻՐԱՆ

*Տարածքը՝ 1.65 մլն թկմ
Բնակչությունը՝ 68.6 մլն
Մայրաքաղաքը՝ Թեհրան*

Իրանը Հարավարևմտյան Ասիայում երկրորդ խոշոր պետությունն է՝ 610.4 մլրդ դոլար համախառն ներքին արդյունքով, բնակչության թվով և տարածքի մեծությամբ:

Աշխարհի հնագույն պետություններից մեկն է: Մեծ է եղել նրա ազդեցությունը Հնդկաստանից մինչև Միջերկրական ծով, Կենտրոնական Ասիա ապրող ժողովուրդների քաղաքակրթությունների վրա: Իրանն այսօր էլ առանձնահատուկ է հասարակական կյանքում շարիաթի օրենքների կիրառումով: Մի կողմից՝ այստեղ ամենուրեք առաջնորդվում են Ղուրանի կանոններով, մյուս կողմից՝ Իրանը չի մասնակցում մահմեդական որևէ միջպետական ընկերակցության:

Իրանին բնորոշ է բազմազգությունը. միաժամանակ՝ ազգային ու կրոնական հանդուրժողականությունը, որի շնորհիվ ուղղակի չկա այստեղ ազգային կամ կրոնական հակամարտություն:

Իրանն ունի արագ զարգացող տնտեսություն. տնտեսության տարեկան աճը 5 % է, մեկ շնչին ընկնող ՀՆԱ՝ 8900 դոլար:

Պետական կառուցվածքը. Իսլամական հանրապետություն է, պետության ղեկավարը հոգևոր առաջնորդից հետո նախագահն է: Օրենսդրական իշխանությունը՝ միապալատ մեջլիսն է (իսլամական խորհրդի ժողովը):

Վարչականորեն երկիրը բաժանվում է 28 մարզերի՝ օստանների:

Բնական պայմանները և ռեսուրսները. Մակերևույթը լեռնային է: Բարձր լեռները գրավում են երկրի տարածքի 1/3-ը: Ամենաբարձր կետը Ղեմալենդն է՝ 5604 մետր, ամենացածրը՝ Մերձկասպյան իջվածքը՝ 28 մ:

Կենտրոնում Իրանական լեռնաշխարհն է՝ շրջապատված հյուսիսում Թալիշի, Էլբուրսի, Թուրքմենա-խորասանյան, Կուպետդաղի, հարավում Ջագրոսի և Մեկրանի լեռներով: Արևմուտքում Հայկական լեռնաշխարհի մի հատվածն է, արևելքը նույնպես սահմանափակվում է լեռներով: Ներքին շրջաններում ընդարձակ սարահարթեր են, ցածր լեռներ և միջլեռնային հովիտներ:

Կասպից ծովի և Պարսից ծոցի առափնյա շրջաններում նեղ ու ձգված հարթավայրեր են: Իրանի ընդերքը անհանգիստ է, հաճախակի են կործանարար երկրաշարժերը:

Ընդերքը հարուստ է օգտակար հանածոներով՝ նավթով, բնական գազով, մետաղային ռեսուրսներով, շինանյութերով: Նավթի խոշորագույն հանքավայրերն են՝ Աղա Ջարին՝ 10 մլրդ տ պաշարով, Գեչասարանը՝ 1.5 մլրդ, Մարունը՝ 1.4, Աիվազը՝ 1.2, Բիբի Չաքիմեն՝ 1.1 մլրդ տ պաշարով: Նավթի մեծ պաշարներ ունեն նաև Դուխան, Մաջադե-Սուլեյման, Ֆերեհոդն, Մարջան հանքավայրերը: Վերջին հանքավայրի նավթաբեր շերտերը շարունակվում են նաև Սաուդյան Արաբիայի տարածքում: Նավթի պաշարները գնահատվում են 132.5 մլրդ տ: Նավթային շրջաններում կան բնական գազի մեծ պաշարներ: Բնական գազի պաշարները 26.6 մլրդ տրիլիոն խմ են:

Քարածխի մեծ պաշարներ կան Խորասանում, Կենտրոնական Իրանում, երկաթաքար՝ Դաշտե Կևիրում, Սեմնանում, Խորմուզում, պղինձ՝ Ադրբեջանում և Խորասանում: Երկրում կան նաև արծաթի, ոսկու, ծարիրի, մկնդեղի, մոլիբդենի, նիկելի, կոբալտի, բարիտի, մագնեզիտի մեծ հանքավայրեր: Մեծ չափերի են հասնում նաև շինանյութերի, հատկապես մարմարի պաշարները:



Նկ. 5. Թեհրանի համայնապատկերը

Կլիման: Տարածքի մեծ մասում կլիման մերձարևադարձային ցամաքային է, միայն Կասպից ծովի հարավային ափին խոնավ արևադարձային է: Ամառային ամիսներին ամենուրեք շոգ է՝ +32:

Ձմեռը մեղմ է, ջերմաստիճանը՝ դրական: Թեհրանում հունվարյան միջին ջերմաստիճանը +20 է, հյուսիսից թափանցող սառը հոսանքների դեպքում երբեմն լինում են սառնամանիքներ:

Սթնոլորտային տեղումները ներքին շրջաններում մինչև 100 մմ են, Կասպից ծովի հարավային ափերին մինչև 1500 մմ: Մեծ է տեղումների քանակը լեռների հողմակոծ լանջերին:

Համեմատաբար խոշոր գետերը՝ Արաքսը, Ատրեկը, Շատ էլ Արաքը, Կարունը, հոսում են սահմանամերձ շրջաններով: Ներքին մարզերը շատ աղքատ են գետերով, եղած *գետերն* էլ սակավաջուր են, դրանց մի մասը կորչում է անապատների ավազներում: Մեծ է գետերի նշանակությունը գյուղատնտեսության համար: Իրանում կան շատ լճեր: Դրանցից ամենախոշորը Ուրմիան է, որի միջին խորությունը 5-6 մ է, ամենախորը տեղը 15 մ: Ուրմիա լճի հատակին կան բուժիչ ցեխերի մեծ պաշարներ:

Անտառները տարածվում են Ջագրոսի, Էլբուրսի, Թուրքմենա-խորասանյան լեռների լանջերին: Հարավային ծովափնյա շրջաններում տարածվում են արևադարձային անտառները: Իրանում անտառները շատ փոքր տարածություն են գրավում և արդյունաբերական նշանակություն չունեն: Դրա փոխարեն անտառներում կան շատ արժեքավոր ծառատեսակներ՝ հունական ընկույզ, կաղին, նուշ:

Կենդանական աշխարհը բնորոշ է տեղական բնակլիմայական պայմաններին: Մեծ արժեք են ներկայացնում Կասպից ծովի թառափը Պարսից ծոցի մարգարիտը:

Բնակչությունը. Իրանը բազմազգ ու բազմակրոն երկիր է: Բնակչության 51 %-ը պարսիկներ են: Ադրբեջանցիները կազմում են բնակչության 24%-ը, մազանդարացիները 8 %-ը, քրդերը՝ 7 %-ը, արաբները՝ 3 %-ը: Ջգալի թիվ են կազմում լուրերը, բելուջիները, թուրքմենները, հայերը:

Բնակչության 89 %-ը շիա մահմեդականներ են, 9 %-ը, սուննի մահմեդականներ, կան նաև քրիստոնյաներ, հուդայականներ և այլ հավատքի ժողովուրդներ:

Բնակչության բնական աճը 11.45 ‰ է, ծնելիությունը 17.0 ‰, մահացությունը 5.55 ‰: Կյանքի միջին տևողությունը 70.26 տարի է, տղամարդիկ՝ 68-86 տարի, կանայք 71.74 տարի:

Ուրբանիզացման մակարդակը 62 % է: Խոշոր քաղաքներն են Թեհրանը, Մաշհադը, Սպահանը, Թավրիզը, Շիրազը:

Իրանական քաղաքների մեծ մասը ունեն հազարամյակների պատմություն, հարուստ են պատմաճարտարապետական հուշարձաններով: Այստեղ կան արվեստի հրաշալի կոթողներ՝ տաճարներ, մզկիթներ, քաղաքացիական հոյակերտ շինություններ:

Քաղաքներին բնորոշ են հին, անկանոն, նեղ փողոցներով և նոր, ուղիղ փողոցներով ժամանակակից տիպի շենքերով կառուցապատված թաղամասերը:

Իրանը արտագաղթի և ներգաղթի երկիր է: Ընդհանուր հաշվով ներգաղթը գերակշռում է արտագաղթին: Մեծ չափերի են հասնում նավթարդյունաբերության շրջան եկող շնդկաստանի, Բանգլադեշի, Շրի-Լանկայի քաղաքացիների թիվը:

Բնակչությունը անհավասարաչափ է բաշխված: Առավել խտաբնակ են՝ Կենտրոնական, Արևելյան Ադրբեջան, Գիլյան, Մազանդարան օստանները:

Պարսիկ ժողովուրդը իր հազարամյակների պատմության ընթացքում մեծ ավանդ է թողել Մերձավոր ու Միջին Արևելքի մշակույթի բնագավառում: Միջին դարերում պարսկական գիտությունը, արվեստը, գրականությունը ազդել են Իրանում, Թուրանում, անգամ մինչև Եվրոպայում ապրող ժողովուրդների մշակույթի վրա: Համաշխարհային պոեզիայի մեջ իրենց խոր հետքերն են թողել Օմար Խայամի ստեղծագործությունները, համամարդկային ճանաչման են արժանացել հռչակավոր են Ֆիրդուսու պոեմները:

Հայերը Իրանում: Իրանում ապրում է 80 հազար հայ: Հայերի առավելագույն քանակը եղել է 200 հզ (1979 թ.): Իսլամական հեղափոխությունից հետո Իրանի հայկական գաղութը սկսել է փոքրանալ, մեծ թվով հայեր մեկնել են ԱՄՆ, Եվրոպա: Ներկայումս իրանահայ ամենախոշոր գաղութը Թեհրանն է, ուր ապրում է 50 հզ հայ: Հայերի մեծ մասը արհեստավորներ են, ճարտարապետներ, ձեռնարկատերեր, ուսուցիչներ, շինարարներ: Նոր Ջուղայում (Սպահանի թաղամասերից մեկում) ապրում է 7 հազար հայ, Թավրիզում՝ 2 հզ, Արաքում՝ 105 ընտանիք, Էնգելիում 200 մարդ: Համադանի, Ղազվինի, Սալմաստի, Ուրմիայի, Փերիայի, Չարմահալի նախկինում խոշոր հայկական գաղութները լրիվ մարել են:

Տնտեսության ընդհանուր բնութագիրը: Իրանի տնտեսությանը բնորոշ են հին ու նոր ճյուղերի միասնական խաղաղ գոյատևումը, նորագույն ոլորտների մեծ առաջընթացը: Դեռևս վերջին շափի ժամանակ՝ անցյալ դարի 50-70-ական թվականներին, Իրանը ընդունել

էր տնտեսության վարման եվրոպական և ամերիկյան ձևերը: Ըստ Շահի «Մեծ քաղաքակրթություն» գրքի Իրանն աստիճանաբար պետք է դառնար աշխարհի զարգացած երկրներից մեկը: Շահի ծրագրով արագ թափով պետք է զարգանար միջուկային արդյունաբերությունը՝ շուրջ մեկ տասնյակ էլեկտրակայանների կառուցումով, նավթավերամշակումը, մեքենաշինությունը: Առանձին մեծ ծրագրեր կային կրթական համակարգի զարգացման համար:

Շահի եվրոպամետ քաղաքականությունը իր դեմ հանեց մահմեդական վերնախավին. հենց եվրոպացիների աջակցությամբ էլ Շահի իշխանությունը տապալվեց: Իշխանավորները ընդունեցին «մահմեդական տնտեսության» գաղափարը, որի հիմքում մահմեդական արդարության, հավասարության դրվածքն էր: Տնտեսության մեջ գերակայությունը տրվում էր պետական մասնաբաժնին, հայրենական արդյունաբերության զարգացմանը: Խնդիր էր դրված մեծացնել արագ աճող բնակչության զբաղվածությունը, բավարարել սոցիալական կարիքները, զարգացնել կրթական, առողջապահական համակարգերը, ապահովել ազգային հարստության արդարացի բաշխումը:

Այս ամենի իրագործումը կարող էր իրականություն դառնալ երկու գործոնների շնորհիվ. առաջինը սեփական ուժերով տնտեսության զարգացումն էր, և այդ կուրսը այսօր էլ շարունակվում է, երկրորդը՝ օգտագործել նավթի արտահանումից ստացված եկամուտները, որոնց քանակը կապված է արդեն արտաքին ուժերից: ԱՄՆ-ի, եվրոպական երկրների ու Իրանի միջև քաղաքական անհամաձայնությունների պատճառով սահմանափակումներ են դրված իրանական նավթի արտահանման վրա, որի հետևանքով նվազել են դրսից եկող եկամուտները: Խնդրի լուծման համար աշխատանքներ են տարվում մեծացնելու այլ ապրանքների՝ գորգերի, գյուղատնտեսական մթերքների, մեքենաների արտահանման ծավալները:

Երկրում զգալի տեղաշարժեր են նկատվում շուկայական տնտեսության ստեղծման, սեփականաշնորհման գործընթացի զարգացման ուղղությամբ:

Այս բոլորի շնորհիվ Իրանի համախառն ներքին արդյունքի ծավալը հասել է 610,4 միլիարդ դոլարի, որով տարածաշրջանում երկրորդ տեղն է գրավում Թուրքիայից հետո: Մեկ շնչի հաշվով համախառն ներքին արդյունքը 8500 դոլար է, որը նույնպես նվաճում է մեծաթիվ բնակչություն ունեցող երկրի համար: Տնտեսության առաջատար ճյուղը արդյունաբերությունն է, որը տալիս է ներքին համա-

խառն արդյունքի 41 %-ը: Այս ոլորտում զբաղված է 23 մլն-ի հասնող աշխատուժի 25%-ը:

Արդյունաբերություն: Առաջատար ճյուղերից են նավթի հանույթը, նավթաքիմիան, տեքստիլը, մետաղամշակումը, սննդինը:

Նավթի տարեկան հանույթը հասնում է 230 մլն տ-ի: Բնական գազինը՝ 83,9 մլրդ խմ-ի: Նավթի շահագործվող խոշորագույն հանքավայրերը՝ Նավթաֆիղը, Աղա-Ջարին, Գեչսարանը, Ջիլայը և այլն գտնվում են երկրի հարավ-արևմուտքում: Նավթի հանույթը զարգացած է նաև Խորասանի, Արևելյան Ադրբեջանի, Մազանդարանի, կենտրոնական օստաններում:

Իրանում նավթը արդյունահանվում է հիմնականում շատրվանող եղանակով: Մեծ է մեկ հորատանցքից ստացվող նավթի քանակը: Աղա- Ջարիի հանքավայրի օրական միջին կարողությունը 60 հզ տոննա է: Դրա շնորհիվ նավթի հանույթի վրա ծախսերը համեմատաբար քիչ են: Արդյունահանված նավթը փոխադրվում է վերամշակման շրջաններ, գործում են Աբադան-Թեհրան, Թեհրան-Ռեշտ, Ղազվին-Ռեշտ, Թեհրան-Շահրուդ, Թեհրան-Ղազվին նավթամուղները: Արդյունահանված նավթի 62%-ը արտահանվում է, մնացածը վերամշակվում է երկրի ներսում՝ Աբադանում, Ահվազում, Քերմանշահում, Բենդեր-Աբասում, Թեհրանում, Թավրիզում:

Բնական գազ է արդյունահանվում Պազենում, Աղա- Ջարի նավթի հանքավայրից ոչ հեռու, ինչպես նաև նավթի մյուս հանքավայրերի մոտ: **Քարածուխ** է արդյունահանվում Շենշեկի (Թեհրանից հյուսիս-արևելք), Աբեկի, Սպահանի, Քերմանի և այլ հանքավայրերում:

Էլեկտրաէներգիայի տարեկան արտադրությունը 129 մլրդ կվ ժամ է: Էլեկտրաէներգիայի մեծ մասը տալիս են ջերմաէլեկտրակայանները: Ջերմաէլեկտրակայաններ կան Թեհրանում, Սպահանում:

Ջրաէլեկտրակայաններ գործում են Քերեջ (Թեհրանի մոտ), Դիզ, Սեֆիդռուդ, Արաքս գետերի վրա:

Իրանում մեծ ծավալի աշխատանքներ են տարվում միջուկային հետազոտությունների, ատոմային էներգիայի ստացման, ատոմային էլեկտրակայանների կառուցման ուղղությամբ:

Սև մետաղածուլության առաջնեկը Սպահանի կոմբինատն է, որը օգտագործում է տեղական քարածուխը և երկաթը: Թեհրանում արտադրվում են պողպատյա խողովակներ, Ահվազում պողպատյա գլանվածքներ: Ջարգացած է նաև ալյումինածուլությունը:

Մեքենաշինական ձեռնարկությունները արտադրում են ջերմատուրբիններ, վերամբարժ կոունկներ, գյուղատնտեսական մեքենաներ, ավտոմոբիլներ: Մեքենաշինության մեջ մեծ դեր են կատարում Արևմտյան և ճապոնական ընկերությունները՝ «Վոլվո», «Տոյոտա», «Սիցուբիսի»: Մեքենաշինական խոշոր կենտրոններն են Թեհրանը, Թավրիզը, Սպահանը: Արագ թափով զարգանում է նավթավերամշակումը, քիմիական արդյունաբերությունը: Նավթավերամշակման խոշոր կենտրոններ են Աբադանը, Նեդտշահը, Շիրազը, Քերմաշահը, Խարկ կղզին: Արտադրում են հանքային պարարտանյութեր (Շիրազում), պլաստմասսաներ, ռետինատեխնիկական ապրանքներ, ներկեր, լաքեր, թունաքիմիկատներ:

Իրանը ունի զարգացած *տեքստիլ արդյունաբերություն*: Թեհրանում, Սպահանում, Թավրիզում, Ղումում, Ղազվինում, Մաշհադում, արտադրում են բամբակյա, բրդյա, մետաքսյա գործվածքներ: Թեթև արդյունաբերության ամենահինագույն, ամենահայտնի և եկամուտ բերող ճյուղը *գորգագործությունն* է: Իրանական ձեռքի գործած գորգերը մեծ պահանջարկ ունեն միջազգային շուկայում: Գորգագործությունը զարգացած է ամենուրեք, առավել խոշոր կենտրոններն են Թավրիզը, Քերմանը, Քերմանշահը, Սպահանը, Համադանը, Մաշհադը, Արակը:

Գյուղատնտեսությունը տալիս է ներքին համախառն արդյունքի 11.2 %-ը: Այս ճյուղում է զբաղված աշխատուժի 30.0%-ը:

Իրանի ընդարձակ տարածքի գերակշիռ մասը անջուր անապատներ են, որի պատճառով վարելահողերը կազմում են տարածքի 9.78 %-ը, բազմամյա տնկարկները՝ 1.29 %:

Մեծ աշխատանքներ են կատարվում գյուղատնտեսության աշխուժացման ուղղությամբ՝ ընդլայնվում է մեքենայացման ոլորտը, ավելի ու ավելի շատ հանքային պարարտանյութեր են օգտագործվում: Կառուցվում են խոշոր ջրամբարներ Դիզ (Խուզիստան), Սեֆիդդուղ (Գիլան), Արաքս, Քերեջ (Թեհրանի մոտ) գետերի վրա: Ռոռզման նպատակներով օգտագործվում են նաև քյարիզների ջրերը:

Գյուղատնտեսության առաջատար ճյուղը *բուսաբուծությունն* է: Մշակում են ցորեն՝ Գորգանում, Մազանդարանում, Խորասանում՝ ոռոգովի հողերի վրա: Մազանդարանում և Գիլանում մշակում են բրինձ, նաև գարի՝ (հիմնականում անջրդի հողերում):

Բամբակի և շաքարի ճակնդեղի մշակումը տարածված է Գորգանում, Մազանդարանում, Խորասանում, Արևելյան և Արևմտյան

շրջաններում: Շաքարեղեգ են աճեցնում խուզխտանում և խորասանում: Իրանը հայտնի է մաև ծխախոտի, կանեփի, կակաչի, թեյի մշակությամբ: Իրանը այգեգործության, պտղաբուծության երկիր է: Ունի մաև խաղող, ծիրան, նուշ, նուռ, ցիտրուսներ, խնկենի, արմավ: Այս կուլտուրաների աշխարհագրությունը ընդարձակ է՝ Կասպից ծովի առափնյա շրջաններից մինչև Պարսից ծոց:

Անասնապահությունը. Ընդարձակ արոտավայրերի բազայի վրա զարգացած է ոչխարաբուծությունը, որը ունի մսաբրդատու թեքում, զբաղվում է մաև կարակուլի ոչխարաբուծմամբ: Բուծում են անգորական այծեր: Մանր եղջերավոր անասնապահության հիմնական շրջաններն են Արևելյան և Արևմտյան Ադրբեջանները, խորասանը, Քերմանշահը, Ֆարսը, Մազանդարանը: Հյուսիսարևելյան շրջանում բուծում են սպորտային ձիեր: Մեծ համբավ ունեն դարաբաղյան, արաբական, թուրքմենական ցեղերի ձիերը:

Կասպից ծովում զարգացած է ձկնորսությունը, Պարսից ծոցում՝ մարգարտաորսությունը:

Տրանսպորտը. Հաղորդակցման գլխավոր միջոցը ցամաքային տրանսպորտն է: Երկաթուղիների ընդհանուր երկարությունը 7203 կմ է, ավտոճանապարհներինը՝ 167 հզ կմ: Ցամաքային ճանապարհների գլխավոր հանգույցը Թեհրանն է: Առաջին երկաթուղին կառուցվել է 1916 թ. Ջուլֆայից Թավրիզ: Ներկայումս բեռնափոխադրումների և ուղևորափոխադրումների համար կարևոր նշանակություն ունի Անդրիրանական երկաթուղին, որը Կասպից ծովի ափերից Թեհրանի միջով ձգվում է միջև Պարսից ծոց՝ Բենդեր Հոմեյնի: Նրա երկարությունը 1400 կմ է: Թեհրանից երկաթուղիներ կան դեպի Քերման, Մաշհադ, Թավրիզ: Թավրիզից Ջուլֆա գնացող երկաթուղին միանում է Երևան-Բաքու մայրուղուն: Թավրիզից երկաթուղի կա դեպի Վան և Մուշ:

Բարեկարգ ավտոճանապարհները միմյանց են կապում բոլոր խոշոր բնակավայրերը: Հեռավոր գյուղերի մի մասը ունեն միայն հողածածկ ճանապարհներ:

Ավտոմոբիլային ճանապարհների գլխավոր հանգույցը Թեհրանն է: Այստեղից են սկսվում դեպի Պարսից ծոցի ափերը՝ Բենդեր Հոմեյնի, Աբադան, Շիրազ-Բուշիր, և Կասպից ծովի ափերը գնացող ճանապարհները: Բանուկ ավտոմայրուղիները Թեհրանը կապում են մաև Մաշհադի, Սպահանի, Թավրիզի հետ: Թեհրան-Թավրիզ-Ջուլ-

Ֆա-Ազարակ ճանապարհով Իրանը ելք ունի դեպի Հայաստան: Թավրիզ-Մակու ճանապարհով կապվում է Թուրքիայի հետ: Հյուսիս-արևելքում ավտոճանապարհ կա դեպի Կուչան-Աշխաբադ, արևելքում՝ Մաշհադ-Հերաթ:

Իրանի աշխարհագրական դիրքը մեծ հնարավորություն է տալիս երկաթուղային և ավտոմոբիլային կայուն կապ հաստատել եվրոպական և ասիական երկրների միջև: Սակայն Իրաքի ու Աֆղանստանի անկայուն քաղաքական վիճակը, հայ-ադրբեջանական հակամարտությունը սահմանափակում են այդ հնարավորությունները:

Արտաքին բեռնափոխադրումների համար մեծ դեր ունի ծովային տրանսպորտը: Իրանական նավատորմի նավերի ճնշող մասը հնացած է այլ երկրներից գնված: Այնուհանդերձ դրանք աշխույժ նավարկում են, ապահովելով Իրանի կապը այլ երկրների հետ:

Իրանը ունի զարգացած խողովակաշարային տրանսպորտ՝ նավթամուղներ և գազամուղներ: Նավթամուղներ կան Աբադանից Թեհրան (950 կմ), Թեհրանից Ռեշտ, Թեհրանից Ղազվին: Աշխատանքներ են տարվում կառուցելու դեպի Հայաստան (Մեղրի) գնացող նավթամուղը: Իրանի գրեթե բոլոր խոշոր քաղաքները միմյանց միացած են գազամուղներով: Իրանական գազը մուտք է գործել նաև ՀՀ:

Արտաքին տնտեսական կապերը: Արտահանման ծավալները հասնում են 38.73 մլրդ դոլարի, ներմուծմանը՝ 31.3 մլրդ դոլարի: Արտահանվող հիմնական ապրանքներն են նավթը (արտահանման ծավալների 80 %-ը), բնական գազը՝ տարեկան 3.4 մլրդ խմ, նավթաքիմիական իրեր, գորգեր, չամիչ:

Արտահանման 18.4%-ը կապված է ճապոնիայի հետ: Այնուհետև հաջորդում են Չինաստանը, Իտալիան, Հարավային Աֆրիկան, Նիդերլանդները, Կորեայի Հանրապետությունը:

Ներմուծման մեջ կարևոր դեր են կատարում մեքենաները, գործիքները, կապիտալը, տեխնիկական սպասարկումը, ռազմական ապրանքները: Ներմուծման գլխավոր գործընկերներն են Գերմանիան՝ 12.8 %, Ֆրանսիան՝ 8.3 %, Չինաստանը, Կորեայի Հանրապետությունը:

Ինքնաստուգման հարցեր

1. Ի՞նչ աշխարհաքաղաքական դեր է կատարել Իրանը հին աշխարհում:

2. Ո՞րն են Իրանի աշխարհագրական, աշխարհաքաղաքական դիրքի առանձնահատկությունները:
3. Ինչպիսի՞ն է բնակչության էթնիկական, կրոնական կազմը:
4. Ի՞նչ դեր է կատարել պարսիկ ժողովուրդը համամարդկային քաղաքակրթության մեջ:
5. Որո՞նք են օգտակար հանածոները:
6. Որո՞նք են տնտեսության հին, ավանդական և ժամանակակից ճյուղերը, զարգացման ի՞նչ միտումներ ունեն:
7. Ի՞նչ հեռանկարներ ունի Իրանի տնտեսությունը:

ԻՍՐԱՅԵԼ

*Տարածքը՝ 20.77 հզ քվմ
Բնակչությունը՝ 6.35 մլրդ մարդ (2006)
Մայրաքաղաքը՝ Երուսաղեմ*

Իսրայելը մարդկային քաղաքակրթության հնագույն օջախներից մեկն է: Այստեղ է գրվել Աստվածաշունչը, այստեղ են ծագել քրիստոնեությունը, հուդայականությունը և մահմեդականությունը:

Իսրայելը գտնվում է Արևմուտքի և Արևելքի խաչմերուկում, որի շնորհիվ արևմտյան երկրները իրենց շահերը պահպանում են կապիտալի, բարձր տեխնոլոգիաների, գիտատար արտադրությունների, ներդրումների, իսկ արևելյան երկրները՝ դիվանագիտական կապերի խորացման միջոցով:

Իսրայելը աշխարհի զարգացած երկրներից մեկն է. համախառն ներքին արդյունքը 166.3 մլրդ դոլար է, մեկ շնչի հաշվով՝ 26200 դոլար: Աշխատանքի միջազգային աշխարհագրական բաժանմանը մասնակցում է բժշկական սարքավորումներով, հեռակապի միջոցներով, ռազմական տեխնիկայով, ադամանդի մշակությամբ և արտահանությամբ:

Բնական պայմանները և ռեսուրսները: Երկրի տարածքի մեծ մասը ծածկված է լեռներով ու սարահարթերով: Հյուսիսում Գալիլեյի սարահարթն է, հարավում՝ Նեգևի, արևելքում՝ Էլզորի իջվածքը, որը կտրուկ իջնում է դեպի Մեռյալ ծով: Ծովափով ձգվում է առափնյա նեղ, հարթ գոտին:

Իսրայելի ընդերքը աղքատ է ռեսուրսներով: Միակ արժեքավոր հումքը Մեռյալ ծովի կալիումի և նատրիումի աղերն են:

Կլիման միջերկրածովային է, ամառը շոգ է՝ 23-30° C, ծնեռը մեղմ՝ 7-12° C: Մթնոլորտային տեղումները հյուսիսում 1000 մմ են, հարավում՝ 25-30 մմ:


Միակ խոշոր գետը Հորդանանն է, որը իր երկու վտակներով սկիզբ է առնում Լիբանանից և Սիրիայից, մտնում է Սիրիա-Իսրայելյան սահմանում գտնվող Կինբետ և Տիբերիադի լճերը, այնուհետև հոսում է իսրայելա-հորդանանյան սահմանով (մոտ 50 կմ), ապա Հորդանանով մինչև Մեռյալ ծով:

Երկրի հյուսիսում, լեռներում կան մայրու, սոճու փոքր անտառներ, հարավում Նեգևի անապատն է:

Պետության ձևավորումը, պետական կառուցվածքը. Իսրայելը որպես պետություն ձևավորվել է 1948 թ.: 1947 թ.: ՄԱԿ-ի կողմից որոշում ընդունվեց Բրիտանական հովանավորության տակ գտնվող Պաղեստինի տարածքում ստեղծել հրեական և արաբական անկախ պետություններ: Իսրայելի պետության սահմանները ընդգրկում էր 14.1 հզ քկմ: 1948-49 թթ. Իսրայել-արաբական պատերազմի ընթացքում ի հաշիվ պաղեստինյան հողերի Իսրայելի տարածքը հասավ 20.7 հզ քկմ-ի:

Իսրայել-արաբական հակամարտությունները այժմ էլ շարունակվում են (1972, 1982, 2006, 2009 թթ.): Զուգահեռաբար ՄԱԿ-ի կողմից աշխատանքներ են տարվում խնդրի լուծման ուղղությամբ՝ ստեղծել Պաղեստինի անկախ պետություն և հասնել արաբների կողմից Իսրայելի պետության գոյության ընդունմանը:

Պետության գլխավորը նախագահն է, որը ընտրվում է 5 տարին մեկ Կնեսետի կողմից: Կառավարության ղեկավարը ընտրվում է համաժողովրդական ընտրության միջոցով:



Նկ. 6. Լազի պատը Երուսաղեմում

Բնակչությունը. Հրեաների տեսակարար կշիռը 76.4 % է, մահմեդականներինը՝ 16%, քրիստոնյա արաբներինը՝ 1.7 %, դրուզներինը՝ 1.6 %: Ապրում են նաև հայեր, հույներ և այլք:

Բնակչության բնական աճը 1.2 % է: Շատ մեծ է ներգաղթը: 1931 թ. Պաղեստինի տարածքում ապրում էր 175 հզ հրեա: Երկրորդ աշխարհամարտից առաջ Պաղեստին ներգաղթեց 165 հզ մարդ: Անկախության հռչակումից հետո ներգաղթի ակիբը ավելի մեծացավ: Միայն 1951 թ. Իսրայելը ընդունեց 687 հզ ներգաղթող: Հետագայում ներգաղթը շարունակվեց ընդիուպ մինչև այսօր: Միջազգայնորեն ճանաչված Իսրայելի տարածքից դուրս (այսպես կոչված արաբական հողերի վրա) ապրում է 187 հզ մարդ՝ արևմտյան ափին (Հորդանանի աջ ափին), 20 հզ՝ գրավյալ Գոլանի բարձունքներում, 187 հզ՝ արևելյան Երուսաղեմում:

Բնակչության 90 %-ը ապրում է քաղաքներում: Խոշոր քաղաքներն են՝ Երուսաղեմը, Թել-Ավիվը, Հայֆան: Իսրայելական յուրաքանչյուր քաղաք իր որոշակի հետքն է թողել համամարդկային պատմության մեջ: Երուսաղեմը ունի շուրջ 4 հզ տարվա պատմություն: Ք.ա 961-922 թթ. Երուսաղեմը եղել է Իսրայելի մայրաքաղաքը:



Նկ. 7. Տեսարան Թել Ավիվից

Իսրայելի պետականության կորստից հետո Երուսաղեմը ավերվել է, սակայն նորից վերականգնվել է: 1948-49 թ. ՄԱԿ-ի որոշմամբ քաղաքը բաժանվել է երկու մասի՝ հրեական և արաբական (Հորդանանի իշխանության տակ): 1967 թ. Իսրայելը գրավեց նաև քաղաքի արևելյան մասը և Երուսաղեմը հռչակեց իր մայրաքաղաքը: Երուսաղեմը սուրբ քաղաք է քրիստոնյաների համար, քանի որ այս քաղաքի հետ են կապված Քրիստոսի կյանքի վերջին օրերը: Երուսաղեմը

Մեքքայից և Մեդինայից հետո մահմեդական երրորդ սրբավայրն է: Ըստ ավանդույթի այստեղից է Մուհամեդը երկինք համբարձվել: Նա նաև հուդայականության սրբավայրն է իր լացի պատով:

Հին քաղաքը, որ ամփոփված է պատերի ներսում, բաժանվում է չորս թաղամասերի՝ քրիստոնեական, մահմեդական, հրեական, հայկական:

Հայկական թաղամասը հիմնադրվել է 4-րդ դարում: Այստեղ ապրում է 2500 հայ: Թաղամասում հայկական եպիսկոպոսի նստավայրն է, հայկական եկեղեցին: Եկեղեցուն կից գրադարանում, որը հայկական ձեռագրերի երկրորդ խոշոր կենտրոնն է Մատենադարանից հետո: Հայկական, հունական և կաթոլիկ եկեղեցիներին է վստահված պահպանելու Երուսաղեմի Մայր տաճարում ամփոփված քրիստոսի մասունքները:

Հազարամյակների ընթացքում Երուսաղեմում կառուցվել են քրիստոնեական, հրեական, մահմեդական բազմաթիվ տաճարներ, եկեղեցիներ: Այն համայն մարդկության սրբավայրն է:

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԱԳԻՐԸ: Պետության ստեղծման ժամանակ երկրում գոյություն չունեին որևէ կարևոր ձեռնարկություն: Պետականության ձեռք բերումից հետո համայն աշխարհի հրեաների աջակցությամբ սկսվեց երկրի տնտեսության ստեղծումը, որին նպաստեցին հրեաների նվիրվածությունը իրենց երկրին, բնակիչների կրթվածության մակարդակը, արտասահմանից ստացված ֆինանսական միջոցները և դրանց խելացի օգտագործումը, աշխատանքի կազմակերպման բարձր կուլտուրան: Նախնական փուլում հիմնադրվեցին թեթև ու սննդի արդյունաբերության ձեռնարկություններ: Բելգիայից, Նիդերլանդներից և Ֆրանսիայից եկած ներգաղթողները ստեղծեցին աղամանդի վերամշակման ձեռնարկություններ:

Մեծ ներդրումների շնորհիվ սկսվեց անապատային հողերի մշակումը՝ գյուղատնտեսական մթերքներով սեփական կարիքները բավարարելու նպատակով: Ընդհանուր առմամբ իր գոյության ընթացքում Իսրայելի տնտեսության մեջ կատարվել են հարյուր միլիարդ դոլարի ներդրումներ:

Հսկայական միջոցներ էին տրամադրվում և շարունակում են տրամադրվել կրթության, գիտության ու առողջապահության զարգացման համար:

Միմյանց զուգահեռ գոյատևում են խոշոր մոնոպոլիստական ընկերություններ՝ «Գադիրանը»՝ տարեկան 7.6 մլրդ դոլար, «Տևան»՝

5.7 մլրդ դոլար դրամաշրջանառությամբ և մինչև 20 աշխատող ունեցող հազարավոր փոքր ընկերություններ: Ընդ որում խոշոր ընկերությունների մեծ մասը պատկանում են պետությանը, փոքր ընկերություններ՝ մասնավոր սեկտորին:

Արդյունաբերությունը տալիս է համախառն ներքին արդյունքի մոտ 31 %-ը: Արդյունաբերության առաջատար ճյուղերն են՝ սննդի, ալմաստի մշակման, տեքստիլ և հագուստի, քիմիական մետաղամշակման, ռազմական, էլեկտրատեխնիկական:

Արդյունաբերությանը բնորոշ է բարձր գիտատարությունը: Իսրայելը ունի իր սեփական ատոմային տնտեսությունը, արձակած արբանյակներ: Ջրագանում է բարձր տեխնոլոգիաների, էլեկտրոնիկայի, կապի միջոցների, բժշկական սարքավորումների, ծրագրային ապահովման, դեղորայքի, պլաստմասսաների արտադրությունը:

Բարձր տեխնոլոգիաների բնագավառում աշխատում են 50 ընկերություններ՝ 22 մլրդ դոլար դրամաշրջանառությամբ: Այս ոլորտի ձեռնարկությունները արտադրում են հեռակապի, օպտիկական ու բժշկական սարքավորումներ, համակարգիչներ, կիսահաղորդիչներ:

Իսրայելի արդյունաբերության մեջ իր առանձնահատուկ տեղն ունի քաղաքացիական և ռազմական ինքնաթիռների, զրհամեքենաների, հրասայլերի, հրաձգային զենքերի, հրթիռների, զինամթերքի արտադրությունը:

Երկրում գործում են ալմաստի վերամշակման ավելի քան 700 ձեռնարկություններ՝ 10 հզ աշխատատեղերով: Ալմաստի վերամշակման ձեռնարկությունների մեծ մասը ունեն մինչև 20 աշխատողներ: Ալմաստի վերամշակման խոշոր կենտրոններ են Թել Ավիվը, Բիր Էս-Սաբան: Ալմաստը կազմում է արտահանման ծավալի 40 %-ը: Ալմաստի վարկը և որակը պահպանելու համար երկրում գործում է ալմաստի գիտահետազոտական ինստիտուտ, գիտահետազոտական կենտրոնը, ալմաստի վերահսկողության բյուրո:

Իսրայելի տնտեսության մեջ իր որոշակի տեղն ունի բնակարանա- շինարարությունը: Բոլոր շենքերը կառուցվում են հաշվի առնելով տեղական բնակլիմայական պայմանները: Շինարարության հիմնական մասը գտնվում է պետության ձեռքին:

Գյուղատնտեսությունը տալիս է երկրի ՅՆԱ-ի 2.6 %-ը: Այս ոլորտում զբաղված է աշխատուժի 1.8 %-ը: Վարելահողերը զբաղեցնում են երկրի տարածքի 15.45 %-ը, բազմամյա տնկարկները՝ 3.88 %-ը, ոռոգովի հողատարածքները՝ 250 հզ հա:

Գյուղատնտեսության վարման մեջ տիրապետում են կոլեկտիվ տնտեսությունները՝ կիբուցիները և մոշավները: Կուբիցիներում արտադրությունը պատկանում է կոլեկտիվին: Կիբուցիի բնակիչները ստանում են անվճար սնունդ, բուժսպասարկում և անհրաժեշտ ծառայություններ: Մոշավներում յուրաքանչյուր ընտանիք ունի իր սեփական հողակտորը և զբաղվում է անհատական տնտեսությամբ:

Գյուղատնտեսության մեջ կիրառվում են ամենակատարյալ մեքենաներ, համակարգիչներ, բարձր տեխնոլոգիաներ: Գիտահետազոտական ինստիտուտներում աշխատանքներ են տարվում ստանալու ավելի չորասեր տեսակներ: Ստեղծվել են ոռոգման բարդ համակարգեր: Այս բոլորի շնորհիվ Իսրայելը բացի հացահատիկից մնացած գյուղատնտեսական մթերքներով բավարարում է իր կարիքները: Մեծ քանակությամբ գյուղատնտեսական ապրանքներ՝ վարդ, մեխակ, լոլիկ, պղպեղ, ելակ, մանգո, կիվի, ավոկադո, ցիտրուսներ, բանան է արտահանում: Ընդարձակ տարածություն են գրավում խաղողի և ծիթենու այգիները: Զարգացման բարձր մակարդակի վրա է խոշոր եղջերավոր անասնապահությունը, ոչխարաբուծությունը և այծերի բուծումը:

Տրանսպորտը. Բեռների և ուղևորների փոխադրումը հիմնականում կատարում է ավտոտրանսպորտը: Ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը 17446 կմ է, որից 144 կմ՝ ճեպընթաց: Իսրայելի բնակիչները գրեթե ամբողջությամբ ապահովված են մեքենաներով:

Երկաթուղիների երկարությունը 610 կմ է, որոնք միմյանց են միացնում Թել-Ավիվը, Երուսաղեմը, Բիր Էս-Սաբաը և այլ քաղաքներ: Երկաթուղային համակարգը աստիճանաբար բարելավվում է:

Ծովային տրանսպորտը կարևոր դեր է կատարում արտաքին բեռնափոխադրումների գործում: Միջերկրականի ափի խոշոր նավահանգիստը Հայֆան է: Կարմիր ծովի ափին Էյլաթն է, որը ապահովում է ելքը դեպի շնդկական և Հարավային օվկիանոսի երկրներ:

Օդային գծերով կապված է բազմաթիվ երկրների հետ: Երկրի խոշորագույն օդանավակայանը գտնվում է Երուսաղեմի և Թել Ավիվի միջակայքում: Նավթամուղների երկարությունը 442 կմ է, գազամուղներինը՝ 193 կմ:

Երկրի կյանքում կարևոր նշանակություն ունի զբոսաշրջությունը: Տարեկան Իսրայել են այցելում 2.2 մլն-ից ավելի զբոսաշրջիկներ: Նրանք այստեղ են գալիս Երուսաղեմ և այլ սրբավայրեր այցելելու, Միջերկրական, Մեռյալ ու Կարմիր ծովերի տարբեր առողջա-

րաններում հանգստանալու համար: Զբոսաշրջությունը երկրին տարեկան բերում է 3.1 մլրդ դոլարի եկամուտ: Այս ոլորտում աշխատում է 50 հզ մարդ:

Արտաքին տնտեսական կապերը: Արտահանման ծավալները հասնում են 42.86 մլրդ դոլարի ներմուծմանը՝ 47.8 մլրդ դոլար: Արտահանում է մեքենաներ և սարքավորումներ, զինամթերք, ադամանդ, գյուղատնտեսական ապրանքներ, քիմիկատներ, տեքստիլ ապրանքներ: Արտահանման գլխավոր գործընկերներն են ԱՄՆ-ն, Բելգիան, Հոնկոնգը:

Ներմուծում է ադամանդի հումք, զինամթերք ու զենքեր, հացահատիկ: Ներմուծման գլխավոր գործընկերներն են ԱՄՆ-ն, Բելգիան, Գերմանիան, Շվեյցարիան, Չինաստանը:

Արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռը ծածկվում է զբոսաշրջության բերած եկամուտներով:

Ինքնաստուգման հարցեր

1. Ինչպե՞ս է ձևավորվել Իսրայել պետությունը:
2. Ի՞նչ բնույթ ունի Իսրայելա-արաբական հակամարտությունը: Ինչու՞ է այն ծագել:
3. Ո՞րն է հրեա ժողովրդի դերը համամարդկային քաղաքակրթության զարգացման գործում:
4. Ի՞նչ սրբավայրեր կան երկրում և ի՞նչ պատմական երևույթների հետ են կապված:
5. Որո՞նք են Իսրայելի տնտեսության զարգացման առանձնահատկությունները:
6. Որո՞նք են արդյունաբերության և գյուղատնտեսության գլխավոր ճյուղերը:
7. Ո՞րն է արտաքին տնտեսական կապերի դերը երկրի տնտեսության զարգացման գործում:

ՍԻՐԻԱ

*Տարածքը՝ 185.2 հզ քկմ
Բնակչությունը՝ 18.88 մլն մարդ
Մայրաքաղաքը՝ Դամասկոս*

Սիրիան անապատների երկիր է: Այն մարդու կողմից բնությանը հարմարվելու, վերափոխվելու դասական օրինակ է: Հազարամյա քրտնաջան ու նվիրված աշխատանքի շնորհիվ անապատների առանձին մասեր դարձել են ծաղկուն այգեստաններ:

Սիրիան շերտ առ շերտ միմյանց վրա նստած քաղաքակրթությունների երկիր է: Սիրիան հայոց ցեղասպանության լուռ վկան է իր Դեյր էզ-Զոր անապատով:

Սիրիան Հարավարևմտյան Ասիայում 7-րդ տեղում է համախառն ներքին արդյունքով (63.3 մլրդ դոլար) և բնակչության թվով, 15-րդ - տեղում՝ մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ով (3400 դոլար):

Սիրիան աշխատանքի միջազգային աշխարհագրական բաժանմանը մասնակցում է նավթի և նավթամթերքների, մրգերի, բամբակյա գործվածքների, բրդի արտադրությամբ և արտահանմամբ:

Բնական պայմանները և ռեսուրսները. Միջերկրականի ափերով ձգվում է 10-32 կմ լայնությամբ, 200 կմ երկարությամբ ավազապատ հարթավայր: Դրան զուգահեռ Ամսարիա լեռնաշղթան է: Լիբանանի սահմանով տարածվում են Անտիլիբանյան լեռները, որոնց հարավում, Իսրայելի սահմանում, Գոլանի բարձրություններ են: 1967 թ. Իսրայելը գրավել է Գոլանի բարձրությունները: Դեպի արևելք՝ ընդհուպ մինչև Հորդանանի և Իրաքի սահմանները, ձգվում է մի ընդարձակ սարահարթ՝ 500-800 մ բարձրությամբ:

Սիրիայի տարածքի գերակշիռ մասը գրավող սարահարթի վրա տեղ-տեղ բարձրանում են ոչ մեծ բարձրության քայքայված լեռներ՝ Աբդլ-էլ-Ազիզ, էլ Բիշրի Շաար:

Կլիման առափնյա շրջաններում մերձարևադարձային, միջերկրածովային է, միջին հունվարյան ջերմաստիճանը՝ $+12^{\circ}\text{C}$, ամառը շոգ է՝ $+26^{\circ}\text{C}$, մթնոլորտային տեղումները՝ 900 մմ: Լեռներում ամառը զով է, ձմեռը սառնամանիքային: Ամսարիայի ծովահայաց լանջերին տեղումների քանակը հասնում է 1500 մմ-ի: Արևելքում ամռանը ջերմաստիճանը բարձրանում է $+45+50^{\circ}\text{C}$, ձմռանը կարող է իջնել

մինչև -10°C : Սթնուլորտային տեղումները 50-100 մմ են: Այդ պատճառով այստեղ լանդշաֆտը անապատային է:

Սիրիական անապատները ծածկված են քարացրոններով, բուսածածկը աղքատ է: Անապատներում միայն ձմեռային ամիսներին զբաղվում են քոչվոր անասնապահությամբ:

Լավ արոտավայրեր կան էլ Ջազիրի հարթավայրում, որը ձգվում է Եփրատից մինչև Տիգրիս՝ հանդիսանալով Միջագետքի մի մասը: Էլ Ջազիրում միջին հուլիսյան ջերմաստիճանը $+30^{\circ}\text{C}$ է, հաճախ մինչև $+50^{\circ}\text{C}$: Գարնանային անձրևների ժամանակ այս հարթավայրը ծածկվում է խոտածածկով և ծառայում է որպես արոտավայր, ամռանը, ինչպես մյուս անապատներում, խոտածածկը չորանում է:

Սիրիական անապատների օազիսային բնակչությանը մեծ վնաս են հասցնում մորկահողմերը: Սկիզբ առնելով արաբական անապատներից դրանք երկինք են բարձրացնում հսկայական քանակությամբ ավազափոշի և սփռում ամենուրեք:

Ջրագրությունը աղքատ է, ամենախոշոր գետը Եփրատն է, որը սկիզբ առնելով Հայկական լեռնաշխարհից, կտրում է Սիրիայի տարածքը հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք: Նրա ջրերը օգտագործվում են ոռոգման համար: Օրոնտա գետը սկիզբ է առնում Լիբանանից՝ 325 կմ անցնելով Սիրիայի տարածքով և թափվում Միջերկրական ծովը:

Տիգրիս գետը անցնում է ծայր արևելյան սահմանով: Դրա ջրերը օգտագործվում են ոռոգման նպատակներով: Հարավում հոսում է Բարադի գետը, որի հովտում առաջացել է Դամասկոսի օազիսը:

Սիրիայի ընդերքում հայտնաբերված են նավթի, բնական գազի, ծծմբի, կերակրի աղի զգալի պաշարներ: Նավթի պաշարները գնահատվում են 0,4 մլրդ բարել, բնական գազինը՝ 6.95 մլրդ խմ:


Բնակչության 90.7 %-ը, արաբներ են, երկրորդ էթնիկական խումբը քրդեր են, երրորդը՝ հայեր: Քրդերը հիմնականում ապրում են Հալեպից հյուսիս, հյուսիս-արևելք ընկած լեռնային շրջաններում, Հալեպում, Դամասկոսում, Էլ Ջազիրում: Հաբուր գետի հովտում ապրում են ասորիներ, Լաթաքիայի մարզում՝ թուրքեր, թուրքմեններ:

Կրոնական կազմը. Բնակչության 90 %-ը մահմեդականներ են, 10 %-ը քրիստոնյաներ՝ հայեր, արաբներ, ասորիներ:

Բնակչության բնական աճը բարձր է: 1988-2008 թթ. ընթացքում բնակչության քանակը կրկնապատկվել է: Ընդ որում կա բնական

աճի նվազելու միտում: Անցյալ դարի 70-ական թվականների ծնելիությունը եղել է 40-50%, բնական աճը 33 %: Ներկայումս ծնելիությունը՝ 27.76 % է, բնական աճը՝ 22.95 %:

Կյանքի միջին տևողությունը 70.32 տարի է, տղամարդկանցը՝ 69.01 տարի, կանանցը՝ 71.7 տարի: Մեկ կնոջ պտղաբերությունը 3.4 երեխա է:



Նկ. 8. Տեսարան Հալեպից

Ուրբանիզացման մակարդակը 50 % է: Երկրի խոշոր քաղաքներն են՝ Դամասկոսը, որն ունի 1.5 մլն բնակչություն, Հալեպը՝ 1.4 մլն, Հոմսը, Համան, Լաթաքիան: Սիրիայում մեծ թիվ են կազմում փոքր քաղաքները, որոնց բնակչության գերակշիռ մասը աշխատում է գյուղատնտեսության մեջ: Քաղաքների ընդհանուր ֆոնի վրա բարձրանում են մզկիթների մինարեթները:

Քաղաքներում կան առանձին թաղամասեր, որոնցում ապրում են տարբեր ազգերի ներկայացուցիչներ, օրինակ՝ հայկական թաղամաս, քրդական թաղամաս Հալեպում:

Քաղաքների հին թաղամասերը ավելի շատ նեղ փողոցի երկայնքով ձգվող թունելներ են, փողոցի կողմի հոծ պատերով: Քաղաքներին բնորոշ են բազմաթիվ մանր արհեստանոցները, վաճառատները. շատ քիչ են կանաչապատ տարածքները: Նոր թաղամասերում կան առանձին կանաչապատ տարածքներ, մեծ վաճառատներ:

Գյուղական բնակավայրերը տարբեր տիպի են. որոշ տեղերում գյուղերը կառուցապատված են մեկը մյուսին կպած տներով: Թեք

լեռնալանջերին գյուղական տները շարված են լեռնալանջերին՝ դարձյալ կպած միմյանց: Կան ցրված, միմյանցից հեռու տներով գյուղեր: Յուրաքանչյուր տուն ունի դրսի աշխարհից մեկուսացված պատերով իր բակը:

Բնակչության միջին խտությունը 102 մարդ է մեկ քվա վրա: Այն շատ անհավասար է տեղաբաշխված, օազիսներում և ծովափնյա շրջաններում խտությունը շատ բարձր է, անապատներում նոսր:

Հայերը Սիրիայում: Հայկական գաղութներում ապրում են շուրջ 80 հզ մարդ: Հայերը այստեղ բնակություն են հաստատել դեռևս Տիգրան Մեծի ժամանակ՝ կազմելով Անտիոքի հայկական գաղութը: Հայերի գաղթը դեպի Սիրիա մեծացել է Կիլիկյան պետության անկախացումից հետո: Աստիճանաբար հայկական խոշոր գաղութներ ստեղծվեցին Ալեքսանդրիայում (Իսկենդերույն), Անտիոքում (Անթաքիա), Բելյանում, Մուսա լեռան շրջանում, Լաթաքիայում, Քեսաբում, Դամասկոսում, Հալեպում:



Նկ. 9. Պալմիրա քաղաքի ավերակները

1938-1939թթ. Թուրքիայի կողմից Ալեքսանդրիայի սամջակի գավթունից հետո մոտ 35-հզ հայեր գաղթեցին Սիրիայի այլ շրջաններ և Լիբանան: 1946-48 թթ. սիրահայերի մի մասը գաղթեց հայրենիք: Ներկայումս հայկական խոշոր համայնքներ կան Հալեպում, Դամասկոսում, Հոմսում, Լաթաքիայում, Քեսաբում, Կամիշլիում, Թարթուսում և այլուր:

Տնտեսությունը: Համախառն ներքին արդյունքի տարեկան աճը 4.5 % է: Տնտեսության մեջ կարևոր դեր են կատարում արդյունաբե-

րությունը և գյուղատնտեսությունը: Արդյունաբերությունը տալիս է ՀՆԱ-ի 24, գյուղատնտեսության 23 %-ը:

Արդյունաբերության առաջատար ճյուղերն են նավթի և բնական գազի արդյունահանումը, տեքստիլը, սննդինը, էլեկտրաէներգիական:

Նավթի օրական հանույթը 403.600 բարել է, որից 71 %-ը արտահանվում է, մնացածը՝ վերամշակվում: Բնական գազի հանույթը 6.95 մլրդ խմ է:

Նավթ է արդյունահանվում Կարաչուկում, Թել-Ռումայլաում, Ջիբխիում: Նավթավերամշակման խոշոր կենտրոնը Հոմսն է: Կարաչուկից մինչև Հոմս գործում է նավթամուղ:

էլեկտրաէներգիայի տարեկան արտադրությունը 29.53 մլրդ կվտ է: Խոշոր ջերմաէլեկտրակայաններ կան Հոմսում, Դամասկոսում, ջրաէլեկտրակայաններ՝ Եփրատի վրա՝ Էս-Սաուրայում:

Ավանդական և հնագույն ճյուղը *թեթև* արդյունաբերությունն է հատկապես բամբակյա և բրդյա մետաքսյա թելերի, գործվածքների արտադրությունը: Խոշոր կենտրոններն են Դամասկոսը և Հալեպը: *Սննդի արդյունաբերության* ձեռնարկությունները արտադրում են շաքար, մրգերի պահածոներ, բուսայուղ: Ալրադաց խոշոր ձեռնարկություններ կան Համեյում, Իդիլբում, Հասեկում, շաքարի գործարան՝ Ռալեում, պահածոների ձեռնարկություններ Իդլիբում՝ Ջեբելում:

Համեմատաբար արագ թափով է զարգանում շինանյութերի արդյունաբերությունը՝ կապված զանգածային շինարարության հետ: Ցեմենտ են արտադրում Դամասկոսում, Հալեպում, Հոմսում: Տարածաշրջանը կարևոր տեղ է գրավում ապակու արտադրությամբ:

Սեքենաշինությունը և սարքաշինությունը թույլ զարգացած, սակայն հեռանկարային ճյուղ է: Հալեպում կա տրակտորահավաքման ձեռնարկություն: Արտադրում են նաև կենցաղային սարքեր, էլեկտրատեխնիկական ապրանքներ:

Քիմիական արդյունաբերության ձեռնարկությունները արտադրում են պլաստմասսաներ, ռետինատեխնիկական ապրանքներ, հանքային պարարտանյութեր, դեղորայք: Սիրիան հայտնի է բարձրորակ դեղերի արտադրությամբ:

Գյուղատնտեսությունը կարևոր նշանակություն ունի բնակչությանը սննդով և աշխատանքով ապահովելու գործում: Գյուղատնտեսության ոլորտում զբաղված է աշխատուժի 30 %-ը:

Գյուղատնտեսության գլխավոր ճյուղը բուսաբուծությունն է: Վարելահողերը գրավում են երկրի տարածքի 24.8 %-ը, բազմամյա

տնկարկները՝ 4.47 %-ը: Բուսաբուծական հիմնական շրջանը արևմուտքում է, ուր տեղումները համեմատաբար շատ են, հատկապես առափնյա լեռների ծովահայաց լանջերում և նեղ ծովափերում: Ներքին շրջաններում բուսաբուծությամբ հնարավոր է զբաղվել միայն արհեստական ոռոգման պայմաններում: Ոռոգովի հողատարածքները հասնում են 1.21 մլն հա-ի: Ոռոգովի հողերը տարածվում են Եփրատի, նրա ձաբուր և Բելիքս վտակների, Էլ-Ասի գետի հովիտներում: Ոռոգովի հողերում զարգացած է օազիսային բուսաբուծությունը: Սիրիայում օազիսները կոչվում են գուտեր: Առավել հայտնի է Դամասկոսի գուտը Բարադի գետի հովտում: Հայտնի օազիս է Պալմիրան, որը գտնվում է երկրի կենտրոնում՝ ամենաշոգ ամապատում: Պալմիրան գոյություն ունի ստորերկրյա ջրերի և էֆլե գետի հաշվին: Այս օազիսում մշակում են ծիթենի և փյունիկյան արմավենի:

Սիրիայի հողատարածքների մեծ մասը զբաղված է հացահատիկային կուլտուրաների՝ ցորենի և գարու ցանքսերով: Ցորենի ցանքատարածությունը գրավում է 1.8 մլն հա, տարեկան բերքը՝ 4.9 մլն տոննա: Ցորեն մշակում են հյուսիսային և արևմտյան ջրովի և անջրդի հողերում: Գետերի հովիտներում ամենատարածված մշակաբույսը բամբակն է: Արևմտյան գուտերում մշակում են բրինձ, եգիպտացորեն, շաքարեղեգն: Այստեղ մշակում են նաև ծիթենի, խաղող, փյունիկյան արմավենի, պիստակենի, ցիտրուսներ, ծիրան, խնձոր, թթենի:

Ոռոգովի հողերում զարգացած է բանջարաբուստանային կուլտուրաների, լոբազգիների մշակումը:

Անասնապահությունը ունի քոչվորական բնույթ: Քոչվոր բեղվիները զբաղվում են ոչխարաբուծությամբ, այծաբուծությամբ, ուղտաբուծությամբ: Զգալի թիվ են կազմում ավանակները և խոշոր եղջերավոր անասունները:

Տրանսպորտը. Երկաթուղիների ընդհանուր երկարությունը 2711 կմ է: Ամենաբանուկը Հալեպ-Հոմս-Դամասկոս երկաթուղին է: Հալեպը երկաթուղով կապված է Թուրքիայի հետ: Կարևոր նշանակություն ունի նաև Կամիշլի-Լաթաքիա երկաթուղին՝ 758 կմ երկարությամբ:

Ներքին բեռնափոխադրումների գործում մեծ է ավտոմոբիլային տրանսպորտի դերը: Ավտոմոբիլային ճանապարհների երկարությունը 91795 կմ է, որից 18451 կմ բարեկարգ է:

Ծովային նավատորմը կազմված է 1000 տ և ավելի ջրատարողություն ունեցող 185 նավերից: Դրանցից 114-ը այլ երկրների նավեր են, Վրաստանինը՝ 37 նավ, Հյուսիսային Կորեայինը՝ 21, Պանմայինը՝ 9, Մոնղոլիայինը՝ 2, Սլովակիայինը՝ 2, և այլն:

Խողովակաշարերի երկարությունը 2300 կմ է, որից 2183 կմ-ը նավթամուղներ են: Երկու նավթամուղներն էլ Ռումայլանից և Կարաչուկից ձգվում են մինչև Հոմս, Դամասկոս, Լաթաքիա: Իրաքից Սիրիայի տարածքով դեպի Միջերկրական ծովի նավահանգիստներ են ձգվում մի քանի նավթամուղներ:

ՆԵՐՔԵՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: Սիրիան բաժանվում է 3 շրջանների՝ Հարավ -արևմտյան, Հյուսիս -արևմտյան և Հյուսիս -արևելյան:

1. *Հարավ-արևմտյան* շրջանը ընկած է երկրի հարավ արևմտյան մասում: Նրա մեջ է մտնում Դամասկոսի գուտը, որը հայտնի է մշակովի հողատարածքներով, արդյունաբերության զարգացման բարձր աստիճանով: Արդյունաբերության ճյուղերից զարգացած է տեքստիլ, ապակու, ցեմենտի, պահածոների արտադրությունը:

Անջրդի հողերի վրա մշակում են ցորեն, գարի, ոռոգովի հողերի վրա ցիտրուսներ, շաքարեղեգն, մանգո, փյունիկյան արմավենի, ծիրան դեղձ:

Շրջանի խոշոր քաղաքը Դամասկոսն է: Քաղաքը հիմնադրվել է թ.ա. 18-րդ դարում Բարադա գետի ափին: Եղել է Արամեական պետության մայրաքաղաքը: Այստեղ իրենց տիրապետությունն են հաստատել ասորիները, մոնղոլները, պարսիկները, հռոմեացիները, ֆրանսիացիները, խաչակիր-ասպետները: Դամասկոսը 635-644 թթ. եղել է Արաբական խալիֆայության, 1943 թվականից Սիրիայի մայրաքաղաքը: Այն աշխարհի գեղեցիկ քաղաքներից մեկն է: Արաբների մեջ պահպանվել է մի հին ասացվածք. «եթե Ալահը ուզում է մարդուն պարզևատրել, ապա նրան հնարավորություն է տալիս ճանապարհորդել դեպի Դամասկոս»: Քաղաքը կառուցապատված է անտիկ շինություններով, պալատներով, ամրոցներով: Պահպանվել են հռոմեական տաճարի սյուները, քաղաքային պատերը, Օմեյյադների մզկիթը: Այստեղ է լեգենդար սուլթան Ալախ-Ադինի դամբարանը:

Նոր Դամասկոսը կառուցապատված է գեղեցիկ շինություններով: Այն Սիրիայի գիտության, կրթության և մշակույթի խոշոր կենտրոնն է:

Բնակչության 90 %-ը արաբներ են, Ակրադ թաղամասը քրդաբնակ է, Կասա, Միդան, Բաբ-Թումա թաղամասերում ապրում են հայեր, բուլքեր, եվրոպացիներ:

Դամասկոսում կան թելերի, գործվածքների, ցեմենտի, ապակու, մալուխի, շաքարի, պահածոների, գորգերի գործարաններ:


Դամասկոսը խոշոր տրանսպորտային հանգույց է. նրա վրայով են անցնում Լիբանանը Հորդանանի և Իրաքի հետ կապող ցամաքային ճանապարհները:

2. Հյուսիս-արևմտյան շրջանը ունի զարգացած արդյունաբերություն և գյուղատնտեսություն: Շրջանի ընդարձակ տարածքը բնակեցված է միայն օազիսներում: Օազիսների ոռոգովի հողերի վրա մշակում են ցիտրուսներ, խաղող, ձիթենի, արմավ, ծիրան, դեղձ, թուզ, պիստակենի: Ընդարձակ տարածություն են գրավում ցորենի ցանքատարածությունները, մշակում են նաև բանջարաբուստանային կուլտուրաներ:

Շրջանի խոշոր քաղաքներն են Հալեպը, Հոմսը, Համան, Լաթաքիան:

Հալեպը ունի 1.4 մլն բնակչություն: Կոչվում է նաև հյուսիսային մայրաքաղաք: Հալեպը աշխարհի հնագույն քաղաքներից է, գտնվում է Կուվեյկ գետի ափին: Քաղաքի կենտրոնում է գտնվում Հին միջնաբերդը: Նրանից ոչ հեռու փակ շուկան է իր բազմաթիվ խանութներով, նեղ ու երկար միջանցքներով, յուրահատուկ արևելյան ոճի սպասարկումով: Քաղաքին բնորոշ են հարյուրավոր մզկիթները:

Հալեպը արդյունաբերական խոշոր կենտրոն է՝ մանածագործական, տեքստիլ, ցեմենտի, քիմիական, գորգերի, պահածոների ձեռնարկություններով: Այն կրթության, գիտության, մշակույթի խոշոր կենտրոն է:



Տարածքը՝ 3288 հազար քվադրատ
 Բնակչությունը՝ 1080,2 մլն
 Մայրաքաղաքը՝ Ղեյի

Հնդկաստանն աշխարհի երկրորդ խոշոր պետությունն է բնակչության թվով: Առաջին պետությունն է բազմագոգությամբ և բազմալրոնությամբ, սովորությունների, հավատալիքների պատմական զարգացման բացառիկությամբ: Հնդկաստանը բրնձի, բամբակի, շաքարեղեգի, տնային թռչունների, մի շարք համեմունքների, շախմատի, հաշվարկման համակարգի հայրենիքն է:

Հազարամյակներ առաջ այստեղ մարդու և բնության փոխհարաբերության, մարդու մարդկային էության գաղտնիքներն էին հայտնագործում հնդիկ փիլիսոփաները: Եվ այսօր էլ հնդիկ գիտնականները շարունակում են խորանալ բնության գաղտնիքների մեջ: Դրանց շնորհիվ երկնքում իրենց պտույտն են կատարում հնդկական արբանյակները, գործարաններից դուրս են գալիս ռեակտիվ ինքնաթիռներ, հրթիռներ, էլեկտրոնային հաշվիչ մեքենաներ:

Զարգացման բնական նախադրյալները: Հնդկաստանի մակերևույթի միջուկում հնդկական պլատֆորմն է՝ բյուրեղային ապարատեսակներով, հարուստ մետաղային ռեսուրսներով: Պլատֆորմի հյուսիսում, նրա եզրամասում հզոր նստվածքային շերտերով ծածկված Ինդոս-Գանգեսյան հարթավայրն է: Թերակղզու արևելքում և արևմուտքում աստիճանաձև դեպի ծով են իջնում Արևելյան և Արևմտյան Գաթերի լեռները: Թերակղզային և Ինդոս-Գանգեսյան Հնդկաստանի մակերևույթը մեղմաթեք է, որ նպաստավոր պայմաններ է ապահովում օգտագործման համար: Երկրի հյուսիսային մասում բարձր ու դժվարամատչելի Հիմալայան լեռներն են:

Երկրի ընդերքը հարուստ է օգտակար հանածոներով: Վառելիքային ռեսուրսներից կարևոր նշանակություն ունի քարածուխը: Քարածխի պաշարների հիմնական մասը գտնվում է հյուսիս-արևելքում՝ Արևմտյան Բենգալիայում, Օրիսայում: Կարևոր է այն, որ քարածխի ավազաններից ոչ հեռու հայտնագործել են երկաթաքարի, բրոմի, մանգանի մեծ հանքավայրեր՝ բարենպաստ պայմաններ ստեղծելով մետաղաձուլության զարգացման համար: Թերակղզային շրջանում

կան պղնձի, նիկելի, կոբալտի, կապարի, ցինկի, ոսկու, պլատինի, ուրանի մեծ պաշարներ: Ընդ որում բոլոր հանքավայրերում էլ հանքաբեր շերտերը գտնվում են երկրի մակերևույթին մոտիկ և մատչելի են շահագործման համար:

Կլիման: Լեռնային շրջաններում կլիման ենթարկվում է ուղղա-ծիգ գոտեկականության. որքան վերև, այնքան ցուրտ: Մերձգագաթա-յին շրջաններում հավերժական ձյուն է ու սառցադաշտեր: Հարավա-հայաց լեռնային հովիտներում կլիման ավելի մեղմ է ու բարենպաստ բնակեցման համար: Լեռներից հարավ այն արևադարձային է՝ տաք ու խոնավ ամառներով, տաք ու չոր ծմեռներով: Հարթավայրերում հունվարյան միջին ջերմաստիճանը հյուսիսում $+15^{\circ}\text{C}$ է, հարավում՝ $+27^{\circ}\text{C}$, մայիսին համապատասխանաբար՝ $+28-35^{\circ}\text{C}$:

Սթնոլորտային տեղումները Թառ անապատում 60-100մմ են, Դեկանի սարահարթի կենտրոնական շրջաններում՝ 300-400մմ, Արևելյան Հիմալայների և Գաթերի ծովահայաց լանջերին՝ 3000-6000մմ, ծայր արևելքում՝ Շիլոնգի սարահարթում՝ Չերապունջայում 12000մմ:

Գետային ցանցը խիտ է, հատկապես արևելյան շրջաններում: Դրանք ջրառատ են ամբողջ տարին և ունեն ոռոգոչական մեծ նշանակություն: Վերին հոսանքների շրջանում գետերը ունեն ջրաէներ-գետիկ մեծ կարողություն, ստորին հոսանքներում դրանք նավարկե-լի են: Ամենախոշոր գետերն են՝ Ինդոսը, Գանգեսը, Բրահմապուտ-րան և Գոդավարին: Ինդոսը միայն վերին հոսանքի շրջանում է հո-սում Հնդկաստանի տարածքով՝ Ջամուկի և Քաշմիրի նահանգներով: Գանգես գետը իր Ջամնա վտակով ոռոգում է երկրի կենտրոնական և արևմտյան շրջանները: Գանգեսը հինդուսների սուրբ գետն է: Գան-գեսի ջրերը իրենց մեջ չեն պարունակում մարդու համար վնասա-կար ոչ մի միկրոօրգանիզմ: Գանգեսի ափին է գտնվում Վարանա-սին՝ հինդուսների գլխավոր սրբավայրերից մեկը իր 1500-ից ավելի տաճարներով:

Բրահմապուտրան միայն միջին հոսանքի շրջանում է հոսում Հնդկաստանի տարածքով: Նա ոռոգում է Ասամի նահանգի հողա-տարածքները:

Հնդկաստանում տիրապետող բուսական լանդշաֆտը սավան-ներն են, որոնք տարածվում են թերակղզային շրջանում և Ինդոս-Գանգեսյան հարթավայրում: Այստեղ տարածված են տիկի, սանդալի, արմավենու ծառերը, բամբուկը: Հյուսիսարևմտյան շրջանում խառն

անտառներն են: Արևմտյան Հատերի ծովահայաց լանջերին, Գանգեսի և Բրահմապուտրայի հովիտներում մշտականաչ անտառներ են: Հիմալայների լեռնալանջերին տարածվում են մուսոնային անտառները: Սարգու ազդեցությամբ բնական լանդշաֆտը Ինդոս-Գանգեսյան հարթավայրում գրեթե ամբողջությամբ փոխվել է, մուսոնային անտառների 85%-ը կորցրել են իրենց նախնական տեսքը:

Կենդանական աշխարհը հարուստ է, այն համեմատաբար լավ է պահպանվել: Հիմնականները կենդանիներին չեն սպառում: Մեծ տարածում ունեն վագրերը, կապիկները, փղերը, օձերը: Հիմնողների առօրյայում նշանակալի է փղերի դերը: Նրանք տեղափոխում են բեռներ, և օգտագործվում են այլ ուրոտներում:

Բուսական և կենդանական աշխարհի պահպանման նպատակով ստեղծվել են 75 ազգային պարկեր, 420 արգելավայրեր:



Նկ. 15. Լուսանկար փղի հետ

Պատմությունը: Հնդկաստանը մարդկային քաղաքակրթության հնագույն օջախներին մեկն է: Դեռևս մ.թ.ա. 3-րդ հազարամյակում այստեղ ծաղկում է ապրել Դրավիդյան քաղաքակրթությունը: 2500-1500 թթ. Հնդկաստան են թափանցում հնդկա-արիական ցեղերը՝ տարածելով հնդուականությունը և ծուլելով դրավիդյան ժողովուրդներին: Սկսած 8-դ դարից այստեղ մուտք է գործում մահմեդականությունը: 1192թ. մահմեդականները գրավում են Դելին և սկսում են հյուսիսային շրջանների բնակչության մահմեդականացումը: Այդ նույն ժամանակ հարավային Հնդկաստանում իր ծաղկումն է ապրում Վիջայանագարի հնդուական պետությունը:


1576թ. Լենկ Թեմուրի սերունդներից Բաբուր իշխանը գրավելով ամբողջ Հնդկաստանը՝ հիմնում է Մեծ Մոնղոլների կայսրությունը, որը գոյատևում է մինչև 1857թ., երբ նախօրոք այստեղ եկած անգլիացիները մոնղոլներից իրենց ձեռքն են վերցնում իշխանությունը, որը տևեց մինչև 1947թ.:

1947թ. Հնդկաստանը անկախություն ստացավ: Երկիրը բաժանվեց 2 մասի՝ Հնդկաստանի և Պակիստանի: Բաժանումը կատարվեց

կրոնական սկզբունքներով: Բաժանման ժամանակից մինչև այսօր վեճ է գնում Զամու և Քաշմիր նահանգների շուրջը, որոնց տարածքի 2/3-ը գտնվում է Հնդկաստանի, 1/3-ը՝ Պակիստանի տիրապետության տակ:

Պետական կարգը: Հնդկաստանը դաշնային իսկապետություն է: Կազմված է 28 նահանգներից, 7 միացյալ տարածքից: Պետության ղեկավարը նախագահն է: Օրենսդրական իշխանությունը պատկանում է երկպալատ պառլամենտին՝ ժողովրդական պալատին և Նահանգների խորհրդին: Իշխանությունն իրականացնում է նախարարների խորհուրդը:

Բնակչությունը: Հնդկաստանը աշխարհի ամենաբազմազգ և բազմակրոն երկիրն է: Այստեղ հաշվում են ամենատարբեր հավատ ունեցող 1600-ից ավելի ժողովուրդներ: Նրանք առանձնանում են 3 էթնիկական խմբերի մեջ՝ հնդարիական (բնակչության 72%-ը), դրավիդյան (բնակչության 25%-ը), մոնղոլիդ (բնակչության 3%-ը): Հնդարիական խմբում են հինդուսները, բիհարները, բենգալները: Դրավիդյան ժողովուրդներից ավելի մեծաթիվ են թամիլները, տելուգիները, մոնղոլիդ ժողովուրդներից՝ խաները (չինացիները):



Նկ. 16. Զբոսանք քաղաքի փողոցներով

Հիմնական կրոնը հնդուականությունն է, որին դավանում է բնակչության 80,5%-ը, մահմեդականների տեսակարար կշիռը 13,4% է, քրիստոնյաներինը՝ 2,3%, սիկսերինը՝ 1,9%, կան նաև բուդդայականներ: Հնդուականությունը ամենահինագույն կրոններից

մեկն է: Նրան բնորոշ է բազմաստվածությունը, բնության առանձին ուժերի աստվածացումը: Որպես սրբություն ճանաչվում են Գանգես գետը, կովը, կապիկը, լոտոսը և այլն: Հինդուսների մեջ մեծ տարածում ունի կաստայականությունը: Կաստան մարդկանց խումբ է, որի հիմքում արհեստներն են. երկրում հաշվում են 3500-ից ավելի կաստաներ: Շատ սուր է նրանց միջև առկա խտրականությունը՝ չնայած պետության կողմից կաստայական խտրականությունը արգելված է: Ամենից վեր է դասվում բրահմականների (հոգևորականների և ուսուցիչների) կաստան: Յուրահատուկ է սիկխերի կրոնը, որի գլխավոր դրույթն է. «Աստծո առաջ բոլորը հավասար են»: Այսպես են դաստիարակվում սիկխերը:

Որպես պաշտոնական լեզու ընդունված են հինդին ու անգլերենը և 14 այլ լեզուներ՝ բենգալերենը, քամիլերենը, ուրդուն, սանսկրիտը և այլն:

Հնդկաստանի համազգային կարևորագույն խնդիրը բնակչության աննախընթաց աճի կարգավորումն է: Հնդկաստանի բնակչությունը տարեկան ավելանում է 15 մլն-ով: Ընդ որում ծնվածների քանակը 22,0 % է, մահացածներինը՝ 8,2 %: Կյանքի միջին տևողությունը 64,7 տարի է:

Բնակչության աճի կարգավորմանը խանգարում են ազգային, կրոնական սովորույթները, տարբեր էթնոսների միջև ներքին հակասությունները, զանգվածային անգրագիտությունը, սոցիալական ծայրահեղ լարված վիճակը, ծանր հիվանդությունների մեծ տարածումը: Այստեղ միայն ՉԽՄ-ով վարակակիրների քանակը 5,1 մլն է: Երանցից 300 հզ-ը տարեկան մահանում է:

Բնակչությունը շատ անհավասարաչափ է բաշխված: Ինդոս-Գանգեսյան դաշտավայրում խտությունը հասնում է մինչև 1000 մարդու: Նոսր են բնակեցված Թառ անապատը, բարձր լեռնային շրջանները:

Ուրբանիզացման մակարդակը 30% է: Խոշոր քաղաքներն են՝ Մումբայը՝ 13 մլն բնակչությամբ, Դելին՝ 9,0 մլն, Կալկաթան՝ 14,0 մլն, Հայդարաբադը՝ 4,9 մլն, Չենայը՝ 5 մլն բնակչությամբ: Երկրում հաշվում են 1 մլն և ավելի բնակիչ ունեցող 12 քաղաք:

Հնդկաստանի քաղաքների մի մասը ունի հազարամյակների պատմություն, մի մասը համեմատաբար նոր է: Հնագույն քաղաքներին բնորոշ են պատմաճարտարապետական բազմաթիվ կոթողները, մեծահարուստների դղյակները, նորագույն քաղամասերը, հազար ու մի

նյութերից կառուցված խրճիթներով արվարձանները: Այդ քաղաքների փողոցները հեղեղված են հազարավոր ռիկչիներով, մանրավաճառներով: Մայթերի վրա իրենց հազարամյա երգն են երգում ճախարակները, աշխատում են բազմաթիվ արհեստավորներ: Քաղաքների փողոցներում մեծ թիվ են կազմում «սրբազան» կովերը, կապիկները: Հնագույն քաղաքներից են Դելին, Վարանասին, Իլահաբադը (Ալահաբադը), Պատնան: Լեռնահանքային, լեռնամետալուրգիական, մեքենաշինության արդյունաբերության զարգացման հետ կապված՝ ստեղծվեցին նոր քաղաքներ՝ Բիլլան, Դուրգապուրը: Յուրահատուկ և ինքնատիպ նախագծերով կառուցվեցին Գանդինագաթը՝ Գուջարաթում, Չանդիգարը՝ Փենջաբում: Ֆրանսիացի ճարտարապետ Կորբյուզեն Ջ. Լեռուսից պատվեր է ստանում նախագծելու և կառուցելու Փենջաբի նոր մայրաքաղաքը՝ Չանդիգարը: Վերջինս իր հատակագծով նման է մաքուր մարմնի: Գլխի տեղում դրված են կառավարական իմամարկները, սրտի տեղում՝ բանկերն են, ձեռքերի տեղում՝ ուսումնական ինստիտուտությունները, ոտքերի տեղում՝ ավտոկայանները, երակների տեղում՝ փողոցները և այլ ենթակառուցվածքներ: Քաղաքը կառուցապատված է 2-3 հարկանի շենքերով և թաղված է կանաչի մեջ:

Հնդկաստանի գյուղերը շատ խոշոր են, հատկապես Ինդոս-Գանգեսյան դաշտավայրում: Գյուղերի կավածեփ տները հաջորդում են մեկը մյուսին: Կերալի նահանգում ծովափով ձգվում է գյուղերի անվերջ շարքը՝ մինչև 600 կմ երկարությամբ: Գյուղական տները կառուցում են կավից, քարից: Շինարարության մեջ օգտագործվում են նաև արմավենու փայտը, բամբուկը:

Հնդկական գյուղերի կարևոր խնդիրներից է կաստայական հարաբերությունների վերացումը, որը իրագործում են միավորված գյուղերի ստեղծման, գրագիտության քարծրացման, սոցիալական պայմանների բարելավման և այլ ճանապարհներով:

Հնդկաստանի գյուղերում մեծ չափերի են հասնում գործազուկությունը, մշտական քաղցը: Այդ է պատճառը, գյուղական բնակչության տեղաշարժի դեպի քաղաքներ, նաև՝ Հարավային Աֆրիկա, Պարսից ծոց և այլ երկրներ:

Տնտեսությանը բնորոշ է բազմաձևությունը՝ պետական ձեռնարկությունների կողքին կան խոշոր մասնավոր ընկերություններ և հազարավոր մանր ձեռնարկություններ, արհեստանոցներ: Կապիտալի մեծ մասը կենտրոնացած է խոշոր արդյունաբերական, ֆինանսական «Տատա», «Հինդուստան Լևեր», «Ամբանի» և այլ ընկերություն-

ների ձեռքին: Երկրի 20 առևտրաարդյունաբերական ընկերությունների ձեռքին են գտնվում մասնավոր բաժնի ակտիվների 30 %-ը: Արդյունաբերական սարքավորումների, գյուղատնտեսական մեքենաների, էլեկտրատեխնիկական ապրանքների, ավտոմոբիլների մեծ մասը արտադրում են խոշոր ընկերությունները:

Տնտեսության կարգավորման գործում շատ մեծ է պետության դերը: Կատարվում են երկարատև վարկավորումներ: Մեծ ուշադրություն է դարձվում փոքր ձեռնարկատիրությունների, արհեստագործության զարգացմանը: Մի կողմից խրախուսելով՝ մյուս կողմից պետությունը սահմանափակում է խոշոր ընկերությունների որոշ իրավունքները ի շահ փոքրերի:

Ուշադրության կենտրոնում է գյուղատնտեսության զարգացումը: Պետականորեն մեծ միջոցներ են տրամադրվում ոռոգման համակարգին: Սահմանվել է բրնձի, ցորենի գնման նվազագույն գներ:

Պետությունը շարունակում է իր ձեռքին պահել երկաթուղային և օդային տրանսպորտի 100 %-ը, ածխի հանույթի 98 %-ը, բանկային և ապահովագրական գործի 93 %-ը:

Արդյունաբերություն: Արդյունաբերությունը տալիս է ՀՆԱ-ի 28,4 %-ը: Այդ ոլորտում է զբաղված աշխատուժի 17 %-ը: Արդյունաբերության մեջ առանձնանում են 3 տիպի ձեռնարկություններ: Առաջին խմբի մեջ են մտնում պետական ընկերություններին պատկանող խոշոր ձեռնարկությունները, հատկապես՝ միջուկային, տիեզերական սարքերի արտադրության, ինքնաթիռաշինության, սև և գունավոր մետաղաձուլության, մեքենաշինության: Երկրորդ խմբում են ազգային մասնավոր ընկերություններին պատկանող ձեռնարկությունները, որոնք տիրապետող դեր են կատարում թեթև արդյունաբերության մեջ: Երրորդ խմբում են մասնավորներին պատկանող հազարավոր փոքր ձեռնարկությունները, արհեստանոցները: Պետության գլխավոր խնդիրը այս երեք խմբերի համամասնական զարգացման ապահովումն է:

Արդյունաբերության կարևոր ճյուղը ածխի, նավթի հանույթն է: Ածխի հանույթը հասնում է 444 մլն տոննայի: Գլխավոր ածխահանքերը գտնվում են Դամոդար գետի ավազանում: Դրանք տալիս են արդյունահանվող ածխի 2/3-ը: Նավթի տարեկան հանույթը 45,5 մլն տ. է, բնական գազինը՝ 30,8 մլրդ խմ: Նավթ և բնական գազ է արդյունահանվում Վերին Ասամում, Մումբայի առափնյա ծանծաղուտներում: Հնդկաստանը տարեկան արտահանում է 20,3 մլն տ նավթ, փոխարենը ներմուծում է 121,6 մլն տ: Նավթավերամշակման խոշոր

ծեռնարկություններ կան Մումբայում, Վիշակհապատնամում, Չեննայում, Կալկաթայում: Վերամշակվող նավթը չի բավարարում երկրի պահանջները։ Խնդիրը նավթարդյունաբերության հզորացումն է սեփական և ներմուծվի հումքի հիման վրա։

Արդյունաբերության և տնտեսության կարևորագույն խնդիրներից է էլեկտրատներգետիկ արդյունաբերության զարգացումը։ Էլեկտատներգիայի տարեկան արտադրությունը 630,6 մլրդ կվտ ժամ է։ Էլեկտատներգիայի 82 %-ը տալիս են ջերմաէլեկտրակայանները, մնացածը՝ ջրային և ատոմային էլեկտրակայանները։ Ջերմաէլեկտրակայանի մեծ ցանց կա Դամոդարի ածխային ավազանում, Դելիում, Կալկաթայում։ Միջուկային վառելիքով աշխատող էլեկտրակայաններ կան Տրոմբեյում (Մումբայից ոչ հեռու), Պորմանդարում (Գուջարաթի նահանգ), Բենգալուրում (Կառնատակա նահանգում), Կոյամպուտուրում (Տամիլնադի նահանգ)։ Ջրաէլեկտրակայանների մեծ մասը գտնվում են Ինդոսի և Գանգեսի վերին հոսանքների շրջանում։ Խոշորագույն ջրաէլեկտրակայաններից են Բխակրայը, Նանգալը՝ Փենջաբում Սատլեջ գետի վրա։

Լեռնահանքային արդյունաբերության ծեռնարկությունները արդյունահանում են երկաթաքար, բոքսիտներ, փայլար։ Հնդկաստանում քարածխի և երկաթաքարի ռեսուրսների մեծ մասը գտնվում են միմյանց մոտիկ՝ բարենպաստ պայմաններ ստեղծելով սև մետաղածուլության զարգացման համար։ Սև մետաղածուլության ծեռնարկությունների գերակշիռ մասը տեղաբաշխված են Դամոդար գետի ընդարձակ հովտում՝ Ասանսոլում, Դուրգապուրում, Ջամշեդպուրում, Բոկարոյում։ Սև մետաղածուլությունը զարգացած է նաև Բիլայում, Տումսարում։ Սև մետաղածուլության խոշոր կենտրոններ են դարձել նավահանգստային քաղաքները՝ Կալկաթան, Մումբայը։

Գունավոր մետաղածուլության կարևոր ճյուղը այսօրինակ արտադրությունն է՝ Կորբայում, Ալվաեյում, Դուրգապուրում։ Պղնձածուլությունը զարգացած է երկրի հյուսիս-արևմուտքում՝ Կետրիաում, Զատսիլայում։

Արդյունաբերության ամենաարագ զարգացող ճյուղերից են մեքենաշինությունը և սարքաշինությունը։ Այստեղ կատարվում են կապիտալ մեծ ներդրումներ, իրագործվում են ընդարձակ գիտահետազոտական աշխատանքներ, գիտական հայտնագործություններ։ Այս բոլորի իրագործման համար ստեղծվում են տեխնոպարկեր, սիլիկոնային հովիտներ։ Դրանց իրագործման համար շատ մեծ դեր

ունեն ԱՄՆ-ի սիլիկոնային հովիտներում աշխատող հինգուս զիտնականները: Ներկայումս ԱՄՆ-ի սիլիկոնային հովիտներում աշխատում են 300 հազ. հինգուսներ, որոնցից 5000-ը միլիոնատերեր են: Հինգուսներն ԱՄՆ-ում հիմնել են 774 ընկերություններ, որոնցից 15-ի ապրանքաշրջանառությունն անցնում է 100 մլն դոլարից: Այս ընկերությունները նույն արտադրությունները կազմակերպում են իրենց երկրում: Այսօր Հնդկաստանի միայն տեղեկատվական տեխնոլոգիաների մշակման և արտադրության ոլորտում աշխատում են 400-ից ավելի ընկերություններ՝ 300 հազարից ավելի աշխատողներով: Միայն ներքին կարիքների բավարարման համար կապիտալ ներդրումները հասնում են 2,7 մլրդ դոլարի, արտահանման ապրանքների արտադրության համար 3,4 մլրդ դոլար: Հնդկաստանի զիտնականները մեծ եկամուտներ են ստանում արտասահմանյան ընկերությունների պատվերների կատարումից: Դրան նպաստում է նաև այն, որ հինգուս գիտնականների աշխատանքը էժան է: Նրանց մեծ մասը ազատ տիրապետում է անգլերենին:

Բարձր տեխնոլոգիաների արտադրության գլխավոր կենտրոնը Մումբայն է: Այն զարգացած է նաև Չենայում, Կալկաթայում և այլ քաղաքներում:

Երկրում առաջընթաց է ապրում նաև ընդհանուր մեքենաշինությունը՝ Դուրգապարում, Ռանջիում, Բիոպալում, ավտոմեքենաշինությունը՝ Մումբայում, Չենայում, Բենգալուրում, Հայդարաբադում, վազոնաշինությունը՝ Չենայում, Դուրգապուրում, Հաուրայում, ինքնաթիռաշինությունը և հրթիռաշինությունը, տիեզերական սարքերի արտադրությունը՝ Բենգալուրում, նավաշինությունը՝ Հաուրայում, Դուրգապուրում, Վիշակհապատնամում:

Քիմիական արդյունաբերության ձեռնարկություններն արտադրում են հանքային պարարտանյութեր՝ Սինդրիում և Նանգալում, դեղորայք՝ Մումբայում և Վիշակհապատնամում:

Հնդկաստանը զարգացած թեթև արդյունաբերության երկիր է: Արտադրում են գործվածքներ, հագուստեղեն, կաշվե ապրանքներ:

Աշխարհում առաջին տեղն է գրավում ձեռքի բամբակյա գործվածքների արտադրությամբ: Այն տարածված է ամենուրեք, նույնիսկ խոշոր քաղաքների մայրերի վրա: Արտադրում են նաև գործարանային բամբակյա գործվածքներ՝ Մումբայում, Միմադաբադում: Բոլոր գործվածքների արտադրությունը զարգացած է Նանգալում, Դեհա-րում, ջութե գործվածքներից՝ Կալկաթայում, մետաքսե գործվածք-

ներինը՝ Մումբայում, Չենայում, Կալկաթայում: Խոշոր քաղաքներում արտադրում են ոսկե թելերով գործվածքներ: Կարի արտադրություն կա բոլոր խոշոր քաղաքներում: Ունի զարգացած կաշվի, կոշիկի արտադրություն: Ամենուրեք տարածված են մանր արհեստանոցներ, որոնք արտադրում են կենցաղային ապրանքներ, ոսկերչական իրեր, հուշանվերներ:

Սննդի արդյունաբերության ձեռնարկություններն արտադրում են թեյ, շաքար, ծխախոտ:

Գյուղատնտեսություն: Հնդկաստանը աշխարհի ամենահնագույն քաղաքակրթություններից մեկի և հողագործության մշակության դասական օրինակ է: Հողագործական մշակույթն ունի ավելի քան 5 հազար տարվա պատմություն: Այդ ընթացքում կտրատվել են տարածքի մեծ մասը զբաղեցնող անտառները, կառուցվել են բազմաթիվ ու բազմատեսակ ոռոգիչ համակարգեր: Կուլտուրականացվել են շատ բույսեր՝ բրնձի և բամբակի գորշ տեսականեր, վարունգը, սմբուկը, շաքարեղեգը, ոսպը, սիսեռը, մանանեխը, կանեփը և այլն: Հնդկաստանի գյուղատնտեսության գլխավոր խնդիրը այն է, որ ավելացվի գյուղատնտեսական մթերքների արտադրությունը՝ ներքին կարիքների լրիվ բավարարման համար, որը հնարավոր է իրագործել միայն ինտենսիվացման ճանապարհով: Մի կողմից՝ պետությունը զգալի միջոցներ է տրամադրում գյուղատնտեսությանը խրախուսում է խոշոր տնտեսությունների ստեղծումը, կառուցվում են նոր ոռոգիչ համակարգեր, ավելանում է մեքենայացման սարք- ծանր, մյուս կողմից՝ փոքր հողատիրությունների վերացումը շատ գյուղացիների դարձնում է գործազուրկ, որոնք հեռանում են քաղաք իրեն բոլոր ծանր հետևանքներով:

Հողագործության հազարամյա մշակույթը հասցրել է նրան, որ այստեղ արդեն օգտագործում են մշակության ենթակա բոլոր հողահանդակները: Նոր հողերի յուրացման հնարավորությունները շատ սահմանափակ են: Տարածքի 49 %-ը արդեն հերկված է, իսկ բազմամյա տնկարկները զբաղեցնում են տարածքի 2,8%-ը, մնացածը բարձր լեռներ են անջուր անապատներ:

Մշակովի դաշտերը տարածվում են ամենուրեք՝ Ինդոս, Գանգես, Բրահմապուրա, Գոդավարի, Կավերի գետերի հովիտներում, Ղեկանի սարահարթում: Մշակովի հողահանդակները լեռնալանջերով դարավանդների ձևով բարձրանում են վեր, մինչև 4500 մ բարձրություններ:

Բուսաբուծության զարգացմանը նպաստել է ոռոգման հզոր ցանցի ստեղծումը: Հնդկաստանը աշխարհում առաջին տեղն է գրավում ոռոգվող հողահանդակներով (55,8 մլն հա):

Հնդկաստանը բրնձի հայրենիքն է: Բրնձի ցանքատարածությունները 44 մլն հա են, աշխարհի բրնձի ցանքատարածությունների 28,7%-ը: Բրնձի տարեկան բերքը 132 մլն տոննա է, համաշխարհայինի 22,4 %-ը: Բրնձի արտագրությամբ երկրորդ տեղում է աշխարհում Չինաստանից հետո: Բրնձի դաշտերը տարածվում են Ինդոս-Գանգեսյան դաշտավայրում, Դեկանի սարահարթում, առափնյա ընդարձակ հարթավայրերում: Մշակության որոշմական ժամանակաշրջանը ամռան է, երբ տեղում են մուսսոնային անձրևները: Չմեռային տաք ու արևոտ սեզոնին նույնպես մշակում են բրնձ՝ արհեստական ոռոգման պայմաններում: Բրնձի դաշտերը դարավանդների ձևով տարածվում են նաև Հիմալայների լեռնալանջերին մինչև 2200 մ - բարձրությունների վրա:

Երկրորդ հացահատիկային մշակաբույսը ցորենն է, որի մշակության զլխավոր շրջանը Փենջաբն է, ուր կան ընդարձակ ոռոգովի հողահանդակներ: Ցորեն մշակում են նաև ընդարձակ հարթավայրային շրջաններում տարվա չորային եղանակներին: Հացահատիկային մշակաբույսերից մեծ տարածում ունեն նաև գարին, եգիպտացորենը, կորեկը: Դեկանի սարահարթում, խոշոր գետերի հովիտներում մշակում են բամբակ, յուղատու բույսեր: Պտղատու ծառերից տարածված են մանգոն, պապայան, արմավենին: Թերակղզու ծայր հարավում տարածված են հացի ծառի, բանանի, գրեյֆրութի, սուրճի, թեյի տնկարկները:

Հնարավորության սահմաններում յուրացված են Հիմալայան լեռների հովտային շրջանները: Մշակում են բրնձ, ամենուրեք պտղատու այգիներ են, իսկ ծայր արևելյան շրջանում գտնվող Ասամի նահանգը հայտնի է թեյի մշակությամբ: Դարավանդների վրա մշակում են նաև շաքարեղեգ, խնձոր և այլ պտուղներ:

Հնդկաստանը նաև համեմունքների, ջուտի, նուռի, թուզի, նուշի և այլ մշակաբույսերի երկիր է:

Հազարամյակների ընթացքում մշակվելով մեծ տարածությունների վրա՝ գյուղատնտեսական հողերը դուրս են եկել շրջանառությունից: Հողահանդակները ենթարկվում են հողմնահարման, սելավային երևույթների, ջրհեղեղների:

Անասնապահության զարգացման պայմանները սուղ են, սահմանափակ են արոտավայրերը: Անասունների մթերատվությունը շատ ցածր է: Խոշոր եղջերավոր անասուններն օգտագործում են

հիմնականում որպես քաշող ուժ: Հնդկաստանի բնակչության մեծամասնությունը բուսակեր է: Այդ և կրոնական պատճառներով շատ քիչ է անասնապահական մթերքների պահանջարկը, իսկ կովերին չեն մորթում, որովհետև նրանք սուրբ կենդանիներ են:

Տրանսպորտ: Տնտեսության կարևոր ճյուղերից մեկն է: Հիմնականը երկաթուղային տրանսպորտն է: Երկաթուղիների ընդհանուր երկարությունը 63,23 հազար կմ է, որից 16,69 հազարը էլեկտրաֆիկացված է: Առաջին երկաթուղիները կառուցվեցին նավահանգիստներից դեպի լեռնահանքային շրջաններ և Դելի: Երկաթուղային ցանցն ընդարձակվելով՝ իր վրա վերցրեց ներքին բեռնափոխադրումների մեծ մասը:

Ավելի արագ թափով են երկարում ավտոճանապարհները: Բոլոր խոշոր քաղաքները միմյանց հետ կապված են բարեկարգ ճանապարհներով, որոնց երկարությունը 3,4 մլն կմ է, սակայն 1,7 մլն կմ երկարությամբ ավտոճանապարհներն անբարեկարգ են, որոնց մեծ մասը մուսսոնային անձրևների ժամանակ դառնում են անանցանելի: Երկրում առանձնակի ուշադրություն է դարձվում Աճկարա-Սինգապուր մայրուղու՝ Հնդկաստանի տարածքով Ամրիթսար- Դելի-Ագրա-Կամպուր-Վարանասի-Կալկաթա հատվածի պահպանմանը: Այնուհանդերձ Հնդկաստանի բազմաթիվ գյուղեր շարունակում են աշխարհի հետ կապ ունենալ շատ անբարեկարգ, տարվա մեծ մասն անանցանելի ճանապարհներով: Դրանց մի մասով կարող են շարժվել միայն գոմեշները և ջորիները, որոնք լայնորեն օգտագործվում են բեռնափոխադրումների համար:

Ներքին բեռնաշրջանառության զարգացմանը խանգարում են նաև միջնահանգական մաքսակետերը. մեկ նահանգից մյուսն անցնելիս անհրաժեշտ է թույլատվություն ստանալ:

Ներքին տարբերությունները և քաղաքները: Ընդարձակ տարածությունները, բնական ներուժի խիստ տարբերությունները, բնակչության աշխատանքային բազմաբնույթ կարողությունները, պատմական երևույթները տարբեր պայմաններ են ստեղծել Հնդկաստանի առանձին շրջանների համար:

Պատմականորեն ավելի արագ զարգացել է Ինդոս-Գանգեսյան դաշտավայրը՝ դառնալով քաղաքակրթության խոշոր կենտրոն: Գաղութատիրության շրջանում սկսեցին զարգանալ առափնյա տարածքները՝ կապված խոշոր նավահանգստային քաղաքների ստեղծման ու արտաքին կապերի ընդլայնման հետ: Աճկախության տարիներին արդյունաբերական խոշոր կենտրոններ ստեղծվեցին ներքին

շրջաններում, հատկապես օգտակար հանժոռների հանքավայրերին մոտիկ: Ներկայումս արագ թափով ձևավորվում են տնտեսական զարգացման նոր օջախներ, որոնց հիմքում հզոր տեխնոլարկերը, տեխնոպոլիսներն են, սիլիկոնային հովիտները:

Հնդկաստանում առանձնանում են 7 խոշոր տնտեսական շրջաններ՝ Կենտրոնական, Հյուսիսային, Հյուսիսարևմտյան, Արևելյան, Հյուսիսարևելյան, Արևմտյան, Հարավային:

Հնդկաստանի հազարամյա պատմության, ազգի ու մշակույթի ձևավորման, տնտեսական զարգացման գլխավոր վայրը եղել է երկրի հյուսիսը՝

1. Հյուսիսային տնտեսական շրջանը: Այն ընկած է Գանգեսի հովտում, ուր բերրի հողեր են, բարենպաստ ագրոկլիմայական պայմաններ և Գանգես գետն իր սուրբ ջրերով: Ամառային ամիսներին կանաչում են բոնձի դաշտերը: Ամենուրեք արմավենու այգիներ են, շաքարեղեգի ցանքեր:

Գանգեսի հովտից է սկսվել «կանաչ հեղափոխությունը», որը նպաստել է գյուղատնտեսության արագ զարգացմանը: Գյուղատնտեսական մթերքների բազայի վրա զարգացել է սննդի (շաքարի, բուսալուղի), տեքստիլ, կաշվի արդյունաբերությունը: Խոշոր քաղաքներում՝ մեքենաշինությունը, նավթաքիմիան, սարքաշինությունը:

Շրջանի խոշոր քաղաքներից են Վարանասին, Պատնան, Հարդվարը:

Վարանասին (Բենարես) ունի 1 մլն բնակչություն: Հիմնադրվել է մ.թ.ա. 7-րդ դարում Գանգես գետի ափին: Վարանասիով են անցել քարավանային ճանապարհները՝ զարկ տալով նրա զարգացմանը: Քաղաքը հայտնի է իր գիտական, կրթական, մշակութային օջախներով: Դեռևս 18-րդ դարում այստեղ կառուցվել է աստղադիտարան: Վարանասինն հինդուսների և բուդայականների սրբավայրն է, հայտնի է հարյուրավոր տաճարներով: Այստեղ է «Շիվայի ոսկե տաճարը»:


Վարանասիում զարգացած է մանր արհեստագործությունը, բամբակյա գործվածքների, կաշվե ապրանքների արտադրությունը:

Ագրան հիմնադրվել է 16-րդ դարում (Մեծ Մոնղոլների նստավայրը): Մոնղոլների մոտ 400-ամյա պատմության ընթացքում քաղաքը մեծացել է, կառուցապատվել բազմաթիվ ճարտարապետական հուշարձաններով, տաճարներով: Այստեղ է գտնվում «Թաջ Մահալ» դամբարան-տաճարը, Մեծ Մոնղոլների պալատը: Մեկ միլիոնանոց քաղաքում զարգացած է արհեստագործությունը: Հազարավոր գրոսաշրջիկներին մատուցվում է արհեստավորների ծեռքով պատ-

րաստված բամբակյա գործվածքներ, կաշվե և փայտե նախշազարդ իրեր: Ագրան հայտնի է բույսերից ստացվող կապույտ ներկով, որով ներկված առարկաների գույնը գործնականում չի խամրում:

Պատման նույնպես Գանգեսի ափին է: Նա Բիհար նահանգի վարչական կենտրոնն է: Հիմնադրվել է մ.թ.ա. 5-րդ դարում, եղել է Գուպտերի պետության մայրաքաղաքը: Ընդհիվ Գանգես գետի քաղաքը դարձել է արհեստագործության, առևտրի խոշոր կենտրոն: Սոս մեկ միլիոն բնակչություն ունեցող քաղաքում զարգացած է տեքստիլ և սննդի արդյունաբերությունը:

Հյուսիսում է գտնվում Հարդվարը, որը էներգետիկ սարքավորումների խոշոր կենտրոն է:



Նկ. 17. Թաջ Մահալ տաճարը Ագրայում

2. Արևմտյան շրջան: Համեմատաբար փոքր է տարածքով, սակայն շատ արագ է զարգացել անգլիական գաղութային և հետգաղութային տարիներին: Շրջանում զարգացած են նավթի հանույթը և վերամշակումը, նավթաքիմիան: Երկրի ատոմային, էլեկտրատեխնիկական արդյունաբերության առաջատար է: Այստեղ, ի տարբերություն մյուս շրջանների, կան ավելի ժամանակակից ծեռնարկություններ, որոնք տալիս են գործարանային արտադրության բարձրորակ ապրանքներ, էլեկտրատեխնիկական իրեր, տեղեկատվական տեխնոլոգիաներ, բամբակյա գործվածքներ:

«Կանաչ հեղափոխության» շնորհիվ կառուցվել է ջրանցքների լայն ցանց: Ոռոգովի հողերում մշակում են բամբակ, ցորեն:

Շրջանի արդյունաբերական խոշորագույն կենտրոններից են Մունբայը, Ահմադաբադը, Պունան, Սուաթը:

Մուճբայն աշխարհի խոշորագույն քաղաքներից մեկն է, ունի 13 մլն-ից ավելի բնակչություն: Ազլոմերացիան ձգվում է տասնյակ կիլոմետրեր: Հիմնադրվել է 16-րդ դարում Արաբական ծովում գտնվող կղզու վրա: Եղել է Անգլիական գաղութարարների կողմից դեպի երկրի ներսը գնացող խոշոր դարպասներից մեկը: Շնորհիվ եվրոպական երկրների հետ առևտրի ընդարձակման Մուճբայն աստիճանաբար դարձել է խոշոր նավահանգիստ: Այսօր էլ քաղաքի վրայով են անցնում արևմուտքն արևելքի հետ կապող կարևոր ծովային ուղիները:

Մուճբայը դասական հնդկական քաղաք է, սակայն իր նորագույն թաղամասերով, գիտակրթական հզոր կենտրոններով, բարձր տեխնոլոգիաների ձեռնարկություններով նաև արևմտյան ոճի քաղաք է: Այստեղ զարգացած են նավթավերամշակումը, առափնյա ջրերում նավթի հանույթը: Ունի մեքենաշինության, էլեկտրատեխնիկական իրերի, բամբակյա գործվածքների, դեղորայքի արտադրություն: Մուճբայի արվարձանում կա ատոմային էլեկտրակայան:

Ահմադաբադը գտնվում է Գուջարաթի նահանգում: Հիմնադրվել է 1411թ.-ին: Եղել է մետաքսյա և բամբակյա բարձրորակ գործվածքների արտադրության կենտրոն: Այսօր էլ քաղաքում զարգացած է բամբակյա գործվածքների արտադրությունը, մետաղամշակումը: Ամենուրեք մանր արհեստանոցներ են՝ կենցաղային իրերի արտադրությամբ:

Ներկայիս Ահմադաբադում ապրում է 3 մլն մարդ:

Պունան ունի 1,6 մլն բնակիչ: Քաղաքում զարգացած է տեքստիլ, կաշվի-կոշիկի, քիմիական արդյունաբերությունը: Արտադրում է դեղորայք:

3. Հարավային շրջան: Ընդգրկում է թերակղզու ծայր հարավը: Մետաղածուխության, մեքենաշինության, նավթավերամշակման, բրնձի, շաքարեղեգի, բամբակի, համեմունքների մշակման խոշոր շրջան է, նաև՝ կինոարտադրության:

Շրջանի զարգացման համար բազա են հանդիսանում Չենայը, Բենգալուրը, Վիշակհապատնամը:

Չենայն ունի ավելի քան 5 մլն բնակիչ: Հիմնադրվել է 1639 թվին, որպես Օստ-Հնդկական ընկերության նստավայր: Խոշոր նավահանգիստ է, արդյունաբերական, գիտական, մշակութային կենտրոն: Զարգացած են վագոնաշինությունը, ավտոմոբիլաշինությունը, տեքստիլ արդյունաբերությունը: Չենայը կինոարդյունաբերության կարևոր կենտրոն է: Տպագրության ավանդական քաղաք է: Այստեղ է տպվել հայ մամուլի առաջնեկը՝ «Ազդարարը»:

Բենգալուրն ունի 4 մլն բնակչություն, ինքնաթիռաշինություն, էլեկտրատեխնիկական, տեքստիլ, սննդի արդյունաբերություն: Տիեզերական հետազոտության կենտրոն է:

4. Դյուսիսարևմտյան շրջան: Ընդգրկում է Դելիի շրջակայքը և դեպի հյուսիս ընկած շրջանը: Զարգացած է մեքենաշինությունը, էլեկտրատեխնիկական, քիմիական, տեքստիլ արդյունաբերությունը:

Երկրի ցորենի արտադրության գլխավոր շրջանն է: Մշակում են նաև լոբազգիներ, բամբակ, բանջարեղեն: Կան խաղողի և պտղատու շատ այգիներ:

Շրջանի խոշոր քաղաքներն են Դելին, Ամրիթսարը: *Դելին* 1947թ-ից երկրի մայրաքաղաքն է: Հիմնադրվել է 14-րդ դարում մ.թ.ա.: 1200 թ. դառնում է Դելիի սուլթանության մայրաքաղաք: Բնակչությունը 9 մլն է. աշխատում են թեթև արդյունաբերության, մետաղամշակման, ապակու և հախճապակու, մեքենաշինության ճյուղերում:

Քաղաքը կառուցապատված է բազմաթիվ շինություններով, որոնց մեծ մասը կառուցվել է Մեծ Մոնղոլների իշխանության տարիներին, որի վկան են մահմեդական մզկիթները: Քաղաքում կան երկաթյա սյուներ, հիմնված հազարնյակներ առաջ՝ 5-րդ դարում մ. թ. ա., որ շարունակում են մնալ բաց երկնքի տակ առանց ժանգոտվելու:

Չանդիգարիը Փենջաբ, խարիյանա նահանգների և Չանդիգարի միաորված տարածքի վարչական կենտրոնն է: Կառուցվել է 1956-57թթ: Քաղաքը նախագծել է ֆրանսիացի ճարտարապետ Լև Կորբյուզեն: Նրա հատակագիծը նման է մարդու մարմնի:

Ամրիթսարն ունի 700 հազար բնակիչ, զարգացած մեքենաշինություն, քիմիական, տեքստիլ արդյունաբերություն: Սիկիների սրբավայրն է: Կան բազմաթիվ ճարտարապետական հուշարձաններ, որոնցից հայտնի է «Սիկիների ոսկե տաճարը»:

5. Արևելյան շրջան: Երկրի մետաղածուլության, ծանր մեքենաշինության գլխավոր շրջանն է: Տեղական քարածխի և երկաթաքարի բազայի վրա սև մետաղածուլության խոշոր ձեռնարկություններ են ստեղծվել Հնդկական Ռուրում՝ Ջամշետպուրում, Կալկաթա-Դամդար արդյունաբերական գոտում: Այլումինաձուլությունը զարգացած է Դուրգապուրում, Հաուրայում, որտեղ սեփական մետաղների բազայի վրա արտադրում են վագոններ, նաև՝ ծովային նավեր: Շրջանում տարեկան ստանում են բրնձի երկու բերք, մշակում են նաև ջուտ և թեյ:

Տարածաշրջանի տնտեսական համակարգի ստեղծման և զարգացման համար վճռական դեր է կատարել *Կալկաթան*: Հիմնադրվել

է 1690թ. որպէս «Օստ-Յնդկական» ընկերության հենակետ, այնուհետև դարձել է Անգլիայի հնդկական գաղութի վարչական կենտրոն: Կալկաթայի բնակչությունը մոտ 5 մլն է, սակայն նրա շուրջ ստեղծվել է 14 միլիոնանոց ագլոմերացիա:

6. *Կենտրոնական շրջանը* զարգացել է շնորհիվ ընդերքի հարուստ պաշարների, որոնց հիմքի վրա Բիիլայում կառուցվել է սև մետաղածուլության, Կորբայում՝ ալյումինածուլության գործարաններ: Այս քաղաքները նաև ծանր մեքենաշինության, քիմիական արդյունաբերության կենտրոններ են: Շրջանը հարուստ է բերրի հողերով: Արհեստական ոռոգման պայմաններում մշակում են ցորեն և բամբակ:

7. *Հյուսիսարևելյան շրջանը* հիմնականում գյուղատնտեսական գոտի է՝ ջուտի և թելի մշակում ունեցող: Արդյունաբերական ճյուղերից զարգացած է փայտամշակումը, ջուտե տեքստիլը, քիմիականը:

Արտաքին տնտեսական կապերը. Արտահանման ծավալները 112 մլրդ դոլար են, ներմուծմանը՝ 187,9 մլրդ: Արտահանվող հիմնական ապրանքներն են՝ գործվածքները, ոսկերչական ապրանքները, դեղորայքը, հագուստեղենը, համեմունքները, թելը և այլն: Ներմուծում են մեքենաներ, սարքավորումներ, նավթ, քիմիկատներ:

Առևտրական գլխավոր գործընկերներն են Մեծ Բրիտանիան, Չինաստանը, Արաբական Միացյալ Էմիրությունը, Սինգապուրը, Հոնկոնգը:

Ինքնատուգման հարցեր

1. Ի՞նչ դեր է կատարել Հնդկաստանը մարդկային քաղաքակրթության մեջ:
2. Ինչպիսի՞ն են Հնդկաստանի բնական պայմանները և ռեսուրսները:
3. Ինչպիսի՞ն է Հնդկաստանի տնտեսական, կրոնական կազմը, ո՞րն է կաստայականության բովանդակությունը:
4. Որո՞նք են տնտեսության զարգացման միտումները:
5. Թվարկե՞ք արդյունաբերության հիմնական ճյուղերը, ի՞նչ դեր են կատարում դրանք երկրի տնտեսության մեջ:
6. Որո՞նք են գյուղատնտեսության հիմնական ճյուղերը, ի՞նչ խնդիրներ ունի գյուղատնտեսությունը:
7. Որո՞նք են տրանսպորտի հիմնական ձևերը և դրանց դերը ներքին ու արտաքին բեռնափոխադրումների գործում:

ՊԱԿԻՍՏԱՆ

*Տարածքը՝ 803.9 հզ քկմ
Բնակչությունը՝ 165.8 մլն մարդ
Մայրաքաղաքը՝ Իսլամաբադ*

Պակիստանը զարգացող երկիր է: Տարածաշրջանում երկրորդ տեղն է գրավում իր մեծությամբ, բնակչության թվով, չորրորդ տեղում է մեկ շնչին ընկնող համախառն ներքին արդյունքով: Նա տարածաշրջանի ամենաազդարային երկիրն է, համախառն ներքին արդյունքի 42 %-ը տալիս է գյուղատնտեսությունը:

Պակիստանը քաղաքակրթության հնագույն օջախներից մեկն է: Հազարամյակներ առաջ Փենջաբում զբաղվել են ոռոգովի հողագործությամբ, զարգացման բարձր մակարդակի է հասել ջրանցքաշինարարությունը: Պակիստանը մարդու և բնության հազարամյա խաղաղ գոյատևման դասական օրինակ է: Բարձր լեռներից սկիզբ առնող Ինդոսը կյանք է տվել անջուր և բարկ անապատներին:

Ջրագացման բնական նախադրյալները: Մակերևութի մեծ մասը գրավում են Իրանական բարձրավանդակի արևելյան լեռնաշղթաները: Հյուսիսում՝ Կարակորումի, Հինդիկուշի լեռներն են, արևելյան մասում՝ Ինդոսի ընդարձակ հարթավայրը:

Պակիստանի լեռները երիտասարդ են, որտեղ դեռևս շարունակվում են լեռնակազմական երևույթները, հաճախակի են ուժեղ երկրաշարժերը: Ինդոսի հովտի հյուսիսում Փենջաբ հարթավայրն է (հինգ գետերի հովիտը), հարավում՝ Սինդի հարթավայրը՝ ծածկված հզոր գետաբերուկներով: Սինդի հարթավայրը անընդհատ մեծանում է ծովի հաշվին, որը լցվում է Ինդոսի գետաբերուկներով: Սինդի հարավում գտնվում է Թար անապատը՝ ծածկված ավազային թմբերով:

Պակիստանի ընդերքում կան քարածխի, նավթի, աղի, շինանյութերի զգալի պաշարներ:

Կլիման: Ինդոսի հովտի կլիման արևադարձային է, հունվարյան ջերմաստիճանը հյուսիսում՝ $+11^{\circ}\text{C}$, հարավում՝ $+19^{\circ}\text{C}$, հուլիսյանը՝ $+35^{\circ}\text{C}$:

Լեռնային շրջաններում կլիման ավելի մեղմ է: Ամառը զով է, ծմեռը՝ ցուրտ, լեռնակատարները ծածկված են մշտնջենական ձյունով և սառույցներով՝ ապահովելով գետերի մշտական հոսքը:

Սթնդուրտային տեղումները մեծ մասամբ զալիս են մուսսոնների ժամանակ: Ինդոսի հովտում տեղումները հասնում են 50 մմ-ի,

բարձր լեռնային շրջաններում՝ 1500 մմ-ի: Ինդոսի հովտի բարձր ջերմաստիճանները, տեղումների փոքր քանակությունը թույլ չեն տալիս զբաղվելու անջրդի հողագործությամբ:

Գետային ցանցը ամբողջությամբ պատկանում է Ինդոսի ավազանին: Ինդոսը և նրա վտակները վարարում են ամառային ամիսներին, աշնանը և ձմռանը դառնում են սակավաջուր: Ստորին հոսանքի շրջանում Ինդոսը ջրերի մեծ կուտակումների պատճառով տեղ-տեղ բարձրանում է շրջակա հովտից. ջրապաշտպան թմբերը հաճախ ողողվում են, և վարարած ջրերը ծածկում են ընդարձակ տարածությունները: Գետերը վերին հոսանքների շրջանում ունեն ջրաէներգետիկ մեծ կարողություն, սակայն դրանց քիչ մասն են օգտագործում:

Բնակչությունը: Պակիստանի տարածքում հինում ապրել են ավստրալոիդ ռասայի ժողովուրդներ: Ավստրոլոիդների և այստեղ թափանցած եվրոպոիդների միախառնումից ձևավորվել են դրավիդյան ժողովուրդները, որոնք ավելի ուշ խառնվել են արևմուտքից եկող արիական ցեղերին: Պակիստանի լեռնային ձևավորման վրա ազդել են նաև այստեղ իրենց տիրապետությունը հաստատած իրանցիները, հույները, մոնղոլները:

Ամենից մեծ թիվ են կազմում փենջաբցիները, որոնք կազմում են երկրի բնակչության 50 %-ը: Երկրորդ լեռնակալան խումբը փուշտուներն են, այնուհետև՝ սինդխերը, բելուջիները, գուջարաթցիները: Պետական լեզուն ուրդուն է և անգլերենը:

Կրոնական կազմը միատարր է. 77%-ը սունի մահմեդականներ են, 20 %-ը շիա մահմեդականներ, կան նաև քրիստոնյաներ, հինդուսներ:

Բնական աճը 21.51% է, մեկ կնոջ պտղաբերությունը՝ 4.29 երեխա: Ռա աշխարհի բարձր ցուցանիշներից մեկն է: Կյանքի միջին տևողությունը 70,4 տարի է: Պակիստանը երիտասարդների երկիր է: Բնակչության 40.2%-ը 14 տարեկան են, 65 և ավելի տարիք ունեն բնակչության 4.1 %-ը:

Պետական կարգը: Պակիստանը դաշնային իսլամական հանրապետություն է՝ կազմված չորս մարզերից, մայրաքաղաքային տարածքից և առանձին գոտիներից, ուր իրենց հազարամյա կյանքով ապրում են որոշ ցեղեր:

Պակիստանը մտնում է Մեծ Բրիտանիայի կողմից գլխավորվող համագործակցության մեջ:

Տնտեսությունը: Պակիստանը ագրարային երկիր է: Գյուղատնտեսության մեջ զբաղված է աշխատուժի 42 %-ը (19.3 մլն մարդ):

Գյուղատնտեսության գլխավոր ճյուղը բուսաբուծությունն է: Երկրի տարածքի 24,4 %-ը վարելահողեր են, 0.84 %-ը բազմամյա տնկարկներ: Կայուն բերք ապահովելու համար ստեղծվել է ոռոգման ընդարձակ ցանց: Ոռոգովի հողատարածքները հասնում են 18 մլն հա-ի: Դրանք հիմնականում զբաղեցնում են Փենջաբի և Սինդի հարթավայրերը: Ոռոգման համար օգտագործվում են Ինդոսի և նրա վտակների ջրերը: Բելուջիստանում, հյուսիսային լեռնային շրջաններում ոռոգման համար օգտագործվում են ստորերկրյա ջրերը:

Ոռոգման ջրերի ոչ ճիշտ օգտագործման պատճառով հողատարածքի մի մասը աստիճանաբար աղակալվում և դուրս է գալիս շարքից: Ընդ որում հողերի աղակալումը ավելի արագ է ընթանում երկրի շտեմարաններում՝ Սինդի և Փենջաբի հովիտներում:

Մշակովի հողահանդակների 80 %-ը զբաղված են սննդամթերքի մշակաբույսերով: Գլխավոր մշակաբույսը ցորենն է, որի ցանքատարածությունները 8.1 մլն հա է, տարեկան բերքը՝ 19.2 մլն տ: Երկրորդ հացահատիկային մշակաբույսը բրինձն է, որի ցանքատարածությունները 2.21 մլն հա են, տարեկան բերքը՝ 6.7 մլն տ, 1 հա-ի բերքատվությունը՝ 3.5 ց:

Փենջաբի հողերի գերակշիռ մասը զբաղված է ցորենով: Սինդում գերակշռում է բրինձը: Եգիպտացորենը տարածված է լեռնային շրջանների անջրդի հողերում: Անջրդի ու անբերրի հողերում մշակում են նաև գարի: Մեծ տարածում ունի սիսեռի մշակումը հիմնականում փոքր հողակտորների վրա սեփական կարիքների համար:

Ամենատարածված մշակաբույսը բամբակենին է: Այն մշակում են Փենջաբում՝ Սալեջ, Ջելան գետերի հովիտներում: Բամբակ են մշակում նաև Սինդում, ոռոգովի հողերի վրա, իսկ շաքարեղեգն՝ Փեշավարում և Ինդոսի հովտի այլ շրջաններում: Մշակում են նաև հլածուկ, մանանեխ՝ յուղ ստանալու նպատակով:

Այգեգործությունը հիմնականում բավարարում է ներքին կարիքները: Մշակում են խաղող, հատում չամիչի տեսակներ: Ջարգացած է արմավի, թթենու, մանգոյի, մարինջի մշակումը:

Ցանքատարածությունների զգալի մասից տարեկան ստանում են երկու բերք: Հողագործության գլխավոր խնդիրը մնում է ոռոգումը: Կլիմայական պայմանները հնարավորություն են տալիս տարեկան 2-3 բերք ստանալ:

Անասնապահությունը թույլ է զարգացած՝ կերի բազայի սղության և կլիմայական ծանր պայմանների պատճառով: Բուծում են գո-

մեշներ, կովեր, հիմնականում բուսաբուծական շրջաններում: Փեն-ջաբում տարածված է նաև ոչխարաբուծությունը, այծաբուծությունը: Մեծ տարածում ունի ուղտաբուծությունը:

Արդյունաբերությունը: Լեռնահանքային արդյունաբերության ձեռնարկությունները արդյունահանում են քրոմիտներ (Բելուջիստանի հովտում), երկաթաքար (Սաինդակում և Բելուջիստանում), նաև՝ բոքսիտներ, ածուխ, նավթ, բնական գազ:

Էլեկտրաէներգիայի տարեկան արտադրությունը 77 մլրդ կվ ժամ է: Խոշոր ջերմաէլեկտրակայաններ կան Կարաչիում, Կոտրում, Դայդարաբադում, ջրաէլեկտրակայաններ՝ Ինդոսի վտակների վերին հոսանքների շրջանում: Ատոմային էլեկտրակայանը Կարաչիում է: Էլեկտրաէներգիան չի բավարարում երկրի պահանջները, բայց լեռնային գետերի էներգետիկ ոչ բոլոր ռեսուրսներն են օգտագործվում:

Սև մետաղաձուլության ձեռնարկությունները աշխատում են սեփական հումքի և վառելիքային բազայի վրա: Մետաղաձուլական կենտրոններն են Գուջրանվալը (Փենջաբում), Կարաչին, Լահորը:

Մեքենաշինական ձեռնարկությունները արտադրում են թեթև արդյունաբերությանը անհրաժեշտ մեքենաներ՝ Կարաչիում, Բուրե-վալում, Մավեր՝ Կարաչիում, Լալմուսում, էլեկտրատեխնիկական ապրանքներ՝ Կարաչիում, Խազարում:

Պակիստանի արդյունաբերության ավանդական ճյուղը թեթև արդյունաբերությունն է: Սննդի արդյունաբերության ձեռնարկությունները արտադրում են ծխախոտ՝ Կարաչիում, շաքար՝ Փեշավարի հովտում, բուսայուղ՝ Փենջաբում:

Տրանսպորտը: Ներքին բեռնափոխադրումների մեջ գլխավոր դերը պատկանում է երկաթուղային տրանսպորտին: Երկաթուղիների ընդհանուր երկարությունը 8163 կմ է, որից 293 կմ էլեկտրաֆիկացված է: Ամենաբանուկ երկաթուղին ձգվում է Կարաչիից դեպի Իսլամաբադ, Կարաչիից Լահոր: Երկաթուղային կապ ունի Դնդկաստանի և Իրանի հետ: Երկաթուղային շարժակազմը հնացած է, ցածր է մեքենայացման աստիճանը, փոքր է գնացքների բեռնունակությունը:

Երկաթուղիները օգտագործվում են նաև ուղևորափոխադրումների համար:

Ավտոմոբիլային տրանսպորտը ավելի արագ է զարգանում և կարևոր դեր է կատարում բեռնափոխադրումների և ուղևորափոխադրումների գործում:

Ծովային նավատորմը ապահովում է արտաքին բեռնափոխադրումները: Խոշոր նավահանգիստը Կարաչին է:

Գետերը նավարկելի չեն:

Արտաքին տնտեսական կապերը: Արտահանում է բամբակ, բրինձ, գործվածքներ, կարի ապրանքներ: Ներմուծում է մեքենաներ և սարքավորումներ: Առևտրական հիմնական գործընկերներն են ԱՄՆ-ն, ճապոնիան, Եվրոմիության երկրները:

Ներքին տարբերությունները: Պակիստանը բաժանվում է 4 տարածաշրջանի՝ Փենջաբի, Սինդ, Բելուջիստան և Չիուսիսարևմտյան:

1. **Փենջաբը** երկրի տնտեսական գլխավոր շրջանն է, հացահատիկի շտեմարանը: Ոռոգովի հողերի վրա մշակում են ցորեն, բրինձ: Մշակում են նաև բամբակ, շաքարեղեգն, յուղատուներ, բանջարանոցային մշակաբույսեր:

Արդյունաբերական ձեռնարկությունները զբաղվում են գյուղատնտեսական հումքի վերամշակումով: Ջարգացած է գործվածքների արտադրությունը, սննդի, կաշվի մշակումը:

Արդյունաբերական խոշոր կենտրոնը **Լահորն** է: Այն գտնվում է Ռահի գետի ափին, Պենջաբ մարզի վարչական կենտրոնն է: 1799-1849 թթ. եղել է Սիկիսերի պետության մայրաքաղաքը, ավելի ուշ՝ Հնդկաստանի մահմեդականների գլխավոր քաղաքը: Ունի 5 մլն բնակչություն: Արդյունաբերության գլխավոր ճյուղերն են տեքստիլը, սննդիկը, քիմիականը: Քաղաքում կան միջնադարյան պատմաճարտարապետական հուշարձաններ, թանգարաններ, մզկիթներ:

Շրջանում է գտնվում Ռավալպինդին: 1962 թ. եղել է երկրի մայրաքաղաքը: Ունի 1.5 մլն բնակչություն: Ջարգացած է տեքստիլ, սննդի, քիմիական արդյունաբերությունը:

2. **Սինդ:** Սինդը համարվում է Ինդոսի պարզև: Այստեղ հողագործությամբ հնարավոր է զբաղվել միայն արհեստական ոռոգման պայմաններում: Ստեղծվել է ոռոգման ընդարձակ ցանց: Սուկուրայի և Հայադարաբադի մոտ կառուցվել են երկու ջրամբարներ, որոնք սնում են ոռոգման համակարգերը: Այնուհանդերձ, ջրի սակավության պատճառով ամեն տարի հողերի 1/3-ը չեն մշակում: Հաճախ անմշակ են մնում մի քանի տարի:

Սինդում մշակում են բրինձ, բամբակ, յուղատուներ, մանգո, ցիտրուսներ: Բուծում են գոմեշներ:

Խոշոր քաղաքներն են Հայադարաբադը, Կարաչին:

Կարաչին հիմնադրվել է 18-րդ դարում: Ունի շուրջ 10 մլն բնակչություն: Այստեղ են տեղադրված երկրի արդյունաբերական կարողությունների 1/2-ը: Կան տեքստիլ, սննդի, մետաղամշակության, նավթավերամշակման, քիմիական արդյունաբերության ձեռնարկություններ: Քաղաքից ոչ հեռու գտնվում է ատոմային էլեկտրակայանը: Երկրի գլխավոր նավահանգիստն է:

Հայադարաբաղը նավահանգիստ է Ինդոս գետի ափին: Ունի 1.6 մլն բնակիչ: Ձարգացած է տեքստիլ, քիմիական, սննդի արդյունաբերությունը:

3. Բելուջիստանը և Հյուսիսարևմտյան շրջանը ունեն անապատային լանդշաֆտ: Փոքր գետերի հովիտներում կան բազմաթիվ բնակավայրեր, որոնց բնակիչների հիմնական զբաղմունքը ոչխարաբուծությունն է, այծաբուծությունը: Անձրևային տարիներին մշակովի հողահանդակները ընդարձակվում են, չորային տարիներին՝ պակասում: Ռոգզման համար լայնորեն օգտագործում են քյարիզների ջրերը:

Մշակում են ցորեն, բանջարեղեն, փյունիկյան արմավենի, ծիրան, խնձոր, այլ պտուղներ:

Բնակչության մի մասը զբաղվում է քոչվոր անասնապահությամբ: Բուծում են ոչխարներ, այծեր, ուղտեր: Քոչվորական կյանք են վարում հիմնականում փուլշուու, մասամբ նաև բելուջական ցեղերը:

Շրջանում զարգացած է լեռնահանքային արդյունաբերությունը: Արդյունահանում են քարածուխ, քրոմիտներ, բնական գազ: Շրջանին բնորոշ են կավածեփ տներով գյուղերը և փոքր քաղաքները, կան նաև վրանային ժամանակավոր գյուղեր:

Սի առանձին շրջան է կազմում մայրաքաղաքային մարզը, ուր գտնվում է երկրի մայրաքաղաքը՝ Իսլամաբադը: Կառուցվել է 1960-1970 թթ. որպես մայրաքաղաք: Ունի տեքստիլ, սննդի արդյունաբերության ձեռնարկություններ, համալսարան, ատոմային էներգիայի գիտահետազոտական ինստիտուտ:

Ինքնաստուգման հարցեր

1. Թվարկե՛ք Պակիստանի տնտեսության զարգացմանը նպաստող և խոչընդոտող պայմանները:
2. Որո՞նք են Պակիստանի տնտեսության տեղաբաշխման գլխավոր առանձնահատկությունները:
3. Ո՞րն է Պակիստանի գյուղատնտեսության հիմնախնդիրը և ինչպե՞ս է այն լուծվում:
4. Բնութագրե՛ք գյուղատնտեսությունը և քարտեզի վրա ցույց տվե՛ք հիմնական ճյուղերի տարածման շրջանները:
5. Բնութագրե՛ք առավել զարգացած տնտեսական շրջանները և դրանց տեղը աշխատանքի աշխարհագրական բաժանման մեջ:

ՀԱՐԱՎԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՍԻԱ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

*Տարածքը՝ 4.5 մլն քկմ
Բնակչությունը՝ 513.8 մլն մարդ (2006)*

Տարածաշրջանը ընդգրկում է Չնդկաչին թերակղզին և Մալայան կղզիախումբը: Նրա կազմի մեջ մտնում են 10 անկախ պետություններ՝ Բրունեյը, Ինդոնեզիան, Կամբոջան, Լաոսը, Մալայզիան, Մյանման, Սինգապուրը, Տաիլանդը, Վիետնամը և Ֆիլիպինները, ինչպես նաև Ինդոնեզիայի կողմից բռնակցված Արևելյան Թիմորը:

Տարածաշրջանը մեկ ընդհանրություն է կազմում նախ և առաջ բնական պայմաններով՝ տեկտոնիկայով, մակերևույթի ձևերով, կլիմայով, բուսական և կենդանական աշխարհով:

Աշխարհագրական առումով տարածաշրջանը ընկած է կարևորագույն ծովային ճանապարհների վրա: Այստեղով են անցնում Չնդկական և Խաղաղ օվկիանոսի ասիական երկրները, Աֆրիկան Արևելյան Ասիային կապող ծովային ճանապարհները: Նրա քաղաքական քարտեզի, բնակչության էթնիկական և կրոնական կազմի, տնտեսության և մշակույթի ձևավորման վրա մեծ ազդեցություն են թողել հնդկական և չինական հզոր քաղաքակրթությունները:

Աշխարհագրական մեծ հայտնագործությունները ուղեկցվեցին տարածաշրջանի գաղութացումով իսպանացիների, ֆրանսիացիների, հոլանդացիների, անգլիացիների, ճապոնացիների կողմից: Երկրորդ աշխարհամարտից հետո տարածաշրջանի բոլոր երկրները անկախություն ստացան, բացառությամբ Արևելյան Թիմորի:

Հարավարևելյան Ասիայի երկրներից Բրունեյը, Կամբոջան, Մալայզիան և Թաիլանդը միապետություններ են, մնացածը՝ հանրապետություններ:

Ջարգացման բնական նախապայմանները: Տարածաշրջանի զարգացմանը նպաստել են հարմար աշխարհագրական դիրքը, բաբենապատ ագրոկլիմայական պայմանները:

Տարածաշրջանը ունի լեռնային, խիստ կտրտված մակերևույթ, որը դժվարացնում է նրա յուրացումը: Շինարարական աշխատանքները թանկանում են նաև տարածքի խիստ սեյսմիկ բնույթի պատճառով:

ռով: Սակայն ապրելու համար բարենպաստ են բերրի հողերով ծածկված գետերի հովիտները, առափնյա հարթավայրերը, սարահարթերը:

Տարածաշրջանի ընդերքը հարուստ է վառելիքային և մետաղային ռեսուրսներով: *Նավթի* պաշարներով ամենահարուստ երկիրը Ինդոնեզիան է՝ 1.1 մլրդ տոննա, երկրորդ տեղում Մալայզիան է՝ 593 մլն տ, երրորդ տեղում՝ Սյանման: Նավթի զգալի պաշարներ ունեն Վիետնամը, Թաիլանդը: *Բնական գազով* ամենահարուստ երկիրը Սյանման է՝ 2.6 տրիլիոն խմ, երկրորդ տեղում Ինդոնեզիան է՝ 2.5 տրիլիոն խմ, ապա՝ Մալայզիան, Բրունեյը, Վիետնամը:

Քարածխի ավազանները գտնվում են Սումատրայում, Կալիմանտանում և Սուլավեսիում: Երկաթի և մանգանի պաշարներով հարուստ է Վիետնամը, Կամբոջան: Ամբողջ տարածաշրջանով հյուսիսից հարավ ձգվում է հզոր *անագաքեր* գոտի, որի շնորհիվ անագի մեծ պաշարներ ունեն Ինդոնեզիան, Լաոսը, Մալայզիան, Սյանման, Թաիլանդը: Արդյունաբերական նշանակություն ունեցող պղնձի հանքավայրեր կան Ինդոնեզիայում, Լաոսում, Մալայզիայում, Սյանմայում, Ֆիլիպիններում, կապար և ցինկ՝ Ինդոնեզիայում, Սյանմայում, ոսկի՝ Վիետնամում, Ինդոնեզիայում, Լաոսում: Կամբոջան, Լաոսը և Սյանման հարուստ են թանկարժեք քարերով:

Տարածաշրջանը ունի մուսսոնային *կլիմա*: Հունիսից մինչև հոկտեմբեր գալիս են տեղատարափ անձրևներ: Հնդկաչինի արևմտյան ափերին տեղումների քանակությունը հասնում է մինչև 3000 մմ-ի, արևելյան ափերին՝ 1500-2000 մմ-ի: Ներքին շրջաններում տեղումների քանակությունը հասնում է 1000 մմ-ի: Կղզիների վրա տեղումներ գալիս են գրեթե ամբողջ տարին, որը հնարավորություն է տալիս ամբողջ տարին զբաղվել բուսաբուծությամբ:

Մայրցամաքային մասի *գետերը* մուսսոնային անձրևների ժամանակ խիստ վարարում են, իսկ չորային սեզոնին նրանց մակարդակը խիստ իջնում է: Կղզիների գետերը ունեն համեմատաբար կայուն ռեժիմ և ամբողջ տարին ջրառատ են:

Գետերը հարուստ են ջրաէներգետիկ ռեսուրսներով: Միջին և ստորին հոսանքների շրջանում նավարկելի են: Ունեն նաև ոռոգիչ նշանակություն:

Տարածաշրջանի մեծ մասը ծածկված է *արևադարձային անտառներով*: Առանձնապես արժեքավոր ծառատեսակներից են կոկոսյան արմավենին, տիկի ծառը: Շինարարական աշխատանքների մեջ լայնորեն կիրառվում է բամբուկը: Անտառները հարուստ են

պտղատու ծառերով և որսի կենդանիներով, առափնյա ծովերը՝ ձկներով ու մարգարիտով:

Բնակչությունը: Այստեղ ապրում են մի քանի հարյուր ազգությու-
ններ: Նրանք պատկանում են մոնղոլիդ և ավստրալիդ ռասանե-



Նկ. 18. Բրունեյի աղջնակ

րին: Կան նաև եկվոր եվրոպիդ ռա-
սայի ժողովուրդներ: Մոնղոլիդները
հիմնականում ապրում են Չնդկաչինի
երկրներում, ընդ որում որքան հյու-
սիս, այնքան նրանց տեսակարար կշի-
ռը մեծանում է: Ավստրալիդներով են
բնակեցված Ինդոնեզիայի և Ֆիլիպին-
ների ներքին մեկուսացված շրջաննե-
րը, ինչպես նաև ծայրամասային կղզի-
ները: Չնդկաչինի հարավում ապրում
են նաև մոնղոլիդ և ավստրալիդ ռա-
սաներին բնորոշ արտաքին ունեցող
ժողովուրդներ: Եկվոր եվրոպիդնե-
րից այստեղ մեծ թիվ են կազմում հին-
դուսները, արաբները:

Թերակղզում ամենամեծաթիվը վետերն (վիետնամցիներ) են:
Նրանցից արևմուտք բնակեցված են թայերեն խոսող ժողովուրդներ, ո-
րոնցից թվաշատ են սիամցիները, լաոները: Կամբոջայի հիմնական
բնակչությունը մոնոկիսներն են: Կղզիներում մեծ թիվ են կազմում
ճավացիները: Ֆիլիպիններում գերակշռում են տազալները, Ինդոնե-
զիայի ծայր արևելքում բազմաթիվ լեզուներով խոսող պապուասները:

Բազմազան է նաև այստեղի բնակչության կրոնական կազմը: Ա-
մենատարածված կրոնը բուդդայականությունն է: Մեծ տարածում
ունի նաև իսլամը, հատկապես Ինդոնեզիայում, Մալայզիայում և
Բրունեյում: Ինդոնեզիայում՝ նաև հնդուականությունը: Ֆիլիպիննե-
րում հիմնական կրոնը քրիստոնեությունն է: Չնդկաչին թերակղզու և
կղզիների ներքին շրջաններում տարածված է հեթանոսությունը:

Բնակչության քանակով ամենախոշոր պետությունը Ինդոնե-
զիան է, ուր ապրում է 245.4 միլիոն մարդ, որ կազմում է տարածա-
շրջանի բնակչության 42.2 %-ը, 2-րդ տեղում Ֆիլիպիններն են՝ շուրջ
90 մլն մարդ, 3-րդում՝ Վիետնամը: Բնակչության թվով ամենափոքր
պետություններն են Բրունեյը, ուր ապրում է 372 հզ մարդ (Մանրա-
մասն տե՛ս աղյուսակ 22):

Բնակչության ամենաբարձր բնական աճ ունի Լաոսը՝ 23.94 ‰, 2-րդ տեղում Կամբոջան է՝ 17.84 ‰: Այն համեմատաբար ցածր է Սինգապուրում՝ 5.06 ‰, և Թաիլանդում՝ 6.83 ‰: Ծնելիության ամենաբարձր մակարդակը պահպանվում է Լաոսում՝ 35.5 ‰, և Կամբոջայում՝ 26.9 ‰, մահացությունը բարձր է Լաոսում՝ 13.6 ‰, և Մյանմայում՝ 9.8 ‰, ցածր է Բրունեյում՝ 3.5 ‰, Սինգապուրում՝ 4.3 ‰ և Մալայզիայում՝ 5.05 ‰:

Ընդհանուր առմամբ տարածաշրջանի բնակչությունը արագ թափով ավելանում է՝ ավելի սրելով տեղի սոցիալական իրավիճակը: Բնակչության աճը կարգավորելու՝ պետությունների գործունեությունը էական արդյունքներ չի տալիս: Տարածաշրջանում ամենաերկարակյացը Սինգապուրի բնակիչներն են: Այստեղ կյանքի միջին տևողությունը 81.7 տարի է: Ամենակարճ կյանք ունեն լաոսցիները. այստեղ կյանքի միջին տևողությունը 58.1 տարի է: Սերտ կապ կա կյանքի միջին տևողության և մահացության ու ծնելիության միջև, որքան ցածր է կյանքի միջին տևողությունը, այնքան բարձր է ծնելիությունը և բնական աճը: Վերոհիշյալ բոլոր ցուցանիշներով առաջին տեղում Լաոսն է, 2-րդ տեղում՝ Կամբոջան: Սինգապուրում կյանքի միջին տևողությունը մեծ է, և դրան հակառակ, ցածր են ծնելիությունը, մահացությունը և բնական աճի ցուցանիշները (Մանրամասն տե՛ս աղյուսակ 21):

Աղյուսակ 21

Հարավարևելյան Ասիայի պետությունների բնակչության բնական շարժերը և կյանքի միջին տևողությունը(2006թ.)

Պետություն	Ծնելիութ. (‰)	Մահացութ. (‰)	Բնական աճ (‰)	Կյանքի միջին տևողությունը (տարի)		
				ընդամենը	տղամարդկանց	կանանց
1. Բրունեյ	19.01	3.42	15.59	74.8	72.36	77.36
2. Թաիլանդ	13.87	7.04	6.83	72.25	69.95	74.68
3. Ինդոնեզիա	20.34	6.25	14.09	69.57	67.13	72.13
4. Լաոս	35.49	11.59	23.94	55.08	53.07	57.17
5. Կամբոջա	26.9	9.06	17.84	58.92	56.98	60.95
6. Մալայզիա	22.86	5.05	17.81	72.24	69.56	75.11
7. Մյանմա	17.91	9.83	8.08	67.24	73.11	61.03
8. Սինգապուր	9.34	4.28	5.06	81.71	79.13	84.49
9. Վիետնամ	16.86	6.22	10.64	70.35	67.86	73.02
10. Ֆիլիպիններ	24.89	5.41	1948	70.21	67.32	73.24

Հարավարևելյան Ասիայի պետությունների տարածքը և բնակչությունը

Պետություն	Տարածքը հզ, քկմ	Բնակչությունը մլն մարդ
1. Բրունեյ	5.8	0.372
2. Թաիլանդ	514.0	64.6
3. Ինդոնեզիա	1919.4	245.4
4. Լաոս	236.8	6.3
5. Կամբոջա	181.0	13.8
6. Մալայզիա	329.7	24.3
7. Մյանմա	678.5	47.3
8. Սինգապուր	0.7	4.4
9. Վիետնամ	329.5	84.4
10. Ֆիլիպիններ	300.0	89.4
Ընդամենը	449.5	580.3

Տարածաշրջանում բնակչությունը շատ անհավասարաչափ է տեղաբաշխված: Ամենախտաբնակը ճավա կղզին է: Կանխատեսվում է, որ եթե ճավայի բնակչությունը շարունակի աճել ներկայիս չափերով, ապա մի քանի տասնյակ տարի հետո ճավացիները պետք է քնեն կանգնած, որովհետև պառկելու տեղ չի մնա: Խտաբնակ են նաև մեծ գետերի հովիտները, առափնյա շրջանները: Նոսր են բնակեցված Կալիմանտան, Սուլավեսի, Նոր Գվինեա կղզիների ներքին շրջանները: Ամենախտաբնակ երկիրը Սինգապուրն է՝ 6450 մարդ/քկմ, Վիետնամում խտությունը 256 մարդ/քկմ է: Նոսր է բնակեցված Լաոսը՝ 26 մարդ/քկմ: Ուրբանիզացման մակարդակը շատ ցածր է, բացառությամբ Սինգապուրի, որի բոլոր բնակիչները քաղաքաբնակ են: Խոշոր քաղաքներն են Ջակարտան՝ 9 մլն, Բանգկոկը՝ 5.6 մլն, Հոչիմինը՝ 4 մլն, Սոլաբայան՝ 2.5 մլն բնակչությամբ:

Տնտեսությունը: Տարածաշրջանի բոլոր երկրների համախառն ներքին արդյունքը միասին 2.8 տրիլիոն դոլար է: ՀՆԱ-ով առաջին տեղում Ինդոնեզիան է՝ 935 մլրդ դոլար, 2-րդ տեղում՝ Թաիլանդ՝ 586 մլրդ դոլար, 3-րդ տեղում՝ Ֆիլիպինները՝ 443 մլրդ դոլար (Մանրամասն տես աղյուսակ 23): Մեծ տարբերություններ կան մեկ շնչին հասնող ՀՆԱ-ի գծով: Ամենից բարձր ցուցանիշ ունի Սինգապուրը՝ 30900 դոլար, երկրորդ տեղում Բրունեյն է՝ 23600, երրորդ տեղում՝ Մալայզիան՝ 12700: Ամենից ցածր ցուցանիշներ ունեն Մյանման՝ 1800 դոլար, և Լաոսը՝ 2100 դոլար:

Հարավարևելյան Ասիայի պետությունների համախառն ներքին արդյունքը (2006 թ.)

Պետություն	ՀՆԱ միլիոն դոլար	ՀՆԱ մեկ շնչի հաշվով դոլար	ՀՆԱ ըստ տնտեսության ոլորտների (%)		
			արդյունաբերություն	գյուղատնտեսություն	նշարտադրական ոլորտ
1. Բրունեյ	6.8	23600	45	5	50
2. Թաիլանդ	585.9	9100	44.9	10	45.2
3. Ինդոնեզիա	935.0	3800	46	13.1	41
4. Լաոս	13.4	2100	30.6	43.4	26
5. Կամբոջա	36.8	2600	30	35	35
6. Մալայզիա	308.8	12700	48.1	8.5	43.6
7. Մյանմա	83.8	1800	10.6	54.7	34.7
8. Սինգապուր	138.6	30900	33.8	0	66.2
9. Վիետնամ	258.6	3100	41.8	20.1	38.1
10. Ֆիլիպիններ	443.1	5000	32.1	14.3	53.7
Ընդամենը	2810.8	-	-	-	-

Տարածաշրջանի երկրների տնտեսության գլխավոր ուղղությունը հանքային հումքի արդյունահանումն է և գյուղատնտեսությունը՝ բացառությամբ Սինգապուրի: Պատճառը բնական և աշխատանքային հարուստ ռեսուրսներն են:

Վերջին տասնամյակում սկսվեց արտադրության վերամշակող ճյուղերի զարգացումը, բարձր տեխնոլոգիաների կիրառումը: Այդ առումով շատ մեծ են Ինդոնեզիայի, Մալայզիայի, Թաիլանդի և Ֆիլիպինների հաջողությունները: Սինգապուրում զարգացած են միայն վերամշակող ճյուղերը, Բրունեյում՝ միայն արդյունահանող (նավթի հանույթը):

Տնտեսական բարեփոխումները իրականացնելու, առաջընթացը ապահովելու համար ստեղծվել է «ԱՍԵԱՆ» տարածաշրջանային կազմակերպությունը: Աշխատանքներ են տարվում աստիճանաբար

վերացնելու մաքսային վճարումները: Ըստ նախագծի Մալայզիան, Սինգապուրը, Թաիլանդը և Ֆիլիպինները 2010 թ. սկսած միմյանց հետ առևտուր կանեն առանց մաքսային վճարումների, մնացած երկրները այդ գործընթացին կմիանան ամենաուշը 2015 թ.: Ապրանքների և ծառայությունների ազատ տեղաշարժը կարևոր նշանակություն կունենա տարածաշրջանի բոլոր երկրների, հատկապես տնտեսապես թույլ զարգացած Մյանմայի, Լաոսի, Կամբոջայի և Վիետնամի համար:



Նկ.19. Տեսարան Սինգապուրից

Էլեկտրաէներգետիկա: Էլեկտրաէներգիայի արտադրությունը 451 մլրդ կվ ժամ է: Ամենից քիչ էլեկտրաէներգիա են արտադրում Կամբոջան, Լաոսը, Մյանման: Կամբոջայում մեկ շնչի հաշվով տարեկան արտադրվում է 9 կվժ էլեկտրաէներգիա, Սինգապուրում՝ 7418 կվժ:

Բոլոր երկրներում էլ, բացառությամբ Վիետնամի, Լաոսի և Մյանմայի, էլեկտրաէներգիայի մեծ մասը տալիս են ջերմաէլեկտրակայանները: Ամենից հզոր ջերմաէներգետիկ տնտեսություն ունեն Սինգապուրը, Թաիլանդը, Մալայզիան, Ինդոնեզիան և ամենից թույլ՝ Լաոսը (Մանրամասն տես աղյուսակ 24):

Էլեկտրաէներգիայի արտադրությունը Հարավարևելյան Ասիայի պետություններում (2006)

Պետություն	Էլեկտրաէներգիա մլրդ կվ ժամ	Ջերմաէլեկտրակայաններում %	Ջրաէլեկտրակայաններում %	Ատոմային էլեկտրակայաններում %
1. Բրունեյ	2.5	100	0	0
2. Թաիլանդ	121.7	91.3	6.4	0
3. Ինդոնեզիա	112.6	86.9	10.5	0
4. Լաոս	3.9	1.4	98.6	0
5. Կամբոջա	0.1	65.0	35.0	0
6. Մալայզիա	78.2	89.5	10.5	0
7. Սյամմա	6.3	44.5	43.4	0
8. Սինգապուր	32.6	100	0	0
9. Վիետնամ	40.1	43.7	56.3	0
10. Ֆիլիպիններ	53.1	55.6	17.5	0

Մետաղաձուլությունը: Արդյունաբերության նոր ճյուղ է և համեմատաբար արագ է զարգանում, որին նպաստում են հանքային հումքի և էներգակիրների առկայությունը, արտադրանքի մեծ պահանջարկը: Արագ զարգացող մեքենաշինությունը, շինարարությունը ընդլայնում են սև և գունավոր մետաղների շուկան: Մյուս կողմից՝ պետությունները խրախուսում են վերամշակող ճյուղերի զարգացումը՝ նպատակ ունենալով աստիճանաբար կրճատել հումքի արտահանման և պատրաստի արտադրանքի ներմուծման ծավալները:

Սև մետաղաձուլությունը զարգացած է Ինդոնեզիայում՝ Զիլեգոնում (ճավա կղզում), Վիետնամում՝ Հոչիմինում և Տհայգուենում, Մալայզիայում՝ Կուալա Լումպուրի արվարձանում, Ջոհոր Բարում, Պինանդ կղզում: Սև մետաղաձուլություն ունի Սինգապուրը:

Գունավոր մետաղաձուլության ծեռնարկությունները արտադրում են անագ, ալյումին, նիկել, պղինձ: Հանքահումքային պաշարների մեծ քանակի և ընդարձակ աշխարհագրության հետ կապված՝ ամենատարածվածը անագի ծուլումն է, որը զարգացած է Ինդոնեզիայում՝ Բանկա կղզում, Մալայզիայում՝ Մունտոկում և Կելանգում, Թաիլանդում՝ Պիսուկետում, Սինգապուրում՝ Բրանի կղզում. պղնձաձուլությունը՝ Ֆիլիպիններում՝ Իլիգանում, Տոլեդոյում, ալյումինաձուլությունը՝ Ինդոնեզիայում՝ Ջակարտայում: Նիկելի ծուլման ամենախոշոր կենտրոնը Սարոակոն է Սուլավեսի կղզում (Ինդոնեզիա):

Մեքենաշինությունը արդյունաբերության նոր և արագ զարգացող ճյուղերից է: Դրան նպաստում են ներքին ընդարձակ շուկան, հարմար աշխարհագրական դիրքը, արտասահմանյան կապիտալի հոսքը դեպի այդ բնագավառ: Մեքենաշինության զարգացմանը խանգարում են բարձրորակ ազգային կադրերի պակասը, արտադրանքի սահմանափակ մրցունակությունը: Տարածաշրջանի պետությունների մի մասը՝ Մալայզիան, Սինգապուրը, Թաիլանդը, Ֆիլիպինները, խնդրի լուծման համար ընդարձակում են գիտահետազոտական աշխատանքների ծավալը, ստեղծում են սիլիկոնային հովիտներ, տեխնոպարկեր, խրախուսում են արտասահմանյան կապիտալի ներհոսքը:

Մեքենաշինության ամենաընդարձակ աշխարհագրություն ունեցող ճյուղը նավաշինությունն է, որը զարգացած է Ինդոնեզիայում՝ Սուրաբայա, Ջակարտա, Վիետնամում՝ Հայֆոն, Հոչիմին, Մալայզիայում՝ Ջորջթաուն, Կելանգ: Ավտոմոբիլաշինության և ավտոհավաքման ձեռնարկություններ կան Ինդոնեզիայում՝ Ջակարտա, Վիետնամում՝ Հանոյ, Մալայզիայում՝ Կուալա Լումպուր, Թաիլանդում՝ Բանգկոկ:

Տեղական և արտասահմանյան կապիտալի համատեղությամբ ստեղծվում է էլեկտրատեխնիկական ապրանքների, հեռակապի սարքերի, տեղեկատվական իրերի, նաև նոր նյութերի ու տեխնոլոգիաների, օդազնացության սարքերի արտադրություն:

Տեղական հումքի հիման վրա արագ զարգանում է *քիմիական արդյունաբերությունը*: Արտադրում են պլաստմասսաներ՝ Սինգապուրում, բնական կաուչուկ՝ Տաիլանդում, Սինգապուրում, հանքային պարարտանյութեր՝ Վիետնամում: Նավթավերամշակումը զարգացած է Ինդոնեզիայում, Մալայզիայում, Ֆիլիպիններում, Թաիլանդում, Սյանմայում:

Տեքստիլ արդյունաբերություն ունեն բոլոր երկրների մայրաքաղաքներն ու խոշոր քաղաքները:

Գյուղատնտեսությունը: Գլխավոր ճյուղը *բուսաբուծությունն* է, որի զարգացմանը նպաստել են շուրջտարյա բարձր ջերմաստիճանները, առատ տեղումները, ոռոգման հնարավորություն ստեղծող ջրառատ գետերը: Ամենատարածված մշակաբույսը բրինձն է: Բրինձ մշակող առաջատար երկրներն են Ինդոնեզիան, Թաիլանդը, Վիետնամը: Հիմնական տեխնիկական մշակաբույսը հեփեյան է, որի մշակումը զարգացած է Ինդոնեզիայում, Վիետնամում, Թաիլանդում և Մալայզիայում: Բամբակ են մշակում Ինդոնեզիայում և Թաիլանդում,

շաքարեղեգն՝ Ֆիլիպիններում և Ինդոնեզիայում: Տարածաշրջանի կարևոր մշակաբույսերից են համեմունքները՝ պղպեղը (Մումատրա կղզում), մեխակը (Մոլուքյան կղզիներում):



Նկ.20. Բրունեյի տիպիկ տուն

Անասնապահությունը թույլ է զարգացած կերի կայուն բազա չլինելու պատճառով: Խոզաբուծությամբ են զբաղվում Վիետնամում, Չնդկաչինի ներքին շրջաններում, ձկնորսությամբ՝ առափնյա ջրերում:

Տրանսպորտը: Բազմաթիվ կղզիները, ծովերի մոտիկությունը, անանցանելի ճահիճներն ու ջունգլիները, մակերևույթի լեռնային բնույթը ստեղծել են աննպաստ պայմաններ երկաթուղային տրանսպորտի համար: Այդ պատճառով ներքին բեռնափոխադրումները և ուղևորափոխադրումները ապահովելու համար զարկ է տրվել ավտոտրանսպորտի, ծովային տրանսպորտի զարգացմանը: Ինչպես երևում է աղյուսակից, ծովափնյա ամենամեծ գիծ ունի Ինդոնեզիան, երկրորդ տեղում Վիետնամն է, այնուհետև՝ Ֆիլիպինները:

Ինդոնեզիան ունի աշխարհի ծովային ամենամեծ նավատորմը: Այս երկրում տասնյակ հազարավոր նավեր կան: Միայն 1000-ից ավելի ջրատարողություն ունեցող նավերի քանակը հասնում է 728-ի: Ֆիլիպիններում նույն մեծությամբ նավերի քանակը 403 է, Վիետնամում՝ 194, Թաիլանդում՝ 394, Մալայզիայում՝ 346, Սինգապուրում՝ 1003:

Տարածաշրջանի ծովային նավերի մի մասը պատկանում է այլ երկրների, որոնք լողում են “հարմար դրոշի” տակ: Այդ առումով դասական օրինակ է Սինգապուրը, ուր գրանցված նավերից 554-ը պատկանում են այլ երկրների:

Ծովային խոշոր նավահանգիստներն են Սինգապուրը, Մանիլան, Դանանգը, Ջակարտան, Յանգոնը:

Երկաթուղային տրանսպորտը համեմատաբար զարգացած է Ինդոնեզիայում, Թաիլանդում, Սյանմայում: Երկաթուղային շարժակազմը հնացած է, փոքր բեռնափոխադրումների կարողությունը, բեռնման և բեռնաթափման աշխատանքների մեքենայացման մակարդակը ցածր է:

ճանապարհային ցանցի երկարությամբ Ինդոնեզիայից հետո Վիետնամն է (Մանրամասն տե՛ս աղյուսակ 26):

Աղյուսակ 25

**Հարավարևելյան Ասիայի պետությունների
սահմանների երկարությունը (2006)**


Պետություն	Ընդհանուր սահմանները, կմ	Ցամաքային սահմանները, կմ	Ծովային սահմանները, կմ
1. Բրունեյ	542	381	161
2. Թաիլանդ	8082	4863	3219
3. Ինդոնեզիա	57546	2830	54716
4. Լաոս	5083	5083	0
5. Կամբոջա	3015	2572	443
6. Մալայզիա	7344	2669	4675
7. Մյանմա	7803	5873	1930
8. Սինգապուր	193	0	193
9. Վիետնամ	8083	4639	3444
10. Ֆիլիպիններ	36289	0	36289

Աղյուսակ 26

**Հարավարևելյան Ասիայի պետությունների
ճանապարհային ցանցը (2006)**

Պետություն	Երկաթուղիներ, կմ	Ավտոճանապարհներ, կմ	Ներքին ջրային ուղիներ, կմ
1. Բրունեյ	-	225	209
2. Թաիլանդ	4071	57403	4000
3. Ինդոնեզիա	6458	342700	21579
4. Լաոս	-	21716	4600
5. Կամբոջա	602	12323	2400
6. Մալայզիա	1890	65877	7200
7. Մյանմա	3955	28200	12800
8. Սինգապուր	-	3165	-
9. Վիետնամ	2600	93300	17702
10. Ֆիլիպիններ	897	20003	3219

Արտաքին տնտեսական կապերը: Արտահանման ծավալներով առաջին տեղը գրավում է Սինգապուրը՝ 283.6 մլրդ դոլար, երկրորդ տեղում Մալայզիան է՝ 158.6 մլրդ դոլար, երրորդ տեղում՝ Թաիլանդը՝ 123.5 մլրդ դոլար (Մանրամասն տե՛ս աղյուսակ 27): Արտահանում են բրինձ, բուսայուղ, նավթ, գազ, տեքստիլ ապրանքներ: Ներմուծման ծավալներով առաջին տեղում Սինգապուրն է՝ 246.1 մլրդ դոլար, երկրորդ տեղում՝ Մալայզիան՝ 127.3 մլրդ դոլար, երրորդ տեղում Թաիլանդը՝ 127.3 մլրդ դոլար:



Նկ.21. Տաճար Չիանգամայում

Տարածաշրջանի երեք երկրներում՝ Լաոսում, Կամբոջայում և Ֆիլիպիններում, արտաքին առևտրական հաշվեկշիռը բացասական է, մնացած երկրներում՝ դրական (Մանրամասն տե՛ս աղյուսակ 27):

Առևտրական հիմնական գործընկերներն են ԱՄՆ-ն, ճապոնիան, Ավստրալիան, Հարավարևմտյան Ասիայի երկրները, Չինաստանը, Հարավային Կորեան:

Աղյուսակ 27

Հարավարևելյան Ասիայի պետությունների արտահանումը, ներմուծումը, արտաքին պարտքը (մլրդ դոլար) 2006 թ.

Պետություն	Արտահանում	Ներմուծում	Արտաքին պարտք
1. Բրունեյ	7.7	5.2	-
2. Թաիլանդ	123.5	119.3	57.8
3. Ինդոնեզիա	102.3	77.7	130.4
4. Լաոս	0.6	1.1	2.5
5. Կամբոջա	3.3	4.5	3.6
6. Մալայզիա	158.7	127.3	57.77
7. Մյանմա	5.3	2.1	7.2
8. Սինգապուր	283.6	246.1	24.3
9. Վիետնամ	39.92	39.2	21.9
10. Ֆիլիպիններ	44.2	48.8	61.5

Ինքնաստուգման հարցեր

1. Որո՞նք են տարածաշրջանի գլխավոր բնական հարստությունները:
2. Ինչպիսի՞ն է բնակչության ազգային, կրոնական կազմը, բնական շարժերը:
3. Որո՞նք են տնտեսության զարգացման միտումները:
4. Արդյունաբերության ո՞ր ճյուղերն են առավել զարգացած:
5. Որո՞նք են գյուղատնտեսության գլխավոր մշակաբույսերը, ի՞նչ դեր ունեն աշխատանքի միջազգային աշխարհագրական բաժանման մեջ:
6. Ինչպիսի՞ն է արտաքին առևտրի կառուցվածքը, ո՞րն է նրա դերը երկրների զարգացման մեջ:

ԻՆՊՈՆԵՋԻԱ

*Տարածքը՝ 1.92 մլն քկմ
Բնակչությունը՝ 242 մլն մարդ
Մայրաքաղաքը՝ Ջակարտա*

Ինդոնեզիան հազարավոր կղզիների, բազմաթիվ ժողովուրդների ու տարբեր քաղաքակրթությունների երկիր է՝ սփռված Խաղաղ և Հնդկական օվկիանոսների ընդարձակ ջրերում: Ինդոնեզիա բառացի նշանակում է կղզային Հնդկաստան, իսկ բնակիչները կղզում ապրող հնդիկներ: Երկիրը ծածկում է հյուսիսից հարավ 2000, արևելքից արևմուտք՝ 5000 կմ: Ինդոնեզիայում հաշվում են 17508 կղզի, որոնցից 6000 բնակեցված են: Նրա կազմի մեջ են մտնում Մեծ Ջոնդյան, Փոքր Ջոնդյան և Մոլուքյան կղզիախմբերը և Նոր Գվինեա կղզու արևմտյան կեսը, որը ինդոնեզացիները անվանում են Իրիան Ջայա: Մեծ Ջոնդյան կղզիախմբի մեջ մտնում են չորս խոշոր կղզիներ՝ Կալիմանտանը, Սումատրան, ճավան, Սուլավեսին, բազմաթիվ մանր կղզիներ:

Ինդոնեզիան ունի հարմար աշխարհագրական դիրք, գտնվում է բանուկ ծովային ճանապարհների խաչմերուկում, կամուրջ է հնդկաչինական, անգլոսաքսոնական քաղաքակրթությունների միջև:

Բնական պայմանները և ռեսուրսները. Երկրի մակերևույթի 1/2-ը հարթավայրեր են, մնացածը ոչ մեծ բարձրությամբ սարահարթեր: Գավա, Սումատրա և Սուլավեսի կղզիներում կան 3000 մ և ավելի բարձրության հասնող լեռներ: Ինդոնեզիայում լեռնակազմական երևույթները շարունակվում են, որոնց վկան են գործող հրաբուխները, հաճախակի կրկնվող երկրաշարժերը: Լեռները, մի կողմից, դժվարություններ են առաջացնում հանդորդակցության համար, մյուս կողմից՝ բարենպաստ պայմաններ են ստեղծում հողագործության զարգացման համար: Հողագործական մշակույթը բարձրանում է լեռնալանջերով դեպի վեր:

Երկրի ընդերքը հարուստ է մետաղային ռեսուրսներով: Սուլավեսում և Կալիմանտանում կան երկաթաքարի պաշարներ: Անագի մեծ պաշարներ ունեն Սումատրա, Բելիտունգ, Սինկեպ կղզիները: Տարածաշրջանում երկրորդ տեղն է գրավում բոքսիտների պաշարներով, որոնք գտնվում են Սումատրա և Բնիտան կղզիներում: Սու-

մատրա, ճավա և Փոքր Ջոնդյան կղզիներում կա ոսկի և արծաթ, Կալիմանտանում՝ ալմաստ: Սումատրայում, ճավայում ու Կալիմանտանում հայտնաբերվել են նավթի մեծ պաշարներ: Ինդոնեզիայի նավթի պաշարները գնահատվում են 7,1 մլրդ բարել: Խոշոր հանքավայրերը գտնվում են Սումատրայում, Մալակայի նեղուցի շելֆում, ներքին շրջաններում (Մինասի հանքավայր): Նավթ կա նաև ճավայի հյուսիսում, Կալիմանտանի արևելքում, Իրիան Զայաի արևմուտքում:

Կլիման հասարակածային է: Ամբողջ տարին ջերմաստիճանը 25-27°C է: Լեռների բարձրադիր շրջաններում ջերմաստիճանը իջնում է: Մթնոլորտային տեղումները միջին հաշվով 2000 մմ են: Որոշ տեղերում տեղումների քանակը ավելանում է, որոշ տեղերում նվազում՝ կապված մուսսոնների շարժման փոփոխության հետ: Տեղումները հավասար են բաշխված ամբողջ տարվա ընթացքում: Կլիմայական պայմանները հնարավորություն են տալիս ամբողջ տարին զբաղվել բուսաբուծությամբ՝ տարեկան հավաքելով 2-3 բերք:

Գետերը շատ են, ջրառատ են: Սկիզբ առնելով լեռներից՝ ունեն ջրաէներգետիկ մեծ կարողություն: Վերին հոսանքների շրջանում հոսում են արագ, խոր կիրճերով, միջին և ստորին շրջաններում՝ դանդաղ՝ առաջացնելով ընդարձակ դելտաներ: Տեղատարափ անձրևների ժամանակ գետերի մակարդակը բարձրանում է՝ պատճառելով մեծ վնասներ: Գետերի ջրերը օգտագործվում են ոռոգման նպատակներով: Գետերը նավարկելի են, սակայն առատ աճող ջրիմուռները, հարուստ բուսականությունը խանգարում են ազատ նավարկությանը:

Ընդարձակ հարթավայրերը ծածկված են ճահիճներով. դրանք գրավում են Սումատրա կղզու 1/3-ը: Մեծ տարածում ունեն նաև Կալիմանտանում:

Երկրի տարածքի կեսից ավելին ծածկված է անտառներով, որոնք հարուստ են արժեքավոր ծառատեսակներով, վայրի պտուղներով, որսակենդանիներով: Բամբակի ծառից ստանում են թելեր, կոկոսյան արմավենուց՝ շաքար, սպիրտ, կոպրա, զովացուցիչ խմիչք (կաթ): Բամբուկը լայնորեն օգտագործվում է կահույքի արտադրության մեջ:

Բնակչությունը: Ինդոնեզիայի բնակչությունը ձևավորվել է մոնղոլիդ և ավստրոլիդ ռասաների միախառնումից: Բնակչության ուրոշ մասը ունի եվրոպոիդ ռասայի դիմագծեր, որ արդյունք են ինդոնեզացիների, արաբների և հոլանդացիների միախառնման: Իրիան

Ջայայում ապրող պապուասական ցեղերը պատկանում են ավստրո-լոիդ ռասային:

Ինդոնեզիայի 60-ից ավելի ժողովուրդների մեջ ամենից մեծ թիվ են կազմում ճավացիները՝ բնակչության 45 %-ը, երկրորդ տեղում սունդիններն են՝ 14 %, մադուրները՝ 7.5 %: Նրանք ապրում են ճավա կղզում: Սումատրայում ամենամեծաթիվը մալայցիներն են, որոնք կազմում են երկրի բնակչության 7.5%-ը: Քիչ չեն գայոները, բատակները: Կալիմանտանի հիմնական բնակիչները դայկերն են, Սուլավեսիինը՝ տորաջիները: Ինդոնեզիայում շատ են արաբները, չինացիները: Բնակչության 88 %-ը մահմեդականներ են, 2%-ը հինդուսներ, 1 % -ը՝ բուդդայականներ:

Բնակչության բնական աճը 14.46 % է, որն ունի նվազելու միտում: Ինդոնեզիան երիտասարդների երկիր է. մինչև 14 տարեկան են բնակչության 29.1 %-ը, 65 և ավելի մեծ տարիքի են 5.2 %-ը: Կյանքի միջին տևողությունը 69.57 տարի է, կանայք՝ 72.13, տղամարդիկ՝ 67.13 տարի:

Ինդոնեզիայում տիրապետող գյուղական բնակչությունն է, ռուրալիզացման մակարդակը՝ 64 % է:

Բնակչությունը շատ անհավասար է տեղաբաշխված, ամենախտաբնակը ճավա կղզին է: Այստեղ գյուղերը շարունակում են մեկը մյուսին, ընդհատվում են միայն բրնձի դաշտերով: Ճավայում են գտնվում երկրի խոշոր քաղաքներ Ջակարտան, Բանդունգը, Մուրաբայան, Սեմարանգը: Միայն այս չորս քաղաքներում ապրում է 14 մլն մարդ:

Պետականորեն կազմակերպվում է բնակչության տեղաշարժ ճավայից դեպի Կալիմանտան և Իրիան Ջայա:

Ինդոնեզիայի պետության խնդիրներից են բնական աճի նվազեցումը, բնակչության հավասար տեղաբաշխումը, անգրագիտության վերացումը (անգրագետ է բնակչության 12.1%-ը), աշխատուժի զբաղվածության ապահովումը, սոցիալական հավասարության հաստատումը (բնակչության 10 %-ի ձեռքին է գտնվում կենսամիջոցների 4 %-ը, իսկ ունևորների 10 %-ի ձեռքին՝ 26.7 %-ը):

Տնտեսությունը: Համախառն ներքին արդյունքը 827.4 մլրդ դոլար է, տարեկան աճը 4.9 %: Աշխատանքի միջազգային աշխարհագրական բաժանմանը մասնակցում է նավթի, անագի արդյունահանումով և արտահանումով, բամբակյա գործվածքների, սուրճի, բնական կաուչուկի արտահանումով:

Ինդոնեզիայի տնտեսության մեջ նկատվում է զգալի տեղաշարժ. սկսել է զարգանալ հեռակապի միջոցների, կենցաղային սարքերի, դեղորայքի արտադրությունը: Արագ թափով ընդլայնվում է սպասարկման ոլորտը: Այնուհանդերձ բնության ընձեռած հնարավորությունները դեռևս լիարժեք չեն օգտագործվում:

Տնտեսության մեջ կարևոր տեղ է գրավում *արդյունաբերությունը*, որը տալիս է ՀՆԱ-ի 45%-ը: Այս ոլորտում զբաղված է աշխատուժի 16 %-ը: Գյուղատնտեսությունը մեծ դեր ունի աշխատուժի զբաղվածության գործում: Գյուղատնտեսության ոլորտում աշխատում է 50.2 մլն մարդ, որը կազմում է աշխատուժի 45 %-ը:

Համեմատաբար արագ թափով է զարգանում *սպասարկման ոլորտը*, որը տալիս է ՀՆԱ-ի 40.4 %-ը (334.3 մլրդ դոլար):

Երկրի տնտեսական առաջընթացը կապվում է արդյունաբերության վերամշակող ճյուղերի և սպասարկման ոլորտի զարգացման հետ:

Ներկայումս առաջատար ճյուղ է արդյունահանող արտադրությունը: Ինդոնեզիայի տնտեսության արագ զարգացումը պահանջում է մեծ քանակությամբ նավթ և նավթամթերք, ուստի նա նավթ ներկրող խոշոր երկիր է, օրական 350 հզ բարել: Նավթ է արդյունահանվում Սումատրա, Կալիմանտան և ճավա կղզիներում:

Բնական գազի տարեկան հանույթը 55.3 մլրդ խմ է, որից 39.7 մլրդ խմ արտահանվում է:

Քարածուխ արդյունահանվում է Սումատրա կղզու արևելքում, Կալիմանտանում:

Անագ է արդյունահանվում Բանգա, Սումատրա, Բելիտունգ, Սինեպ կղզիներում, բոքսիտներ՝ Բնիտանում, մանգան՝ ճավայի հարավում, պղինձ՝ Իրիան Ջայայում:

Էլեկտրաէներգիայի տարեկան արտադրությունը 110.2 մլրդ կվժ է, որը բավարար չէ արագ զարգացող երկրի համար: Դեռևս անբավարար է էներգետիկ ներուժի օգտագործումը: Ինդոնեզիայի գետերը ունեն էներգետիկ մեծ կարողություններ:

Վերամշակող ճյուղերից զարգացած են նավթավերամշակումը, նավթաքիմիան, մետաղաձուլությունը, քիմիական, թեթև արդյունաբերությունը, մեքենաշինությունը: Նավթ են վերամշակում Պալեմբանգում (Սումատրա կղզի), Սուրաբայում (ճավա կղզի), Բալիկպապանում (Կալիմանտան կղզի): Պեմատանգսիանտարում (Սումատրա կղզի) և Բանյուվանգում արտադրում են հանքային պարարտա-

նյութեր, թուղթ: Նավաշինական ձեռնարկություններ կան Սուրաբա-
յում, Ջակարտայում (ճավա կղզի):

Արտահանման համար մեծ նշանակություն ունի անտառային
արդյունաբերությունը, որը օգտագործում է արժեքավոր ծառատե-
սակներ:

Հագարավոր մանր արհեստանոցները պատրաստում են ար-
ծաթյա, փղոսկրյա, պղնձյա հուշանվերներ, նաև փայտյա իրեր, դի-
մակներ, գլխարկներ և այն ամենը, ինչ կգնեն զբոսաշրջիկները:

Ինդոնեզիայի արդյունաբերությունը մեծ հեռանկարներ ունի,
քանի որ բարձր տեխնոլոգիաների ոլորտում զգալի են ճապոնա-
կան, ամերիկյան, հարավկորեական կապիտալ ներդրումները:

Գյուղատնտեսությունը: Տարածքի 11.32 %-ը վարելահողեր են,
7.23 %-ը՝ բազմամյա տնկարկներ: Գյուղատնտեսական առումով ա-
մենալուրացվածը ճավա և Մադուր կղզիներն են (70 %-ը): Գյու-
ղատնտեսության մեջ տիրապետում են փոքր տնտեսությունները:
Կարևոր դեր ունեն նաև կապիտալիստական տիպի խոշոր պլանտա-
ցիոն տնտեսությունները, ուր իշխում է արտասահմանյան կապիտա-
լը (հատկապես հոլանդականը): Պլանտացիոն խոշոր տնտեսու-
թյուններում զբաղվում են արտահանման համար նախատեսված հե-
վեայի, ծխախոտի, թեյի, սուրճի, շաքարեղեգի մշակումով:

Գլխավոր մշակաբույսը *բրինձն է*, որի ցանքատարածությունը
11.5 մլն հա է: Տարեկան բերքը 52.1 մլն տ: Բրինձ մշակում են հիմ-
նականում ոռգովի հողերի վրա: Ոռգովի հողատարածքները զրա-
վում են 4.8 մլն հա: Ճավայում բրնձի մշակման հողակտորները դա-
րավանդների ձևով լեռնալանջերով բարձրանում են դեպի վեր:
Մշտապես ջրով լցված դարավանդների ստեղծումը և պահպանումը
կապված է գերաշխատասիրության հետ: Ճավացիները ասում են.
«Բրնձի դարավանդները լցված են մարդկային քրտինքով»:

Հացահատիկային երկրորդ մշակաբույսը եգիպտացորենն է, ո-
րի ցանքատարածությունները 3.35 մլն հա է, տարեկան բերքը՝ 10.9
մլն տ: Եգիպտացորեն մշակում են ամենուրեք, բացի ճավա կղզուց:

Բնակչությանը սննդով ապահովելու գործում կարևոր նշանա-
կություն ունի մանիոկի, սագոյի, բանանի, մանգոյի, պապայաի,
ցիտրուսների, բանջարեղենի մշակումը:

Ամենատարածված պլանտացիոն ծառատեսակը կաուչուկա-
տուներն են, որոնց մշակումով Ինդոնեզիան երկրորդ տեղում է աշ-
խարհում Մալայզիայից հետո: Կաուչուկատուները ամենից մեծ տա-
րածություն են զրավում Սումատրայում:

Թեյի մշակության գլխավոր շրջանը ճավա կղզին է, ծխախոտինը՝ Սուժատրայի հյուսիսը և Փոքր Ջոնդյան կղզիները, կոկոսյան արմավենու՝ (կոպրա ստանալու համար) Սուլավեսի կղզին։ Մուլության կղզիներում մշակում են համեմունքներ։

Անասնապահությունը թույլ է զարգացած։ Բուծում են գոմեշներ, խոշոր եղջերավոր անասուններ, խոզեր։ Անասնապահական գլխավոր շրջանը Փոքր Ջոնդյան կղզիներն են, ուր կան ընդարձակ արոտավայրեր։

Երկրի տնտեսության համար կարևոր նշանակություն ունի զբոսաշրջությունը։ Բալի կղզին և բազմաթիվ այլ վայրեր դեպի իրենց են գրավում միլիոնավոր զբոսաշրջիկների։

Տրանսպորտը։ Հագարավոր կղզիների երկրում առաջնայինը ծովային տրանսպորտն է։ Ծովային նավատորմը կազմված է հազարավոր նավերից, իսկ 1000 տ ավելի ջրատարողությամբ նավերի քանակը 728 է։ Խոշորագույն նավահանգիստը Ջակարտան է, որը գտնվում է ծովային կարևոր ճանապարհների խաչմերուկում։

Ներկղզային բեռնափոխադրումները կատարվում են նաև ավտոմոբիլային և երկաթուղային տրանսպորտով։ Ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը 342.7 հզ կմ է, երկաթուղիներինը՝ 6458 կմ։ Երկաթուղիների մեծ մասը գտնվում են ճավա և Սուժատրա կղզիներում։ Մյուս կղզիներում տիրապետում է ավտոմոբիլային տրանսպորտը։ Նավարկության համար օգտագործվում են նաև ներքին ջրային ուղիները։


Ինդոնեզիան գտնվում է Եվրասիան Ավստրալիային կապող օդային գծերի խաչմերուկում։

Արտաքին տնտեսական կապերը։ Արտահանման ծավալը 69.86 մլրդ դոլար է, ներմուծմանը՝ 45.07 մլրդ։ Արտահանում է նավթ, բնական գազ, հանքային հումք, գյուղատնտեսական ապրանքներ, տեքստիլ ապրանքներ։ Արտահանման ծավալների 22.3 %-ը հասնում է Մեծ Բրիտանիային, մնացածը՝ Սինգապուրին, Հինաստանին, Հարավային Կորեային և այլն։

Ներմուծում է նավթ, մեքենաներ, սարքավորումներ, քիմիկատներ, սննդամթերք։ Ներմուծման ծավալների 13.1 %-ը բաժին է ընկնում Սինգապուրին, 13.1 %-ը՝ ճապոնիային, մնացածը՝ Հինաստանին, Մեծ Բրիտանիային, Թաիլանդին, Ավստրալիային և այլն։

Ներքին տարբերությունները։ Ինդոնեզիայում առանձնանում են հետևյալ տնտեսական շրջանները՝ ճավա, Սուժատրա, Կալիմանտան, Սուլավեսի, Փոքր Ջոնդյան, Մուլության կղզիներ և Իրիան Ջայան։

1. *Ճավան* տնտեսական ամենագարգացած շրջանն է, ամենախտաբնակը. մեկ քկմ-ում ապրում է 700 –ից ավելի մարդ, առանձին տեղերում՝ 2500-3000 մարդ: Հրաբուխների և երկրաշարժերի այս շրջանում բերրի հողերը ամբողջությամբ յուրացված են, անտառների մեծ մասը կտրատվել են և վերածվել բրնձի դաշտերի: Բրնձի դաշտերը լեռնալանջերով բարձրանում են վեր: Ջրով լցված բրնձի դաշտերում զբաղվում են նաև ձկնաբուծությամբ: Մեծ տարածում ունեն շաքարեղեգի, եգիպտացորենի, սոյայի ցանքատարածությունները, կոկոսյան արմավենիի, խինիների, սուրճի, բանանի տնկարկները:



Նկ.22. Տաճարների համալիր Ճավա կղզում


Ճավային է բաժին ընկնում երկրի արդյունաբերական հիմնական կարողությունները: Այստեղ արդյունահանում են նավթ, ֆոսֆորիտներ, ծծումբ, ոսկի: Դրանց բազայի վրա զարգացած են նավթավերամշակումը, նավաշինությունը, մետաղամշակումը, գունավոր մետաղաձուլությունը, թեթև և սննդի արդյունաբերությունը:

Ճավայի գյուղական բնակավայրերը սփռված են բրնձի դաշտերի միջազայքում: Ճանապարհների երկայնքով հաճախ ձուլվում են միմյանց՝ կազմելով ընդարձակ գյուղաբնակ տարածքներ: Խոշոր քաղաքներն են՝ Ջակարտան, Սուրաբայան, Բանդունգը, Մալանգան:

Ջակարտան հիմնադրվել է 16-րդ դարում: 1945 թ. այստեղ հռչակվել է երկրի անկախությունը: Ունի 8.3 մլն բնակչություն: Արդյունաբերական հիմնական ճյուղերն են մեքենաշինությունը, և տեքս-

տիլ և կոշիկի արտադրությունը, կաուչուկի մշակումը: Խոշոր նավահանգիստ է, մշակույթի կենտրոն:

Սուրաբայան ունի 2.5 մլն բնակչություն: Գտնվում է ծովափին, նավահանգիստ է: Հայտնի են նավթավերամշակման, մեքենաշինական ձեռնարկությունները: Զարգացած է մանր արհեստագործությունը: Ունի համալսարան:



Նկ.23. Տեսարան Զակարտայից

Բանդունգը ունի 2 մլն բնակչություն: Քաղաքում զարգացած է քիմիական, տեքստիլ, սննդի արդյունաբերությունը, մետաղամշակումը: Գիտակրթական խոշոր կենտրոն է:

Սալանգան ունի 650 հզ բնակիչ: Փայտամշակման, տեքստիլ արդյունաբերության կենտրոն է: Ունի պատմաճարտարապետական հուշարձաններ:

2. Սումատրան ճավայի համեմատությամբ թույլ է զարգացած (տարածքի 10 %-ը) և նոսր է բնակեցված՝ 60 մարդ մեկ քվմ վրա:

Արդյունաբերության զլխավոր ճյուղը նավթի հանույթն է: Այստեղ է արդյունահանվում երկրի նավթի 90%-ը: Նավթի արդյունահանման և վերամշակման խոշոր կենտրոնը Պալեմբանգն է, երկրորդը Դումայն է, որը նաև նավահանգիստ է՝ նավթ արտահանող տնտեսությամբ:

Արևելյան առափնյա հատվածում և Բանկա, Բելիտունգ կղզիներում արդյունահանում են անագ, Սումատրայում՝ նաև քարածուխ, ոսկի, արծաթ:

Վերամշակող ճյուղերից զարգացած են նավթաքիմիան, գունավոր մետաղաձուլությունը, սննդի արդյունաբերությունը:

Գյուղատնտեսության մեջ տիրապետում են խոշոր պլանտացիոն տնտեսությունները: Հյուսիսարևելյան հատվածում մշակում են կոկոսյան արմավենի, յուղատու արմավենի, շոկոլադի ծառ, թեյ, ծխախոտ, պղպեղ: Տեղական կարիքների բավարարման համար մշակում են բրինձ, լոբազգիներ, եգիպտացորեն:

Արդյունաբերական խոշոր կենտրոնը *Մեդանն է*, որը ունի 2,0 մլն բնակչություն: Պլանտացաների շրջանի գլխավոր քաղաքն է՝ իր սպասարկման բոլոր ճյուղերով:

Պալեմբանգը գտնվում է Սուսիի գետաբերանում՝ 1.1 մլն բնակչությամբ: Արդյունաբերական ճյուղերից զարգացած են նավթավերամշակումը, բնական կաուչուկի մշակումը, նավաշինությունը, տեքստիլ և սննդի արդյունաբերությունը, անտառամշակումը, քիմիական արտադրությունը: Ունի համալսարան, միջազգային օդանավակայան:

3. *Կալիմանտանը* գրավում է երկրի տարածքի 25 %-ը: Այստեղ է ապրում բնակչության 4 %-ը, մեկ քվմ վրա 5 մարդ:

Կղզու տարածքը ծածկված է անտառներով, որոշ տեղերում՝ ճահիճներով:

Առափնյա շրջանում ապրող բնակիչները զբաղվում են բրնձի, հեվեյաի, կոկոսյան արմավենու պղպեղի մշակումով: Կան խոշոր պլանտացիոն տնտեսություններ: Ներքին շրջանները ավելի նոսր են բնակեցված: Այստեղ ապրող դայկերի մոտ դեռևս պահպանվել են ցեղային սովորույթները: Նրանք զբաղվում են պարզունակ տնտեսությամբ:

Կալիմանտանում արդյունահանում են նավթ, քարածուխ, ալմաստ՝ Մարտապուրայում: Կղզում կան նավթավերամշակման, ալմաստի վերամշակման, փայտասղոցման ձեռնարկություններ:

Կալիմանտանը ընդհանուր առմամբ թույլ է յուրացված՝ 2 %-ը, չկան տնտեսության զարգացած ճյուղեր, չունի երկաթուղիներ, ավտոճանապարհները քիչ են, մեծ մասը անուր ծածկ չունեն: Պետության խնդիրն է այս շրջանը աստիճանաբար զարգացնել: Կազմակերպված ձևով Կալիմանտան է վերաբնակեցվում ճավայի և Սուլավեսիի բնակիչների մի մասը:

Խոշոր քաղաքներ են Պոնտիանանկը, Բանջարամասին, Բալիկապան, Սամարինդան, որոնք ունեն 150-500 հզ բնակիչ: Դրանք հիմնականում վարչական կենտրոններ են. զբաղվում են նաև անտառամշակմամբ, գյուղատնտեսական հումքի վերամշակմամբ:

4. *Սուլավեսին* լեռնային շրջան է՝ գործող հրաբուխներով, լեռները տեղ-տեղ մոտենում են ծովափին, հարթավայրերը քիչ են:

Կղզին ծածկված է անտառներով: Բնակչությունը ոչ մեծ հողակտորների վրա մշակում է բրինձ, եգիպտացորեն, սուրճի, կոկոսյան արմավենու ծառեր: Սակավաթիվ խոշոր պլանտացիոն տնտեսություններում մշակում են կոկոսյան արմավենի: Առափնյա շրջաններում զբաղվում են ձկնորսությամբ: Ծայր հարավում արդյունահանում են նիկել, Բուտունգ կղզում՝ ծծումբ:

Ուշունգպանդանգ, Մանադո քաղաքներում զարգացած է գյուղատնտեսական հումքի վերամշակումը, նավավերանորոգումը:

5. Մոլուքյան կղզիները գրավում են 84 հզ քկմ տարածք: Նոսր են բնակեցված:

Կղզիները լեռնային են՝ առափնյա նեղ հարթավայրերով, գեղատեսիլ, ավազապատ ծովափերով: Անտառներում աճում են մեխակի, մուշկընկույզի ծառեր: Իրենց տիրապետության տարիներին հուլանդացիները այստեղ հիմնել են մեխակի և մուշկընկույզի մշակովի տնկարկներ: Այստեղ կարևոր է նաև պղպեղի մշակումը: Այս ամենը նախատեսված է արտահանման համար:

Տեղական կարիքների համար մշակում են բրինձ, եգիպտացորեն, արմատապտուղներ:

Առափնյա բնակիչները զբաղվում են ձկնորսությամբ, մարգարիտի, ծովային կրիաների, կակղամորթերի որսով:

Բնակչությունը զբաղվում է նաև փոքր նավերի պատրաստումով:

Կղզում կան անագի, ոսկու պաշարներ, սակայն դրանք չեն օգտագործվում:

6. Փոքր Ջոնդյան կղզիները գրավում են 76 հզ քկմ տարածք: Նոսր բնակեցված շրջան է, բացառությամբ Բալի կղզու: Բնակչությունը բազմազգ է և բազմացեղ, սոցիալ-տնտեսական զարգացման տարբեր մակարդակներով: Քաղաքակրթության համեմատաբար բարձր մակարդակ ունեն Բալի և Լոմբոկ կղզիների բնակիչները: Արևելքում ապրում են առանձին ցեղեր՝ նախնադարյան սովորույթներով:

Այստեղ մշակում են սուրճ, ծխախոտ, բամբակ, կաուչուկատուներ: Առափնյա բնակիչները զբաղվում են ձկնորսությամբ, մարգարիտի, ծովային կրիաների, կակղամորթերի որսով: Ծովից արդյունահանում են կորալներ, խեցիներ:

Մեծ Ջոնդյան կղզիները դարձել են միջազգային զբոսաշրջության խոշոր կենտրոններ, օրինակ կարող է ծառայել Բալի կղզին:

Զարգացած է մանր արհեստագործությունը, ազգային հուշավերների արտադրությունը:

Քաղաքները փոքր են, դրանք վարչական, առևտրական, արհեստագործական, զբոսաշրջության կենտրոններ են:

7. *Իրիան Ջայան* ընդգրկում է Նոր Գվինեա կղզու արևմտյան մասը: Տարածքը մեծամասամբ ծածկված է անտառներով ու ճահիճներով: Բնակչությունը հիմնականում ապրում է գետերի և ծովերի ափերին: Ներքին շրջանները անմարդաբնակ են: Պետության կողմից աշխատանքներ են տարվում ճավայի բնակիչների մի մասը այստեղ տեղափոխելու, սակայն բնակլիմայական ծանր պայմանների պատճառով արդյունքները քիչ են:

Տեղական բնակչությունը զբաղվում է պարզունակ հողագործությամբ՝ մշակելով բրինձ, եգիպտացորեն: Արտասահմանյան ընկերությունները այստեղ հիմնադրում են պլանտացիոն տնտեսություններ, որոնցում մշակում են կոկոսյան արմավենի, մուսկատի ընկույզ, շաքարեղեգ:

Աստիճանաբար զարգանում է անտառամշակումը: Շրջանը հարուստ է օգտակար հանածոներով: Արտահանվում է նավթ, պղինձ, նիկել, կոբալտ:

Փոքր քաղաքներում զբաղվում են փայտամշակմամբ, արհեստագործությամբ, ծովամթերքների մշակմամբ:

Ինքնաստուգման հարցեր

1. Գնահատե՞ք Ինդոնեզիայի աշխարհագրական դիրքը:
2. Ի՞նչ օգտակար հանածոներով է հարուստ երկիրը:
3. Ինչպիսի՞ն է բնակչության ռասայական, կրոնական, ազգային կազմը:
4. Որո՞նք են գյուղատնտեսության զարգացման պայմանները, ի՞նչ կուլտուրաներ են մշակում:
5. Որո՞նք են արդյունաբերության հիմնական ճյուղերը, ինչպե՞ս են տեղաբաշխված:
6. Բնութագրե՞ք ճավա կղզու առանձնահատուկ դերը երկրի տնտեսական կյանքում:

ՄԱԼԱՅԶԻԱ

*Տարածքը՝ 329.7 հզ քկմ
Բնակչությունը՝ 24.4 մլն մարդ
Մայրաքաղաքը՝ Պատրաքաիյա*

Մալայզիան բաղկացած է երկու խոշոր մասերից՝ Արևմտյան Մալայզիա և Արևելյան Մալայզիա: Արևմտյան Մալայզիան գրավում է Մալակա թերակղզու հարավային մասը, Արևելյան Մալայզիան՝ Սարավակը և Սաբախը՝ Կալիմանտան թերակղզու հյուսիսային շրջանը: Ցամաքային սահմանների երկարությունը 2669 կմ է, որից Ինդոնեզիայի հետ՝ 1782 կմ, Թաիլանդի հետ՝ 506 կմ, Բրունեյի հետ՝ 381 կմ: Ծովափնյա սահմանների երկարությունը 4675 կմ է: Տարածքային ջրերում սահմանների հեռավորությունը 12 մղոն է, տնտեսական գոտին ընդգրկում է 200 կմ հեռավորության առափնյա ջրերը:

Աշխատանքի միջազգային աշխարհագրական բաժանմանը մասնակցում է նավթի, բնական գազի, անագի արդյունահանմամբ և արտահանությամբ, կաուչուկի արտահանմամբ: Ներկայիս Մալայզիան սիլիկոնոնային հզոր կենտրոնների, բարձր տեխնոլոգիաների, գիտաարտադրական խոշոր համակարգերի երկիր է: Տնտեսական մեծ վերելքի շնորհիվ համախառն ներքին արդյունքը 229.3 մլրդ դոլար է, տարեկան աճը՝ 7.1% մեկ շնչին ընկնող ՀՆԱ՝ 9700 դոլար:

Պետական կարգը: Սահմանադրական միապետություն է, պետության ղիսավորը սուլթանն է, կառավարության ղեկավարը՝ վարչապետը:

Մալայզիայի տարածքում առաջին պետությունը ստեղծվել է 1400 թ., երբ Ջոհորի արքայազնը փախչելով իր երկրից՝ այստեղ հիմնում է թագավորություն: Մինչև եվրոպացիների գալը Մալայզիայի թագավորությունը ծաղկում է ապրում: 1511 թ. Մալայզիան գրավում են պորտուգալացիները, այնուհետև այն անցնում է Դոլանդիայի, իսկ XIX դարի վերջում՝ Անգլիայի հովանավորության տակ: 1957 թ. Մալայզիական դաշնությունը (այսօրվա Արևմտյան Մալազիան) անկախություն է ստանում: 1963 թ. ստեղծվում է Մալայզիայի դաշնությունը, որի կազմի մեջ են մտնում Մալական, Սինգապուրը, Դյուսիսային Բորնեոն: 1965 թ. Սինգապուրը դուրս է գալիս Դաշնության կազմից:

Բնական պայմանները և ռեսուրսները: Մալակա թերակղզու առափնյա շրջանները հարթավայրային են, կենտրոնական հատվածում մինչև 2000 մ բարձրության լեռներ: Կալիմանտան կղզու առափնյա մասերը ճահճացած հարթավայրեր են:

Ընդերքում հայտնաբերված են անագի, երկաթաքարի, նավթի, բոքսիտների, ոսկու մեծ պաշարներ: Առափնյա ջրերում կան նավթի խոշոր ավազաններ: Նավթի պաշարները գնահատվում են 3,7 մլրդ - բարել, բնական գազինը՝ 2.23 տրիլիոն խմ:

Մալայզիան գտնվում է հասարակածում: Այստեղ ամբողջ տարին միջին տարեկան ջերմաստիճանը $+25+28\text{ }^{\circ}\text{C}$ է, առափնյա շրջաններում՝ $30-36\text{ }^{\circ}\text{C}$: Մթնոլորտային տեղումները ամբողջ տարին, հատկապես առափնյա շրջաններում, 1000-1500 մմ է, ծովահայաց լեռնալանջերին՝ մինչև 5000 մմ:

Գետերը ջրառատ են, ամբողջ տարվա ընթացքում վերին հոսանքի շրջանում արագահոս են՝ ջրաէներգետիկ մեծ կարողությամբ, ստորին հոսանքի շրջանում՝ դանդաղահոս: Նրանց գետաբերանները հարմար են նավահանգիստներ կառուցելու համար:

Երկրի տարածքը ծածկված է հասարակածային անտառներով: Կան կահույքի արտադրության, նավաշինության, թղթի արտադրության համար անհրաժեշտ բազմաթիվ ծառատեսակներ: Անտառները հարուստ են պապայի, հացի ծառի, կոկոսյան արմավենու, իմբիրի ծառերով: Մեծ տարածում ունի բամբուկը, որը զանգվածաբար օգտագործվում է բնակարանների կառուցման համար, կահույքի արտադրության մեջ:

Բնակչությունը: Բնական աճը բարձր է՝ 18.01%, ծնելիությունը՝ 23.07%, մահացությունը՝ 5.06%: Կյանքի միջին տևողությունը 72.24 տարի է, կանայք մոտ 75.11, տղամարդիկ մոտ 69.56 տարի:

Բնակչության 50.4 %-ը մալայացիներ են, 23.7 %-ը՝ չինացիներ: Մալայացիները կազմված են տարբեր էթնոսներից: Տեղի է ունենում նրանց ծուլում: Մալայզիայում մեծ թիվ են կազմում եկվոր ճավաղիները, որոնք նույնպես ծուլվում են տեղացիներին: Բնակչության 7.1 %-ը եկել են Չնդկաստանից, ազգությամբ թամիլներ են, տեւուզիներ, փենջաբցիներ:

Մալայզիայում մեծ թիվ են կազմում արաբները, պորտուգալացիները, անգլիացիները, ֆիլիպինցիները:

Այս բազմազգ ու բազմացեղ երկրում շատ բարդ է միասնական լեզու ունենալու խնդիրը: Մալայզերենը ընդունված է որպես համապետական լեզու: Էթնիկ ժողովուրդները խոսում են նաև ճավայերեն, իբաներեն, դայերեն, մի քանի տասնյակ այլ լեզուներով: Եկվոր չինացիները խոսում են չինարեն, պորտուգալացիները (մի քանի հարյուր տարի առաջ եկածների սերունդները) խոսում են հին պորտուգալերեն: Անգլիական գաղութատիրության տարիներին լեռնահանքային արդյունաբերության մեջ աշխատեցնելու նպատակով ճնդկաստանից այստեղ բերված թամիլները խոսում են իրենց լեզվով: Բնակչության 50 %-ը մահմեդականներ են (սունիներ), 30 %-ը՝ բուդդայական և դաոսական, մնացածը դավանում են քրիստոնեություն: Կան նաև սիկսերի, հնդուականության ներկայացուցիչներ, տեղական հավատքների պաշտողներ:

Ուրբանիզացման մակարդակը 57 % է: Խոշոր քաղաքներ են Կուալա Լումպուրը՝ 1.3 մլն բնակչությամբ, Իպոհը՝ 382 հզ, Ջոհոր Բարուն՝ 3.2 հզ, Ջորջթաունը՝ 219 հզ բնակչությամբ:

Տնտեսությունը. Շնորհիվ պետական նպատակաուղղված քաղաքականության և հարուստ բնական ռեսուրսների երկրի տնտեսությունը մեծ վերելք է ապրում: Աշխարհի առաջատարների շարքում է արմավենու յուղի, անանասի, թեյի, պղպեղի արտադրությամբ:

Արագ թափով զարգանում են բարձր տեխնոլոգիաները. աշխարհում երկրորդ տեղում է ճապոնիայից հետո չիպերի, երրորդ տեղում ճապոնիայից և ԱՄՆ-ից հետո կիսահաղորդիչների արտադրությամբ:

Մեծ է արտասահմանյան կապիտալի դերը տնտեսության մեջ: Այստեղ իրենց ձեռնարկությունները ունեն ճապոնական «Սոնի» ԱՄՆ-ի «Մոտոռոլա», Հարավկորեական «Սամսունգ» և շատ այլ ընկերություններ:

Տնտեսական առաջընթացի երաշխիքներն են.

- մասնավոր և պետական մասնաբաժինների համագործակցությունը
- վարչական կազմի վրա խիստ վերահսկողությունը
- աշխատուժի կրթության և դաստիարակության բարձր մակարդակը
- փոփոխությունների պատրաստ կառավարությունը
- հասարակական հարաբերություններում առողջ մթնոլորտը

- ներդրումների անվտանգության երաշխիքը
- պետական հսկողությունը տնտեսավարողների նկատմամբ
- հարկային հստակ քաղաքականությունը

Տնտեսության առաջատար ճյուղը *արդյունաբերությունն* է, որը տալիս է համախառն ներքին արդյունքի 33.6 %-ը: Այս ոլորտում է զբաղված աշխատուժի 36.0 %-ը:

Արդյունաբերության կարևոր ճյուղը նավթի հանույթն է և վերամշակումը: Նավթավերամշակման խոշոր կենտրոններն են Միրին, Պորտ Պիկտոնը, Լուգոնգը: Սև մետաղաձուլության կենտրոններն են Ջոհոր Բարուն, Պինանգ կղզին և Կուալա Լումպուրի արվարձանը: Անագի ձուլումը զարգացած է Կելանգում, Սունտոկում: Մեքենաշինության ավանդական ճյուղը նավաշինությունն է և նավավերանորոգումը:

Մալայզիան աստիճանաբար դառնում է էլեկտրատեխնիկական ապրանքների արտադրության երկիր:

Ձարգացած են նաև փայտամշակումը, կահույքի արտադրությունը:

Գյուղատնտեսությունը տալիս է համախառն ներքին արդյունքի 7.2 %-ը: Այս ոլորտում զբաղված է աշխատուժի 14.5 %-ը:


Վարելահողերը կազմում են երկրի տարածքի 5.48 %-ը, բազմամյա տնկարկները՝ 17.61 %-ը:

Փլխավոր մշակաբույսը հեվեյան է, որից ստանում են հատուկ հյութ (լատեքս), որը հումք է ծառայում բնական կաուչուկի արտադրության համար: Մշակում են նաև կոկոսյան և յուղատու արմավենիներ: Վերջինիս պտուղները օգտագործում են տեխնիկական յուղ ստանալու համար:

Բնակչությանը սննդամթերքով ապահովելու համար մշակում են բրինձ: Բրնձի ընդարձակ ցանքատարածությունները տարածված են Թաիլանդի սահմանի մոտ, Մուդա գետի հովտում, ուր կառուցված են ընդարձակ ոռոգիչ համակարգեր: Ընդհանրապես Մալայզիայում ոռոգովի է 365 հզ հա հող: Մեծ աշխատանքներ են տարվում նոր հողերի յուրացման ուղղությամբ: Ջունգլիներից մաքրված հողատարածքները օգտագործում են հեվեյայի բրնձի և այլ բույսերի մշակության համար:

Անասնապահությունը թույլ է զարգացած կերի կայուն բազա չլինելու պատճառով: Բուծում են խոշոր եղջերավոր անասուններ (կովեր, զոմեշներ), ոչխարներ, այծեր, խոզեր: Խոզաբուծությամբ զբաղվում են չինացիները:

Տրանսպորտը: Երկաթուղիների երկարությունը 1890 կմ է, որից 207 կմ էլեկտրաֆիկացված է: Երկաթուղիները միմյանց են կապում նավահանգիստները և լեռնահանքային շրջանները: Գլխավոր երկաթուղային մայրուղին ծգվում է թերակղզու հյուսիսից հարավ: Երկաթուղագիծ կա նաև Կալիմանտան կղզում:



Նկ. 24. Կուալա Լումպուր

Ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը 65877 կմ է: Ավտոճանապարհները ծգվում են ափագծերի երկայնքով կամ նավահանգիստներից դեպի ներքին շրջաններ:

Երկրի համար կարևոր նշանակություն ունի ծովային տրանսպորտը: Մալայզիան ունի 1000 տ-ից ավելի ջրատարողությամբ 346 նավ, որից 62-ը նավթատարներ են:

Արտաքին տնտեսական կապերը: Արտահանման ծավալները կազմում են 123.5 մլրդ դոլար: Արտահանում է էլեկտրոնային ապրանքներ, նավթ, հեղուկ գազ, անագ, կաուչուկ, գործվածքներ, քիմիական ապրանքներ: Ներմուծման ծավալները 9.3 մլրդ դոլար են: Ներմուծում են էլեկտրոնային ապրանքներ, մեքենաներ, նավթամթերքներ, պողպատ: Արտաքին առևտրի գլխավոր գործընկերներն են՝ Սինգապուրը, Ճապոնիան, Չինաստանը, Հարավային Կորեան, Տաիլանդը, Գերմանիան:

Ինքնաստուգման հարցեր

1. Բնութագրե՛ք և վերլուծե՛ք այն գործոնները, որոնք նպաստեցին տնտեսության արագ զարգացմանը
2. Որո՞նք են բնական հիմնական հարստությունները
3. Բնութագրե՛ք արդյունաբերությունը՝ նշելով բարձր տեխնոլոգիաների առաջատար դերը
4. Որո՞նք են գյուղատնտեսության հիմնական ճյուղերը և մշակաբույսերը:
5. Ի՞նչ նշանակություն ունի տրանսպորտը արտաքին կապերի զարգացման գործում:

.

ՎԻԵՏՆԱՄ

*Տարածքը՝ 329.56 հզ քկմ
Բնակչությունը՝ 82.9 մլն մարդ
Մայրաքաղաքը՝ Հանոյ*

Վիետնամը աշխարհի հնագույն պետություններից մեկն է։ Նրա տարածքում առաջին պետությունը ձևավորվել է դեռևս ք.ա. երկրորդ դարում։ 19-րդ դարի երկրորդ կեսին Վիետնամը դառնում է ֆրանսիական գաղութ։ 1941-1945 թթ. բռնագրավվել է ճապոնիայի կողմից։ 1945 թ. հռչակվում է Վիետնամի Դեմոկրատական Հանրապետությունը, հարավում՝ Վիետնամի Հանրապետությունը։ 1964-1973 թթ. տասնամյա պատերազմից հետո Վիետնամները միավորվում են՝ Վիետնամի Սոցիալիստական Հանրապետություն անվամբ։

Վիետնամը ծովային երկիր է, նրա 4639 կմ երկարությամբ սահմաններից 3444 կմ-ը ծովային է։ Նա տարածաշրջանում երկրորդ տեղն է գրավում բնակչության թվով՝ Ինդոնեզիայից և Ֆիլիպիններից հետո, հինգերորդ տեղում է համախառն ներքին արդյունքով և արտադրած էլեկտրաէներգիայի քանակով։ Աշխատուժի զբաղվածության տեսակետից Վիետնամը մնում է դասական գյուղատնտեսական երկիր։ Այս ոլորտում զբաղված է աշխատուժի 63 %-ը։

Բնական պայմանները և ռեսուրսները։ Մակերևույթի 3/4 ծածկված է լեռներով և սարահարթերով։ Հարթավայրերը ձգվում են արևելյան ծովափով, լեռները՝ հյուսիսից հարավ, լեռնային է երկրի հյուսիսային մասը։ Լեռների միջին բարձրությունը 1000 մ է, հյուսիսում՝ 2000-2500 մ։ Դրանք խոր կտրտված են գետահովիտներով, որոնց լանջերը շատ թեք են։ Ոչ մեծ բարձրության (500-1000մ) լեռնանցքները ավելի մատչելի են դարձնում լեռնանցումները։

Հարթավայրային է արևելյան նեղ ծովափը։ Ընդարձակ հարթավայրեր են Մեկոնգ, Խոնգհա և մյուս գետերի դելտային շրջանները։ Մեկոնգի դելտան գրավում է 50 հզ քկմ տարածք, Խոնգհայինը՝ 15 հզ քկմ։ Հարթավայրերը ծովի մակարդակից 1-3 մ բարձր են։ Ներքին շրջաններում կան առանձին իջվածքներ, որոնց մակերևույթը ծովից ցածր է։

Հարթավայրային են վիետնամցիների հիմնական ապրելավայրերը։ Այստեղ են բոլոր խոշոր բնակավայրերը, երկրի հացի շտեմարանը։

Կլիման խոնավ է ամբողջ տարին գալիս են առատ տեղումներ՝ 2000-2500 մմ: Հանդուր միջին տարեկան ջերմաստիճանը $+29^{\circ}\text{C}$ է, լեռներում՝ $20-24^{\circ}\text{C}$, տեղումների քանակությունը՝ մինչև 3500 մմ: Ձմեռային ամիսներին հյուսիսային շրջաններ են թափացնում օդային սառը զանգվածներ՝ ջերմաստիճանը իջեցնելով մինչև $+4+5^{\circ}\text{C}$: Ընդհանուր գծերով ամառը ավելի խոնավ է, ձմեռը՝ ավելի չոր: Գարնանային եղանակը անկայուն է, հաճախ առափնյա շրջանները ենթարկվում են թայֆունների ազդեցության:

Գետերը ջրառատ են հատկապես ամառային հորդ անձրևների ժամանակ: Ամենախոշոր գետը Մեկոնգն է՝ ընդհանուր երկարությունը 4400 կմ, սակայն փոքր մասն է անցնում Վիետնամի տարածքով՝ առաջացնելով ընդարձակ դելտա: Գետաբերանին մոտ շրջանում Մեկոնգի մեջ են թափվում Սայգոն և Դոնգնայ գետերը: Երկրորդ խոշոր գետը Հոնգհան է, որը 1/3 մասով անցնում է Վիետնամի տարածքով: Գարնանային անձրևների ընթացքում Հոնգհայի ջրերի մակարդակը հաճախ բարձրանում է՝ ողողելով շրջակա քաղաքները, գյուղերը, մշակովի դաշտերը:

Վիետնամի առափնյա հարթավայրերը ենթակա են նաև ծովի ներխուժմանը: Թայֆունների ժամանակ հսկայական ալիքները խորանում են ցամաքի մեջ: Դրանցից պաշտպանվելու համար ծովափերին կառուցվել են թմբեր:

Լեռները ամբողջությամբ ծածկված են *անտառներով*: Հարթավայրերում բարձր իրացվածության պատճառով անտառները քիչ են: Ընդհանուր առմամբ երկիրը թաղված է բնական և մշակովի կանաչ տարածքների մեջ:

Կենդանական աշխարհը հարուստ է լեռներում: Չկներով լեցուն են առափնյա ջրերը, գետերը, մշակովի բրնձի դաշտերը:

Ընդերքը հարուստ է: Բակաբոյում կան քարածխի մեծ պաշարներ: Ածխաշերտերը գտնվում են ոչ մեծ խորություններում և հնարավորություն են տալիս կազմակերպել բաց արդյունահանում: Բակբոյում, Տխայգուեն քաղաքի մոտ, գտնվում են երկաթաքարի մեծ պաշարներ: Մինչև 60 % մետաղ պարունակող հանքաքեր շերտերը տեղ-տեղ դուրս են գալիս երկրի մակերես: Երկիրը հարուստ է նաև ոսկու (Չունգբոյ), պղնձի, անագի, կապարի, ցինկի, մանգանի, բոքսիտների, վոլֆրամի պաշարներով:

Մեկոնգ գետի հովտի առափնյա ջրերում հայտնաբերված են նավթի զգալի պաշարներ:

Բնակչությունը: Վիետնամում ապրում են 60-ից ավելի ժողովուրդներ՝ վետեր (վիետնամցիներ), կխեմերներ, թայեր, չինացիներ: Վետերը հիմնականում ապրում են առափնյա հարթավայրերում՝ Մեկոնգ և Չոնգհա գետերի հովիտներում, հարավ-արևմտյան լեռնային շրջաններում, թայերը՝ հյուսիսում, հյուսիս-արևմուտքում, չինացիները՝ Չինաստանի սահմանների մոտ: Բազմազգությամբ աչքի է ընկնում հյուսիսային շրջանը, ուր ապրում են տասնյակից ավելի ժողովուրդներ:

Վիետնամում տիրապետող կրոնը բուդդայականությունն է, կան նաև քրիստոնյաներ (կաթոլիկներ և բողոքականներ), մահմեդականներ, տեղական հավատքի ժողովուրդներ:

Ներկայումս բնակչության բնական աճը ցածր է նախկինի համեմատ և կազմում է ընդամենը 13.44 %: Մեկ կնոջ միջին պտղաբերությունը 2.22 երեխա է: Կյանքի միջին տևողությունը 70.35 տարի է: Մեծ է արտագաղթը. միգրացիոն գործակիցը 0.45 % է: Պատճառը գործազրկությունն է:



Նկ.25. Բուդդայական տաճար Վիետնամում

Ուրբանիզացման մակարդակը շատ ցածր է՝ 19 %: Խոշոր քաղաքները երեքն են՝ Հոչիմինը՝ 3.5 մլն, Հանոյը՝ 2.1 մլն, Հայֆոնը՝ 1.5 մլն բնակչությամբ:

Տնտեսությունը: Համախառն ներքին արդյունքը 203.7 մլրդ դոլար է, որ շատ չէ բնառեսուրսային մեծ կարողություններ և 45,7 մլն

աշխատուժ ունեցող երկրի համար: Դրականն այն է, որ երկրի տնտեսությունը աստիճանաբար հզորանում է: Տնտեսական տարեկան աճը 7.3 % է, որ ապահովվում է կապիտալ մեծ ներդրումների շնորհիվ: ՀՆԱ-ի 33%-ը ներդրվում է տնտեսության մեջ:

Վիետնամի տնտեսության մեջ տիրապետում են պետական, խոշոր, կոլեկտիվ և մասնավոր փոքր ձեռնարկությունները: Ավելի արագ թափով զարգանում է արդյունաբերությունը, որի տարեկան աճը 16 % է:

Արդյունաբերությունը տալիս է ՀՆԱ-ի 39.7 %-ը: Կարևոր ճյուղերն են լեռնահանքայինը, մետաղաձուլությունը, թեթև արդյունաբերությունը, էլեկտրաէներգետիկան:

Լեռնահանքային ձեռնարկություններում արդյունահանում են նավթ, մետաղներ, քիմիական հումք, քարածուխ: Քարածուխի հանույթով Վիետնամը տարածաշրջանի առաջատար երկիրն է: Արդյունահանվում է բարձրորակ քարածուխ: Ածխի հանույթը կատարվում է բաց եղանակով: Քարածխի մի մասը օգտագործվում է էներգետիկ նպատակով, զգալի քանակություն արտահանվում է, փոքր մասը օգտագործվում է մետաղաձուլության մեջ: Վերջինիս պատճառը այն է, որ վիետնամական քարածուխը մեծ ջերմունակություն ունենալով հանդերձ՝ լավ չի կոքսացվում:

Նավթի օրական հանույթը կազմում է 356.7 հզ բարել: Այն օգտագործվում է ներքին կարիքների համար: Նավթ է արդյունահանվում Մեկոնգի դելտայի շրջանում և առափնյա շելֆում: Բնական գազի տարեկան հանույթը 1.3 մլրդ խմ է:

Էլեկտրաէներգիայի արտադրությունը 27.7 մլրդ կվտ է, որը փոքր թիվ է բնակչության քանակի և ջրաէներգետիկ կարողությունների համեմատ: Վիետնամի գետերը ջրառատ են և ունեն մեծ անկում, խնդիրը այդկարողությունների լիարժեք օգտագործումն է:

Սև մետաղաձուլության խոշոր կենտրոնը Տհայնգուեն է: Լրիվ ցիկլով կոմբինատը աշխատում է բաց եղանակով արդյունահանվող մոտակա երկաթաքարի և քարածխի բազայի վրա: Սև մետաղաձուլություն կա նաև Հոչիմինում:

Ծայր հյուսիսում զարգացած են անագի, վոլֆրամի, քրոմիտների արդյունահանումը և վերամշակումը: Կաոբանգում կա գունավոր մետաղաձուլություն:

Համեմատաբար նոր ճյուղ է *մեքենաշինությունը*, որը շատ դանդաղ է աճում: Հոչիմինում զարգացած է նավաշինությունը, Հանո-

յում՝ հաստոցաշինությունը, վագոնաշինությունը, տեքստիլ մեքենաների արտադրությունը, Բենհայում՝ տրակտորաշինությունը, Բակաբոյում՝ ավտոհավաքումը:

Սեփական ապատիտների բազայի վրա Հանոյի արվարձանում աշխատում են ֆոսֆորական, Վետիչիում ազոտական պարարտանյութերի գործարանները: Հայֆոնը դարձել է ցեմենտի արտադրության խոշոր կենտրոն: Արդյունաբերության կարևոր ծյուղ է փայտամշակումը:

Վիետնամը մնում է դասական գյուղատնտեսության երկիր: *Գյուղատնտեսությունը* տալիս է ՀՆԱ-ի 21.8%-ը: Այս ոլորտում է զբաղված աշխատուժի 63%-ը: Գյուղատնտեսության մեջ աշխատող 28.8 մլն աշխատուժի արտադրողականությունը ցածր է: Դեռևս մեծ է ձեռքի աշխատանքի կիրառումը, ցածր է մեքենայացման աստիճանը:

Գյուղատնտեսության գլխավոր ծյուղը *բուսաբուծությունն* է: Վարելահողերը գրավում են երկրի տարածքի 20 %-ը, բազմամյա տնկարկները՝ 6 %-ը, ոռոգովի հողատարածքները՝ 3 մլն հա: Հիմնական մշակաբույսը բրինձն է: Մշակում են մի քանի հարյուր տեսակի բրինձ՝ սպիտակ, դեղնավուն, կարմրավուն, սևագույն: Բրնձի ցանքատարածությունները 7.4 մլն հա են, տարեկան բերքը՝ 34.5 մլն տ: Բրինձը բնակչության սննդի հիմնական միջոցն է: Բրինձ մշակում են ամենուրեք՝ հարթավայրերում, լեռնալանջերին կառուցված դարավանդների վրա: Բրնձի մշակության գլխավոր շրջաններ են Մեկոնգ և Հոնգհա գետերի դելտաները: Բրնձի դաշտերում զբաղվում են նաև ձկնաբուծությամբ: Բրնձի համար ոչ պիտանի անջրդի հողերում չորային սեզոնին մշակում են բաթաթ, մանիոկ. դրանք օգտագործվում են որպես անասնակեր և օսլայի հումք:

Տեխնիկական կուլտուրաներից մշակում են բամբակ, ջուտ, շաքարեղեգ, սոյա, քնջութ, առույգացնող կուլտուրաներից՝ ծխախոտ, իմբիտ, թեյ, սուրճ, կարմիր պղպեղ: Հյուսիս և խեժ ստանալու համար մշակում են հեվեյա, լաքի ծառ: Մշակում են նաև նարինջ, լիմոն, գրեյֆրութ, անանաս, մանգո:

Անասնաբուծությունը համեմատաբար թույլ է զարգացած: Զբաղվում են խոզաբուծությամբ, թռչնապահությամբ: Առափնյա շրջանների քաղցրահամ ջրերում՝ ձկնորսությամբ, ծովային այլ մթերքների հայթայթմամբ:

Տրանսպորտը: Գլխավորը ավտոմոբիլային տրանսպորտն է: Ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը 93300 կմ է: Դրանք

իրար են միացնում բոլոր մեծ ու փոքր բնակավայրերը: Քաղաքները միմյանց կապող ճանապարհները բարեկարգ վիճակում են, ընդհանուր երկարությունը 23400 կմ է:

Երկաթուղիների երկարությունը 2600 կմ է: Գլխավոր երկաթուղին ձգվում է Յանոյից մինչև Յոշիմին: Երկաթուղային կապ կա նաև Չինաստանի հետ:

Երկրի տնտեսության մեջ կարևոր դեր ունի ջրային տրանսպորտը: Վիետնամական դրոշի տակ լողում է 1000 տ և ավելի մեծ ջրատարողությամբ 194 նավ: Դրանցից 8-ը այլ երկրների նավեր են: Ծովային տրանսպորտը զբաղվում է ներքին և արտաքին բեռնափոխադրումներով: Մեծ ձգվածությունը հյուսիսից հարավ նպաստել է առափնյա բեռնափոխադրումների ծավալների մեծացմանը: Խոշոր նավահանգիստներ են Յոշիմինը, Յանոյը, Յայֆոն, Վունգթաուն, Դանանգը:

Ներքին ջրային ուղիների երկարությունը 17702 կմ է: Ինտենսիվ նավարկություն է կատարվում Մեկոնգ. Յոնգհա և մյուս գետերով:

Արտաքին տնտեսական կապերը: Արտահանման ծավալը 19.88 մլրդ դոլար է, ներմուծմանը՝ 22.5 մլրդ դոլար: Արտահանում են նավթ, ծովամթերքներ, բրինձ, սուրճ, թեյ, կաուչուկ, կոշկեղեն: Արտահանման 21.9% բաժին է ընկնում ԱՄՆ-ին, 13.8 %-ը՝ ճապոնիային: Ներմուծում են մեքենաներ, նավթամթերք, պողպատ, հացահատիկ, պարարտանյութեր: Ներմուծման գլխավոր գործընկերներն են Չինաստանը՝ 13.7 %, Տայվանը՝ 11,4 %, ճապոնիան՝ 11.3%, Չարավային Կորեան՝ 11%:

Ներքին տարբերությունները: Վիետնամը բաժանվում է երեք շրջանի՝ Յյուսիսային (Բակբո), Կենտրոնական (Չունգբո), Չարավային (Նամբո):

1. *Բակբոն* ընդգրկում է Յոնգհա գետի դելտան և հարակից շրջանները: Յոնգհայի դելտան հարթավայր է, մնացած մասը բարձր լեռներ են: Բակբոյի՝ հարթավայրը ամբողջությամբ զբաղված է բրնձի դաշտերով: Ջրի մակարդակը կայուն պահելու համար բրնձի դաշտերում փորված են հազարավոր ջրանցքներ, իսկ ծովի ներխուժումից պաշտպանվելու համար կառուցվել են հողաթմբեր:

Բակբոյի լեռներում են գտնվում երկրի ընդերքի ռեսուրսների՝ քարածխի, անագի, երկաթաքարի, ապատիտների մեծ մասը: Չարթավայրային Բակբոյում է ապրում երկրի բնակչության 40 %-ը, մեկ քվմ վրա 1000-ից ավելի մարդ: Գյուղական համայնքները համատեղ մշակում

են հողը՝ օգնելով մեկը մյուսին՝ փոքր հողակտորներից ստանալու բարձր բերք, միասին հաղթահարելու բնական աղետները:

Օգտակար համաժողովների բազայի վրա զարգացած է լեռնահանքային արդյունաբերությունը, մետաղամշակությունը, մեքենաշինությունը, քիմիական արդյունաբերությունը:

Խոշոր քաղաքը Հանոյն է: Ունի 2.1 մլն բնակչություն: Քաղաքում զարգացած է մեքենաշինությունը, մետաղամշակումը, տեքստիլ, քիմիական արդյունաբերությունը: Մշակույթի, գիտության խոշոր կենտրոն է: Հանոյը հեծանվորդների քաղաք է:

Հանոյից ոչ հեռու, ծովափին, Հայֆոնն է: Գտնվում է Հոգհայի դելտայում: Երկաթուղիով կապված է Հանոյի հետ: Ունի 1.5 մլն բնակչություն: Կան նավավերամորթոգման, ցեմենտի, թեթև, սննդի արդյունաբերության ձեռնարկություններ: Հայֆոնը ձկան, ծովամթերքների մշակման կենտրոն է:

2. Չունգբոն երկրի ամենամեղ հատվածն է՝ սեղված լեռների և ծովի միջև: 40-50 կմ լայնությամբ ծովափով ձգվում է մոտ 1000 կմ: Բնակչության հիմնական մասը ապրում է հարթավայրերում: Լեռնային շրջանները թույլ են բնակեցված: Բնակչության հիմնական զբաղմունքը ձկնորսությունն է և բրնձի մշակումը: Չունգբոյի հարթավայրերը հաճախ ողողվում են են ծովի ջրերով, որի պատճառով հողը աղակալվում է: Չունգբոյի հարավ-արևմուտքում Տեյգուենի սարահարթն է: Ամենախոշոր արդյունաբերական կենտրոնը Դանանգն է՝ 700 հզ բնակչությամբ: Խոշոր նավահանգիստ է, ունի էլեկտրակայան, տեքստիլ, քիմիական, ցեմենտի, շաքարի ձեռնարկություններ: Դանանգից ոչ հեռու Հուե քաղաքն է՝ 300 հզ բնակչությամբ: Եղել է թագավորների քաղաք: Հարուստ է պատմամշակութային, ճարտարապետական հուշարձաններով:

Չունգբոյի հարավ-արևմուտքում գտնվող Տեյգուեն սարահարթը երկրի հեվեայի, թեյի, սուրճի, սև պղպեղի մշակության գլխավոր շրջանն է: Այստեղ մոր հողերի յուրացման մեծ հեռանկարներ կան: Արդյունաբերական ձեռնարկությունները վերամշակում են սուրճ, թեյ: Տնտեսության զարգացման խթան կարող են հանդիսանալ ջրաէներգետիկ ռեսուրսները: Այդ ռեսուրսները օգտագործող առաջին ջրաէլեկտրակայանը արդեն աշխատում է Դանիմում:

3. Նամբոն գրավում է երկրի տարածքի 20 %-ը: Նրա մեծ մասը գտնվում է Մեկոնգի ընդարձակ դելտայում: Վերջինս հարթավայր է՝ ծածկված գետաբերուկներից առաջացած բերրի հողերով: Սա երկրի

բրնձի մշակման գլխավոր շրջանն է: Նամբոյում մեծ տարածում ունեն հեվեյայի, կոկոսյան արմավենու տնկարկները:

Արդյունաբերական ձեռնարկությունները վերամշակում են գյուղատնտեսական հումքը: Կան բրնձի զտման, հեվեյայի հյութից լատեքսի պատրաստման և վերամշակման, կոկոսյան արմավենու միջուկից յուղի ստացման, կոկոսի թելիկներից կոպիտ գործվածքների արտադրման ձեռնարկություններ: Ջարգացած է նաև թեյի, շաքարի, ձկան պահածոների արտադրությունը:

Արդյունաբերական խոշոր կենտրոնը Հոչիմինն է: Ծովային նավահանգիստ է: Ջարգացած է փայտամշակման, քիմիական, թեթև արդյունաբերությունը, մեքենաշինությունը: Հոչիմինից մինչև Բենհա կառուցված է 35 կմ երկաթուղամբ, 80 մ լայնությամբ ավտոճանապարհ, որը անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել որպես օդանավակայան:

Ինքնաստուգման հարցեր

1. Որո՞նք են Վիետնամի զարգացման բնական նախադրյալները:
2. Ինչպիսի՞ն է բնակչության բնական շարժը, ազգային, կրոնական կազմը:
3. Որո՞նք են արդյունաբերության գլխավոր ճյուղերը, ի՞նչ խնդիրներ ունեն:
4. Ո՞րն է գյուղատնտեսության հիմնախնդիրը:
5. Որո՞նք են տրանսպորտի հիմնական ձևերը և դրանց դերը ներքին ու արտաքին բեռնափոխադրումների գործում:
6. Ի՞նչ խոշոր շրջանների է բաժանվում Վիետնամը:

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՍԻԱ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

*Տարածքը` 117755,0 հզ քկմ
Բնակչությունը` 1539,1 մլն մարդ*

Արևելյան Ասիայի կազմի մեջ են մտնում ԿժԴՅ-ն, Կորեայի Հանրապետությունը, Ճապոնիան, Մոնղոլիան, Չինաստանը, Տայվանը և Հոնկոնգը: Երբեմն այս տարածաշրջանի մեջ են մտցնում Ֆիլիպինները:

Արևելյան Ասիան հին է իր պատմությամբ, հզոր է իր քաղաքակրթությամբ, համաշխարհային պատմության մեջ թողած մշակութային մասունքներով: Նոր է ու հզոր իր ժամանակակից տնտեսական մեծ ներուժով, գիտական խոշոր հայտնագործումներով ու ներդրումներով, բարձր տեխնոլոգիաների զարգացմամբ: Համաշխարհային շուկայում առաջինն է ապրանքների արտահանությամբ: Տարածաշրջանը առանձնահատուկ է իր բնակչությամբ, սովորույթներով, մշակույթով, աշխատանքային նորույթներով, կրոնով, հասարակական հարաբերություններով:

Հազարամյակներ շարունակ չինական մշակույթի ազդեցությունը հասել է այն ժամանակվա աշխարհի ծայրը` Եվրոպա: Դեպի Եվրոպա և Ասիայի մյուս շրջաններն են արշավել մոնղոլական հորդաները` իրենց հետքը թողնելով Եվրասիայի շատ երկրների վրա: Այսօր էլ Արևելյան Ասիան կարևոր տեղ ունի աշխատանքի միջազգային աշխարհագրական բաժանման մեջ: Արևելասիական երկրները դեպի արևմուտք են շարժվում իրենց կատարյալ, բարձրորակ ապրանքներով, նորագույն տեխնոլոգիաներով, աշխատանքի կազմակերպման բարձր մշակույթով: Աշխարհին հարկադրում են ընդունել արևելասիականը` ամենալավը:

Արևելասիական բացառիկ քաղաքակրթությունը ծնավորվել է բնական մեկուսացվածության պայմաններում. հարավ-արևմուտքում և արևմուտքում Հիմալայան, Տյան-Շանի ու Պամիրի լեռներն են, դժվարանանցանելի անապատները, հյուսիսում` տայգան, արևելքում` խաղաղ օվկիանոսը:

Տարածքային ձևավորման գործընթացում կարևոր դեր է կատարել կոնֆուցիականությունը՝ իր բարոյաէթիկական չափանիշներով, որ դաստիարակում է նվիրվածություն, աշխատանքային կարգապահություն, սյուվիզմ (համատեղ աշխատելու գործելակերպ): Տարածաշրջանի տնտեսական ինտեգրման գործում կարևոր դեր ունի ճապոնիան՝ իր ներդրումներով: Վերջին տասնամյակներում կապիտալ մեծ ներդրումներ է կատարում Կորեայի Հանրապետությունը: Այս երկու երկրների վերազգային մոնոպոլիստական ընկերությունների ներդրումները զգալի են Հիմաստանի տնտեսության մեջ:

Տնտեսական ինտեգրումը աստիճանաբար տարածաշրջանը վեր է ածել տնտեսական և քաղաքական մեկ ընդհանրության:

Ձարգացման բնական նախադրյալները: Ընդարձակ տարածքի շնորհիվ տարածաշրջանն ունի բազմաբնույթ բնակլիմայական պայմաններ, բազմատեսակ բնական ռեսուրսներ:

Մակերևույթի կառուցվածքին բնորոշ են հզոր լեռնային համակարգերը և ընդարձակ հարթավայրերը: Հարավ-արևմուտքով ձգվում են աշխարհի ամենաբարձր Հիմալայան լեռները, դրանցից հյուսիս Տիբեթի լեռնաշխարհն է, Կունլունի և Նանշանի, Պամիրի, Տյան Շանի լեռները: Հարավ-արևմուտքում Հնդկանշանի, Ուրանշանի լեռներն են: Տարածաշրջանի ծայր արևմուտքում հզոր լեռնային համակարգերի միջև ընկած են Թարիմի և Տուրֆանի իջվածքները, իսկ դրանցից արևելք՝ մոնղոլական տարածուն հարթավայրերը: Ընդարձակ է նաև Հինական մեծ հարթավայրը:

Կորեա թերակղզու, Տայվան, Հայնան և ճապոնական կղզիների մակերևույթը լեռնային է: Տարածաշրջանի մեծ մասում լեռնակազմական երևույթները դեռ շարունակվում են, որի պատճառով այստեղ հաճախակի են ավերիչ երկրաշարժերը, ճապոնական կղզիներում՝ հրաբուխների ժայթքումները:

Տարածաշրջանը հարուստ է *օգտակար հանածոներով*: Քարածուխով հարուստ են Հիմաստանը, ԿԺՀ-ն և Կորեայի Հանրապետությունը: Նավթի պաշարներ կան Հիմաստանում, Մոնղոլիայում: Տայվանում հայտնաբերված են բնական գազի ռեսուրսներ: Հիմաստանում, Մոնղոլիայում, ԿԺՀ-ում և Կորեայի Հանրապետությունում գտնվում են երկաթաքարի, պղնձի, կապարի, ցինկի, ոսկու, կերակրի աղի զգալի պաշարներ: Իսկ ահա ճապոնիան օգտակար հանածոների ոչ մի տեսակով ապահովված չէ:

Կլիման: Տարածաշրջանի արևելյան հարթավայրերը գտնվում են խաղաղ օվկիանոսից եկող քամիների ազդեցության տակ: Սուստոնային քամիները արևելյան շրջաններում բերում են 1000-2000 մմ, հյուսիս-արևելքում՝ 300-700 մմ տեղումներ: Ծայր արևմտյան շրջաններում և հյուսիս արևմուտքում տեղումների քանակը զգալիորեն պակաս է՝ 100-200 մմ: Այստեղ սակավ տեղումների և բարձր գոլորշիակության պայմաններում առաջացել են Տակլա Մական և Գոբի անապատները:

Տարածաշրջանի հյուսիսային շրջաններում ամառը տաք է, ծմեռը ցուրտ: Սիբիրական սառը հոսանքները հաճախ առաջացնում են ուժեղ սառնամանիքներ: Դեպի հարավ կլիման աստիճանաբար դառնում է ավելի մեղմ, ամառները տաք են ու անձրևային, ծմեռները՝ զրոյին մոտ, հարավ-արևմուտքում ամբողջ տարին տաք է:

Կլիմայով պայմանավորված՝ *գետային ցանց* արևելքում խիտ է, արևմուտքում՝ շատ նոսր: Արևելքի գետերն ունեն մուսսոնային ռեժիմ. դրանք վարարում են ամռանը, իսկ ծմռանը խիստ ծանծաղում են: Գետերը վերին հոսանքների շրջանում ունեն ջրաէներգետիկ մեծ կարողություն, ստորին հոսանքի շրջանում նավարկելի են: Յանցզի գետը նավարկելի է մինչև 1000 կմ երկայնքով: Նավարկելի է նաև Սիցզյանը: Հյուսիսով հոսող Սելենգան թափվում է Բայկալ լիճը, արևմուտքով հոսող Յարբեդ և Թարիմ գետերը կորչում են անապատներում:

Տարածաշրջանում կան մեծ թվով *լճեր*՝ Լոբնորը, Կուկունորը, Պոյանհու, Խանկան: Արևմուտքի լճերի ջուրը աղի է, արևելքինը՝ քաղցրահամ: Արևելքի լճերը օգտագործվում են ձկնաբուծության, ոռոգման համար: Դրանք ունեն նաև ռեկրեացիոն նշանակություն:

Անտառները տարածվում են միայն Յանցզի գետի վերին հոսանքի շրջանում, Մանջուրիայում, Մոնղոլիայի լեռներում, Կորեա թերակղզում, ճապոնական կղզիներում: Ճապոնիայից բացի մյուս երկրներում անտառները լավ չեն պահպանվել. դրանք գլխավորապես կտրատվել են նոր հողեր յուրացնելու համար:

Տարածաշրջանի համար կարևոր նշանակություն ունեն տափաստանները, որոնք լավ արոտավայրեր են, իսկ ոռոգման հնարավորության պայմաններում օգտագործվում են հողագործական նպատակներով:

Բնակչությունը: Տարածաշրջանը բացառիկ է իր սովորույթներով, ավանդույթներով, մարդկային փոխհարաբերություններով, աշխատանքային նորարարնություններով, բնական աճով:

Ազգային կազմը միատարր է: Յուրաքանչյուր պետության մեջ բացարձակ մեծամասնություն է կազմում մեկ ազգ: Այսպես, Ճապոնացիները կազմում են ճապոնիայի բնակչության 99 %-ը, մոնղոլները՝ իրենց երկրի բնակչության 95 %-ը: Կորեացիներ են Կորեայի Հանրապետության բնակչության 99 %-ը, ԿԺԴՀ-ի 99 %-ը: Չինաստանում չինացիները (հաները) կազմում են բնակչության մոտ 92 %-ը: Տարածաշրջանում ապրում են նաև դազախներ, ույղուրներ, տիբեթցիներ:

Տարածաշրջանը բացառիկ է իր կրոնական կազմով: Ի տարբերություն այլ ժողովուրդների, այստեղի բնակիչները դավանում են մի քանի կրոններ: Այսպես, չինացիները միաժամանակ դավանում են կոնֆուցիականություն, դաոսականություն և բուդդայականություն, ճապոնացիները սինթոստներ են, նրանց մի մասը միաժամանակ բուդայականներ են, մոնղոլները և տիբեթցիները՝ լամայականներ: Կորեացիների կրոնը չոնդոկոն է, որի իր մեջ կան քրիստոնեության, կոնֆուցիականության և բուդդայականության տարրեր: Տարածաշրջանում կրոնական անհանդուրժողականության խոսք անգամ չկա: Ցանկացած քաղաքացի իր բարոյականությամբ, հոգևոր աշխարհին հաճապատասխան՝ կարող է ընտրել մեկ կամ մի քանի կրոն:

Արևելյան Ասիայում ապրում է երկրագնդի բնակչության 24.4 %-ը, տարածաշրջանի բնակչության 85.4 %-ը՝ Չինաստանում (Մանրամասն տե՛ս աղ.28):

Աղյուսակ 28

Արևելյան Ասիայի երկրների տարածքը և բնակչությունը (2006 թ.)

Երկիր	Տարածքը հզ քկմ	Բնակչությունը մլն մարդ
1. Կորեայի Ժողովրդագեոմկրատական Հանրապետություն (ԿԺԴՀ)	120,5	23,1
2. Կորեայի Հանրապետություն	98,48	48,4 (2005)
3. Ճապոնիա	377,8	127,4
4. Մոնղոլիա	1564,0	2,8
5. Չինաստան	9560,0	1331,9
6. Տայվան	35,9	23,0
Ընդամենը	11792,7	15386

Բնակչությունը խիստ անհավասար է տեղաբաշխված՝ ըստ երկրների և ըստ առանձին ենթաշրջանների: Ամենախտաբնակ երկիրը Կո-

րեայի Հանրապետությունն է, ուր 1 քկմ վրա ապրում է 496 մարդ: Ամենից նոսր է բնակեցված Սոնդոլիան՝ 2 մարդ մեկ քկմ-ի վրա:

Բնակչության խտության ամենից մեծ տարբերություններ կան առանձին ենթատարածաշրջաններում: Տայվանում բնակչության խտությունը 640 մարդ է քկմ-ի վրա: Գերբնակեցված են Կանտոյի հարթավայրը, Չինական Մեծ հարթավայրը: Նոսր են բնակեցված Չինաստանի արևմտյան շրջանի անապատները, Տիբեթը:

Բնակչության ամենաբարձր բնական աճը Սոնդոլիայում է՝ 14.64 ‰, ամենացածրը ճապոնիայում՝ 0.21 ‰: Սոնդոլիան երիտասարդների երկիր է, ճապոնիան՝ ծերերի: Սոնդոլիայի բնակչության 28 %-ը երեխաներ են (մինչև 14 տարեկան), ճապոնիայինը՝ 14.2 %: ճապոնիայում 65 և ավելի տարիք ունեն բնակչության 20 %-ը, Սոնդոլիայում՝ 3.7 %-ը:

Կյանքի միջին տևողությունն ամենից բարձր է ճապոնիայում՝ 81.25 տարի, ամենից ցածրը՝ Սոնդոլիայում՝ 64.89 տարի (Մանրամասն տե՛ս աղյուսակ 29):

Աղյուսակ 29

Արևելյան Ասիայի երկրների բնակչության բնական շարժը և կյանքի միջին տևողությունը (2006թ.)

Պետություն	Ծնելիություն %	Մահացություն %	Բնական աճ %	Կյանքի միջին տևողությունը (տարի)		
				ընդամենը	տղամարդ.	կանանց
1. Կորեայի Ժողովրդ-դադենոկրատական Հանրապետություն (ԿԺՀ)	15.54	7.13	8.41	71.65	68.92	74.51
2. Կորեայի Հանրապետություն	10,1	6,26	384			
3. Ճապոնիա	9.37	9.16	0.21	81.25	77.96	84.70
4 Սոնդոլիա	21.59	6.95	14.64	64.89	62.64	67.25
5 Չինաստան	13.25	6.97	6.28	72.58	70.89	74.46
6 Տայվան	12.56	6.48	6.08	77.43	74.67	80.47

Ուրբանիզացման մակարդակի տարբերությունները շատ մեծ են երկրների միջև: Կորեայի Հանրապետության քաղաքներում է ապրում բնակչության 82 %-ը, ճապոնիայում՝ 79 %-ը, իսկ Չինաստա-

նում՝ 36 %-ը: Ընդ որում Չինաստանում այս ցուցանիշը մեծացված է, որովհետև քաղաքային բնակչության մի զգալի մասը աշխատում է գյուղատնտեսության մեջ:

Տնտեսությունը: Տարածաշրջանի տնտեսության մեջ զգալի է ինտեգրացման երևույթը: Կորեայի համրապետության ընկերությունները մեծ ծավալի ներդրումներ են կատարում Չինաստանում՝ օգտվելով այս երկրի ընդարձակ ներքին շուկայից և էժան աշխատուժից: Միայն ճապոնական մեքենաշինական ընկերությունների արտահանության ծավալի 1/5-ը բաժին է ընկնում Չինաստանին:

Կորեական մոտ 5000 ընկերությունների ներդրումները Չինաստանում հասնում են 20 մլրդ դոլարի: 2004 թ. Կորեայի կողմից Չինաստանում կառուցված մետալուրգիական կոմբինատը տարեկան արտադրում է 29 մլն տ պողպատ է, իսկ 2014 թ. այդ հզորությունը կհասնի 42 մլն տ: Այս ձեռնարկությունը աշխարհում ամենակատարյալն է իր տեխնոլոգիաներով և շրջակա միջավայրը մաքուր պահելու կարողությամբ:

Ըստ պայմանագրի 2008 թ. Կորեական Հունդա (Hyunda motor) և Կիա (Kia motors) ընկերությունները Չինաստանում համատեղ կարտադրեն 1 մլն ավտոմեքենա: Կորեական SK Corp քիմիական ընկերությունը Չինական SK Corp, China Petroleum Chemical և Cor ընկերությունների հետ համատեղ 2010 թ. կարտադրեն և Չինական շուկա կարտահանեն 4.5 մլրդ դոլարի ապրանք:

Կորեայի Հանրապետությունը Չինաստանում ստեղծում է գիտահետազոտական խոշոր կենտրոններ՝ օգտագործելով չին գիտնականների ներուժը:

Կորեան ձգտում է Չինաստանի վրա ազդել նաև հոգևոր, հոգեբանական միջոցներով՝ առողջ մթնոլորտ ստեղծելով գիտության, մշակույթի զարգացման, տնտեսավարման բարելավման ուղղությամբ: Չինաստանում աստիճանաբար ավելի է տարածվում կորեական ապրելաձևը. ամեն ինչ հստակ ու ճիշտ կատարելը, աշխատանքը նպատակային ձևով կազմակերպելը: Ինտեգրման բարձր աստիճանի շնորհիվ արագ թափով զարգանում է Արևելյան Ասիայի երկրների տնտեսությունը, աճում է համախառն ներքին արդյունքը:

Համախառն ներքին արդյունքով առաջին տեղում Չինաստանն է՝ 8.8 տրիլիոն դոլար: Մեկ շնչի հաշվով ներքին համախառն արդյունքը ճապոնիայում ամենաբարձրն է՝ 33100 դոլար է, Հարավային Կորեայում 1700 դոլար (Մանրամասն տե՛ս աղյուսակ 30):

**Արևելյան Ասիայի պետությունների համախառն
ներքին արդյունքը (2006թ.)**

Պետություն	ՀՆԱ մլրդ դոլար	ՀՆԱ մեկ շնչի հաշ. դոլար	ՀՆԱ ըստ տնտեսության ոլորտների %		
			Արդյու- նաբեր.	գյուղատնտ.	Ոչ ար- տադր. ոլորտ
1. Կորեայի ժողովրդադե- մոկրատական Հանրա- պետություն (ԿԺԴՀ)	40	1800	34	30	36
2. Կորեայի Հանրապե- տություն	1180	24200	40.7	3.3	56
3. Ճապոնիա	4664	31500	25.8	1.7	72.5
4. Սոնգոլիա	5.2	1900	21.4	20.6	58
5. Չինաստան	8830	6700	48.1	11.9	40
6. Տայվան	631,2	27600	25.2	1.5	73.3

Պետական պատշաճ՝ վերահսկողության, բնակչության աշխա-
տանքային բարձր մշակույթի, մարդ-մարդ, մարդ-հասարակություն,
մարդ-հասարակություն-բնություն ներդաշնակության շնորհիվ տա-
րածաշրջանում ավելի հեշտությամբ են լուծվում սոցիալ-տնտեսա-
կան բազմաթիվ խնդիրներ, որոնք իրենց հերթին ապահովում են
տնտեսական արագ աճ: 2006 թ. ՀՆԱ-ի ամենից մեծ աճ է եղել Սոն-
դոլիայում, Չինաստանում՝ 10 %, Ճապոնիայում՝ 2.7 %:

Տնտեսության զարգացման կարևորագույն գործոններից մեկը
մոտ մեկ միլիարդի հասնող աշխատուժի առկայությունն է: Միայն
Չինաստանի աշխատուժը կազմում է 798 մլն, (Սանրամասն տե՛ս
աղյուսակ 31):

Տարածաշրջանի երկրների տնտեսության մեջ ավելի արագ ա-
ճում է *արդյունաբերությունը*: 2006 թ. Չինաստանի արդյունաբերու-
թյան աճը կազմել է 22.9 %, որը պայմանավորված է այս ոլորտում
կապիտալ մեծ ներդրումներով:

Տարածաշրջանի տնտեսության գլխավոր բնագավառը *արդյու-
նաբերությունն է*, որը տալիս է Չինաստանի ՀՆԱ-ի 48.1 %-ը, Կորեա-
յի Հանրապետության 40.7 %-ը, ԿԺԴՀ-ի՝ 34 %-ը, Ճապոնիայի՝ 25.8,
Սոնդոլիայի՝ 25,8 %-ը: Արդյունաբերության ոլորտում են աշխատում
աշխատուժի 27.8 %-ը: Չինաստանում 24%-ը, Կորեայի Հանրապե-
տությունում 19 %-ը (Սանրամասն տե՛ս աղյուսակ 31):

Արևելյան Ասիայի երկրների աշխատուժը (2006 թ.)

Պետություն	Աշխատուժը մլն մարդ	Զբաղվածությունը ըստ ոլորտների %		
		արդյունաբեր.	գյուղատնտես.	Ոչ արտադր. ոլորտ
1. Կորեայի ժողովրդադեմոկրատական Հանրապետություն (ԿԺԴՀ)	96.0	64.0	36.0	-
2. Կորեայի Հանրապետություն	22.9	19.0	8.0	73.0
3. Ճապոնիա	66.4	27.8	4.6	67.7
4. Մոնղոլիա	1.5	24.0	42.0	34.0
5. Չինաստան	798.0	24.	45.0	31.0
6. Տայվան	10.6	35.8	6.0	58.2

Տարածաշրջանում զարգացած են արդյունաբերության բոլոր ճյուղերը: Ավանդական ճյուղը *լեռնահանքայինն* է: Առաջատար երկիրը Չինաստանն է: Վերջինս հայտնի է քարածխի, նավթի, բնական գազի, երկաթաքարի, անագի արդյունահանմամբ: Ածխի, երկաթաքարի, պնդծի հանույթը զարգացած է նաև Մոնղոլիայում և ԿԺԴՀ-ում: Տարածաշրջանի երկու երկիր՝ Չինաստանը և Մոնղոլիան, մասամբ նաև ԿԺԴՀ-ը ապահովված են հանքային հումքով, մնացած երկրները, հատկապես Ճապոնիան, հումք ներկրողներ են:

Չինաստանում օրական արդյունահանվում է 3.6 մլն բարել նավթ, որը չի բավարարում նրա պահանջները: Մնացած երկրներում նավթի հանույթը գրեթե բացակայում է:

Տարածաշրջանում *էլեկտրաէներգիայի արտադրության* առաջատար երկիրը Չինաստանն է՝ 2.5 տրիլիոն կվտ ժամ, երկրորդ տեղում Ճապոնիան՝ շուրջ 1.0 տրիլիոն կվտ (Մանրամասն տե՛ս աղյուսակ 32):

Սև մետաղածույությունը զարգացած է Չինաստանում, Ճապոնիայում, Կորեայի Հանրապետությունում: Չինաստանը տարածաշրջանի մյուս երկրներին գերազանցում է սև մետաղների արտադրության քանակով, Ճապոնիան և Կորեայի Հանրապետությունը՝ որակով: Ընդ որում պողպատի անընդմեջ ստացման միջոցով աստիճանաբար մեծացնում է բարձրորակ պողպատի արտադրության ծավալը:

Էլեկտրաէներգիայի արտադրությունը Արևելյան Ասիայի
երկրներում (2005 թ.)

Պետություն	Էլեկտրաէներգիա մլրդկվտ ժամ	ԶԷԿ %	ԶրԷԿ %	ԱԷԿ %
1. Կորեայի Ժողովրդադեմոկրատական Հանրապետություն (ԿԺԴՀ)	21.7	29	71	0
2. Կորեայի հանրապետություն	345.0	62.4	0.8	36.6
3. Ճապոնիա	974.4	60	8.4	29.8
4. Սոնղոլիա	3.24	100	0	0
5. Չինաստան	2500	80.2	18.5	1.2
6. Տայվան	189.7	71.4	6	22.6

Տարածաշրջանը հայտնի է բազմաճյուղ *մեքենաշինությամբ*։ Զարգացած են հատկապես տրանսպորտային, էլեկտրատեխնիկական մեքենաշինությունը։ Ինչպես արդյունաբերության մյուս, այնպես էլ այս ճյուղերում մեծ են ճապոնական ներդրումները։ Ճապոնական պահեստամասերով պատրաստի արտադրանք թողարկող գլխավոր երկիրը Չինաստանն է։ Դրան զուգահեռ՝ աստիճանաբար Չինաստան են տեղափոխվում տեխնոլոգիական և արտադրական կարողություններ, որի հետևանքով որոշ ապրանքների արտահանության գծով ճապոնիայի դերը աստիճանաբար նվազում է, փոխարենը ավելանում է Չինաստանի դերը։ Այսպես, հեռակապի սարքավորումների արտահանմամբ Չինաստանն առաջ է անցել ճապոնիայից։ Մեծ է նաև Չինաստանի դերը էլեկտրոնային սարքավորումների, գրասենյակային իրերի, վերամշակող մեքենաների արտահանության գծով։

Սիջազգային շուկայում մեծ պահանջարկ ունեն ճապոնական և կորեական ավտոմեքենաները, նավերը, էլեկտրոնային հաշվիչ մեքենաները, հեռակապի ու բժշկական սարքավորումները, կենցաղային և ինքնակառավարվող սարքերը։

Քիմիական արդյունաբերության ձեռնարկությունները արտադրում են հանքային պարարտանյութեր, թթուներ, ռետինատեխնիկական իրեր, պլաստմասսաներ, լաքեր, ներկեր, դեղորայք։ Զարգացման բարձր մակարդակի վրա է նավթաքիմիան, որը հիմնականում աշխատում է ներմուծվող հումքով։ Դեղորայքի արտադրության գլխավոր երկիրը Չինաստանն է։ Օրգանական քիմիայի առաջատարներն են Չինաստանը և ճապոնիան։ Քիմիական արդյունաբե-

րության ձեռնարկությունները մեծ մասամբ տեղաբաշխված են ծովափնյա շրջաններում՝ կապված հունքի ներկրման հետ:

Տարածաշրջանը հայտնի է տեքստիլ ապրանքների՝ բամբակյա և մետաքսե գործվածքների արտադրությամբ: Ձարգացած է կաշվի-կոշիկի, կարի արտադրությունը:

Գյուղատնտեսությունը տալիս է ճապոնիայի համախառն ներքին արդյունքի 1.7 %-ը, Մոնղոլիայի՝ 20.6%-ը, Չինաստանի՝ 11.9 %-ը: Այս ոլորտում զբաղված է Չինաստանի աշխատուժի 45 %-ը, Մոնղոլիայի՝ 42 %-ը, ԿժԴՀ-ի՝ 36 %-ը:

Գյուղատնտեսության գլխավոր նպատակը ներքին կարիքների բավարարումն է: Գյուղատնտեսական որոշ ապրանքներ՝ թեյը, միսը, ցորենը, բուրդը, բամբակը, ունեն նաև արտահանման նշանակություն:

Գյուղատնտեսության զարգացման համար հիմք են հանդիսանում ընդարձակ հողատարածքները, արևոտ օրերը, տարվա խոնավ սեզոնին՝ մուսսոնային առատ տեղումները: Չոր սեզոնին կայուն բերք ստանալու համար կատարվում է արհեստական ոռոգում: Հագարամյակների ընթացքում այստեղ ստեղծվել է ոռոգման հզոր համակարգ, որի շնորհիվ ոռոգովի հողատարածքները կազմում են 59.9 մլն հա, որի 91.1 %-ը բաժին է ընկնում Չինաստանին:

Գյուղատնտեսության գլխավոր ճյուղը բուսաբուծությունն է, միայն Մոնղոլիայում՝ անասնապահությունը:

Տարածաշրջանը հայտնի է իր հերկվածության աստիճանով: Վարելահողերը զրավում են Չինաստանի տարածքի 14.8 %-ը, ԿժԴՀ-ի՝ 22.4 %-ը, Կորեայի Հանրապետության՝ 17.2%-ը, ճապոնիայի՝ 11.6 %-ը: Մոնղոլիայի տարածքի ընդամենը 0.8 %-ն է հերկվում:

Հագարամյակներ շարունակ ընտրության միջոցով հասել են բարձր բերքատու բույսերի մշակության: Ամենատարածված մշակաբույսը բրինձն է, որը բնակչության սննդի հիմնական միջոցն է: Բրինձ մշակում են բոլոր երկրներում: Տարածաշրջանի հյուսիսային շրջաններում տարեկան ստանում են մեկ, հարավային շրջաններում երկու, հաճախ նաև երեք բերք: Բրնձի դաշտերը օգտագործվում են նաև ձկնաբուծության համար:

Հացահատիկային երկրորդ մշակաբույսը եգիպտացորենն է, որը ամենից շատ տարածված է Չինաստանում: Այստեղ մշակում են նաև գառլան, սոյա, թեյ, բամբակ, շաքարեղեգն: Ընդարձակ տարածություն են զրավում թթաստանները, բալենու, խնձորենու ցիտրուսների այգիները:

Անասնապահությունը առավել սերտորեն կապված է բնակչության ավանդույթների, սովորույթների, տարածաշրջանի բնակլիմայական պայմանների հետ:

Սոնդոլիայի ընդարձակ արոտավայրերում զարգացած է ոչխարաբուծությունը, ծիաբուծությունը, Չինաստանում՝ խոզաբուծությունը: Տավար են բուծում բոլոր երկրներում: Այն ավելի մեծամալու միտում ունի, որովհետև եվրոպական բարքերի թափանցման մեծացմանը զուգահեռ մեծանում է մսի օգտագործումը:

Տարածաշրջանը հայտնի է նաև ծովային մթերքների հայթայթմամբ և օգտագործմամբ: Մեծ չափերի է հասնում ձկնորսությունը առափնյա ջրերում, զգալի քանակությամբ ձուկ է ստացվում բրնձի դաշտերից:

Տրանսպորտը: Տարածաշրջանում գլխավոր դերը պատկանում է ավտոմոբիլային տրանսպորտին: Մեծ տեղ ունի նաև երկաթուղային և ծովային տրանսպորտը:

Ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը 3,18 մլն կմ է, որի 57.5 %-ը բաժին է ընկնում Չինաստանին, երկրորդ տեղում (36.4 %) ճապոնիան է: Ավտոմոբիլային տրանսպորտը ամենից արագ զարգացողն է: Ընդարձակվում են ավտոճանապարհները, մեծանում է ավտոպարկը, ավտոճանապարհային շինարարությունը:

Երկաթուղիների երկարությամբ առաջին տեղում Չինաստանն է: (Մանրամասն տե՛ս աղյուսակ 33): ճապոնիայի, Հարավային Կորեայի և Տայվանի երկաթուղային տրանսպորտը գտնվում է տեխնիկական բարձր մակարդակի վրա, և բեռնաման ու բեռնաթափման աշխատանքները լրիվ մեքենայացված են: Չինաստանի, ԿԺԴ-ի և Սոնդոլիայի երկաթուղային տրանսպորտը տեխնիկական առումով թույլ է զարգացած, ցածր է գնացքների բեռնակարողությունը, փոքր է արագությունը:

Աղյուսակ 33

Արևելյան Ասիայի երկրների տրանսպորտային ցանցի երկարությունը

Պետություն	Երկաթուղիներ (կմ)	Ավտոճանապարհներ (կմ)	Ներքին ջրային ուղիներ (կմ)
1. ԿԺԴ	5214	31200	2250
2. Կորեայի Հանրապետություն	3472	8666	2250
3. Ճապոնիա	23556	1183000	1170
4. Սոնդոլիա	1810	49250	580
5. Չինաստան	74408	1870661	123964
6. Տայվան	2497	37299	-

Գնացքների ժամանակակից և ամենաարագ շարժակազմեր ունի ճապոնիան: Ծովային տրանսպորտը մեծ դեր է կատարում այդ երկրների առափնյա ու միջազգային բեռնափոխադրումների գործում:

Զինաստանն ունի 1000 տ և ավելի մեծ բեռնատարողությամբ 1723 նավ, Զոնկոնգը՝ 663, Տայվանը՝ 123, ճապոնիան՝ 683. Զարավային Կորեան՝ 601, Սոնդոլիան՝ 53: Սոնդոլական նավերը գրանցված են Ռուսաստանի, Զինաստանի և այլ երկրների նավահանգիստներում:

Տարածաշրջանի խոշորագույն նավագանգիստներն են՝ Մուրորանը, Գուանչժոուն, Վոնսանը, Պուսանը, Զոնկոնգը, Շանհայը, Կոբեն:

Արտաքին տնտեսական կապերը: Արտաքին առևտուրը կարևոր դեր է կատարում տարածաշրջանի պետությունների տնտեսության մեջ: Արտահանման և ներմուծման ծավալներով առաջին տեղում է Զինաստանը: Նրա արտահանման ծավալները հասնում են 974 մլրդ դոլարի, ներմուծմանը՝ 777.9 մլրդ դոլարի: Դրական հաշվեկշիռ ունեն նաև Զարավային Կորեան, ճապոնիան, Տայվանը: Սոնդոլիայի և ԿԺԴՀ-ի արտաքին առևտրական հաշվեկշիռը բացասական է (Տե՛ս աղյուսակ 34):

Աղյուսակ 34

Արևելյան Ասիայի երկրների արտահանումը, ներմուծումը, արտաքին պարտքը (մլրդ դոլար) 2005թ.

Պետություն	Արտահանում	Ներմուծում	Արտաքին պարտք
1. ԿԺԴՀ	1.4	2.6	12
2. Կորեայի Զանրապետություն	327.9	300.4	229.3
3. ճապոնիա	550.5	451.1	1547
4. Սոնդոլիա	0.85	1.0	1.36
5. Զինաստան	974	777.9	305.6
6. Տայվան	189,4	181,6	87,5

Տարածաշրջանի երկրները գլխավորապես ներմուծում են նավթ և նավթամթերք, հանքային հումք, մեքենաներ ու սարքավորումներ: Արտահանում են (բացի ԿԺԴՀ-ից) էլեկտրոնային սարքավորումներ, քիմիական և թեթև արդյունաբերության ապրանքներ:

Ինքնաստուգման հարցեր

1. Որո՞նք են Արևելյան Ասիայի տնտեսավարման ձևերը, դրանց առանձնահատկությունները:
2. Բացատրե՛ք կրոնի և հասարակական կյանքի կազմակերպման միջև եղած կապը:
3. Որո՞նք են արդյունաբերության առաջատար ճյուղերը, նկարագրե՛ք գիտատար ճյուղերի զարգացման միտումները:
4. Որո՞նք են գյուղատնտեսության զարգացման գործոնները, առաջատար ճյուղերը:
5. Որո՞նք են ուրբանիզացման առանձնահատկությունները:
6. Ի՞նչ տեղ ունի տարածաշրջանը աշխատանքի միջազգային աշխարհագրական բաժանման մեջ:

ՉԻՆԱՍՏԱՆ

(Չինաստանի ժողովրդական հանրապետություն)

Տարածքը՝ 9,6 մլն. քկմ

Բնակչությունը՝ 1314 մլն մարդ

Մայրաքաղաքը՝ Պեկին (Բեյջին)

Չինաստանը համաշխարհային քաղաքակրթության հնագույն օջախներից է: Դեռևս հազարամյակներ առաջ այստեղ զբաղվել են դաշտավարությամբ, մշակելի են դարձրել միլիոնավոր հեկտար հող, կառուցել ողջգման համակարգեր:

Չինացիները մարդկությանը տվել են վառոդի, կոռմնացույցի, բոքի, սեյսմոգրաֆի, հրթիռի գյուտը: Դեռևս հին աշխարհում մեծ հռչակ ունեին չինական մետաքսը, ճենապակյա պարանքները: Դյուսիսի վայրի ցեղերից պաշտպանվելու համար շուրջ երկու հազար տարի առաջ սկսվեց և դարեր շարունակ կառուցվեց Չինական Մեծ պարիսպը, որի պահպանված մասերն այսօր էլ հիացմունք են պատճառում ճարտարապետական կատարելությամբ, պաշտպանական լավագույն լուծումներով և ընդհանուր վեհությամբ:

Այսօր էլ Չինաստանն աշխարհի առաջատարների շարքում է տնտեսության զարգացման չափերով: Համախառն ներքին արդյունքի տարեկան աճը 10,5% է: Եվ կարևորն այն է, որ այդ աճը հետևանք է գիտատար ճյուղերի, բարձր տեխնոլոգիաների ներդրման: Հայրենական և այլ երկրների կապիտալի շնորհիվ կառուցում են նոր, կատարյալ ձեռնարկություններ, ստեղծվում են մեծաթիվ աշխատատեղեր, բարձրանում է ժողովրդի կենսամակարդակը: Մեկ շնչին ընկնող համախառն ներքին արդյունքը 6700 դոլար է:

Սահմանները: Չինաստանի սահմանների երկարությունը 36617 կմ է, որից 22117 կմ ցամաքային է,



Նկ.26. Չինական Մեծ պարիսպը

14500 կմ՝ ծովային: Ամենաերկար սահմանը Մոնղոլիայի հետ է՝ 4677 կմ: Ռուսաստանի հետ սահմանների երկարությունը 3645 կմ է: Հնդկաստանի հետ՝ 3308 կմ: Սահմանակից է նաև Աֆղանստանի, Բուրանի, Սյաննայի, Ղազախստանի, ԿԺԴ-ի, Ղրղզստանի, Լաոսի, Նեպալի, Պակիստանի, Տաջիկստանի, Վիետնամի հետ:

Զինաստանի ներկայիս սահմանները վերջնականապես ձևավորվել են 1997թ.: Դեռևս 1898թ. Չինաստանը 99 տարով Մեծ Բրիտանիային վարձակալության տվեց Սյանգանը (Հոնկոնգը): Ժամկետը լրանալուց հետո այն վերադարձվեց Չինաստանին: Առմինը 1557թ.-ից պատկանում էր Պորտուգալիային: 1999թ. այն ևս վերադարձվեց Չինաստանին: Չինաստանի համար չլուծված է մնում Տայվանի հարցը:

Պետական կարգը: Իշխանության բարձրագույն մարմինը ժողովրդական ներկայացուցիչների համաչինական ժողովն է, որի պատգամավորներն ընտրվում են 5 տարի ժամկետով: Նա ընտրում է երկրի նախագահին, հաստատում է ԶԺՀ Պետական խորհրդի (կառավարման բարձրագույն մարմնի) անդամներին և վարչապետին:

Ղեկավարող կուսակցությունը Չինաստանի կոմկուսն է: Վարչականորեն երկիրը բաժանվում է 23 մարզերի, 5 ինքնավար մարզերի:

Պատմությունը: Դեռևս Քրիստոսից չորս հազար տարի առաջ Հուանհե գետի հովտում գրադվել են բրնձի մշակությամբ: Առաջին հազարամյակում այստեղ սկսվում է հողի մշակումը երկաթե գործիքներով: Բ.ա. առաջին հազարամյակի վերջում ավելի արագ է կատարվում Չինաստանի տարբեր ժողովուրդների միաձուլման գործընթացը: Այդ գործում մեծ դեր է կատարում Կոնֆուցիոս Կուն Ցզիի (Բ.ա. մոտ 551-479) փիլիսոփայությունը, որի հիմքի վրա ձևավորվել է կոնֆուցիականության բարոյաքաղաքական ուսմունքը: Կոնֆուցիականությունը իր ժամանակի զարգացումներով հանդերձ շարունակում է մնալ որպես ազգը միավորող, հասարակական հարաբերությունները կարգավորող, հասարակության յուրաքանչյուր անդամի պարտականությունները սահմանող, կրոնի մակարդակի հասնող պաշտամունք:

Հազարամյակներ շարունակ չինացիները պայքարել են արտաքին թշնամիների՝ մոնղոլների, մանջուլների, ճապոնացիների դեմ: Խորն են եղել ներքին երկպառակությունները կենտրոնամետ և կենտրոնախույս տարբեր իշխանությունների միջև ընդհուպ մինչև 1949թ., երբ պարտվեց չանկայշիական վարչակարգը, և ստեղծվեց

միասնական պետություն՝ Չինաստանի ժողովրդական Հանրապետությունը: Տայվան կղզում չանկայշիականները ստեղծեցին դրան զուգահեռ չինական նոր պետություն՝ կղզու անունով:

Համայնավարական Մաո Ցզեդունի կառավարման տարիներին Չինաստանի տնտեսությունն ամբողջությամբ քայքայվեց: 1966թ. «Պրոլետարական մեծ հեղափոխության» ընթացքում զոհ գնացին միլիոնավոր պետական, քաղաքական գործիչներ, մտավորականներ: Այս և հետագա քաղաքական երևույթները երկիրը հասցրին կործանման եզրին: 1978թ.-ին Չինաստանում սկսվեցին տնտեսական բարեփոխումները, և երկիրը սկսեց աստիճանաբար վերափոխել տնտեսական հարաբերությունները, կարգավորել տնտեսությունը, ստեղծել նորը:

Բնական պայմանները և ռեսուրսները: Երկրի մակերևույթի 80%-ը ծածկված է լեռներով: Արևմտյան սահմանների երկայնքով ձգվում են Հինդիկուշի, Պամիրի, Կարակորումի, Հիմալայան ավելի քան 7000 մ բարձրությամբ լեռները: Հյուսիսում Տյան-Շանի և Մեծ Խինգանի լեռներն են: Երկրի տարածքի 1/5-րդը գրավում է Տիբեթի լեռնաշխարհը: Նրա միջին բարձրությունը ծովի մակարդակից 4000 մ է, առանձին տեղերում հասնում է 7000մ-ի:

Հարթավայրերը տարածվում են երկրի արևելյան մասում: Ամենից ընդարձակը Չինական Մեծ հարթավայրն է:

Չինաստանի ընդերքը հարուստ է քարածխի, երկաթաքարի, մանգանի, բոքսիտների, վանադիումի, կապարի, ցինկի, ուրանի պաշարներով: Հայտնաբերված են նաև նավթի և բնական գազի ռեսուրսներ: Քարածխի պաշարները գնահատվում են 1,5 տրիլիոն տոննա, որի խոշոր ավազաններ են Շանսին, Շենսին, Կայլուան, Ֆուսինը, Ֆուշունը: Այս ավազաններում ածխի շերտերը մոտ են երկրի մակերևույթին: Նավթի պաշարները գնահատվում են 2,6 մլրդ տ., բնական գազինը՝ 2,3 տրիլիոն մ³: Նավթագազաբեր հանքավայրերը գտնվում են Դեղին և Հարավ չինական ծովերի հատակում: Նավթի զգալի պաշարներ կան երկրի հյուսիս-արևմուտքում՝ հայտնաբերված Զունցինից հյուսիս:

Շահավետ է, որ երկաթաքարի խոշոր պաշարներով հարուստ հանքավայրերը գտնվում են ածխի ավազաններին մոտ: Երկաթի զգալի պաշարներ են հայտնաբերված Ցզյանսու մարզում, Նեյբին Սոնդոլիայում՝ Բաուտոյից հյուսիս, վոլֆրամ՝ Հունանի, Ցզյանսիի մարզերում:

Կլիման: Չինաստանի կլիման բազմաբնույթ է: Հյուսիսից հա-
րավ առանձնանում են բարեխառն, մերձարևադարձային և արևա-
դարձային կլիմայական գոտիները: Բարեխառն գոտու հյուսիսում
ձմռանը լինում են ուժեղ սառնամանիքներ: Մանջուրիայում հուն-
վարյան ջերմաստիճանը -18°C է: Մոնղոլիայի սահմանամերձ շրջան-
ներում նույնպես լինում են ուժեղ սառնամանիքներ: Տիբեթում հու-
լիսյան ջերմաստիճանը չի բարձրանում 15°C -ից:

Մերձարևադարձային կլիմայական գոտին տարածվում է երկրի
հարավ-արևելյան շրջաններում, արևադարձայինը՝ ծայր հարավում:
Այս գոտիներում ջերմաստիճանները ամբողջ տարին բարձր են,
սառնամանիքներ չեն լինում, ամռան ջերմաստիճանը $+26^{\circ}\text{C}$ է,
ձմռանը՝ $+18^{\circ}\text{C}$:

Սթնուկորտային տեղումները նույնպես շատ անհավասար են
բաշխված: Թե՛ Հնդկական և թե՛ Խաղաղ օվկիանոսներից փչող մու-
սոններն արևելյան շրջաններում բերում են մինչև 2000 մմ տեղում-
ներ: Դեպի արևմուտք ծովի ազդեցությունն աստիճանաբար թուլա-
նում է, տեղումների քանակը պակասում: Օրդոսի սարահարթում
արդեն կազմելով 250 մմ, Թարիմի հովտում՝ 100 մմ:

Այսպիսով, միայն Չինաստանի առափնյա շրջաններում, այն էլ
ամառային սեզոնին, է հնարավոր զբաղվել անջրդի հողագործու-
թյամբ, մնացած շրջաններում ոռոգման կարիք է զգացվում:

Գետերը պատկանում են Դեղին, Արևելաչինական և Հարավչի-
նական ծովերի ավազաններին: Խոշոր գետերն են Հուանհեն, Յանց-
զին և Սիցզյանը: Դրանք ունեն անձրևային սնում և ավելի ջրառատ
են դառնում ամառային մուսոնների ժամանակ: Ամենաջրառատ գե-
տը Յանցզին է: Հուանհեն նույնպես ջրառատ է, սակայն շատ
պղտոր: Այս գետի հունն անընդհատ ծածկվում է տիղմով, որի պատ-
ճառով գետի մակարդակը բարձրանում է, հաճախ կից հարթավայ-
րերից բարձր: Ջրհեղեղներից պաշտպանվելու համար Հուանհեի ա-
փերին կառուցված են արգելապատնեշներ, սակայն գետը հաճախ
քանդում է այդ պատերը և ջրածածկ անում ընդարձակ տարածքներ:
Դա սկստի ունենալով էլ Հուանհեն հաճախ անվանում են նաև Չի-
նաստանի «վիշտ»: Թարիմ գետը գտնվում է երկրի ծայր արևմուտ-
քում: Սկիզբ առնելով բարձր լեռներից՝ այն ջրառատ է, սակայն ո-
ռոգման նպատակով օգտագործվելուց և ուժեղ ներծծվելուց նրա
ջուրը աստիճանաբար պակասում է ու կորչում ավազների մեջ:

Տիրեթի լեռնաշխարհից սկսվող գետերը՝ Բրահմապուտրան, Մեկոնգը, միայն վերին հոսանքի շրջանում են անցնում Չինաստանի տարածքով: Դրանք, ինչպես նաև Չինաստանի մյուս գետերը, ունեն ջրաէներգետիկ մեծ կարողություն:

Չինաստանի խոշոր լճերից են Լոբնորը, Կուկունորը, Դալայնորը: Շատ լճեր կան կան Տիրեթում, արևելյան հարթավայրային շրջանում:

Չինաստանի հողածածկը բազմազան է՝ կապված բնակլիմայական պայմանների հետ: Արևելյան շրջանների հողերը հազարավոր տարիներ մշակվելով՝ խիստ փոփոխության են ենթարկվել: Հյուսիս-արևելքում տարածվում են բերրի գորշահողերը, հյուսիս-արևմուտքում տիրապետում են շագանակագույն հողերը, որոնց վտանգ է սպառնում աղակալումը: Աղակալման վտանգի տակ են նաև Դեղին ծովի առափնյա հողերը, որոնք հաճախ են ծածկվում ծովի ջրերով:

Չինաստանում հսկայական չափերի է հասնում հողմնահարությունը, հատկապես Օրդոսի սարահարթում և լեռնալանջերում: Լեռներում կատարվում են դարավանդաորման մեծ աշխատանքներ:

Անտառածածկ է երկրի տարածքի 7%-ը: Արևադարձային խիտ անտառները տարածվում են Սիցզյան գետից հարավ ընկած շրջաններում: Անտառները մեծ տարածություն են գրավում նաև Սանջուրիայում:

Բնակչությունը: Չինական էթնոսն աշխարում հնագույներից մեկն է: Դեռևս հազարամյակներ առաջ նա կարողացել է ստեղծել բարձր մակարդակի քաղաքակրթություն՝ գիտափիլիսոփայական, բարոյահոգեբանական գործնական նշանակություն ունեցող ստեղծագործություններ, տպագրություն, գիր ու գրականություն, ճարտարապետական հույակերտ շինություններ, ոռոգիչ հզոր համակարգեր, ռազմական նշանակության շինություններ: Չինացիները մարդկության սեփականությունն են դարձրել բազմաթիվ վայրի բույսեր:

Չինացիները հզոր են իրենց միասնությամբ, ազգային, ազգակցական խոր կապերով: Չինացին մեծ հարգանք ունի նախնիների որոշումների նկատմամբ, որի վառ վկան դարեր շարունակ ընթացող Չինական Մեծ պարսպի կառուցումն է: Չինացին անգիր գիտի իր հազարմյա տոհմածառը:


Բարձր մշակույթի շնորհիվ չինացիները կարողացել են աստիճանաբար ծուլել հարևան ժողովուրդներին և ընդարձակել իրենց էթնիկական ափսմանները: Մեծ մասամբ չինացման են ենթարկվել անգամ այստեղ եկած նվաճողները:

Երկրի բնակչության 92%-ը չինացիներ են (ինքնանվանումը՝ հաներ): Այստեղ ապրում են նաև մոնղոլներ, ուլդուրներ, տիբեթցիներ, ղազախներ, մանջուրներ, քայեր, մյաոներ:

Ամենատարածված կրոններն են կոնֆուցիականությունը, դաոսականությունը և բուդդայականությունը: Այս կրոնները լրացնում են իրար բարոյահոգեբանական, դաստիարակչական սկզբունքներով: Նույն մարդը կարող է միաժամանակ երեք կրոններն էլ ընդունել:

Կոնֆուցիականության գլխավոր հասկացությունը «ժենն» է՝ «հումանիզմը»: Ըստ այդ ուսմունքի հիմնական օրենքի՝ հասարակության յուրաքանչյուր անդամ պետք է բարոյապես ինքնակատարելագործվի, նրան պետք է բնորոշ լինի իմաստությունը և հավատարմությունն իր պարտականություններին, հասարակության մեջ յուրաքանչյուրը պետք է ունենա իր տեղը և դերը՝ թագավորը պետք է լինի թագավոր, հայրը՝ հայր, որդին՝ որդի:

Դաոսականություն հենց նշանակում է բարոյականություն՝ ճանապարհի դեպի բարոյական ինքնակատարելագործում, վարքի ամրապնդում: Ըստ դաոսականության մարդու ճակատագիրը կախված է իրենից և մարդը կարող է ստեղծել մեծ ճանապարհ, սակայն ճանապարհը չի կարող մարդուն մեծ դարձնել: Դաոսականությունը քարոզում է, որ մարդը պետք է վեր կանգնի անձնականից, առաջին հերթին հաշվի առնի հասարակության շահերը, և հասարակությունն էլ ունեցածը հավասար բաշխի իր բոլոր անդամներին:



Նկ.27. Չինաստան, Զանգակատուն

Բուրդայականության լամայական աղանդը տարածված է տիբեթցիների, մոնղոլների, խաների մոտ:

Չինաստանում տարածված է նաև մահմեդականությունը՝ ուլուրների, դազախների, ղրղզների մեջ:

Բնակչության բնական աճը 6,28% է, ծնելիությունը՝ 13,25%, մահացությունը՝ 6,97%: Մինչև անցյալ դարի 70-ական թվականները բնակչության բնական աճը շատ քարծր էր: Այն իջեցնելու համար մշակվեցին ժողովրդագրական հատուկ ծրագրեր. երկրում սկսվեց կիրառվել հետևյալ կարգախոսը, «Մեկ երեխա, մեկ ընտանիք, երջանիկ ընտանիք»: Մեկ երեխա ունեցող ընտանիքն առաջին հերթին է բնակարան ստանում, ԲՈՒՀ ընդունվելիս առաջնությունը տրվում է մինուճար երիտասարդին կամ աղջկան, մինուճարը տեղավորվում է անվճար մանկապարտեզ: Երկրորդ երեխան ունեցող ընտանիքը զրկվում է ամենամյա օգնությունից, միաժամանակ վճարում է մեծ չափի տուգանք:

Ժողովրդագրական քաղաքականությունը Չինաստանում լավ արդյունք է տվել՝ խիստ նվազեցնելով բնական աճը:

Կյանքի միջին տևողությունը 72,58 տարի է, տղամարդիկ՝ 70,89, կանայք՝ 74,46 տարի: Բնակչության տարիքային կազմում 1-14 տարեկան երեխաների տեսակարար կշիռը 20,8% է (274 մլն - մարդ), 15-64 տարեկան են բնակչության 71,4% (938 մլն մարդ):

Ուրբանիզացման մակարդակը ցածր է, մոտ 36%: Չինական քաղաքներին բնորոշ է բուն քաղաքն իր շրջակա գյուղական բնակավայրերով, որոնք արհեստականորեն մտցված են քաղաքի տարածքի մեջ: Ստացվում է, որ քաղաքի բնակչության զգալի մասը զբաղվում է գյուղատնտեսությամբ: Օրինակ, Շանդունի մարզում քաղաքային բնակչության 85-90%-ը աշխատում է գյուղատնտեսության ոլորտում:

Միլիոնից ավելի բնակչություն ունեն ավելի քան քառասուն քաղաքներ՝ Շանհայը, Բեյջինը, Տյանցզինը, Չունցինը, Շենյանը, Ուխանը և այլն:

Բնակչության միջին խտությունը 137 մարդ է 1 քկմ-ում: Ընդ որում բնակչությունը շատ անհավասար է տեղաբաշխված: Այսպես, Չինական Մեծ հարթավայրում խտությունը 500-700 մարդ է քկմ-ում, Տիբեթում ընդամենը՝ 1,5 մարդ: Շատ նոսր են բնակեցված նաև երկրի ծայր արևմտյան շրջանները, հատկապես Տակլան-Մակլան անապատը:

Զինաստանին բնորոշ է արտագաղթը: Զինական սփյուռքն անցնում է 30 մլն-ից: Զինացիները մեծ թիվ են կազմում Սինգապուրում՝ բնակչության 77%-ը, Մալայզիայում՝ 27%-ը, Ինդոնեզիայում, Դարավարենյան Ասիայի մյուս երկրներում, ԱՄՆ-ում: Վերջին տարիներին մեծացել է չինացիների արտագաղթը դեպի ԱՊՀ երկրներ, հատկապես՝ Ռուսաստանի Դաշնություն:

Տնտեսությունը: Զինաստանը համախառն ներքին արդյունքով աշխարհի երկրորդ հզոր պետությունն է ԱՄՆ-ից հետո (8.83 տրիլիոն դոլար): Նա առաջատարների շարքում է տնտեսության աճի տեմպերով՝ մոտ 10%: Այդ ամենը պայմանավորված է աշխատուժի մեծ չափերով՝ 798 մլն մարդ (առաջին տեղում աշխարհում), ընդարձակ ներքին շուկայով, հսկայական կապիտալ ներդրումներով:

Զինաստանի տնտեսությանը բնորոշ է բարձր տեխնոլոգիաների ավելի ու ավելի մեծ չափերով կիրառումը, հատկապես հեռակապի, նոր նյութերի արտադրության, կենսատեխնոլոգիաների ծրագրային ապահովման բնագավառներում: Աշխարհի լավագույներից մեկն է Բեյջինի մոտակայքում գտնվող Զինական սիլիկոնային հովիտը: Այն իր մեջ ընդգրկում է մի քանի համալսարաններ, գիտահետազոտական կենտրոններ: Գիտական կարողությունների ստեղծմանը օգնում են արտասահմանյան երկրների առաջատար համալսարաններում, գիտահետազոտական կենտրոններում աշխատող չին գիտնականները: Պետությունը արտասահմանյան առաջատար ԲՈՒՀ-եր է գործուղում տաղանդավոր երիտասարդներին, որոնք ավարտելուց հետո վերադառնում են հայրենիք՝ իրենց գիտելիքները ներդնելու ի շահ երկրի բարգավաճման: «Բաց ժողովրդի» քաղաքականության շնորհիվ արևելյան շրջանների հարյուրավոր քաղաքներ ազատ են արտասահմանյան կապիտալի ներդրման համար: Երկրում լայնորեն կիրառվում է փոքր վնասով աշխատող ձեռնարկությունները կոլեկտիվի սեփականություն դարձնելու փորձը: Աշխատողների ցանկությանը կարող են կոլեկտիվի սեփականություն դառնալ խոշոր ձեռնարկությունները, և նրանք են որոշում՝ ի՞նչ և որքա՞ն արտադրել, ինչպե՞ս և որտե՞ղ իրացնել արտադրանքը:

Արդյունաբերությանը բաժին է ընկնում համախառն ներքին արդյունքի 48,1%-ը, զբաղված աշխատուժի 24%-ը:

Արդյունաբերության մեջ մեծ ծավալների են հասնում գիտահետազոտական աշխատանքները, բարձր տեխնոլոգիաների ներդրումները: աշխատողների կրթական մակարդակը, արագ թափով վերակառուցվում են ենթակառուցվածքները:

Արդյունաբերության առաջատար ճյուղերն են ածխագործությունը, էներգետիկան, մետաղաձուլությունը, քիմիական, էլեկտրոնային, օդագնացության և տիեզերական սարքերի արտադրությունը:

Երկրում կարևոր դեր է կատարում ածխաբոլորությունը: Այս ճյուղում կան և՛ գերխոշոր ածխահանքեր, և՛ բազմաթիվ փոքր, անգամ ընտանեկան ձեռնարկություններ: Ածխի հանույթով՝ շուրջ 2,1 մլրդ տոննա, Հինաստանն աշխարհում գրավում է առաջին տեղը: Ածխարդյունաբերության խոշոր կենտրոններն են Ֆուշունը, Ֆուսինը, Ցզիսինը, Դատունը, Կունմինը:

Նավթի տարեկան հանույթը կազմում է 210,7 մլն տ, ներմուծումը՝ 185 մլն տ: Նավթ արդյունահանվում է Հանսուի, Սինցզյանի, Շենսիի, Ցինհայի, Սիչուանի և այլ մարզերում, Դեղին ծովի շելֆում: Նավթավերամշակման գլխավոր կենտրոններն են Լանչժոուն, Յույմինը: Դրանց համար բազա է հանդիսանում տեղական և ներմուծվող նավթը: Հինաստանն աստիճանաբար դառնում է նավթ ներկրող խոշոր երկիր:

Բնական գազի հանույթը 53 մլրդ խմ է, որը չի բավարարում երկրի աճող պահանջները: Հեռանկարում նորակառույց գազամուղով Հինաստանը գազ կստանա Ռուսաստանից:

Էլեկտրաէներգիայի տարեկան արտադրությունը 2,5 տրիլիոն կվտ ժամ է: Էլեկտրաէներգիայի 80,2 %-ը տալիս են ջերմաէլեկտրակայանները, որոնք հիմնականում աշխատում են ածխի բազայի վրա, 18,5%-ը բաժին է ընկնում ջրաէլեկտրակայաններին, 1,3 %-ը՝ ատոմային կայաններին: Խոշոր ջերմաէլեկտրակայաններ կան Շանհայում, Բեյջինում, Ուխանում, Ֆուսինում, Ֆուշունում: Ամենահզորը Յանցզի գետի վրա կառուցված «Երեք կիրճերի» էլեկտրակայանն է: Նույն գետի համակարգում է գտնվում Դանցյանկոուի էլեկտրակայանը: Ջրաէլեկտրակայաններ կան նաև Սունգարի, Յալուցյան, Հուանհե գետերի վրա:

Սև մետաղաձուլություն: Պողպատի տարեկան արտադրությունը 489 մլն. տ.է, որը չի բավարարում սեփական պահանջը, ուստի Հինաստանը բարձրակ պողպատ է ներմուծում Ճապոնիայից: Խնդրի լուծման համար Կորեայի Հանրապետության ընկերությունների հետ համատեղ կառուցում են բարձր տեխնոլոգիաներով հագեցած նոր մետաղաձուլական ձեռնարկություններ:

Սև մետաղաձուլությունը զարգացած է Անշանում, Ֆուշունում, Տայյուանում, Շանհայում, Չունցինում: Միայն պողպատաձուլության 208

աճը բավական է ցույց տալու այն հսկայական առաջընթացը, որը ապրում է Հիմաստանի տնտեսությունը: Ընդամենը հինգ տարվա ընթացքում պողպատի արտադրությունը հնգապատկվել է:

Գունավոր մետաղներից ծուլում են հատկապես պղինձ, կապար, ցինկ և ամագ:

Մեքենաշինությունը երկրի ամենաաղաճ զարգացող ճյուղն է: Այստեղ մեծ ծավալի են հասնում կապիտալ ներդրումները, գիտահետազոտական աշխատանքները: Արտադրում են տրակտորներ, գյուղատնտեսական մեքենաներ, ավտոմեքենաներ, ինքնաթիռներ, տիեզերանավեր, լեռնահանքային, մետաղածուլական ձեռնարկությունների համար անհրաժեշտ մեքենաներ: Հիմաստանը սկսել է արտադրել էլեկտրոնային նորագույն ապրանքներ՝ հաշվիչ մեքենաներ, համակարգիչներ: Մեծ ծավալների է հասնում կենցաղային սարքերի, թեթև արդյունաբերությանը անհրաժեշտ մեքենաների, մոտոցիկլետների, հեծանիվների արտադրությունը: Մեքենաշինության կարևոր կենտրոններ են Շանհայը, Նանկինը, Բեյջինը, Դալյանը, Ցինդաոն, Չունցինը:

Քիմիական արդյունաբերությունը Ձարգացած է նավթաքիմիան, ածխաքիմիան (արտադրում են հեղուկ վառելիք): Արտադրվում են հանքային պարարտանյութեր՝ Նանկինում, Ցզիլունում, պլաստմասսաներ, քիմիական մանրաթելեր՝ Շանհայում, սոդա՝ Լյուդեյում: Վերջին տասնամյակում արագ թափ է ստացել ռետինատեխնիկական ապրանքների, լաբերի, ներկերի, դեղորայքի արտադրությունը:

Տեքստիլ արդյունաբերությունը Հիմաստանի տնտեսության ամենահին ճյուղն է, հատկապես մետաքսյա գործվածքների արտադրությունը, որի հայրենիքը Շանհայն է: Ձարգացած է նաև բամբակյա, վշյա գործվածքների, հագուստեղենի արտադրությունը: Տեքստիլ արդյունաբերության խոշոր կենտրոններ են Տյանցզինը, Ցինդաոն, Սիանը, Չժենչժուն, Ուրումչին, Խարբինը:

Հախճապակու և ճենապակու արտադրությունը նույնպես ունի հազարամյակների պատմություն: Հիմական ճենապակյա և հախճապակյա ապրանքներն իրենց որակով մեծ պահանջարկ են ունեցել աշխարհում և շարունակում են պահպանել իրենց կայուն տեղը համաշխարհային շուկայում:

Սննդի արդյունաբերության ձեռնարկություններն արտադրում են ալյուր, շաքար, ձկան և ծովամթերքի պահածոներ, բրնձի օղի (սակե), ձկան օղի:

Գյուղատնտեսությունը տալիս է երկրի ներքին համախառն արդյունքի 11,9 %-ը: Այս ճյուղում զբաղված է աշխատուժի 45%-ը: Գյուղատնտեսության հիմնական նպատակը սեփական բնակչության կարիքների բավարարումն է: Այստեղ դեռևս ցածր է մեքենայացման, քիմիացման մակարդակը, լայնորեն կիրառվում է ձեռքի աշխատանքը:

Գյուղատնտեսության գլխավոր ճյուղը բուսաբուծությունն է: Երկրի տարածքի 14,86%-ը վարելահողեր են, 1,27%-ը բազմամյա տնկարկներ: Հազարամյակներ շարունակ չինացիները զբաղվում են բուսաբուծությամբ: Չորային սեզոններին կայուն բերքի ապահովման համար կառուցվել են բազմաթիվ ջրանցքներ: Ընդհանուր առմամբ ոռոգովի հողերի տարածքը հասնում է 54,6 մլն հա-ի: Երկրի արևելյան շրջաններում տարեկան ստանում են երկու բերք, հարավարևելյան շրջաններում՝ երկուսից երեք բերք: Երկրի գլխավոր մշակաբույսը բրինձն է՝ բնակչության սննդի հիմնական մասը: Բրնձի ցանքատարածությունները մեծ տեղ են գրավում Յանցզիի հովտում, հարավի առափնյա շրջաններում: Բրինձ հիմնականում մշակում են անառային սեզոնին, երբ ծովից փչում են մուսսոնները: Չմռան սեզոնին նույն հողակտորների վրա մշակում են ցորեն, եգիպտացորեն, բամբակ, բանջարեղեն: Եգիպտացորեն մշակում են երկրի հյուսիսարևելյան և հարավարևմտյան շրջաններում: Բամբակի մշակությունը տարածված է Հուանհե և Յանցզի գետերի հովիտներում: Տեխնիկական մշակաբույսերից տարածված են շաքարի ճակնդեղեղի, շաքարեղեգի, վուշի, ջուտի ցանքատարածությունները: Թեյ մշակում են երկրի արևելյան և կենտրոնական շրջաններում: Ցանում են նաև քնջութ, կանճրակ, ծխախոտ: Յանցզիի գետահովտում, հարավային շրջաններում ընդարձակ տարածում ունեն քեֆնու այգիները: Յանցզիի ստորին հոսանքի շրջանում, ծայր հարավարևմուտքում կան ցիտրուսների տնկարկներ:

Անասնապահության գլխավոր ճյուղը խոզաբուծությունն է (առաջին տեղը աշխարհում): Արևմտյան շրջաններում զարգացած է ոչխարաբուծությունը, Տիբեթում՝ յակերի բուծումը: Ամենուրեք զբաղվում են թռչնաբուծությամբ:

Չինական հնարամտություններից է ձկների բուծումը բրնձի դաշտերում: Ընդ որում բրնձի սածիլների հետ, երբ մուսսոնային անձրևները հեղեղում են բրնձի դաշտերը, այդտեղ բաց են թողնում ձկնկիթներ, որոնք հիմնականում սնվում են մոծակներով և նրանց հարսնյակներով: Սեզոնի վերջում բրնձի դաշտերից ստանում են երկու բերք՝ բրինձ և ձուկ:

Սեկ այլ հնարամտության մասին է խոսում այն, որ շերամապահության մեջ թթենու տերևներից բացի օգտագործում են կաղնու տերևները:

Չկնորսությունը շատ կարևոր նշանակություն ունի գյուղատնտեսության մեջ: Չկան որս է կատարվում առափնյա ջրերում: Չկան որսով Չինաստանը աշխարհի առաջատար երկրներից մեկն է:

Տրանսպորտը: Երկաթուղիների ընդհանուր երկարությունը 74հզ կմ է, ավտոճանապարհներինը՝ 1870 հազար կմ, որից 34 հազ. կմ՝ ճեպընթաց: Երկաթուղիները հիմնականում ձգվում են մավահանգիստներից դեպի երկրի ներքին շրջանները: Արևելքից արևմուտք ձգվում են Բեյջին- Ուրումչի, հյուսիսից հարավ՝ Գուլյան-Ֆուշուն-Բեյջին-Նանկին-Շանհայ-Սյանգան մայրուղիները: Երկաթուղային ցանցը խիտ է հատկապես երկրի արևելյան շրջաններում, իսկ Տիբեթում ընդհանրապես երկաթուղիներ չկան:

Չինաստանի երկաթուղային շարժակազմը հնացած է, փոքր է գնացքների արագությունը, երկաթգծերը նույնպես կարիք ունեն վերանորոգման: Երկաթուղային խոշոր հանգույցներ են Շանհայը, Չունցինը, Բեյջինը:

Չինաստանը երկաթուղային կապ ունի Ռուսաստանի, Վիետնամի, Մոնղոլիայի, ԿԺԴՀ-ի հետ:

Արագ թափով զարգանում է ավտոտրանսպորտը, կառուցվում են նոր ճանապարհներ, վերակառուցվում են հիները: Բարեկարգ ավտոճանապարհների մեծ մասը գտնվում է երկրի արևելյան շրջաններում: Արևմուտքում՝ անապատներում, դրանց փոխարինում են քարավանային ուղիները: Տիբեթում նույնպես ճանապարհային ցանցը նոսր է և անբարեկարգ:

Ջրային ուղիների երկարությունը 124 հազ. կմ է: Չինաստանն ունի 1000 և ավելի տոննա ջրատարողությամբ 1723 նավ: Չինական նավերի մեծ մասը լողում են օտար դրոշների տակ: Օրինակ՝ Պանամայի դրոշով լողում է 420 նավ, Կամբոջայի՝ 128, Սենտ Վինսենտի և Գրենադինների՝ 103, Լիբերիայի՝ 35, Սինգապուրի՝ 23, Մոնղոլիայի՝ 4, Վրաստանի՝ 2:

Աշխույժ նավարկություն է կատարվում ներքին ջրային ուղիներով: Ամենաշատ բեռներ են տեղափոխում Յանցզի և Սիցզյան գետերով: Յանցզիի ստորին հոսանքի շրջանում լողում են անգամ ծովային նավեր: Նավարկություն է կատարվում նաև սահմանամերձ Ամուր գետով:

Երկրում հաշվվում են 486 օդանավակայաններ, որոնցից 56-ն ունեն 3 կմ երկարությամբ թռիչքաուղիներ և հարմար են խոշոր ինքնաթիռների թռիչքների համար: Օդային գծերի խոշորագույն հանգույցներն են Շանհայը, Բեյջինը, Սյանգանը:

Արտաքին տնտեսական կապերը: Արտահանման ծավալները հասնում են 974 մլրդ դոլարի, ներմուծումը՝ 778 մլրդ -ի: Չինաստանը արտահանում է մեքենաներ և սարքավորումներ, պլաստմասսաներ, օպտիկական և բժշկական սարքավորումներ, պողպատ, երկաթաքար, պերճանքի, հախճապակե և ճենապակե ապրանքներ: Արտահանման ծավալների 21,4%-ը բաժին է ընկնում ԱՄՆ-ին, 16,3%-ը Սյանգանին, 11%-ը ճապոնիային, 4,3%-ը Գերմանիային: Ներմուծում է մեքենաներ և սարքավորումներ, քիմիական ապրանքներ, օպտիկական և բժշկական սարքավորումներ, երկաթ, պողպատ: Ներմուծման գլխավոր գործընկերներն են ճապոնիան, որի մասնաբաժինը 15,2% է, Կորեայի հանրապետությունը՝ 11,6%, Տայվանը՝ 11,6%, Գերմանիան՝ 4,6%:

Չինաստանում ստեղծվել է տնտեսավարման բաց գոտիների ընդարձակ զանց, որոնցում խրախուսվում է արտասահմանյան կապիտալի ներհոսքը: Այդ առումով հայտնի են տնտեսական հինգ հատուկ գոտիներ՝ Շենչժենը, Չժուհայը, Շանդունը և այլն: Դրանք բուլորն էլ գտնվում են Գուանդուն պրովինցիայում: Արագ թափով զարգանում է Շանհայում գտնվող Պուդունի գոտին: Բացի դրանից բաց է հայտարարված ծովափնյա յոթ գոտիներ, որոնք ընդգրկում են 14 խոշոր քաղաքներ, 218 փոքր քաղաքներ և շրջաններ: Չինաստանն իր կապիտալն ունի արտասահմանյան ավելի քան 5000 ձեռնարկություններում:

Ներքին տարբերությունները: Գոյություն ունեն շրջանացման տարբեր սխեմաներ: Առավել գործնական է Վ.Վ. Վոլսկու կողմից ընդունված սխեման: Ըստ դրա Չինաստանը բաժանվում է երեք խոշոր ռեգիոնների՝ արևելյան, արևմտյան, կենտրոնական:

1. Ամենազարգացած Արևելյան ռեգիոնն է: Հենց այստեղ է ստեղծվել և իր ծաղկումն ապրել չինական քաղաքակրթությունը, պետականությունը: Այն Չինաստանի առաջատարն է իր բազմաճյուղ տնտեսությամբ, բարձր տեխնոլոգիաներով, գիտական ներդրումներով, ենթակառուցվածքների զարգացման մակարդակով, արտադրության և արտահանման ծավալներով: Արևելյան ռեգիոնի զարգացմանը նպաստել է հարմար աշխարհագրական դիրքը, ընդարձակ ափագիծը, բնական խոշոր հարստությունները՝ բերրի հող-

դեր, բարենպաստ ագրոկլիմայական պայմաններ, քարածխի, երկաթաքարի և ընդերքի այլ հանքատեսակների մեծ պաշարներ, վերջապես ճապոնիայի և Կորեայի հարևանությունը, մայրաքաղաքների դիրքը: Այս ռեգիոնն ածխի և նավթի հանույթի առաջատարն է: Առաջատար է նաև սև և գունավոր մետաղների արտադրությամբ, մեքենաշինությամբ, մետաքսյա և բամբակյա գործվածքների արտադրությամբ, բրձի, շաքարի, ճակնդեղի, շաքարեղեգի, բամբակի, սոյայի, թեյի, թթենու այգիների մշակությամբ:

Արևելյան ռեգիոնը զբաղեցնում է մեծ տարածք, այդ պատճառով էլ բաժանվում է առանձին շրջանների՝ Հարավային Դուբեյի, Հեբեյի, Շանդունի, Չցզյանսու-Չյեցզյանի, Ֆուցզյանի:



*Նկ.28. Կայսերական ամառանոցային պալատ
Իխեյուան պարկում (Բեյջինի մերձակայքում)*

ա. Հարավային Դուբեյի շրջանն ունի բերրի հողեր, քարածխի. (Ֆուշուն, Ֆուսին), երկաթաքարի՝ (Անշան), մեծ պաշարներ: Դրանց բազայի վրա զարգացել է սև մետաղածուլությունը, ծանր մեքենաշինությունը: Մշակում են բրինձ, եգիպտացորեն, գառլյան, ծխախոտ: Խոշոր քաղաքներն են Անշանը, որը գտնվում է Լյաոնին մարզում, ունի 1,2 մլն բնակչություն: Արդյունաբերական խոշոր կենտրոն է,

այստեղ արդյունահանում են երկաթաքար, որի բազայի վրա էլ զարգացել է սև մետաղաձուլությունը: Քաղաքն ունի նաև նավթավերամշակման, քիմիական, ցեմենտի արտադրության ձեռնարկություններ:

բ. Հերեյան շրջանը հարուստ է քարածխի, նավթի, երկաթի ռեսուրսներով, բերրի հողերով: Դրանց բազայի վրա զարգացել է սև մետաղաձուլությունը, նավթավերամշակումը, մեքենաշինությունը: Շրջանը հայտնի է բարձր տեխնոլոգիաների զարգացմամբ: Գյուղատնտեսության զլխավոր ճյուղը բրձի մշակումն է: Հերեյան շրջանի տարածքում են գտնվում կենտրոնական ենթակայության Բեյջին և Տյանցզին քաղաքները:

Բեյջինը (Պեկին) գրավում է 17,8 հազ. քկմ տարածք, ծովից հեռու է 160 կմ, գտնվում է Մեծ ջրանցքի սկզբնամասում: Ջրանցքը քաղաքը միացնում է Հուանհե և Յանցզի գետերի համակարգին: Բեյջինի բնակչությունն արվարձանների հետ միասին 15,8 մլն է:

Արդյունաբերության հիմնական ճյուղերն են մետաղաձուլությունը, մեքենաշինությունը, նավթաքիմիան, ռադիոէլեկտրատեխնիկան, տեքստիլ արտադրությունը, տպագրական գործը: Զարգացած է նաև ավանդական արհեստագործությունը:

Սայրաքաղաքը հարուստ է պատմաճարտարապետական հուշարձաններով՝ Կայսերական պալատը, Կայսերական ամառային պալատը, Երկնքի տաճարը: Ժամանակակից կառույցներից է Մաոյի դամբարանը: Քաղաքը հայտնի է բազմաթիվ զբոսայգիներով, հրապարակներով: Կենտրոնում գտնվում է Տյանանման՝ աշխարհում ամենախոշոր հրապարակը:

գ. Շանդունի շրջանն ընդգրկում է համանուն թերակղզին, Չինական Մեծ հարթավայրի զգալի մասը: Ունի նավթի, գազի, քարածխի, բոքսիտների, շինանյութերի, աղի պաշարներ: Դրանց բազայի վրա զարգացած է լեռնահանքային արդյունաբերությունը, սև մետաղաձուլությունը, մեքենաշինությունը: Բարձր մակարդակի վրա է գյուղատնտեսությունը:

Խոշոր քաղաքը *Ցինդաուն* է, որը մեծ նավահանգիստ է, ունի 1,5 մլն բնակչություն, մեքենաշինական, քիմիական, տեքստիլ, սննդի արդյունաբերության ձեռնարկություններ:

դ. Չզյանսու-Չժեցզյանի շրջանի մեջ են մտնում Շանհայը, Չժյանսու, Չժեցզյան, Անխոյ մարզերը: Հարմար աշխարհագրական դիրքը և հարուստ բնական ռեսուրսները նպաստել են շրջանի զար-

գացմանը: Ունի բազմաճյուղ արդյունաբերություն՝ մետաղաձուլություն, քիմիական, տեքստիլ, սննդի ճյուղեր: Խոշոր քաղաքներն են Շանհայը, Նանկինը:

Շանհայն իր շրջակայքի հետ միասին առանձին վարչական շրջան է: Մինչև 16-րդ դարը եղել է ծկնորսական ավան, Յանցզի գետի Դուազգու վտակի վրա՝ ծովից 50 կմ հեռու: Ունի 6,2 հզ քվմ տարածք և 13 մլն բնակչություն: Արդյունաբերական խոշոր կենտրոն է՝ մեքենաշինության, մետաղաձուլության, քիմիական, թեթև, տեքստիլ, սննդի ճյուղերով: Խոշոր նավահանգիստ է՝ 100 մլն տ. տարեկան բեռնաշրջանառությամբ:

Նանկինը նավահանգիստ է Յանցզի գետի ստորին հոսանքի շրջանում, ունի 2,1 մլն բնակչություն: Դիմնադրվել է 472թ. մ.թ.ա., 1368-1421 թթ եղել է Չինաստանի մայրաքաղաքը: Քաղաքում կան մետաղաձուլական, մեքենաշինական, տեքստիլ ձեռնարկություններ: Այստեղ է գտնվում 1942թ. Չինական հանրապետության հիմնադիր Սուն Յատսենի դամբարանը: Ունի հնագույն պատմաճարտարապետական հուշարձաններ:

Ե. Ֆուցզյանի շրջանն ընդգրկում է Ֆուցյանի և Ցզյանսիի մարզերը: Տեղական բամբակի հումքի վրա զարգացած է բամբակյա գործվածքների արտադրությունը, մշակում են բրինձ, բամբակ, թեյ:

II. Դարավային ռեգիոնը ընդգրկում է Գուանդունի և Դանյանի մարզերը, Սյանգանը և Աոմինը: Երկրի ամենահզոր շրջաններից է շնորհիվ Սյանգանի և Աոմինի հարմար աշխարհագրական դիրքի:

Սյանգանը (Չոնկոնգը) անգլիական տիրապետության ընթացքում դարձավ միջազգային ֆինանսական խոշոր կենտրոն: Զարգացման բարձր մակարդակի հասան տնտեսության բոլոր ոլորտները: Այս ամենը պահպանելու համար Չինաստանին վերադարձվելուց հետո Չոնկոնգին տրվեց հատուկ կարգավիճակ՝ 50 տարվա ժամկետով: Չոնկոնգը գրավում է 1092 քվմ տարածք, որից 50 քվմ՝ ջրային: Չինաստանի հետ սահմանը 30 կմ է, ծովափնյա գիծը՝ 733 կմ: Չոնկոնգում ապրում է 6,8 մլն մարդ: Բնական աճը ցածր է՝ 1,2%: Բնակչության 95 %-ը չինացիներ են: Բնակչության խտությունը քաղաքում 6,2 հազ. մարդ/քվմ է: Չոնկոնգն ունի զարգացած տնտեսություն, համախառն ներքին արտադրանքը 213 մլրդ դոլար է, տարեկան աճը՝ 3,3%: Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն 28800 դոլար է: ՀՆԱ-ի 1,5 %-ը տալիս է գյուղատնտեսությունը, 25,2%-ը՝ արդյունաբերությունը, 73,3%-ը՝ սպասարկման ոլորտը:

Հոնկոնգում զարգացած է էլեկտրաէներգետիկան: Էլեկտրաէներգիայի արտադրությունը հասնում է 30,3 մլրդ կվտ/ժամի. այն չի բավարարում ներքին պահանջները, մոտ 10 մլրդ կվտ/ժամ էլեկտրաէներգիա ներմուծվում է:

Հոնկոնգը համաշխարհային նշանակության նավահանգիստ է: Այն աշխարհի երրորդ նավահանգիստն է նավակառանների մեծությամբ, որոնց ընդհանուր երկարությունը հասնում է 52 կմ-ի: Բաց նավահանգիստ է, որտեղ թույլատրվում է բեռների ազատ առաքում և ներկրում:

Արդյունաբերության գլխավոր ճյուղերն են՝ էլեկտրոնային (ավելի քան 750 ձեռնարկություններով), էլեկտրատեխնիկական, նավաշինական, նավավերանորոգման, տեքստիլ, ժամացույցների, խաղալիքների արտադրությունը:

Հոնկոնգը համաշխարհային մասշտաբով ֆինանսական խոշոր կենտրոն է, այստեղ գործում են 500 արտասահմանյան բանկեր: Արժույթային բիրժայի օրական դրամաշրջանառությունը 90 մլրդ ԱՄՆ դոլար է, աշխարհում հիգերորդ, Ասիայում՝ երրորդ տեղը:

Հոնկոնգը նաև զբոսաշրջության խոշոր կենտրոն է. միայն օդանավակայանը տարեկան ընդունում է 90 մլն ուղևոր:

Հոնկոնգի ձեռնարկությունների 80 %-ը կապված են Չինաստանի հետ:

Հոնկոնգի արտահանման ծավալները հասնում են 225,9 մլրդ - դոլարի: Արտահանման 42,6%-ը բաժին է ընկնում Չինաստանին:

Հոնկոնգի հաջողության ամենամեծ գրավականը տնտեսության ազատականացումն է:

բ. Սոմինը (Մակաոն) եղել է պորտուգալական գաղութ և Չինաստանին է հանձնվել նույն պայմանով, ինչ Հոնկոնգը:

III. Կենտրոնական ռեգիոնը դեպի արևմուտք տարածվում է մինչև Շանսիի մարզ և Ներքին Սոնդուիա: Ռեգիոնը հարուստ է քարածխի, երկաթի, գունավոր մետաղների, շինանյութերի, հողային, ջրային և ջրաէներգետիկ ռեսուրսներով: Դրանց բազայի վրա զարգացել է սև մետաղածուլությունը, մեքենաշինությունը: Բերրի հողերի և բարենպաստ ագրոկլիմայական պայմանների շնորհիվ մշակում են հացահատիկային և տեխնիկական բույսեր: Մեծ տարածում ունեն թթենու և տունկի տնկարկները:

իր ընդարձակ տարածքի, տնտեսական զարգացման տարբերությունների պատճառով ռեզիդնը բաժանվում է առածին շրջանների:

ա. Յանցզիի միջին հոսանքի շրջան: Ընդգրկում է Հունան, Հունբեյ, Հեբեյ մարզերը: Ունի բազմաճյուղ արդյունաբերություն՝ սև և գունավոր մետաղների արտադրություն, մեքենաշինություն: Արդյունաբերության զարգացման գործում մեծ է Յանցզի գետի դերը, որով կատարվում է աշխույժ նավարկություն:

Բերրի հողերի վրա մշակում են ցորեն, եգիպտացերեն, բրինձ, բամբակ, մեծ տարածում ունի թթենին, տունկի ծառը:

Շրջանն ունի զարգացման մեծ հեռանկարներ՝ կապված Սանսյայի կառուցվող էլեկտրակայանի հետ:

բ. Շանսիի շրջանը տարածվում է ավելի արևմուտք, մինչև համալուն մարզը և Ներքին Սոնդուիա: Արդյունաբերության ճյուղերից զարգացած է ածխի հանույթը, մետաղածուլությունը: Ոռոգովի հողերի վրա մշակում են բամբակ, խաղող, բրինձ:

III. Արևմտյան ռեզիդնը տարածվում է ծայր արևմուտքում, ուր բնական լանդշաֆտն անապատային է: Առանձին օջախների ձևով զարգացած է արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը: Հիմնականում քոչվոր անասնապահությունն է: Սիչուան գետի հովտում՝ ոռոգովի հողերի վրա, մշակում են թեյ, ծխախոտ, շաքարեղեգ, բանջարեղեն: Կան պտղատու շատ այգիներ:

Տայվան (Չինաստանի Հանրապետություն): Չինաստանը Տայվանը համարում է իր մարզերից մեկը, որի պատճառով նա միջազգային կազմակերպությունների կողմից չի ճանաչվում որպես անկախ պետություն:

Տայվանի տարածքը 36 հազ. քմ է, բնակչությունը՝ 23 մլն: Վարչական գլխավոր կենտրոնը Տայբեյն է: Տայվանն ունի զարգացած տնտեսություն: Համախառն ներքին արդյունքը 631 մլրդ դոլար է, մեկ շնչի հաշվով՝ 27600 դոլար: ՀՆԱ-ի 72,3%-ը տալիս է սպասարկման ոլորտը, արդյունաբերության մասնաբաժինը, 25,9%-է, գյուղատնտեսությանը՝ 1,8%: Ունի զարգացած բազմաճյուղ մեքենաշինություն, քիմիական և սննդի արդյունաբերություն:

Գյուղատնտեսության ճյուղերից զարգացած է բրնձի, ցիտրուսների և թեյի մշակումը:

Տայվանն աշխարհի ֆինանսական հզոր կենտրոններից մեկն է:

Ինքնաստուգման հարցեր

- 1. Ո՞րն է Չինաստանի առաջատար տեղը համաշխարհային քաղաքակրթության մեջ:**
- 2. Ինչպե՞ս է ձևավորվել Չինաստան պետությունը:**
- 3. Որո՞նք են տնտեսության զարգացման ժամանակակից միտումները:**
- 4. Որո՞նք են արդյունաբերության հին, ավանդական և ժամանակակից ճյուղերը:**
- 5. Որո՞նք են գյուղատնտեսության զարգացման նախադրյալները, գլխավոր ճյուղերը:**
- 6. Ժողովրդագրական ի՞նչ քաղաքականություն է վարում պետությունը, ինչպիսի՞ն են դրա արդյունքները:**
- 7. Որո՞նք են Տայվանի և Հոնկոնգի զարգացման առանձնահատկությունները:**

*Տարածքը՝ 377,8 հզ քվմ
Բնակչությունը՝ 127,4 մլն մարդ
Սայրաքաղաքը՝ Տոկիո*

ճապոնիան կոչվում է «ծագող արևի» երկիր, որովհետև նրա ամփերից ոչ հեռու օվկիանոսից է սկսվում երկրային օրը:

Կղզիների երկիր է, գտնվում է Զոկայդո, Զոնսյու, Սիկոկու և Կյուսյու խոշոր և հազարավոր մանր կղզիների վրա: Արևմտյան ամփերը ողողում են ճապոնական ծովի ջրերը՝ երկիրը բաժանելով Ռուսաստանի Դաշնությունից, Չինաստանից և Կորեաներից: Արևելքում Խաղաղ օվկիանոսի ընդարձակ ջրային տարածքներն են:

Այս հեռավոր երկիրն իր ուրույն տեղն ունի համաշխարհային տնտեսական համակարգում: Նրան բաժին է ընկնում համաշխարհային ԶՆԱ-ի 8.6 %-ը, արտահանման ծավալների՝ 4.5-ը, ներմուծման՝ 6.1 %-ը:

Աշխարհի առաջատարների շարքում է յև և գունավոր մետաղների, էլեկտրոնային հաշվիչ մեքենաների, ինքնակառավարվող սարքերի, տեղեկատվական տեխնոլոգիաների արտադրությամբ: Նա հայտնի է բնակչության կրթական ու գիտական բարձր մակարդակով, սոցիալական ապահովվածությամբ, բնապահպանության կատարյալ համակարգով:

Բնական պայմանները և ռեսուրսները: Երկրաբանորեն ճապոնիան գտնվում է երկրաշարժային և հրաբխային գոտում: Զաճախակի կրկնվող երկրաշարժերը աննպաստ պայմաններ են ստեղծում շինարարական աշխատանքների համար: Մեծ վտանգ են ներկայացնում գործող հրաբուխները:


Սակերևույթի 80 %-ից ավելին ծածկված է երիտասարդ լեռներով: Դրանց բարձրությունները մեծ չեն, սակայն լեռնալանջերը բեկորամիաված են, զառիթափ, խոր կտրտված լեռագագված ձորակներով, գետերի կիրճերով: Այս բոլորը մեծ դժվարություններ են առաջացնում տարածքը տնտեսական նպատակներով օգտագործելու համար:

Առափնյա շրջաններում կան ոչ մեծ հարթավայրեր, որոնցից ամենաընդարձակը Կանտոյի հարթավայրն է, որ ընկած է Զոնսյու կղզու արևելյան ափին, զբաղում է 13 հզ քվմ տարածք: Ոչ մեծ հար-

թավայրեր կան մյուս կղզիներում ևս, հատկապես գետերի ստորին հոսանքների շրջանում:

Երիտասարդ լեռնային երկրի ընդերքը աղքատ է օգտակար հանածոներով: Կան քարածխի, նավթի, կապարի, մկնդեղի, պիրիտի, գիպսի ոչ մեծ պաշարներով հանքավայրեր: Դրանք չեն կարող բավարարել երկրի տնտեսական պահանջները: Այդ է պատճառը, որ վերամշակող բոլոր ճյուղերը աշխատում են ներմուծվող հումքի բազայի վրա:

Կլիման ծովային է: Հյուսիսում՝ Հոկայոդ կղզում, միջին հունվարյան ջերմաստիճանը -5°C է, միջին հուլիսյանը՝ $+22^{\circ} \text{C}$: Ծայր հարավում Ռյու-Կյու կղզիներում միջին հունվարյանը՝ $+16^{\circ} \text{C}$, հուլիսյանը 28°C : Մթնոլորտային տեղումները 1000 մմ են, լեռների արևելահայաց լանջերին՝ 2000-3000 մմ: Կայուն ձյունածածկույթը հյուսիսային շրջաններում տևում է մինչև 3 ամիս, հարավում՝ մի քանի օր: Կլիմայական պայմանները նպաստավոր են գյուղատնտեսության համար: Մշտական դարձած մառախուղները վտանգավոր են տրանսպորտի համար:



Նկ. 29. Կիտոոյի Ռոկուոնձի տաճարի Ոսկյա տաղավարը (1394-1427)

Հողային ռեսուրսներով աղքատ է: Գյուղատնտեսական նպատակներով պիտանի է տարածքի փոքր մասը՝ վարելահողեր՝ 11.64 %, բազմամյա տնկարկներ՝ 0.9 %:

ճապոնիայի տարածքի 60%-ը ծածկված է անտառներով:
Դրանք ունեն հողապաշտպան, ջրապաշտպան և գեղագիտական
նշանակություն: Արդյունաբերական նպատակներով օգտագործում
են ձեռքով տնկված անտառները:

ճապոնիայի առափնյա ծովային սահմանները 12 մղոն են,
տնտեսական գոտին հասնում է 200 մղոնի: Այդ տարածքը հարուստ
է ձկնաշխարհով և ծովային այլ որսակենդանիներով:

Բնակչությունը: ճապոնացիներին բնորոշ է իրենց հողին, հայ-
րենիքին մեծ նվիրվածությունը, պետության ու պետականության
պաշտամունքը, սերը դեպի կրթությունը, բնապաշտությունը: ճապո-
նացին սյուվիզմի ջատագով է, իշխող է համատեղ աշխատանքի
արդյունքը միասին բաժանելու գաղափարը, բարձր կազմակերպվա-
ծությունը: Նրանց 84 %-ը սինթոյականներ և բուդդայականներ են,
0.9 %-ը՝ քրիստոնյաներ, մնացածը՝ այլ կրոնի ներկայացուցիչներ:
Սինթոյական կրոնի հիմքում բնապաշտություն է, մարդու և բնու-
թյան ներդաշնակ գոյատևման գաղափարը, որ օգնում է մեծ հոգա-
տարությանը վերաբերվել շրջակա բնական միջավայրին:

Ազգային կազմը միատարր է, բնակչության 99 %-ը ճապոնացի-
ներ են, կորեացիների քանակը 511 հզ է, չինացիներինը՝ 244 հզ:

Բնակչության բնական աճը շատ փոքր է՝ 0,21%, ծնվածների
տեսակարար կշիռը՝ 9.37 %., մահացածներինը՝ 9.16 %: Կյանքի մի-
ջին տևողությունը 81.25 տարի է, կանանց՝ 84.7 տարի, տղամարդ-
կանց՝ 77.96 տարի: Աշխարհի ամենաերկարակյաց ժողովուրդն այդ
ցուցանիշին է հասել սոցիալական պայմանների բարձր մակարդա-
կի, բժշկական անթերի ծառայությունների, մեծերի նկատմամբ խո-
րին հարգանքի շնորհիվ:

Բնակչությունը սոցիալապես լրիվ ապահովված է: Անապահով
ընտանիքները ստանում են կտրոններ, որոնք իրավունք է տալիս
խանութներից ապրանք վերցնել ցածր գներով: ճապոնացիների մեծ
մասը ապրում է խաղաղօվկիանոսյան առափնյա հարթավայրերում:
Ամենախտաբնակ շրջաններից է Կանտոյի հարթավայրը: Այստեղ է
կենտրոնացած երկրի բնակչության մեծ մասը: Կանտոյի հարթավայ-
րում է գտնվում երկրի խոշորագույն քաղաքների մեծ մասը: Տոկիո-
յից մինչև Օսակա ձգվում է քաղաքային մի հսկայական շղթա: Մեկ
մլն և ավելի բնակիչ ունեն Տոկիոն (10 մլն), Յոկոհաման (4 մլն),
Օսական (3 մլն), Նագոյան (2.8 մլն), Սապպորոն (2 մլն), Կիոտոն
(1.5 մլն): Երկրում ստեղծվել են մի քանի խոշոր ագլոմերացիաներ:

Կեյխիմի ազլոմերացիան ընդգրկում է Տոկիո և Յոկոհամա, Կավասակի և այլ քաղաքներ, որտեղ ապրում է 30 մլն մարդ: Խանսիմի ազլոմերացիայում, որը ձևավորվել է Օսակայի շուրջը, ապրում է 16 մլն մարդ: Այս և մյուս ազլոմերացիաները միասին ստեղծում են մի հսկայական մեգապոլիս՝ Տոկայոդ, ուր ապրում է 60 մլն մարդ:

Պետական կարգը: Ճապոնիան սահմանադրական միապետություն է: Երկրի բարձրագույն օրենսդիր մարմինը պառլամենտն է՝ կազմված ներկայացուցիչների և խորհրդականների պալատներից: Պետության կառավարումը գտնվում է նախարարների խորհրդի ձեռքին՝ վարչապետի գլխավորությամբ: Վարչապետն ընտրվում է պառլամենտի կողմից: Միապետությունը ստեղծվել է քա. 7-րդ դարում, երբ թագադրվեց 1-ին կայսրը: Ք.հ. 12-րդ դարում իշխանությունը անցնում է զինվորականներին՝ սյոգուններին: Երկիրը կառավարել են սկսում ռազմական հրամանատարները: 1867 թ.-ին վերջին սյոգունը իր իշխանությունը հանձնում է Մեյձիին (կայսրին) և մինչև այսօր երկրի բարձրագույն իշխանությունը պատկանում է կայսրին, որը ժողովրդի և պետության միասնության խորհրդանիշն է:

Վարչականորեն երկիրը բաժանվում է 47 պրեֆեկտուրայի: Ըստ սահմանադրության պրեֆեկտուրաները լայն իրավունքներ ունեն. փաստորեն բոլոր խնդիրները լուծվում են տեղական կառավարման մարմինների կողմից: Առանց տեղական մարմինների համաձայնության վերադաս իշխանությունները տվյալ տարածքի վերաբերյալ որոշում ընդունելու իրավունք չունեն:

Տնտեսությունը: Երկրորդ աշխարհամարտից ճապոնիան դուրս եկավ քայքայված և ավերված տնտեսությամբ: Պատերազմի ընթացքում թշնամական պետություն հանդիսացող ԱՄՆ-ն սկսեց օգնել ճապոնիային՝ վերականգնելու իր տնտեսությունը՝ ի հակադրություն Չինաստանի և ԽՍՀՄ-ի: Տնտեսության վերականգնմանը նպաստեց նաև արտասահմանյան կապիտալի խելացի օգտագործումը, տնտեսության մեջ ու կենցաղում միասին աշխատելու գաղափարը (սյուվիզմ), որը ճապոնական մտածելակերպի էությունն է: Սյուվիզմն օգնում է հաղթահարելու ցանկացած դժվարություն: Ճապոնական ընկերությունների բաժնեթղթերի 70%-ը աշխատողների ձեռքին է, ըստ որի էլ յուրաքանչյուր աշխատող մեծ կարողության տեր է:

Ճապոնիայում տիրապետում է մշտական աշխատանքի իրավունքը: Ձեռնարկությունների մեծ մասում մարդուն աշխատանքից չեն ազատում. տարբեր միջոցներ կիրառելով՝ փորձում են նրան բա-

վարարել. որքան մարդ լավ է աշխատում, այնքան բարձր է վարձատրվում: Խոշոր ընկերությունների կողմից խրախուսվում են երկնամյա աշխատողները, որոնց տեսակարար կշիռը 20-30 % է: Աշխատողների աշխատավարձն ավելանում է ըստ ստաժի: Միևնույն տեղում երկարամյա աշխատողը ստանում է «հավատարմություն» կոչվող լրացուցիչ աշխատավարձ: Աշխատողն ինքն է ընտրում աշխատանքի ձևը, գրաֆիկը, որակի հսկումը, անվտանգությունը: Ստեղծվում են ինքնակառավարվող խմբեր, որոնց ձեռքում է գտնվում ամբողջ ձեռնարկությունը:

Պետության մասնակցությունը տնտեսության կառավարմանն ունի խորհրդատվական նշանակություն: Նա կազմում է համապետական ընդհանուր պլաններ, օգնում է մասնավոր ընկերություններին աշխատել հանուն սեփական ֆիրմայի, ի շահ պետության: Տնտեսական զարգացմանը նպաստում է գիտական նորարարության լայն կիրառումը: Գիտական նպատակներով է ծախսվում համախառն ներքին արդյունքի 2.7%-ը: Գիտահետազոտական նպատակներով ներդրումների մի մասը կատարվում է Եվրոպայի, Ասիայի երկրներում, ԱՄՆ-ում տեղադրված ճապոնական գիտահետազոտական կենտրոններում, լաբորատորիանում՝ օգտագործելով այդ երկրների գիտական ներուժը:

Արդյունաբերությունը տալիս է համախառն ներքին արդյունքի 25,8 %-ը: Այս ոլորտում է զբաղված աշխատուժի 27,8 %-ը:

Արդյունաբերությանը բնորոշ է կապիտալի մեծ կենտրոնացվածությունը խոշոր ձեռնարկությունների ձեռքին: Ճապոնական ընկերությունները խիստ ճյուղավորված են: «Տոյոտա» ընկերությունը տալիս է իր կողմից արտադրվող մեքենաների պահեստամասերի փոքր մասը, մնացածը՝ պահեստամասեր արտադրող ընկերությունները: «Տոյոտան» ունի համագործակցող ձեռնարկությունների լայն ցանց և ընդարձակ աշխարհագրություն: Այդ ձեռնարկությունների համագործակցությունը ապահովվում է գերկարգապահության շնորհիվ:

Արդյունաբերության առաջատար ծյուղը էներգետիկան է: Երկրում տարեկան արտադրվում է 1017 տրիլիոն կվտ-ժամ էլեկտրաէներգիա: Դրա 60%-ը տալիս են ջերմաէլեկտրակայանները, 30%-ը՝ ատոմային էլեկտրակայանները: Երկրում հաշվում են 53 ատոմային ռեակտորներ, որոնց քանակով աշխարհում երրորդ տեղում է ԱՄՆ-ից և Ֆրանսիայից հետո: Լեռնային գետերի վերին հոսանքների շրջանում կառուցված են ջրաէլեկտրակայանները: Ջգալի թիվ են կազմում երկրաջերմային էլեկտրակայանները:

Վերամշակող արդյունաբերության կարևորագույն ճյուղերից է սև մետաղածուլությունը։ Այն ամբողջությամբ աշխատում է ներմուծով և հիմնով։ Մև մետաղածուլության ձեռնարկությունները տեղաբաշխված են նավահանգստային խոշոր քաղաքներում՝ Տոկիոյում, Յոկոհամայում, Կավասակիում, Մուրոդանում և այլ վայրերում։ Արտադրվում է բարձրորակ պողատ, որ միջազգային շուկայում մեծ պահանջարկ ունի։ Ճապոնական «Նիպոն Սթիլ», «Նիպոն Կոկան» և մյուս ընկերություններն իրենց ձեռնարկությունների մի մասը երկրի սահմաններից դուրս են տանում։ Պատճառը էկոլոգիական առումով շատ մեծ տուգանքներն են։

Ճապոնական սև մետաղածուլության ձեռնարկություններին բնորոշ է գիզանտիզմը։ Օրինակ, «Նիպոն Կոկան» ընկերությանը պատկանող «Ֆուկույամա» կոմբինատի կարողությունը 16 մլն տ. պողպատ է տարեկան։ Կավասակիի, Կասիմայի կոմբինատներն ունեն 10 մլն. տոննայից ավելի կարողություն։ Ընդհանուր առմամբ Ճապոնիայում տարեկան արտադրվում է 120 մլն. տ. պողպատ։

Գունավոր մետաղածուլության գլխավոր ճյուղերն են պղնձածուլությունը, ալյումինածուլությունը և ցինկի արտադրությունը։ Ալյումինածուլության խոշոր կենտրոնը Տոմակոմայն է՝ Հոկայդո կղզում։ Պղնձածուլությունը զարգացած է Հոնսյու և Սիկոկու կղզիներում։ Էկոլոգիական խնդիրների հետ կապված՝ Ճապոնական ընկերությունները պղնձի նախնական արտադրության ձեռնարկությունները երկրի սահմաններից դուրս են տանում։

Քիմիական արդյունաբերությունը արդյունաբերության ամենակարևոր ճյուղերից մեկն է։ Ճապոնիան նավթ ներմուծող և վերամշակող առաջատար երկրներից մեկն է։ Տոկիոյում և մյուս խոշոր նավահանգստային քաղաքներում ստեղծվել են քիմիական հզոր կոմբինատներ, որոնք արտադրում են սինթետիկ կաուչուկ, պլաստմասսաներ, ռետինատեխնիկական ապրանքներ, լաքեր, ներկեր, դեղորայք։ Քիմիական արդյունաբերության կարևորագույն խնդիրներից մեկը մեքենաշինական ձեռնարկություններին անհրաժեշտ պահեստամասերի՝ ավտոդողերի հարդարման ապրանքների, պլաստմասսաների մատակարարումն է։ Արտադրում են նաև թթուներ, թունաքիմիկատներ, հանքային պարարտանյութեր։

Մեքենաշինությունը արդյունաբերության ամենաարագ զարգացող, ամենաբազմաճյուղ, ամենաընդարձակ աշխարհագրություն ունեցող բնագավառն է։ Այստեղ շատ արագ են իրագործվում գիտա-

տեխնիկական հեղափոխության նվաճումները: Ձեռնարկություններն արագ վերազինվում են, ամենուրեք օգտագործվում են ինքնակառավարվող սարքեր (ռոբոտներ): Մեքենաշինության ավանդական ճյուղը նավաշինությունն է: Ճապոնական հեղուկատար նավերը միջազգային շուկայում մեծ պահանջարկ ունեն: Արտադրում են նաև չոր բեռներ փոխադրող նավեր: Նավաշինական խոշոր ձեռնարկություններ կան Տոկիոյում, Օսակայում, Կոբեյում, Յոկահամայում, Նագասակիում:

Ճապոնական ընկերություններն իրենց ձեռնարկություններն ունեն ԱՄՆ-ում, Եվրոպայում, Աֆրիկայում, Լատինական Ամերիկայում: Մեքենաշինական ձեռնարկությունները արտադրում են էլեկտրաքարշեր, վագոններ, արագընթաց գնացքներ:

Ճապոնիան աշխարհում ամենից շատ ինքնակառավարվող սարքեր (ռոբոտներ) արտադրող երկիր է: Ճապոնական ռոբոտները ամենակարող են, ընդունակ են կատարելու բազմատեսակ աշխատանքներ:

Ճապոնիան հայտնի է էլեկտրոնային հաշվիչ մեքենաների արտադրությամբ, տեղեկատվական տեխնոլոգիաների, հեռակապի միջոցների, էներգետացույցների, համակարգիչների, օպտիկական սարքերի, բժշկական գործիքների ու սարքավորումների արտադրությամբ:

Թեթև արդյունաբերությունը եղել է Ճապոնիայի արդյունաբերության ավանդական, հնագույն ճյուղը, մինչև անցյալ դարի 40-ական թվականները՝ երկրի արդյունաբերության գլխավոր ճյուղը:

Տեքստիլ արդյունաբերությունը զարգացած է Տոկիոյում, Օսակայում, Նագոյայում: Բազմաթիվ ձեռնարկություններ կան քաղաքային բնակավայրերում, հատկապես Տոկիո-Օսակա մեգապոլիսում:

Մանրի արդյունաբերության հիմնական ճյուղը ձկան, պահածոների արտադրությունն է: Այն զարգացած է առափնյա քաղաքներում:

Գյուղատնտեսությունը տալիս է երկրի համախառն ներքին արդյունքի 1.7%-ը: Գյուղատնտեսության գլխավոր ճյուղը բուսաբուծությունն է: Երկրի տարածքի 11.64 %-ը վարելահողեր են, 0.9 %-ը՝ բազմամյա տնկարկներ: Ոռոգովի հողատարածքները 2.6 մլն հա են:

Մշակովի հողերի կեսը բրնձի ցանքատարածություններ են: Քիչ քանակությամբ մշակում են նաև ցորեն, գարի, եգիպտացորեն: Տեխնիկական մշակաբույսերից են շաքարի ծակկոեղը, ծխախոտը, սոյան: Մշակում են թեյ: Զարգացած է ծաղկաբուծությունը:

Անասնապահությունը ունի ընդարձակման միտում՝ կապված եվրոպական սովորույթների ներթափանցման հետ: Ավելանում է մսի և կաթի օգտագործումը երիտասարդության շրջանում:

Տրանսպորտը: Երկրում առավել զարգացած է ծովային տրանսպորտը, որով կատարվում են ներքին և արտաքին բեռնափոխադրումները: Երկրում հաշվում են 1000 տ-ից ավելի ջրատարողությամբ 683 նավ, որոնցից 157-ը նավթատար են, 53-ը՝ հեղուկ-գազատար, 127-ը՝ չորաբեռնատար, 12-ը՝ բեռնարկղներ (կոնտեյներ) փոխադրողներ: ճապոնական նավերի մեծ մասը գրանցված են օտար երկրներում Լիբերիայում՝ 100 նավ, Սինգապուրում՝ 93, Հոնկոնգում՝ 64, Բահամյան կղզիներում՝ 51, Ֆիլիպիններում՝ 25, Կիպրոսում՝ 17:

Երկաթուղիների ընդհանրուր երկարությունը 23556 կմ է: Դրանք էլեկտրիֆիկացված են, որոշ ճանապարհներով՝ վրա աշխատում են գերարագ ճեպընթացներ: Երկաթուղիների գործունեությունն ավելի արդյունավետ դարձնելու համար կղզիների միջև կառուցվել են թունելներ: 1988 թ. Հոնսյու և Հոկայդո կղզիների միջև կառուցվել է աշխարհի ամենաերկար (54 կմ) թունելը: Երկաթուղային մանատիպ թունել կա նաև Հոնկոնգում և Կյուսայու կղզիների միջև:

Ճապոնիայում ավտոմայրուղիների երկարությունը 1183 հզ կմ է, որից 6946 կմ-ը ճեպընթաց մայրուղիներ են: Ճապոնական մայրուղիները բարձրորակ են: Ավտոտրանսպորտը առանձնակի դեր է կատարում ուղևորների և բեռների փոխադրության գործում: Երկրում հաշվում են 145 օդանավակայաններ: Ամենախոշոր օդանավակայաններն են Նուրիտան և Խանդեան՝ Տոկիոյում, Կանսայո՝ Օսակայում:

Արտաքին տնտեսական կապերը: Արտահանման ծավալները հասնում են 550.5 մլրդ դոլարի, ներմուծմանը՝ 451.1 մլրդ դոլարի: Դրանք ունեն մեծացման միտում: Նշանակալի է թեթև արդյունաբերության ապրանքների արտահանումը: Տնտեսական վերելքը ավելացրեց արտահանվող ապրանքների ծավալները, փոխեց դրանց տեսականին: Լայն չափերի հասնող կապիտալի արտահանման շնորհիվ ճապոնացիները մյուս զարգացող երկրներում կառուցում են պահանջարկ ունեցող ապրանքների ձեռնարկություններ, որոնք թողարկում են ավտոմեքենաներ, հեռակապի սարքավորումներ, ինքնակառավարվող սարքեր, համակարգիչներ, էլեկտրոնային հաշվիչ մեքենաներ:

Արտահանման ծավալի 13.4 %-ը բաժին է ընկնում Չինաստանին, 7.8 %-ը՝ Հարավային Կորեային, մնացածը՝ Տայվանին, Եվրոմիության

երկրներին, ԱՄՆ-ին, Ավստրալիային, Լատինական Ամերիկային: Ներմուծման ծավալների 21 %-ը կատարվում է Չինաստանից, 12.7 %-ը՝ ԱՄՆ-ից, 5.5 %-ը Սաուդյան Արաբիայից,, 4.7 %-ը՝ Կորեայից, Ավստրալիայից, Ինդոնեզիայից: Ճապոնիան ներմուծում է էներգակիրներ, քիմիկատներ, սննդամթերք, մեքենաներ ու սարքավորումներ:

Ներքին տարբերությունները. Պատմականորեն ճապոնիայի տարբեր մասերը ունեն զարգացման տարբեր մակարդակ: Գոյու-յուն ունեն երկրի տնտեսական շրջանացման մի քանի տարբերակներ. առաջին տարբերակի մեջ մտնում են ՝ Յոկայոդո, Յոնայու, Կյուս-յու, Սիկոկու և Օկինավա կղզիները: Երկրորդ տարբերակով երկիրը բաժանվում է 10 տնտեսական շրջանների՝ Յոկայոդո, Տոխոկու, Կանտո, Տոկայ, Յոկուրիկու, Կինկի, Տյուգոկու, Սիկոկու, Օկինավա, Կյուսայու: Բոլորն էլ ունեն զարգացման բարձր մակարդակ, բազմաճյուղ արդյունաբերություն, ինտենսիվ գյուղատնտեսություն, տրանսպորտ: Յատկապես մեծ է Կանտոյի, Տոկայի և Կինկիյի շրջանների դերը: Դրանք կապված են միմյանց հետ և փոփած են խաղաղ օվկիանոսի ափերին:

1. Կանտոյի շրջանը երկրում ամենազարգացածն է, որ գրավում է երկրի տարածքի 10 %-ը: Այստեղ են կենտրոնացած երկրի արդյունաբերական խոշոր ձեռնարկությունները, մշակովի բերրի հողերը, տրանսպորտային կարևորագույն մայրուղիները:

Կանտոյի տարածքում խոշոր քաղաքների՝ Տոկիոյի, Յոկահամայի, Կավասակիի, Տիբոյի ագլոցությամբ ձևավորվել է Կեյխիի ագլոմերացիան՝ երկրի ամենախտաբնակ ռեգիոնը: Այստեղ զարգացած են մետաղածուլության, նավթամշակման, նավաշինության, տեքստիլ արդյունաբերության, ժամանակակից գիտատար արտադրության բոլոր ճյուղերը: Կեյխիում կան բազմաթիվ գիտահետազոտական կենտրոններ, ուր մշակվում են նորագույն տեխնոլոգիաներ, ընդ որում ճապոնական հնարամտությամբ դրանք արագ ներդրվում են և արտադրվում: Կեյխիի ագլոմերացիայի խոշոր քաղաքը Տոկիոն է՝ երկրի մայրաքաղաքը 1868 թվից: Այն հիմնադրվել է 15-րդ դարում որպես ռազմական ամրոց: Քաղաքը գտնվում է խաղաղ օվկիանոսի ափին, Կանտոյի հարթավայրի հյուսիսում գտնվող ծովախորշում: Այստեղ զարգացած են սննդի, քիմիական, մետաղածուլության, մեքենաշինության, տպագրության ճյուղերը: Արտա-

դրվում է գերիզոր էլեկտրոնային հաշվիչ մեքենաներ, ինքնակառավարվող սարքեր, համակարգիչներ, հեռուստացույցներ և այլն:

Տոկիոն գիտակրթական կենտրոն է՝ իր զարգացած համալսարանական համալիրներով: Աչքի է ընկնում նաև ֆինանսական բազմաթիվ խոշոր բանկերով, ապահովագրական ընկերություններով:

Տոկիոյի նավահանգիստը տարեկան ընդունում և ճանապարհում է ավելի քան 70 մլն տ բեռ: Քաղաքն ունի երկու խոշոր օդանավակայան: Երկաթուղային, ավտոմոբիլային ուղիների խոշոր հանգույց է:

Կանտոյի երկրորդ արդյունաբերական խոշոր կենտրոնը Յոկահաման է՝ 3.3 մլն բնակչությամբ: Երկրի արտաքին առևտրի գլխավոր դարպասն է: Ունի սև մետաղածուլության, մեքենաշինության, նավթաքիմիական խոշոր ձեռնարկություններ:

Կավասակին ունի 1,1 մլն բնակչություն, սննդի, տեքստիլ, քիմիական մեքենաշինական զարգացած արդյունաբերություն: Նավահանգստի տարեկան բեռնաշրջանառությունը 80 մլն տ է:

2. Տոկայի շրջանը գտնվում է Խաղաղ օվկիանոսի ափին, Կանտոյի հարթավայրում: Ընդարձակ տարածություն են զրավում բրնձի դաշտերը: Շրջանի Տոյոտա քաղաքը ունի 340 հզ բնակիչ: Ավտոմոբիլաշինության խոշոր կենտրոն է:

3. Կինկի շրջանը նույնպես Կանտոյի հարթավայրում է: Այստեղ զարգացած է մետաղածուլությունը, նավթավերամշակման, տեքստիլ, ապակու, հախճապակու արդյունաբերությունը: Կինկիի արդյունաբերական ամենամեծ կենտրոնը Օսական է:

Օսակայի տարածքը դեռևս վեց հազար տարի առաջ բնակավայր է եղել: Սա երկրի երկրորդ խոշոր քաղաքն է՝ 2.5 մլն բնակչությամբ: Օսական երկրի արվեստի գլուխգործոցների, ցուցահանդեսների, թանգարանների քաղաք է, խոշոր նավահանգիստ՝ 80 մլն տ տարեկան բեռնաշրջանառությամբ, և բանկերի, առևտրի աչքի ընկնող կենտրոն: Օսակայի շուրջը ձևավորվել է 11 մլն բնակչությամբ մեգապոլիս՝ իր յուրահատուկ շինություններով:

Կոբե քաղաքը ունի 1.5 մլն բնակիչ: Խոշոր նավահանգիստ է, տարեկան բեռնաշրջանառությունը 150 մլն տ: Նավաշինական կենտրոն է, որտեղ արտադրվում է երկրի նավերի 1/3-ը: Զարգացած են նաև մետաղածուլությունը, քիմիական, տեքստիլ արդյունաբերությունը:

4. Հոնսյուի կղզու ծայր հյուսիս-արևելքում գտնվում է *Տոխուկուի շրջանը*, որ տնտեսապես թույլ է: Արագ զարգանում է Սենդի քաղաքը:

Հոնսյուի արևմտյան ափին ձևավորվել են Հոկուրիկու և Տյուգուկու շրջանները:

5. *Հոկուրիկուն* հարթավայրային ճահճակալած շրջան է: Այստեղ համեմատաբար լավ պայմաններ կան բրնձի մշակման համար: Ափագծերը զառիթափ են, թույլ կտրտված, որի պատճառով չկան հարմար խորշեր նավահանգիստների կառուցման համար:

6. *Տյուգուկուի շրջանում* զարգացած է մետաղածուլությունը, նավթաքիմիան, մեքենաշինությունը, հատկապես՝ նավաշինությունը և ավտոմոբիլաշինությունը:

7. *Հոկայդոյի շրջանը* ընդգրկում է համանուն կղզին: Այստեղ զարգացած է թղթի, ցելյուլոզի արդյունաբերությունը, որոշ օգտակար հանածոների արդյունահանումը, գյուղատնտեսության ճյուղերից՝ սոյայի մշակումը, պտղաբուծությունը, անասնապահությունը:

Գլխավոր քաղաքը Սապպորոն է՝ 1.7 մլն բնակչությամբ: Քաղաքում զարգացած է ինքնաթիռաշինությունը, ձկնամշակումը, նավթաքիմիան, փայտամշակումը:

Սապպոն հայտնի է իր ծմեռային սպորտի կազմակերպման ավանդույթներով: Այստեղ անցկացվել են ծմեռային օլիմպիական խաղեր:

8. *Սիկոկույի շրջանը* ընդգրկում է համանուն կղզին: Արդյունաբերության ճյուղերից են ձկան վերամշակումը, թղթի, ցելյուլոզի արտադրությունը: Արդյունաբերական խոշոր կենտրոններ են Տակայաման և Մացույաման: Տակայամայուն ունի 3300 հզ բնակիչ: Այստեղ զարգացած է սև մետաղածուլությունը, մեքենաշինությունը. թղթի, ցելյուլոզի արտադրությունը, հախճապակու արտադրությունը:

9. *Օկինավայի շրջանն* ընդգրկում է Ռյուկյու կղզիախումբը: Մշակում են ցիտրուսներ, թեյ: Արդյունաբերական ձեռնարկությունները զբաղված են գյուղատնտեսական հումքի և ձկան վերամշակումով:

10. *Կյուսյուի շրջանը* ընդգրկում է համանուն կղզին: Այստեղ զարգացած է նավթավերամշակումը, բրնձի մշակումը: Արդյունաբերական խոշոր կենտրոնը Նագասակին է՝ 443 հզ բնակչությամբ: Երկրի նավաշինական ամենամեծ կենտրոնն է: Քաղաքը կառուցապատված է բուդդայական գեղեցիկ տաճարներով:

Ինքնաստուգման հարցեր

1. Որո՞նք են ճապոնացիների ազգային և կրոնական առանձնահատկությունները:
2. Ինչո՞վ է բացատրվում ճապոնիայի տնտեսության բացառիկությունը: Բնութագրե՛ք տնտեսության զարգացման ճապոնական մոդելի առանձնահատկությունները:
3. Որո՞նք են արդյունաբերության առաջատար ճյուղերը և ինչպե՞ս են դրանք տեղաբաշխված:
4. Որո՞նք են գյուղատնտեսության գլխավոր մշակաբույսերը, ի՞նչ տարածում ունեն:
5. Տնտեսական ի՞նչ շրջանների է բաժանվում ճապոնիան:
6. Ո՞րն է ճապոնիայի տեղը աշխատանքի միջազգային աշխարհագրական բաժանման մեջ:

ԿՈՐԵԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՐԵԱ)

*Տարածքը 98.5 հզ քկմ
Բնակչությունը՝ 48.4 մլն մարդ
Մայրաքաղաքը՝ Սեուլ:*

Կորեայի Հանրապետությունը աշխարհի առաջատար պետությունների շարքում է համախառն ներքին արդյունքով (925 մլրդ դոլար), նավաշինությամբ, ավտոմոբիլաշինությամբ, տրանսպորտային միջոցների շարժումը կարգավորող, դեկավարող սարքերի, տեղեկատվական տեխնոլոգիաների արտադրությամբ:

Տնտեսական արագ աճի շնորհիվ նա դարձել է ասիական ամենահզոր երկիրը: Կորեայում արտադրվող ապրանքները միջազգային շուկայից աստիճանաբար դուրս են մղում այլ առաջատար երկրների արտադրանքը: Նրան բաժին է ընկնում աշխարհում արտադրվող նավերի 1/3-ը, կիսահաղորդիչների 14 %-ը, պողպատի 4 %-ը:

Բնական պայմանները և ռեսուրսները: Տարածքի 80 %-ը ծածկված է լեռներով ու սարահարթերով, բլուրներով: Փոքր հարթավայրերը հանդիպում են լեռնահովիտներում, գետաբերաններում, ծովափերին: Ափագիծը խիստ կտրտված է՝ առաջացնելով ծոցեր, խորշեր, կղզիներ: Տեղ-տեղ լեռները գահավեժ իջնում են դեպի ծովափեր:

Կորեայում կան քարածխի, երկաթաքարի, մանգանի, ոսկու զգալի պաշարներ:

Կլիման մուսսոնային է: Ամառը տաք է ու խոնավ, առատ անձրևներով, միջին հուլիսյան ջերմաստիճանը 21°C -ից մինչև 29°C : Ձմեռը ցուրտ է՝ ծյան տեղումներով, ջերմաստիճանը $0-9^{\circ}\text{C}$, մթնոլորտային տեղումները՝ 600-1500 մմ:

Ջրագրական ցանցը խիտ է: Լճերը քիչ են, գետերը փոքր են: Սկիզբ առնելով լեռներից՝ հոսում են խոր կիրճերով, վերին և միջին հոսանքների շրջանում ունեն մեծ անկում, ստորին հոսանքի շրջաններում հոսում են դանդաղ: Հենց այդ ժամանակ էլ նրանք դառնում են նավարկելի: Չորային սեզոններին գետերի ջրերը օգտագործում են ոռոգման նպատակով: Վերին և միջին հոսանքներում գետերը ունեն ջրաէներգետիկ մեծ կարողություն:

Հարթավայրերում տարածվում են գետաբերուկներից առաջացած հողերն ու աղուտահողերը, լեռնալանջերին՝ մոխրահողերը, լեռնամարգագետնային հողերը:

Երկրի տարածքի 2/3-ը անտառածածկ է: Հիմնական ծառատեսակներն են սոճին, եղևնին, կաղնին: Առափնյա շրջաններում տարածված է բամբուկը:

Պատմությունը. Դեռևս Զ.ա. 1-ին դարում Կորեա թերակղզում ծևավորվել են առանձին փոքր պետություններ: Տասներորդ դարում ստեղծվել է Կորեա միասնական պետությունը: Ավելի ուշ նա եղել է մոնղոլների, ապա Չինաստանի տիրապետության տակ:

19-րդ դարի վերջում ճապոնիայի և Չինաստանի միջև կնքված պայմանագրով Կորեան դարձել է անկախ պետություն: 1910 թ. ճապոնիան գրավեց Կորեան: 1945 թ. Պոտսդամի պայմանագրով Կորեան 38⁰ զուգահեռականով բաժանվեց երկու մասի՝ խորհրդային և ամերիկյան: 1948 թ. խորհրդային մասում ձևավորվեց Կորեայի Ժողովրդադեմոկրատական Հանրապետությունը (Հյուսիսային Կորեան), ամերիկյան մասում՝ Կորեայի Հանրապետությունը (Հարավային Կորեան):

Կորեան պառլամենտական հանրապետություն է, պետության ղեկավարը նախագահն է, օրենսդրական մարմինը՝ միապալատ Ազգային ժողովը: Վարչականորեն բաժանվում է 9 մարզերի և կենտրոնական ենթակայության 5 քաղաքների:

Տնտեսությունը. 1950-1953 թթ. Հյուսիսային և Հարավային Կորեաների միջև տեղի ունեցած պատերազմն ամբողջությամբ քայքայեց երկրի տնտեսությունը: Պատերազմի ավարտից հետո ամերիկյան կապիտալի շնորհիվ հանրապետության տնտեսությունը սկսեց որոշ չափով աշխուժանալ, սակայն էական արդյունքները քիչ էին: 1961թ., իշխանության գլուխ անցան զինվորականները, ռազմական ռեժիմի պայմաններում սկսվեց երկրի արդյունաբերության զարգացումը, որին նպաստեցին.

- անցումը ներքին սպառման ապրանքների արտադրությունից արտահանվող ապրանքների արտադրությանը,
- հովանավորչական քաղաքականությունը՝ պաշտպանելու հայրենական արտադրողներին,
- ամերիկյան և ճապոնական կապիտալի մեծ ներհոսքը, նրանց կողմից կորեական ապրանքների համար շուկայի տրամադրումը:

Կապիտալի նախնական կուտակման համար բազա հանդիսացավ ավանդական թեթև արդյունաբերության զարգացումը, որը պայմանավորված էր նաև ներքին շուկայի պահանջներով: Բամբակ-

յա գործվածքների և կոշիկի արդյունաբերությունը աշխատում էր նաև արտահանության համար: Հողի սեփականաշնորհումը նպաստեց նաև գյուղատնտեսական մթերքների աճին: Սակայն թեթև և դրան զուգահեռ զարգացող սննդի արդյունաբերության ճյուղերը չէին կարող լիարժեք նպաստել տնտեսական վերելքին: Փոքր էր դրանց կապիտալ ներդրման հնարավորությունները: Խնդրի նպատակային լուծման ուղին մնում էր ժամր արդյունաբերության զարգացումը:

Անցյալ դարի 70-ական թվականներին կառուցվեցին սև և գուճավոր մետաղաձուլության ձեռնարկություններ: Բարձրորակ պողպատների արտադրությունը բազա հանդիսացավ մեքենաշինության համար: Զարգացան նավաշինությունը, հաստոցաշինությունը, կենցաղային ապրանքների արտադրությունը, ներմուծվող նավթի հիման վրա՝ քիմիական արդյունաբերությունը: Հանքային պարարտանյութերի արտադրությունը կարևոր նշանակություն ունեցավ գյուղատնտեսության համար:


Նավաշինությունը, էլեկտրատեխնիկական արդյունաբերությունը և արտադրության մյուս ճյուղերի արտադրանքի արտահանումը մեծացրին կապիտալի ներկրումը: Այդ կապիտալի մի մասը ներդրվեց գիտահետազոտական նախագծերի ոլորտում: Սա էլ իր հերթին նպաստեց գիտատար, բարձր տեխնոլոգիաների զարգացմանը: Սկսվեց հեռուստացույցների, տեսաձայնագրիչների, համակարգիչների, կենցաղային սարքերի զանգվածային արտադրությունը: Ընդ որում նորաստեղծ տեխնոպարկերը հնարավորություն էին ստեղծում անընդհատ նորացնել արտադրատեսականին՝ ելնելով համաշխարհային շուկայի պահանջներից:

Անցյալ դարի 90-ական թվականներին Հարավային Կորեան դարձավ բարձր տեխնոլոգիաների, մոնոպոլիստական ընկերությունների («Սամսունգ», «Հոնդա», ՊՈՍԿՈ) ինդուստրիալ հզոր երկիր: Արագ թափ ստացավ ատոմային էներգետիկան, շահագործման հանձնվեցին ատոմային ռեակտորներ:

Արդյունաբերության արագ աճը նպաստեց գյուղատնտեսության և սպասարկման ոլորտների զարգացմանը և 2000 թ. Կորեայի Հանրապետությունը դարձավ հետինդուստրիալ տնտեսության երկիր:

Իր ձեռքին ունենալով տնտեսական ողջ ներուժը (Կորեայում խոշոր ձեռնարկությունները պատկանում են պետությանը)՝ պետությունը կարգավորում է երկրի բոլոր շրջանների համամասնական

զարգացումը: Սև մետաղածուլության, նավթավերամշակման, մեքենաշինական ձեռնարկություններ հիմնվեցին նավահանգստային քաղաքներում՝ կապված ներմուծման և արտահանման ու աշխատուժի նպատակային օգտագործման և այլ գործոնների հետ:



Սկ. 31. Կորեայի Հանրապետության ազգային ժողովի շենքը

Կորեայի Հանրապետության տնտեսության հիմքը մնում է *արդյունաբերությունը*, որը տալիս է համախառն ներքին արդյունքի 40.4 %-ը: Այս ոլորտում է զբաղված աշխատուժի 19%-ը: Արդյունաբերության տարեկան աճը 10.1 % է: Արդյունաբերության հիմքը էներգետիկան է. էլեկտրաէներգիայի տարեկան արտադրությունը 322.5 մլրդ կվտ ժ է: Էլեկտրաէներգիայի մեծ մասը տալիս են ՋԷԿ-երը, սակայն Հարավային Կորեան ունի հզոր ատոմային արդյունաբերություն: Միջուկային էներգիայի արտադրմամբ աշխարհում գրավում է վեցերորդ տեղը:

Սև մետաղածուլության ձեռնարկությունները տարեկան արտադրում են 33.7 մլն տ պողպատ: Կապված վառելիքի և հանքային հումքի ներմուծման հետ (Ավստրալիայից, Ինդոնեզիայից)՝ սև մետաղածուլության ձեռնարկությունները տեղաբաշխված են նավահանգստային քաղաքներում (Պիոհան, Պուսան, Կվանյան և այլն):

Մեքենաշինական ձեռնարկությունները արտադրում են ծովային նավեր, երկաթուղային շարժակազմ, ավտոմեքենաներ, կենցաղային սարքեր, նաև՝ կիսահաղորդիչներ, հեռուստացույցներ, էլեկ-

տրոնային հաշվիչ մեքենաներ, ռադիոհեռակապի միջոցներ, անհատական համակարգիչներ, լուսանկարչական սարքավորումներ և բարձր տեխնոլոգիայի այլ ապրանքներ: Մեքենաշինության և սարքաշինության խոշոր կենտրոնը մայրաքաղաքային ագլոմերացիան է, ուր կան հզոր գիտահետազոտական, գիտաարտադրական հիմնարկներ: Նման հիմնարկներ են ստեղծվել և շարունակվում են ընդարձակվել Պոլսանում, Ուլսանում, Քվանգձոյում:

Քիմիական արդյունաբերության հումքը նավթն է, հեղուկ գազը, մետաղածուլական ձեռնարկությունների թափոնները: Արտադրում են պլաստմասսաներ, ռետինատեխնիկական ապրանքներ, ավտոդողեր, հանքային պարարտանյութեր, լաքեր, ներկեր: Քիմիական արդյունաբերության խոշոր կենտրոններն են՝ Ինչիոն, Ուլսան, Յոսու, Սանչիոկը:

Թեթև արդյունաբերությունը տնտեսության հնագույն ճյուղերից մեկն է: Ջարգացած է բամբակյա գործվածքների, տրիկոտաժի, հագուստեղենի, կոշիկի արտադրությունը: Արդյունաբերության և հատկապես բարձր տեխնոլոգիաների առաջխաղացմանը նպաստում է ազատ տնտեսավարման գոտիների, տեխնոպարկերի, տեխնոպոլիսների ստեղծումը: Գիտաարտադրական հզոր համակարգ է ստեղծվել Սեուլ-Պոլսան գծի վրա: Միայն Սոլսան քաղաքի գոտում տեղադրված են բարձր տեխնոլոգիաների արտադրության 70-ից ավելի ձեռնարկություններ:

Գյուղատնտեսությունը տալիս է ՀՆԱ-ի 3.2 %-ը: Այս ոլորտում զբաղված է աշխատուժի 8 %-ը: Երկրի տարածքի 17.18 %-ը վարելահողեր են, 1,9 %-ը՝ բազմամյա տնկարկներ: Ոռոգովի հողերի տարածքը 1.16 մլն հա է: Գյուղատնտեսության գլխավոր ճյուղը բուսաբուծությունն է: Կարևոր մշակաբույսը բրինձն է՝ բնակչության սննդի հիմնական միջոցը: Բրնձի մշակության հիմնական շրջանը երկրի հարավն է և հարավ-արևմուտքը: Բրինձ մշակում են ամառային մուսսոնների սեզոնին: Նույն հողակտորի վրա տարվա չորային սեզոնին արհեստական ոռոգման շնորհիվ ցանում են ցորեն և գարի:

Կորեայի Հանրապետությունում մշակում են նաև բամբակ, ծխախոտ, կանեփ, սորգո, լոբազգիներ:

Անասնապահությունը համեմատաբար թույլ է զարգացած՝ կապված մսամթերքի ցածր պահանջարկի հետ: Բարձր մակարդակի վրա է ձկնորսությունը:

Տրանսպորտը: Ներքին բեռնափոխարդյունների և ուղևորափոխադրումների գործում կարևոր դեր է կատարում երկաթուղային տրանսպորտը: Երկաթուղիների ընդհանուր երկարությունը 3472 կմ է: Երկաթուղային գլխավոր մայրուղին Սեուլից ձգվում է մինչև Պուսան (երկարությունը՝ 412 կմ): Երկաթուղու 139 կմ-ը թունելներ են, շատ են կամուրջները:

Ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը 87 հզ կմ է: Ավտոտրանսպորտն ավելի արագ է զարգանում և մեծ դեր է կատարում երկրի տնտեսության մեջ:

Կորեան հանդիսանում է ծովային առևտրական նավատորմ ունեցող խոշոր երկիր: Ունի 1000 տ և ավելի մեծ բեռնատարողությամբ 601 նավ: Խոշոր նավահանգիստներն են Պուսանը, Պիոհանը:

Արտաքին տնտեսական կապերը. Արտահանման ծավալները 250.6 մլրդ դոլար են, ներմուծմանը՝ 214.6 մլրդ դոլար: Արտահանում է կիսահաղորդիչներ, ռադիոհեռակապի սարքավորումներ, տրանսպորտային մեքենաներ, համակարգիչներ, նավթամթերքներ: Արտահանման ծավալների 19.7 %-ը բաժին է ընկնում Չինաստանին, 17 %-ը՝ ԱՄՆ-ին, 8.6 %-ը՝ Ճապոնիային, 7.2 %-ը՝ Հոնկոնգին: Ներմուծում է մեքենաներ, էլեկտրոնային ապրանքներ, նավթ, պողպատ, տրանսպորտային միջոցներ, քիմիկատներ, հանքային հումք: Ներմուծման գլխավոր գործընկերներն են՝ Ճապոնիան՝ 20.6 %, Չինաստանը՝ 13.2 %, Մեծ Բրիտանիան՝ 12.9 %, Սաուդյան Արաբիան՝ 5.3 %:

Ինքնաստուգման հարցեր

1. Որո՞նք են Կորեայի Հանրապետության տնտեսական զարգացման նախադրյալները:
2. Ի՞նչ դեր ունեն աշխարհագրական դիրքը, բնական պայմանները և ռեսուրսները երկրի տնտեսության զարգացման գործում:
3. Որո՞նք են արդյունաբերության առաջատար ճյուղերը, տեղաբաշխման առանձնահատկությունները:
4. Ի՞նչ տեղ ունի Կորեան աշխարհի միջազգային աշխարհագրական բաժանման մեջ:
5. Ի՞նչ ապրանքներով է հայտնի միջազգային շուկայում:

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

*Տարածքը՝ 4024.4 հզ քկմ
Բնակչությունը՝ 60.04 մլն մարդ*

Կենտրոնական Ասիայի կազմի մեջ են մտնում Ղազախստանը, Թուրքմենստանը, Տաջիկստանը, Ղրղզստանը և Ուզբեկստանը:

Տարածաշրջանի հյուսիսում ընդարձակ տափաստաններն են, հարավը սահմանափակվում է բարձր լեռնաշղթաներով, արևմուտքում Կասպից ծովն է, արևելքում՝ ընդարձակ տայգան: Տարածաշրջանը մարդկային քաղաքակրթության հնագույն օջախներից մեկն է, նրա վրայով են անցել եվրոպայից Ասիա գնացող առևտրական ճանապարհները, այստեղ են խաչվել տարբեր ժողովուրդների ճակատագրերը, որոնք ծուլվել են միմյանց: Սա մոնղոլիդ և երոպոիդ ռասաների, պարսիկների և թուրքերի շփման վայրն է:

Բնական պայմանները և ռեսուրսները: Տարածաշրջանի հյուսիսում և հյուսիս -արևմուտքում ընդարձակ հարթավայրեր են և դադախական մանրաբլուրները, հարավում Կոպետդաղի հին քայքայված լեռներն են, հարավ-արևելքում՝ Պամիրա-Ալայան, Տյան-Շանի, Ջունգարական Ալաթաուի երիտասարդ լեռները, որոնց բնորոշ են հզոր երկրաշարժերը:

Կլիման խիստ ցամաքային է: Արեգակնային ճառագայթարձակումը հյուսիսում 100 կկալ/սմ² է, հարավում՝ 160 կկալ/սմ²: Միջին հուլիսյան ջերմաստիճանը 26-32° C է, ծայր հարավում՝ Թերմեզում +50°, անապատային շրջաններում գետնի ջերմաստիճանը բարձրանում է մինչև 79° (Կարակումում): Ձմեռը հյուսիսում ցուրտ է՝ -15-18°, հարավում՝ +2°: Սիբիրից եկող ցուրտ հոսանքների պատճառով, ձմռանը կարող են լինել ուժեղ սառնամանիքներ: Լեռնային շրջաններում ձմեռը ցուրտ է, ամառը 3500 մ բարձրությունների վրա +15° C-ի, իսկ գագաթային մասերում սառնամանիքներ են:

Տեղումների քանակը չնչին է, որի պատճառով տարածքի մեծ մասում անապատներ (Կարակում, Կզլկում) ու կիսաանապատներ են:

Ջրագրական ցանցը աղքատ է: **Գետերը**՝ Ամադուրյան, Սիրդարյան, սկիզբ են առնում բարձր լեռներից, սառցադաշտային սնման

շնորհիվ ունեն համեմատաբար կայուն ռեժիմ: Հյուսիս-արևմուտքի միակ գետը սակավաջուր Ուրալն է, արևելքում՝ Իրտիշը, հյուսիսում՝ Իշիմը: Ներքին ընդարձակ շրջաններում գետեր չկան: Ամենախոշոր *լճերն* են Բալխաշը, Իսիկ Կուլը: Այստեղ է գտնվում Արալյան ծովը, որի մակարդակը արագ իջնում է, ջրից ազատված տարածքները ծածկված են աղի շերտով: Քամիները այդ աղը տարածում են՝ ոչնչացնելով շրջապատի համար կենսական նշանակություն ունեցող արոտավայրերը:

Տարածաշրջանի գետերը սկիզբ առնելով բարձր լեռներից՝ ունեն ջրատներգետիկ մեծ կարողություններ:

Ընդերքը հարուստ է օգտակար հանածոներով: Տնտեսական մեծ նշանակություն ունեն նավթը և գազը: *Նավթի և գազի* մեծ պաշարներ կան Ղազախստանում (Մանգշլակ՝ Ուզեն, Ժետիբայ հանքավայրեր) Ուրալ-Էմբայի շրջանում (Մակատ, Օրորվա հանքավայրեր), Թուրքմենստանում (Չելքեն և Նեպիտ դաղ, Կում դաղ հանքավայրեր), Ուզբեկստանում (Ֆերգանայի հովիտ): Բնական գազի խոշորագույն հանքավայրեր են Գազլին, Ջարկակը (Թուրքմենստանում), Սալի Սալը (Ուզբեկստանում): *Ածխի* մեծ պաշարներ կան Ղազախստանում (Կարագանդայի և Եքիբաստուլի ավազաններ): Կարագանդայի քարածխի մեծ մասը կոքսացող է, մնացած մասը, ինչպես նաև Եքիբաստուլի ամբողջ ածուխը ունեն էներգետիկ նշանակություն: Քարածուխ կա նաև Ուզբեկստանի Անգրենի ավազանում: Տարածաշրջանը հարուստ է մետաղային ռեսուրսներով: Երկաթաքար կա Ղազախստանում՝ Սոկոլովսկի, Լիսակովսկի, Սարբայսկի, Կարաժալի հանքավայրերում, պղինձ՝ Ղազախստանի Ջեզգազգան, Կոունրադի, Ուզբեկստանի Ալմալիկ հանքավայրերում: Բազմամետաղներով հարուստ են Ղազախստանը, Ուզբեկստանը, մանգանով՝ Ղազախստանը:

Տարածաշրջանը ունի չքմիական հումք. ֆոսֆորիտներ կան Կարաթաույում (Ղազախստան), Ժծումբ՝ Գաուրդակում (Թուրքմենստան), գլաուբերյան աղ՝ Բեկդաշում (Թուրքմենստան):

Բնակչությունը. Կենտրոնական Ասիայում ապրում է 60 մլն - մարդ: Բնակչության թվով առաջին տեղում Ուզբեկստանն է: Այստեղ ապրում է տարածաշրջանի բնակչության 45.5 %-ը, երկրորդ տեղում Ղազախստանն է՝ 23.3 % (Մանրամասն տես աղյուսակ 35):

Տարածաշրջանը նոսր է բնակեցված՝ 15 մարդ/քկմ վրա: Ամենախտաբնակը Ուզբեկստանն է (61 մարդ մեկ քկմ վրա), ամենանոսր բնակեցվածը Ղազախստանն է (5.5 մարդ մեկ քկմ): Ներքին շրջան-

ներում նույնպես բնակչությունը անհավասար է տեղաբաշխված, ամենախտաբանակ շրջանը Ֆերգանայի հովիտն է: Խիտ են բնակեցված Ամուդարիայի, Սիրդարիայի, Ջերավշանի և մյուս օազիսները, նոսր են բնակեցված արևմտյան անապատային շրջանները:

Աղյուսակ 35

Կենտրոնական Ասիայի պետությունների տարածքը և բնակչությունը

Պետություն	Տարածքը հազ.քկմ	Բնակչությունը մլն մարդ	Խտությունը մարդ քկմ
1. Թուրքմենստան	488.1	5.04	10.3
2. Ղազախստան	27717.3	15.2	5.5
3. Ղրղզստան	198.5	5.2	26.2
4. Տաջիկստան	143.1	7.3	51.0
5. Ուզբեկստան	447.4	27.3	61.0
Ընդամենը	40.24.4	60.04	15.0

Տարածաշրջանը բազմազգ է: Ամենամեծաթիվը ուզբեկներն են, ղազախները, թուրքմենները, ղրղզները: Ուզբեկները կազմում են



*Նկ. 32. Թուրքմենուհի
աղջնակ*

Ուզբեկստանի բնակչության 74.3 %-ը, Տաջիկստանի՝ 15.3 %-ը, Ղրղզստանի բնակչության 5 %-ը: Տաջիկները ապրում են իրենց պետությունում, ուր կազմում են բնակչության 79.9 %-ը, Ուզբեկստանում՝ բնակչության 4.4 %-ը: Տարածաշրջանում մեծ թիվ են կազմում ռուսները: Նրանք կազմում են Ղազախստանի բնակչության 30 %-ը, Ուզբեկստանի՝ 14.2 %-ը, Ղրղզստանի՝ 12.5-ը, Թուրքմենստանի բնակչության 5 %-ը: Տարածաշրջանում ապրում են նաև կարակալպակներ, թաթարներ, ուկրաինացիներ, գերմանացիներ:

Բնակչության բնական աճը բարձր է.

Տաջիկստանում այն 24.4 ‰ է, Թուրքմենստանում՝ 19.0‰, Ուզբեկստանում՝ 18.46 ‰: Ղազախստանում՝ ընդամենը 6.6 ‰: Ղազախստանում բնակչության ցածր աճի գլխավոր պատճառը այն է, որ այստեղ մեծ թիվ են կազմում ռուսները և ուկրաինացիները, որոնց շրջանում ընդհանրապես աճը չատ ցածր է (Մանրամասն տե՛ս աղյուսակ 36):

**Կենտրոնական Ասիայի պետությունների
բնակչության բնական շարժը և կյանքի միջին տևողությունը (2006թ.)**

Պետություն	Ծնելի- թյուն %	Մահ- ցություն %	Բնական աճ %	Կյանքի միջին տևողությունը (տարի)		
				ընթանը	սղմա- ր- դի	միջոցի
1. Թուրքմենստան	27.61	8.6	19.01	72.6	76.9	68.0
2. Ղազախստան	16	9.4	6.6	66.9	61.9	72.5
3. Ղրղզստան	22.8	7.08	15.7	68.5	64.5	7.7
4. Տաջիկստան	32.65	8.25	24.4	64.9	62.0	68.0
5. Ուզբեկստան	26.3	7.84	18.46	64.6	61.2	68.1

Տարածաշրջանում կյանքի միջին տևողությունն ամենից բարձր է Թուրքմենստանում՝ 72.6 տարի, ամենացածրը՝ Տաջիկստանում՝ 62.0 տարի:

Սեռ չափերի է հասնում արտագաղթը: Արտագաղթի և ներգաղթի հաշվեկշիռը Ղազախստանում – 3.3 % է, Տաջիկստանում՝ -2.5 %, Ուզբեկստանում՝ -1,5 %: Արտագաղթի մեծ չափերը կապված են սոցիալ-տնտեսական պայմանների վատթարացման, էթնիկական անհամընդունակության հետ:

Ուրբանիզացման մակարդակը շատ ցածր է Թուրքմենստանում՝ 27 %, Ղրղզստանում՝ 33 %, Ուզբեկստանում՝ 40 %, Ղազախստանում՝ 57 %: Տարածաշրջանի խոշոր քաղաքներն են Տաշքենդը՝ 2.1 մլն մարդ, Ալմա Աթան՝ 1.2 մլն, Բիշկեկը՝ 624 հազար, Կարագանդան՝ 608 հազար, Ղուշանբեն՝ 582 հազար:

Տնտեսությունը: Համախառն ներքին արդյունքով առաջին տեղում Ղազախստանն է, երկրորդում՝ Ուզբեկստանը, երրորդում՝ Թուրքմենստանը: Խորհրդային տարիներին բոլոր հանրապետություններում էլ ՀՆԱ-ի մեջ առաջին տեղում արդյունաբերության ոլորտն էր: Կապված արդյունաբերության ճգնաժամային վիճակի հետ՝ Ուզբեկստանում և Ղրղզստանում ՀՆԱ-ի մեջ առաջին տեղում գյուղատնտեսությունն է, մյուս երկրներում նույնպես գյուղատնտեսության տեսակարար կշիռը բարձր է (Տես աղյուսակ 37):

**Կենտրոնական Ասիայի պետությունների համախառն
ներքին արդյունքը (2006թ.)**

Պետություն	ՀՆԱ մլրդ դոլար	ՀՆԱ մեկ չմփի հաշվով դոլար	ՀՆԱ ըստ տնտեսության ոլորտների %		
			Արդյունաբե- րություն	գյուղատնտե- սություն	Ոչ արտադր. ոլորտ
1. Թուրքմենստան	45.11	8900	33.9	24.4	41.7
2. Ղազախստան	138.7	9100	44.1	6.3	52.7
3. Ղրղըզստան	10.49	2000	19.5	34.5	46.1
4. Տաջիկստան	9.4	1300	28.5	22.7	48.8
5. Ուզբեկստան	54.81	2000	25.7	31.1	43.2

Արդյունաբերության գլխավոր ճյուղը բամբակյա գործվածքների արտադրությունն է, երկրորդ տեղում՝ մետաքսյա գործվածքներն են, այնուհետև՝ գորգագործությունը: Զարգացած է նաև սննդի արդյունաբերությունը, մրգերի և բանջարեղենի պահածոների արտադրությունը: Սննդի և՛ թեթև արդյունաբերությունը չի կարող ամբողջությամբ բավարարել տեղական կարիքները. չեն օգտագործվում բոլոր կարողությունները:

Դեռևս խորհրդային տարիներին արագ թափով զարգանում էին լեռնահանքային, լեռնամետալուրգիական, ջերմաէներգետիկ արդյունաբերության ճյուղերը: Այսօր էլ արտադրության այդ ճյուղերը, դժվարություններով հանդերձ, գոյատևում են: Դա պայմանավորված է բնառեսուրսային մեծ կարողությունների և ներքին ու ԱՊՀ-ի ընդարձակ շուկայի առկայությամբ:

Տարածաշրջանը ունի *նավթի և բնական գազի* զարգացած արդյունաբերություն: Նավթ և բնական գազ արդյունահանում են Ղազախստանում, Թուրքմենստանում և Ուզբեկստանում: Նավթի մի մասը վերամշակվում է տեղում, որոշ քանակություն արտահանվում է: Նավթի հանույթով առաջին տեղում Ղազախստանն է՝ 75,4 մլրդ տ: Բնական գազի արդյունահանմամբ առաջին տեղում Ուզբեկստանն է՝ 38.6 մլրդ խմ, երկրորդ տեղում՝ Թուրքմենստանը՝ 15.2 մլրդ խմ:



Նկ.33. Գյուղատնտեսական ապրանքների շուկա

Էլեկտրաէներգիայի արտադրությամբ առաջին տեղում Ղազախստանն է, երկրորդ տեղում՝ Ուզբեկստանը (Մանրամասն տե՛ս աղյուսակ 38): Թուրքմենստանում, Ուզբեկստանում և Ղազախստանում էլեկտրաէներգիայի մեծ մասը տալիս են ջերմաէլեկտրակայանները, Տաջիկստանում և Ղրղըզստանում ջրաէլեկտրակայանները: Զրաէլեկտրակայանների հզոր համակարգ է ստեղծված Վախշ, Նարին, Սիրդարյա, Իլի, Իրտիշ գետերի վրա:

Աղյուսակ 38

Էլեկտրաէներգիայի արտադրությունը Կենտրոնական Ասիայի պետություններում (2006 թ.)

Պետություն	Էլեկտրաէներգիա մլրդ կվտ ժամ	ԶեԿ. %	ԶրեԿ. %
1. Թուրքմենստան	10.79	99.9	0
2. Ղազախստան	63.29	84.3	15.7
3. Ղրղըզստան	14.06	7.6	92.4
4. Տաջիկստան	16.5	1.9	98.1
5. Ուզբեկստան	46.45	88.2	11.8

Այստեղ աշխատանքներ են տարվում կառուցելու արեգակնային էլեկտրակայաններ:

Սև մետաղաձուլությունը զարգացած է Ղազախստանում: Գունավոր մետաղաձուլությունը բազմաճյուղ է: Այլումին են ձուլում Ղազախստանում (Զիմբենդ, Ուստ-Կամենագորսկ), Տաջիկստանում (Թուրսունգադե), պղինձ՝ Ղազախստանում (Ջեզգազգան, Բալխաշ), Ուզբեկստանում (Ալմալիկ): Տարածաշրջանը ունի նաև կապարի և ցինկի արտադրություն:

Մեքենաշինության գլխավոր ճյուղը գյուղատնտեսական մեքենաների, տրանսպորտային միջոցների, տեքստիլ արդյունաբերության մեքենաների ու սարքավորումների արտադրությունն է:

Ղազախստանում արտադրում են լեռնահանքային արդյունաբերությանը, գյուղատնտեսությանն անհրաժեշտ էքսկավատորներ, տրակտորներ, Ուզբեկստանում՝ տրակտորներ, բամբակի տնտեսությանը անհրաժեշտ մեքենաներ: Աշխատանքներ են տարվում արտասահմանյան ընկերությունների կողմից տրանսպորտային միջոցների, էլեկտրատեխնիկական սարքավորումների արտադրություն կազմակերպելու ուղղությամբ:

Քիմիական արդյունաբերության ձեռնարկություններն արտադրում են հանքային պարարտանյութեր, տեխնիկական ապրանքներ, պլաստմասսաներ: Քիմիական արդյունաբերության համար հումք են ծառայում նավթը, բնական գազը, ֆոսֆորիտները, ծծումբը, տարբեր աղեր, մետաղածուխայան թափոնները:

Գյուղատնտեսությունը կարևոր նշանակություն ունի բնակ-չության ներքին կարիքների բավարարման, աշխատուժի զբաղվածության ապահովման և արտահանման համար, նաև աշխատանքի հասարակական աշխարհագրական բաժանման մեջ: Սակայն բնական-տնտեսական ներուժը լիարժեք չի օգտագործվում: Հետխորհրդային տարիներին գյուղատնտեսական ապրանքների արտադրությունը պակասել է: Ցածր է հողօգտագործման մակարդակը:

Վարելահողերը կազմում են Ուզբեկստանի տարածքի ընդամենը 10.5%-ը, բազմամյա տնկարկները՝ 0.76 %-ը, Ղազախստանի 8.3 և 0.05, Թուրքմենստանի 4.5 և 0.14%-ը: Պատճառը անապատային լանդշաֆտն է և արտադրողական ուժերի զարգացման ցածր մակարդակը: Լեռնային բարդ ռելիեֆի և անբարենպաստ բնակլիմայական պայմանների, արտադրողական ուժերի ցածր մակարդակի պատճառով վարելահողերը զրավում են Տաջիկստանի տարածքի ընդամենը 6.5 %-ը, բազմամյա տնկարկները՝ 0.9 %-ը, Ղրղզստանի տարածքի 6.5%-ը և 0.3 %-ը:

Տարածաշրջանը գյուղատնտեսական առումով գտնվում է ռիսկային գոտում: Առանց ոռոգման հողագործությամբ հնարավոր չէ զբաղվել միայն հյուսիսային Ղազախստանում և Պամիրի ու Տյան Շանի միջլեռնային հովիտներում: Կայուն բերքի ապահովման համար տարածաշրջանում ստեղծվել է ոռոգման մեծ ցանց (Կարակումի, Ֆերգանայի և շատ այլ ջրանցքներ): Դրանց շնորհիվ Ուզբեկս-

տանում ոռոգվում է 4.28 մլն հա հող, Ղազախստանում՝ 3.56 մլն, Թուրքմենստանում՝ 1.78 մլն, Ղրղըզստանում՝ 1.1 մլն, Տաջիկստանում՝ 72.2 հզ հա: Ոռոգման շրջաններում ձևավորվել է օազիսային հողագործություն:

Տարածաշրջանի հողատարածքների գերակշիռ մասում ցանում են գարնանացան *ցորեն*: Ցորենի ցանքատարածությունները մեծ տեղ են գրավում Ղազախստանի հյուսիսում: Ամուդարյա և Սիր-դարյա գետերի հովիտները բամբակի, բրնձի, խաղողի, պտղատուների, բանջարաբոստանային կուլտուրաների գլխավոր շրջաններ են: Ամենատարածված տեխնիկական կուլտուրան բամբակենին է, որի մշակությամբ առաջին տեղում է Ուզբեկստանը: Բամբակ մշակում են Ֆերգանայի և Ջարավշանի հովիտներում (երկարաթել բամբակ): Սարահարթերում ցանում են ծխախոտ, կակաչ, կերակրախոտեր:

Տարածաշրջանում ընդարձակ տարածք են գրավում արոտավայրերը, որոնք հիմք են հանդիսանում ոչխարաբուծության համար: Այն զարգացած է բոլոր պետություններում: Թուրքմենստանը հայտնի է կարակուլի ոչխարաբուծությամբ:

Տարածված է նաև խոշոր եղջերավոր անասնապահությունը, խոզաբուծությունը (Ղազախստանի հյուսիսում), ձիաբուծությունը և ուղտաբուծությունը:

Տրանսպորտը: Տարածքի ընդարձակության համեմատ ճանապարհային ցանցը նոսր է: Տարածաշրջանի համար կարևոր նշանակություն ունի նավթամուղների և գազամուղների լայն ցանցը:

Մոյուսակ 39

Կենտրոնական Ասիայի պետությունների ճանապարհային ցանցը (2006թ)

Պետություն	Երկաթուղիներ (կմ)	Ավտոճանապարհներ (կմ)	Ներքին ջրային ուղիներ (կմ)
1. Թուրքմենստան	2440	2400	1300
2. Ղազախստան	13700	25800	4000
3. Ղրղըզստան	470	18500	600
4. Տաջիկստան	482	27767	200
5. Ուզբեկստան	3950	81600	110

Արտաքին տնտեսական կապերը: Ղազախստանի, Թուրքմենստանի և Ուզբեկստանի արտաքին առևտրական հաշվեկշիռը դրական է, Ղրղըզստանինը և Տաջիկստանինը՝ բացասական: Պատճառը այն է, որ առաջին երեք հանրապետություններում արտահան-

վող ապրանքների մեջ գերակշիռ տեղ են գրավում նավթը, բնական գազը, քարածուխը, սև մետաղների հանքաքարը: Արտահանվում են նաև գյուղատնտեսական ապրանքներ՝ բամբակ, մրգեր, բանջարաբոստանային կուլտուրաներ, կարակուլի մորթի, բուրդ, մետաքս:

Աղյուսակ 40

Կենտրոնական Ասիայի պետությունների արտաքին առևտուրը
և պարտքը (մլրդ դոլար) 2006թ.

Պետություն	Արտահանում	Ներմուծում	Արտաքին պարտքը
1. Թուրքմենստան	5.4	3.9	2.5
2. Ղազախստան	35.558	22	53.89
3. Ղրղզստան	701.8	1.777	2.4
4. Տաջիկստան	1.16	1.51	0.8
5. Ուզբեկստան	5.51	3.9	4.7

Ներմուծում են մեքենաներ և սարքավորումներ: Արտաքին առևտրական գործընկերներն են Ռուսաստանը, Ուկրաինան, Եվրամիության երկրները, Չինաստանը:

Ինքնաստուգման հարցեր

1. Բնութագրե՞ք տարածաշրջանի բնական ռեսուրսների դերը աշխատանքի միջազգային աշխարհագրական բաժանման մեջ:
2. Բացահայտե՞ք տարածաշրջանի տնտեսական զարգացման միտումները հետխորհրդային տարիներին:
3. Արդյո՞ք համապատասխանում է տարածաշրջանի տնտեսության զարգացման մակարդակը ունեցած բնական և աշխատանքային ռեսուրսներին:
4. Ինչպիսի՞ն են բնակչության բնական և մեխանիկական շարժերը: Ի՞նչ խնդիրներ ունի տարածաշրջանը:
5. Որո՞նք են տնտեսության առաջատար ծյուղերը: Նշել վառելիքաէներգետիկ տնտեսության դերը:
6. Գյուղատնտեսության ո՞ր ծյուղերն են առավել զարգացած, նշել ոռոգման համակարգի կարևորությունը հողագործության մեջ, ի՞նչ խնդիրներ են առնչվում ոռոգման հետ:
7. Անասնապահության ո՞ր ծյուղերն են զարգացած և ինչու՞: Ի՞նչ խնդիրներ են կապված արոտավայրերի նպատակային օգտագործման հետ:

ՂԱԶԱԽԱՍԱՆ

*Տարածքը՝ 2717 հզ քկմ
Բնակչությունը՝ 15.2 մլն մարդ
Մայրաքաղաքը՝ Աստանա*

Ղազախստանը բնառեսուրսային հսկայական կարողությունների երկիր է՝ ընդարձակ հողային տարածքներ, գյուղատնտեսության համար պիտանի բերրի հողեր, արոտավայրեր, ընդերքում էներգակիրների, քիմիական հումքի, մետաղների մեծ պաշարներ: Նա ունի հարմար աշխարհագրական դիրք, ընդարձակ ապրանքային շուկա հարևան երկրներում, Եվրոպան Ասիային կապող ճանապարհներ, ընդ որում՝ ճանապարհների ընդարձակման մեծ հնարավորություններ:

Անկախության առաջին տարիներին երկրի տնտեսությունը սկսեց անկում ապրել: 1995-97 թթ. և հետագայում մշակվեցին տնտեսության վերակառուցման ծրագրեր, արագ թափով ընդարձակվեց մասնավոր սեկտորը, մեծացան արտասահմանյան ներդրումները: Այս ամենի շնորհիվ տնտեսությունը սկսեց վերելք ապրել և 2000-2001 թթ. համախառն ներքին արդյունքի աճը կազմեց 2 %: Ավելի արագ թափով զարգացավ էներգակիրների արդյունահանումը, 2001 թ. շահագործման հանձնվեց Թենգիզ-Սև ծով նավթամուղը:

Պետությունը խրախուսում է արտասահմանյան ներդրումները, հումքի արտահանումը: Վերջինս ավելի մեծացնելու նպատակով կառուցվում է Կասպից ծովի ափերից Չինաստան գնացող նավթամուղ: Մեծ արտոնություններ են ստանում հայրենական արտադրողները: Արտադրության կարևորագույն ճյուղերը մնում են պետության ձեռքին:


Աշխատանքներ են տարվում թուլացնելու տնտեսության հումքային ուղղվածությունը՝ մեծացնելով վերամշակող ճյուղերի դերը:

Բնական պայմանները և ռեսուրսները: Մակերևույթի մեծ մասը հարթավայրային է: Ղրդըզստանի սահմանամերձ հարավային շրջանները լեռնային են: Տեղ-տեղ մակերևույթը թույլ բլրապատ է: Կասպից ծովի առափնյա շրջանները համաշխարհային օվկիանոսի մակարդակից ցածր են 28 մ-ով, իսկ Մանգըշլակ թերակղզում գտնվող (Կարագիյե) իջվածքը 132 մ է:

Կլիման խիստ ցամաքային է: Հունվարյան միջին ջերմաստիճանը հյուսիսում -19° է, հարավում՝ -4° C: Հուլիսյան միջինը՝ $+26^{\circ}$ C:

Ամռանը ջերմաստիճանը կարող է բարձրանալ մինչև $+45^{\circ}\text{C}$, իսկ ձմռանը իջնել մինչև -45°C : Մթնոլորտային տեղումները 200-300 մմ են, կենտրոնական և արևմտյան շրջաններում՝ 50-100 մմ: *Գետային ցանցը* նոսր է, խոշոր գետերն են Ուրալը, Էմբան, Սիրդարյան, Իլին, Տոբոլը, Իշիմը, Իրտիշը: Դրանք ունեն ոռոգիչ նշանակություն, իսկ Իրտիշը նաև ջրաէներգետիկ արժեք:

Ղազախստանի ազգային կարևոր հարստություններից են *հողային ռեսուրսները*: Հյուսիսում տարածվում են բերրի սևահողերը, իսկ կենտրոնական և հարավային շրջանների հողերը ավազային են, որոնք արհեստական ոռոգման պայմաններում բարձր բերք են տալիս: Ընդարձակ տարածություն են գրավում աղուտահողերը, տափաստանները, կիսատափաստանները, վերջինները ծառայում են որպես արոտավայրեր:



Նկ. 34 Աստանայի նախագահական պալատը

Ընդերքը հարուստ է օգտակար հանածոներով: Նավթի մեծ պաշարներ կան Մանգըշլակի (Ուզեն, Ժետիբայ), Մավթ և գազ Ուրալ-Էմբայի (Մակատ, Պրորվա) ավազաններում: Քարածուխ կա (50 մլրդ տ) Կարագանդայում, որի մեծ մասը կոքսացող է և օգտագործվում է մետաղաձուլության մեջ: Երկրի արևելքում է գտնվում էքիբաստուլի քարածխի հանքավայրը: Այստեղ ածխաշերտերը գտնվում է երկրի մակերևույթին մոտ, որի շնորհիվ շահագործվում են բաց եղանակով: Էքիբաստուլի ածուխը օգտագործվում է էներգետիկ նպատակով:

Երկաթաքարի ամենամեծ ավազանը գտնվում է Կուստանայի մարզում, որտեղ խոշոր հանքավայրեր են Սոկոլովսկինը, Սարբայսկինը, Կաչարսկինը: Երկաթաքար կա նաև Լիսակովսկու հանքավայրերում:

Պղնձի խոշորագույն հանքավայրը Ջեզկազգանն է և Ջեզդին: Այս հանքավայրում պղնձի հետ միասին արտահանում են մոլիբդեն:

Բնակչությունը: Ղազախստանը բազմազգ պետություն է: Ղազախների տեսակարար կշիռը 53.4 % է, ռուսներինը՝ 30 %, ուկրաինացիները՝ 3.7 %, ուզբեկներինը՝ 2.5 %, կան նաև գերմանացիներ, թաթարներ, ուլդուրներ, հայեր:

Բնակչության բնական աճը 6.6‰ է: Ընդ որում բնական աճը ավելի մեծ է ղազախների, թաթարների մեջ: Կյանքի միջին տևողությունը՝ 66.89 տարի է, տղամարդկանցը՝ 61.56, կանանցը՝ 72.52 տարի:


Բնակչության միջին խտությունը 6 մարդ է մեկ քմ-ում: Առավել խտաբնակ է հարավային Ղազախստանը՝ Չարավ Ղազախական և Ալմա-Աթայի մարզերը: Խտաբնակ է նաև Կարագանդայի մարզը: Թույլ են բնակեցված երկրի արևմտյան շրջանները:

Ուրբանիզացման մակարդակը 56 % է, խոշոր քաղաքներ են Ալմա-Աթան՝ 1.3 մլն բնակչությամբ, Կարագանդան՝ 613 հզ, Աստանան՝ 310 հզ, Չիմքենդը՝ 400 հազար:

Չայերը Ղազախստանում: Չայերի ընդհանուր թիվը Ղազախստանում 25 հզ է: Նրանք հիմնականում ապրում են Ալմա-Աթայում, Կարագանդայում, Կուստանայում, Ակթոբեյում (Ակտյուբինսկ): Չայերը Ղազախստանի տարածքում սկսել են բնակվել 1867-ից, երբ Ռուսաստանը իր տիրապետությունը հաստատեց Կենտրոնական Ասիայում: Խորհրդային իշխանության տարիներին հայերի թիվն ավելացել է 1937-1949 թթ. ի հաշիվ Չայաստանից, Վրաստանից, Ղրիմից և Խորհրդային Միության այլ շրջաններից այստեղ աքսորվածների:

Ղազախստանի հայերը հիմնականում զբաղվում են շինարարությամբ, աշխատում են արդյունաբերության մեջ, գիտության, կրթության, արվեստի ոլորտներում:

Տնտեսությունը: Ղազախստանի համախառն ներքին արդյունքը 124.3 մլրդ դոլար է: ՀՆԱ-ի 26.5 %-ը ներդրվում է տնտեսության մեջ՝ ապահովելով նրա արագ զարգացումը: Այդ գործընթացին նպաստում են նաև բնառեսուրսային հսկայական կարողությունները, մեծաքանակ աշխատանքային ռեսուրսները (7.85 մլն) և պետության հովանավորությունը:



Նկ.35. Ղազախստանի քաղաքների փողոցներում սովորական է ուղտերով զբոսանքը

Արդյունաբերությունը տալիս է ՀՆԱ-ի 38.6 %-ը: Այս ոլորտում զբաղված է աշխատուժի 20 %-ը: Արդյունահանվում է նավթ (75,4 մլն տ.), բնական գազ (18.5 մլրդ խմ տարեկան): Նավթ և գազ արդյունահանվում են Մանգըշլակի, Բուզաչի թերակղզիներում, էմբա գետի ավազանում: Մանգըշլակի նավթը Ուզբեկ-Ասիորաս-Սամարա նավթամուղով Ակթաս նավահանգստից ծովային ճանապարհով ուղարկվում է Ռուսաստան, իսկ էմբայի նավթը վերամշակվում է Աթիրաուում:

Արևմտյան Ղազախստանից օրական արտահանվում է 890 հզ - բարել նավթ, միաժամանակ Արևելյան Ղազախստանում գտնվող Չիմքենդի և Պավլոդարի նավթավերամշակման ձեռնարկությունները հումք են ստանում Արևմտյան Սիբիրից:

Ածխի տարեկան հանույթը 77 մլն տ է: Ածխի արդյունահանման գլխավոր կենտրոնը Կարագանդան է: Այստեղ արդյունահանված քարածխի մի մասը օգտագործվում է Տենիթբաուի մետալուրգիական կոմբինատում, մի մասն էլ ուղարկվում է Ուրալ: Կարագանդայում արդյունահանվում է նաև բարձր մոխրայնություն ունեցող ածուխ, որն օգտագործվում է էներգետիկ նպատակներով:

Էլեկտրաէներգիայի տարեկան արտադրությունը 60.3 մլրդ կվ Ժ է: Էլեկտրաէներգիայի մեծ մասը տալիս են ջերմաէլեկտրակայանները: Ջրաէլեկտրակայաններ կան կառուցված Իրտիշ գետի վրա:

Մանգչլակ թերակղզում կա ատոմային էլեկտրակայան: Ղազախստանը տարեկան արտահանում է 6 մլրդ կվ ժ էլեկտրաէներգիա, ներմուծում է 2.45 մլրդ կվժ:

Տեղական քարածխի և երկաթաքարի բազայի վրա Տեմիրթաուն զարգացած է սև մետաղածուլությունը: Տարեկան արտադրվում է 4.8 մլն տ պողպատ:

Գունավոր մետաղածուլության ձեռնարկությունները արտադրում են պղինձ, կապար, ցինկ, արծաթ, տիտան, ոսկի: Պավլոդարում կա կավահողի արտադրություն:

Քիմիական արդյունաբերությունն աշխատում է տեղական հումքի վրա: Կարաթաուի ֆոսֆորիտների բազայի վրա արտադրում են ֆոսֆորական պարարտանյութեր: Գունավոր մետաղածուլության ձեռնարկությունների թափոնները հիմք են դառնում արտադրելու ծծմբական թթու: Նավթավերամշակման ձեռնարկությունները արտադրում են պլաստմասսաներ, լաքեր, ներկեր:

Մեքենաշինական ձեռնարկությունների արտադրանքը լեռնահանքային մեքենաներ են, նավթի և ածխի արդյունահանման, վերամշակման, մետաղածուլական ձեռնարկություններին անհրաժեշտ մեքենաներ: Զարգացած է նաև տրակտորաշինությունը, գյուղատնտեսական մեքենաների արտադրությունը:

Մեքենաշինության խոշոր կենտրոններն են Տեմիրթաուն, Կարագանդան, Պավլոդարը, Կուստանայը:

Թեթև արդյունաբերության ձեռնարկություններն արտադրում են բամբակյա գործվածքներ, կաշվե-կոշիկի, ոչխարի մորթուց կարված ապրանքներ:

Գյուղատնտեսությունը տալիս է համախառն ներքին արդյունքի 6.7 %-ը: Այս ոլորտում զբաղված է աշխատուժի 20 %-ը:

Գյուղատնտեսության գլխավոր ճյուղը անասնապահությունն է, որի համար հիմք են հանդիսանում անապատների և կիսաանապատների ընդարձակ արոտավայրերը, հյուսիսային շրջանի տափաստանները:

Անասնապահության գլխավոր ճյուղը մսաբրդատու ոչխարաբուծությունն է, հարավային շրջաններում զարգացած է կարակուլի ոչխարաբուծությունը: Կարակուլի մորթիների արտադրությամբ Ղազախստանը առաջինն է տարածաշրջանում: Հյուսիսային շրջաններում զբաղվում են խոշոր եղջերավոր անասնապահությամբ, խոզաբուծությամբ, թռչնապահությամբ, ձիաբուծությամբ:

Անասնապահության գլխավոր խնդիրը կերի բազայի ստեղծումն է, արոտավայրերի ջրարբիացումը:

Բուսաբուծությանը նպաստում են ընդարձակ վարելահողերը (22.5 մլն հա): Չնայած այս մեծ ցուցանիշին՝ Ղազախստանում դեռևս բոլոր հնարավորությունները չէ, որ օգտագործվում են: Բուսաբուծության գլխավոր խնդիրը ոռոգման փոքր հնարավորություններն են. վարելահողերի ընդամենը 15.8 % է ոռոգվում: Մնացած ցանքատարածությունները գտնվում են ռիսկի գոտում: Ենթակա են հյուսիսային ցրտերի, անապատային քամիների ազդեցությանը:

Վարելահողերի 50 %-ում ցանում են ցորեն (11518 հզ հա): Մշակում են կոշտ ցորենի տեսակներ: Ցորենի բերքատվությունը 10 գ/հա-ից, որը աշխարհում ամենացածր ցուցանիշներից մեկն է: Աշխարհի միջինը 27.5 ցենտներ է հեկտարից: Ղազախստանի ծանոները սակավածյուն են՝ հաճախակի ենթակա սիբիրյան սառը հոսանքների ազդեցությանը: Դրա համար աշնանացան ցորենը ցրտահարվում է և մշակում են գարնանացան ցորեն, որի բերքատվությունը ցածր է: Իհարկե, խնդիրը միայն գարնանացան ցորենի մեջ չէ. այստեղ ցածր մակարդակի վրա են նաև ագրոտեխնիկական պայմանները:

Հացահատիկային երկրորդ մշակաբույսը *եգիպտացորենն* է, որի ցանքատարածությունները գրավում են 100 հզ հա, տարեկան բերքը 438 հզ ցենտներ է, մեկ հա-ի բերքատվությունը՝ 4.38 ցենտներ:

Բրնձի ցանքատարածությունը 80 հզ հա է:

Վարելահողերի 30 % զբաղեցնում են կերային կուլտուրաները:

Հացահատիկի և կերային մշակաբույսերի ցանքատարածությունները հիմնականում գտնվում են հյուսիսային Ղազախստանում, ուր դեռևս 1954-1960 թվականներին յուրացվեցին հսկայական տարածքների խամ ու խոպան հողերը: Այդ հողերի վրա մշակում են նաև արևածաղիկ, գանգրավուշ: Հարավային Ղազախստանում մշակում են շաքարի ճակնդեղ, բամբակ, ծխախոտ, բանջարաբոստանային մշակաբույսեր, հարավ-արևելյան շրջաններում՝ նաև պտուղներ և խաղող:

Ներքին տարբերությունները. Ղազախստանի ընդարձակ տարածքը բաժանվում է հինգ շրջանների՝ Հյուսիսային, Հարավային, Արևելյան, Արևմտյան, Կենտրոնական:

1. **Կենտրոնական շրջանն** ընդգրկում է Կարագանդայի և Ջեզկազգանի մարզերը: Երկրում գրավում է կենտրոնական դիրք: Ունի

բնառեսուրսային մեծ կարողություններ՝ քարածուխ Կարազանդա-
յուն, երկաթաքար՝ Կարաժալուն և Աթասուն, Տոպարուն, պղինձ՝
Ջեզկազգանուն, Կոունրադիուն: Հարուստ է հողային ռեսուրսներով:

Շրջանում է իրականացվում քարածխի, սև և գունավոր մետաղ-
ների հանքաքարի արդյունահանումը, մետաղածուլությունը, մետա-
ղամշակումը: Արդյունաբերական խոշոր կենտրոնը Կարազանդան է,
որը միաժամանակ համանուն մարզի կենտրոնն է: Քաղաքը ունի 613
իզ բնակիչ: Արդյունաբերական ձեռնարկությունները արդյունահա-
նում են քարածուխ, արտադրում են լեռնահանքային մեքենաներ,
ունի խոշոր ՁԷԿ:


Կարազանդայի մոտ է գտնվում Տեմիրթաուն՝ սև մետաղածու-
լության խոշոր կենտրոնը, որը աշխատում է Կարազանդայի քարած-
խի, Աթասուի և Տոպարի երկաթաքարի բազայի վրա: Տեմիրթաուն և
Կարազանդան ջուր են ստանում Իրտիշից եկող 450 կմ երկարու-
թյամբ ջրանցքով:

Ձարգացած է գունավոր մետաղածուլությունը: Բալխաշում
Կոունրադիի պղնձամոլիբդենային հանքաքարի հիման վրա աշխա-
տում է պղնձածուլական գործարանը: Պղնձածուլությունը զարգա-
ցած է նաև Ջեզկազգանում: Շրջանում զբաղվում են նաև բուսաբու-
ծությամբ, անասնապահությամբ:

Այստեղ է գտնվում Բայկոնուրը՝ տիեզերանավերի արձակման
գլխավոր կենտրոնը:

Կենտրոնական Ղազախստա-
նում է գտնվում երկրի նոր մայրա-
քաղաք Աստանան: Քաղաքը հիմ-
նադրվել է 1830 թ. որպես ամրոց և
կոչվել է Ակմոլա, 1961-1992 թթ. կոչ-
վել է Ցելինոգորադ, 1992-1998 թթ.
Ակմոլա: 1997 թվականից երկրի
մայրաքաղաքն է: Ունի 310 իզ բնա-
կիչ, զարգացած արդյունաբերու-
թյուն՝ մեքենաշինություն, սննդի և
թեթև արդյունաբերության ճյուղեր:

2. *Հյուսիսային Ղազախստան*
ընդգրկում է Ակտյուբինսկի, Կուս-
տանայի, Կոկչետավի, Թուրգայի,
Հյուսիս-ղազախական մարզերը:



Նկ. 36. Տեսարան Աստանայից

Այս շրջանում են գտնվում յուրացված ընդարձակ տարածություն զրավող խամ ու խոպան հողերը: Դրանց բազայի վրա զարգացած է հացահատիկի (ցորեն, գարի, եգիպտացորեն), վարսակի մշակումը, անասնապահությունը: Շրջանին բաժին է ընկնում երկրի գյուղատնտեսական արտադրանքի 2/5-ը, հացահատիկի 2/3-ը: Գյուղատնտեսական հումքի բազայի վրա զարգացած են ալրադաց արդյունաբերությունը, մսի, կաթի, բրդի վերամշակումը:

Շրջանում արդյունահանվում և վերամշակվում են օգտակար հանածոներ: Երկաթաքարի հարստացման ձեռնարկություններ կան Սոկոլովո-Սարբայսկում, Կաչարսկում, Լիսակովսկում: Արդյունահանում են նաև ոսկի, բոքսիտներ:

Վերամշակող ճյուղերից զարգացած է գյուղատնտեսական մեքենաշինությունը՝ Ակմոլինսկում, Կուստանայում, ավտոմաքիլաշինությունը, քիմիական արդյունաբերությունը:

3. Արևմտյան Ղազախստանի կազմի մեջ են մտնում Ակտյուբինսկի, Աթիրաուի, Մանգիսթաուի, Արևմտաղազախական մարզերը: Տարածքով ամենամեծ շրջանն է, սակայն անապատային լանդշաֆտի պատճառով թույլ է յուրացված:

Շրջանի ընդերքը հարուստ է օգտակար հանածոներով: Կասպից ծովի հարակից տարածքներում հայտնաբերված են նավթի և բնական գազի (Աթիրաուի մարզում), քրոմի, նիկելի, կոբալտի, ֆոսֆորիտների, շինանյութերի մեծ պաշարներ: Դրանց բազայի վրա զարգացած է նավթաքիմիան՝ Ակտյուբինսկում, Ակթաուում էլեկտրաէներգիայի արտադրությունը: Այստեղ է գործում ատոմային էլեկտրակայանը, որը ծովի ջուրը աղազեցնելուց հետո տալիս է քաղաքին:

Անապատներում զբաղվում են ոչխարաբուծությամբ, ուղտաբուծությամբ, ձիաբուծությամբ, Կասպից ծովում՝ ձկնորսությամբ: Արևմտաղազախական մարզում մշակում են ցորեն, կորեկ:

4. Հարավային Ղազախստանի կազմում են գտնվում Ալմա-Աթայի, Հարավաղազախական, Տալդի-Կուրգանի, Ջամբուլի, Կրգլ-Օրդայի մարզերը:

Շրջանը հարուստ է ֆոսֆորիտներով, բազմամետաղներով, ջրաէներգետիկ ռեսուրսներով: Ֆոսֆորիտները արդյունահանվում և վերամշակվում են Ջամբուլում, բազմամետաղները՝ Տեկելիում և Զիմբենդում:

Ջարգացած է մեքենաշինությունը. արտադրում է մանլիչներ, ավտոպահեստամասեր, էլեկտրատեխնիկական ապրանքներ: Նավ-

թավերամշակման խոշոր ձեռնարկություն կա Զիմքենդում, որ աշխատում է Արևմտյան Սիբիրից բերվող նավթի բազայի վրա: Ունի նաև բամբակյա գործվածքների, կարակուլի մորթիների մշակման, սննդի արդյունաբերության ձեռնարկություններ: Կապչագայում կառուցված է ջրաէլեկտրակայան: Ալմա-Աթայում զարգացած է ծանր մեքենաշինությունը, էլեկտրատեխնիկան, վագոնաշինությունը, կաշվի-կոշիկի, ծխախոտի արտադրությունը:

Շրջանը հարուստ է մշակովի հողերով: Մշակում են ցորեն, շաքարի ճակնդեղ, ծխախոտ, պտղատուներ, խաղող, բանջարաբուստանային կուլտուրաներ: Դրանց հիման վրա արտադրում են ծխախոտ, պահածոներ, գինիներ:

Անապատներում և կիսաանապատներում զբաղվում են բրդատու և կարակուլի ոչխարաբուծությամբ:

5. *Արևելյան Ղազախստանի* կազմի մեջ են մտնում Սեմեյի, Արևելաղազախական մարզերը: Այստեղ զարգացած է գունավոր մետաղաձուլությունը՝ պղնձի, ցինկի, արծաթի, տիտանի արտադրությունը: Օշկեմենում, Բուխտարմայում կան ջրաէլեկտրակայաններ: Էքիբաստուզի քարածխով աշխատում են խոշոր ջրաէլեկտրակայաններ: Գունավոր մետաղաձուլության խոշոր կենտրոնը Օշկեմենն է: Այստեղ է կենտրոնացած է նաև մեքենաշինությունը, էներգետիկ արդյունաբերությունը:

Պավլոդարում կան նավթավերամշակման, գյուղատնտեսական մեքենաշինության, նավաշինություն, թեթև և սննդի արդյունաբերության ձեռնարկություններ:

Սեմեյում (Սեմիպալատինսկում) զարգացած է գյուղատնտեսական մեքենաշինությունը, վագոնաշինությունը, գազի սարքավորումների արտադրությունը, սննդի արդյունաբերությունը: Ունի մսի խոշոր կոմբինատ:

Արտաքին տնտեսական կապերը: Արտահանման ծավալները կազմում են 30.09 մլրդ դոլար: Արտահանվող ապրանքների 58 %-ը նավթ և նավթամթերքներ են, 24 %-ը՝ մետաղներ, 5 %-ը՝ քիմիական ապրանքներ: Արտահանում է նաև մեքենաներ, հացահատիկ, բուրդ, քարածուխ: Ներմուծման ծավալները 17.51 մլրդ դոլար են: Ներմուծում է մեքենաներ (41 %), մետաղյա ապրանքներ, մրգեր:

Արտաքին առևտրի գլխավոր գործընկերներն են Ռուսաստանը, Զինաստանը, Գերմանիան, Իտալիան, Ֆրանսիան:

Ինքնաստուգման հարցեր

1. Ի՞նչ օգտակար հանաժոններով է հարուստ Ղազախստանը: Ի՞նչ խնդիրներ ունի՝ կապված օգտակար հանաժոնների նպատակային օգտագործման հետ:
2. Ինչպիսի՞ն է բնակչության ազգային կազմը, ի՞նչ գործոններ են ազդել բազմազգության վրա:
3. Բնութագրեք, թե ինչու՞ Ղազախստանի արդյունաբերությունը ունի հումքային ուղղություն և ելնելով համաշխարհային զարգացումներից՝ նշեք զարգացման նպատակային ուղիները:
4. Որո՞նք են արդյունաբերության գլխավոր ճյուղերը և ինչպե՞ս են տեղաբաշխված:
5. Որո՞նք են գյուղատնտեսության գլխավոր ճյուղերը: Ե՞րբ և ինչպե՞ս սկսվեց խամ ու խոպան հողերի յուրացումը: Ի՞նչ խնդիրներ ունի Ղազախստանը գյուղատնտեսության բնագավառում:
6. Ի՞նչ տրանսպորտային խնդիրներ ունի Ղազախստանը:
7. Ինչպիսի՞ն է արտաքին առևտրական հաշվեկշիռը: Որո՞նք են առևտրական գլխավոր գործընկերները: Ի՞նչ կառուցվածքային բարեփոփոխություններ են կատարվում տնտեսության մեջ:

*Տարածքը՝ 447 հզ քկմ
Բնակչությունը՝ 27.3 մլն մարդ
Մայրաքաղաքը՝ Տաշքենդ*

Անապատների, ընդարձակ ավազապատ հարթավայրերի, լեռների ու լեռնահովիտների, լեռներից գահավիժող գետերի, բամբակի ու մրգերի, հզոր մեքենաշինության հնագույն քաղաքակրթության երկիր է Ուզբեկստանը:

Հազարամյակներ առաջ Ֆերգանայի հովտում ծաղկում են ապրել Սամարղանդը, Խիվան (Խորեզմը), Բուխարան, Կոկանդը:

Ուզբեկստանը աշխատանքի միջազգային աշխարհագրական բաժանմանը մասնակցում է բնական գազի արդյունահանմամբ և բամբակի, մետաքսի արտադրությամբ, բոստանային կուլտուրաների մշակությամբ:

Բնական պայմանները և ռեսուրսները. Տարածքի մեծ մասը գրավում է Թուրանի հարթավայրը, որի սահմաններում են գտնվում Կզըլկում անապատը և Ուստ-Յուրտ սարահարթը: Հարավ արևելքում և արևելքում Տյան-Շանի ու Գիսարա-Ալայան լեռներն են, որոնց միջև ընկած են Ֆերգանայի և Ջերավշանի հովիտները: Լեռնակազմական երևույթները դեռևս շարունակվում են, որի վկան են հաճախակի երկրաշարժերը:

Կլիման խիստ ցամաքային է: Միջին հուլիսյան ջերմաստիճանը 32°C է, հունվարյանը՝ -3°C : Սբնոլորտային տեղումները հարթավայրերում մինչև 100 մմ է, լեռներում՝ 1000 մմ: Տիրապետող անապատային լանդշաֆտն է: Այստեղ տարածվում են քարքարոտ (քարային), կավային, ավազային անապատներ, որոնցում մեծ տարածք են գրավում աղուտները: Լեռներում տարածվում են տափաստանները:

Ամենախոշոր գետերը Ամուդարյան և Սիրդարյան են: Դրանք նույնիսկ ամռանը ջրառատ են՝ շնորհիվ բարձր լեռնային սառցադաշտերի: Փոքր գետերի մեծ մասը կորչում են անապատների ավազներում: Ամուդարյայի և Սիրդարյայի ջրերը գրեթե ամբողջությամբ օգտագործվում են ոռոգման համար:

Ուզբեկստանի ընդերքը հարուստ է օգտակար հանածոներով: Նավթի պաշարներ կան Թերմեզում, Սոխում, Ֆերգանայում, բնա-

կան գազ՝ Գազլիում, Մուբաբեկում, ածուխ՝ Անգրենում և Շարգունում, պղինձ՝ Ալմալիկում, ոսկի՝ Ուչկուդուկում և Ջերավշանում:

Բնակչությունը. Ուզբեկստանը բնակչության բարձր աճ ունեցող երկիր է, տարեկան 18,52 % (ծնելիությունը 26.36 ‰, մահացությունը 7.84 ‰): Կյանքի միջին տևողությունը 64.58 տարի է, տղամարդիկ՝ 61.19, կանայք՝ 68,14 տարի: Ուզբեկստանը երիտասարդների երկիր է, մինչև 14 տարեկան հասակ ունեն բնակչության 32.9 % (9 մլն մարդ): Մեկ կնոջ հաշվով ծնված երեխաների միջին քանակը 2.91, որը համեմատաբար բարձր ցուցանիշ է:

Այստեղ ապրում են մի քանի տասնյակ ազգեր: Բնակչության 80%-ը ուզբեկներ են, ռուսների տեսակարար կշիռը 5.5 % է, տաջիկներինը՝ 5 % է, դազախներինը՝ 3 %, կարակալպակներինը՝ 2.5 %, կան նաև թաթարներ, գերմանացիներ, կորեացիներ, հայեր և այլ ազգեր: Հավատացյալ բնակչության 88 %-ը մահմեդականներ են (սունիներ):


Բնակչության միջին խտությունը 61 մարդ է մեկ քվմ վրա: Խիտ են բնակեցված Ֆերգանայի, Ամուդարյայի, Ջերավշանի հովիտները: Նոսր է բնակեցված Կըզլկում անապատը: Երկրում շատ ցածր է ուրբանիզացման մակարդակը՝ 37 %: Խոշոր քաղաքներն են Տաշքենդը՝ 2.1 մլն բնակչությամբ, Սամարղանդը, Բուխարան:

Ուզբեկստանի կարևոր խնդիրներից մեկը բնակչության զբաղվածության և սոցիալական մակարդակի բարձրացումն է, աճի կարգավորումը: Մեծ չափերի է հասնում արտագաղթը: Ներգաղթի և արտագաղթի հաշվեկշիռը բացասական է՝ -15 ‰: Արտագաղթի գլխավոր պատճառն այն է, որ գյուղատնտեսությունը չի կարող ապահովել գյուղական 17 մլն բնակչության զբաղվածությունը: Կապված հողի սեփականաշնորհման, գյուղատնտեսության մեքենայացման բարձրացման հետ՝ գյուղական բնակչության զբաղվածության մակարդակը ավելի կնվազի:

Տնտեսությունը. Համախառն ներքին արդյունքը 54.8 մլրդ դոլար է, մեկ շնչի հաշվով այն կազմում է 2000 դոլար: ՀՆԱ-ի տարեկան աճը 6.8 % է:

Տնտեսության գլխավոր ճյուղը արդյունաբերությունն է, որ տալիս է ՀՆԱ-ի 25.7 %-ը: Այս ոլորտում զբաղված է աշխատուժի 44 %-ը:

Խորհրդային տարիներին Ուզբեկստանում ստեղծվեց զարգացած արդյունաբերություն: Հետխորհրդային տարիներին արդյունաբերական ձեռնարկությունների արտադրանքը անկում ապրեց, ներկայումս դանդաղ աճ է նկատվում:



Նկ.37. Սամարղանդ քաղաքի ընդհանուր տեսքը

Արդյունահանում է նավթ ու բնական գազ, քարածուխ, գունավոր մետաղներ, հանքաքար: Վերամշակող ճյուղերից կարևոր նշանակություն ունեն գունավոր մետաղաձուլությունը, մեքենաշինությունը, քիմիական, տեքստիլ, սննդի արդյունաբերությունը:

Նավթի օրական հանույթը 148 հզ բարել է, բնական գազինը՝ 59.86 մլրդ խմ: Նավթ է արդյունահանվում Ֆերգանայի հովտում, այն վերամշակվում է Ֆերգանայի նավթավերամշակման ձեռնարկությունում և բավարարում է երկրի պահանջները: Բնական գազ արդյունահանվում է Բուխարայի և Կաշկադարայի մարզերում: Գազի մեծ մասը օգտագործվում է երկրի ներսում: Տարեկան 9.7 մլրդ խմ արտահանվում է:

Տաշքենդի մարզում՝ Անգրենում, արդյունահանվում է գորշ ածուխ: Այն օգտագործվում է Անգրենի և Նոր Անգրենի ջերմաէլեկտրակայաններում:

Ուզբեկստանն ունի զարգացած էլեկտրաէներգետիկ տնտեսություն: Էլեկտրաէներգիայի տարեկան արտադրությունը 48.2 մլրդ կվժ: Դրա 88.2 %-ը տալիս են ջերմաէլեկտրակայանները, մնացածը՝ ջրաէլեկտրակայանները: Ջրաէլեկտրակայաններ կան Սիրդարյա և Զիրչիկ գետերի վրա: Էլեկտրաէներգիայի տարեկան արտահանումը 6.8

մլրդ կվժ է, *Ներմուծումը* 11.8 մլրդ կվժ: Տեղական հումքի բազայի վրա զարգացած է գունավոր մետաղների, ցինկի, պղնձի, ինչպես նաև մոլիբդենի, վոլֆրամի, ոսկու արտադրությունը: Այս ճյուղի ամենախոշոր ձեռնարկությունը Ալմալիկի լեռնամետալուրգիական կոմբինատն է:

Մեքենաշինությունը արդյունաբերության կարևոր ճյուղերից մեկն է: Այն արագ զարգացում ապրեց Հայրենական մեծ պատերազմի տարիներին, երբ ԽՍՀՄ եվրոպական մասից այստեղ փոխադրվեցին մի շարք մեքենաշինական ձեռնարկություններ: Արտադրում են բամբակի տնտեսությանն անհրաժեշտ մեքենաներ, տրակտորներ, բամբակահավաք կոմբայներ, բամբակը վերամշակող, ոռոգիչ համակարգին անհրաժեշտ մեքենաներ: Զարգացած է նաև ինքնաթիռաշինությունը, էլեկտրատեխնիկական արդյունաբերությունը: Խոշոր կենտրոններն են Տաշքենդը, Սամարղանդը, Զիրչիկը:

Քիմիական արդյունաբերության գլխավոր նպատակը գյուղատնտեսությանը, հատկապես բամբակագործությանը սպասարկելն է: Արտադրում է ազոտական և ֆոսֆորական պարարտանյութեր, թունաքիմիկատներ: Ազոտական պարարտանյութերի արտադրման համար օգտագործվում է բնական գազը: Ֆոսֆորական պարարտանյութերի բազան Կաթաույի (Ղազախստան) ֆոսֆորիտներն են: Քիմիական արդյունաբերության կենտրոններն են Ալմալիկը, Զիրչիկը, Կոկանդը, Նավոյին, Սամարղանդը, Ֆերգանան:

Ունի զարգացած *թեթև արդյունաբերություն*, որի գլավոր ճյուղը բամբակյա ապրանքների արտադրությունն է: Այս ճյուղը ամենալայն աշխարհագրություն ունի և կարևոր դեր է կատարում աշխատուժի զբաղվածությունը ապահովելու համար: Խոշոր կենտրոններն են Տաշքենդը, Անդիջանը, Բուխարան, Մարգելանը, Կոկանդը: Զարգացած է նաև մետաքսյա գործվածքների, գորգերի արտադրությունը:

Սննդի արդյունաբերության գլխավոր ճյուղը բուսայուղի արտադրությունն է՝ բամբակի կորիզներից: Արտադրում են նաև գինիներ, մրգեր, բանջարեղենի պահածոներ, չոր մրգեր:

Գյուղատնտեսությունը տալիս է ՀՆԱ-ի 31.1 %-ը: Այս ոլորտում զբաղված է աշխատուժի 44 %-ը: Գյուղատնտեսության հիմքը վարելահողերն են և արոտավայրերը: Վարելահողերը զբաղվում են երկրի տարածքի 10.51 %-ը, բազմամյա տնկարկները 0,76 %: Հողագործությունը հիմնականում իրագործվում է արհեստական ոռոգման պայմաններում: Ոռոգվում է 4.28 մլն հա հող:

Գյուղատնտեսության ՀՆԱ-ի 70 %-ը տալիս է բամբակագործությունը: Բամբակի մշակության գլխավոր շրջաններն են Ֆերգանայի, Ձերափշանի, Չիրչիկի, Սիրդարիայի, Ամուդարյայի հովիտները:

Ամուդարիայի ստորին հոսանքի շրջանում հատկապես Կարակալակիայում՝ մշակում են բրինձ, լեռնային շրջանների անջրդի հողերի վրա՝ ցորեն և գարի: Մշակում են նաև կանեփ, ծխախոտ, բանջարաբուստանային մշակաբույսեր հովիտների ոռոգովի հողերի վրա խաղող և պտղատուներ: Մեծ տարածում ունեն թթաստանները:

Անասնաբուծության գլխավոր ճյուղը կարակուլի ոչխարաբուծությունն է: Ջարգացած է նաև մսատու ոչխարաբուծությունը, ձիաբուծությունը, խոշոր եղջերավոր անասնապահությունը, շերամապահությունը:

Տրանսպորտը. Երկաթուղիների ընդհանուր երկարությունը 3950 կմ է, որոնք հիմնականում ձգվում են գետերի հովիտներով: Դրանք Ուզբեկստանը կապում են հարևան երկրների հետ: Երկաթուղային խոշոր հանգույցը Տաշքենդն է: Ավտոճանապարհային ցանցը ավելի խիտ է: Գնացարկների ընդհանուր երկարությունը 81.6 հզ կմ է: Ավտոտրանսպորտը կարևոր դեր է կատարում հատկապես ներքին բեռնափոխադրումների և ուղևորափոխադրումների գործում: Մեծանում են միջազգային բեռնափոխադրումների ծավալները: Ամուդարյա գետով կատարվում է նավարկություն:

Արտաքին տնտեսական կապերը: Արտահանման ծավալները 5.51 մլրդ դոլար են, ներմուծմանը 3.99 մլրդ դոլար: Արտահանման ապրանքների արժեքների 41.5 %-ը բամբակն է, 9.6 %՝ ոսկին: Արտահանում է նաև հանքային հումք, էներգակիրներ, տեքստիլ ապրանքներ, չոր մրգեր: Արտահանման հիմնական գործընկերներն են Ռուսաստանը, Չինաստանը, Ղազախստանը, Թուրքիան, Ուկրաինան:

Ներմուծման ծավալների 50 %, մեքենաներ և սարքավորումներ են, մնացածը քիմիկատներ, մետաղ, սննդամթերքներ: Ներմուծման հիմնական գործընկերներն են Ռուսաստանը, Հարավային Կորեան, Գերմանիան, Ղազախստանը, Չինաստանը:

Ինքնաստուգման հարցեր

1. Որո՞նք են Ուզբեկստանի բնառեսուրսային հիմնական կարողությունները, ինչպե՞ս են դրանք տեղաբաշխված: Ի՞նչ խնդիրներ ունի ռեսուրսաօգտագործման ոլորտում:

2. Ինչպիսի՞ն է բնակչության բնական աճը, ի՞նչ խնդիրներ են առաջանում դրա հետևանքով: Ինչու՞ մեծ չափերի են հասնում գործազրկությունը և արտագաղթը:
3. Որո՞նք են արդյունաբերության զարգացման ժամանակակից միտումները: Բնութագրեք գլխավոր ճյուղերը: Ի՞նչ տնտեսական քաղաքականություն է վարում պետությունը արդյունաբերության առաջընթացը ապահովելու համար:
4. Ո՞րն է գյուղատնտեսության առանձնահատուկ դերը երկրի տնտեսության մեջ:
5. Բնութագրեք, թե ինչու՞ Ուզբեկստանի տնտեսության զարգացման մակարդակը ավելի ցածր է, քան ունեցած բնառեսուրսային և աշխատանքային կարողությունները:
6. Ո՞րն է Ուզբեկստանի դերը աշխատանքի միջազգային աշխարհագրական բաժանման մեջ:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

*Տարածքը՝ 17, 1 մլն. քկմ
Բնակչությունը՝ 143, 4 մլն մարդ
Մայրաքաղաքը՝ Մոսկվա*

Ռուսաստանի Դաշնությունը աշխարհում առաջին տեղում է տարածքի մեծությամբ: Աշխարհի այն եզակի երկրներից մեկն է, որ ապահովված է բոլոր տեսակի բնական ռեսուրսներով: Նրան է բաժին ընկնում ապատիտների համաշխարհային պաշարների 64,5%-ը, անագի՝ 37%-ը, բնական գազի՝ 35,4%-ը, երկաթաքարի՝ 32%-ը, նավթի՝ 13%-ը:

Ռուսաստանը հարուստ է հողային, անտառային, քաղցրահամ ջրի ռեսուրսներով, առափնյա ծովերը հարուստ են ձկներով, որսակենդանիներով: Ունի հարմար աշխարհագրական դիրք՝ 20 հազար կմ երկարությամբ սահման՝ 12 պետությունների հետ: Մի մասը ռուսական ապրանքների ընդարձակ շուկա է, մյուս մասը Ռուսաստանին տալիս է բարձրորակ ապրանքներ:

Ռուսաստանը հզոր է իր գիտակրթական համակարգով, մշակույթով, համաշխարհային քաղաքակրթության մեջ իր դերով: Մեծ է Ռուսաստանի աշխարհաքաղաքական դերը. նա աշխարհի հզոր ուժային կենտրոններից է:

Բնական պայմանները և ռեսուրսները: Ընդերքում հայտնաբերված են վառելիքային, մետաղային և այլ տեսակի բազմաթիվ ռեսուրսներ: Առանձնապես մեծ են վառելիքային ռեսուրսների պաշարները:

Քարածխի մեծ պաշարներ կան Միջին Սիբիրական սարահարթում (Տունգուսկաների ավազան, Լենայի ավազան): Դրանք առայժմ չեն օգտագործվում: Քարածխով հարուստ են Կուզբասը, Չարավալին Յակուտիան, Պեչորայի ավազանը: Գորշ ածխի ամենախոշոր ավազանը Կանսկ-Ալչինսկն է Կրասնոյարսկի երկրամասում:

Նավթի և բնական գազի ամենախոշոր շրջանը Արևմտյան Սիբիրն է: Նավթի հանքավայրերն են՝ Ուստ Բալիկը, Սամոտլորը, Նիժնի Վարտովսկը, Մեգիոնը: Գազի խոշոր հանքավայրեր են Յամբուլոգյանը, Ուրենգոյը, Մեդվեժյեն: Նավթ կա նաև Չյուսիսային Կովկասում (Գրոզնի, Մայկոպ), Պեչորայի ավազանում, Թաթարստա-

նում: Բնական գազի նոր հանքավայրեր են բացվել Օրենբուրգի մարզում, Բարենցի, Կարայի ծովերի ծանծաղուտում, Սախալինի առափնյա շրջանում:

Երկաթի խոշոր հանքավայրերն են Կուրսկի մագնիսական անոմալիան, Օլենագորսկը, Կովդորը (Մուրմանսկի մարզում), Կոստոմուկան (Կարելիայում): Երկաթի մեծ պաշարներ կան Ուրալում (Մագնիտագորսկ, Խալիլովո), Սիբիրում, Չեռավոր Արևելքում՝ Աբական, Ռուդնեգորսկ Կորշունովյան:

Պղնձի հանքավայրերը գտնվում են Կրասնոուրալսկում, Սիբիրում, Փայում, Կոլա թերակղզում, Նորիլսկում (պղնձանիկելային):

Կապարի և ցինկի հանքավայրերը կենտրոնացած են Սադոնում (Յուսիսային Օսեթիա), անագի՝ Վերխյանսկում, Դալնեգորսկում, վոլֆրամ և մոլիբդեն՝ Տիրնիաուզում (Կաբարդինա-Բալկարիա): Յակուտիան հայտնի է ավաաստի պաշարներով, Մագադանի մարզը՝ ոսկով:

Ֆոսֆորիտների մեծ պաշարներ կան Կիրովսկում, կերակրի աղ՝ Էլտոն և Բասկունչակ լճերում, կալիումական աղ՝ Սոլիկամսկում և Բերեզնիկում:

Կամչատկայի և Կուրիլյան կղզիների հրաբխային շրջանները հարուստ են երկրաջերմային էներգիայով:

Կլիմայի ձևավորման վրա ազդում են երկրի հյուսիսից հարավ մեծ ձգվածությունը, որի պատճառով տարբեր է արեգակից ստացվող ջերմության քանակը: Կլիմայի վրա ազդում են ափերը ողողող ծովերը: Յուսիսային Սառուցյալ օվկիանոսը մշտական ցրտի բևեռ է: Այստեղից սառը օդային զանգվածները ծնունդ բերում են սառնամանիքներ, զարնանը և աշնանը՝ ցրտահարություններ: Ատլանտյան օվկիանոսից փչող քամիները պատճառ են դառնում առատ տեղումների, հատկապես Եվրոպական մասում, իսկ Խաղաղ օվկիանոսի քամիները տեղումներ են բերում Չեռավոր Արևելքի առափնյա շրջաններում:

Ջրային ռեսուրսները: Սիբիրի և Չեռավոր Արևելքի ընդարձակ տարածություններում կան ջրառատ խոշոր գետեր՝ Ենիսեյը՝ Անգարա վտակով, Օբը, Լենան, Ամուրը: Դրանք ունեն ջրաէներգետիկ հզոր կարողություններ: Մեծ է նաև դրանց լաստառաքման և տրանսպորտային դերը:

Եվրոպական մասի գետերը՝ Վոլգան, Դոնը, Յուսիսային Դվինան, Պեչորան, Նևան, նույնպես կարևոր նշանակություն ունեն երկրի տնտեսության համար:

Ռուսաստանը հարուստ է ստորերկրյա ջրերով: Յուսիսային Սառուցյալ օվկիանոսի կղզիներում կան քաղցրահամ ջրի մեծ պա-

շարժեր սառած վիճակում: Քաղցրահամ ջրի հարուստ պաշարներ ունեն Բայկալ, Լադոգա, Օնեգա, Խանկա լճերը:

Գետնի մշտնջենական սառածությունը գրավում է 11 մլն քվմ տարածք, որը բարդացնում է շինարարական աշխատանքները: Ռուսաստանում զգալի տարածք են գրառեցնում ճահիճները:

Հողային ռեսուրսները: Ռուսաստանի ընդարձակ տարածքի միայն 13%-ն է պիտանի գյուղատնտեսության համար: Վարելահողերը գրավում են երկրի տարածքի 8%-ը (124,5 մլն հա): Դրանք գտնվում են տափաստանային, անտառատափաստանային գոտիներում և անտառային գոտու հարավում՝ եվրոպական մասում, Ուրալի և Սիբիրի հարավային շրջաններում: Նույն շրջաններում են նաև արոտավայրերը: Արոտավայրեր կան նաև տունդրայում (եղջերապահության համար):

Անտառները տարածվում են եվրոպական սահմաններից մինչև Հեռավոր Արևելք՝ Խաղաղ օվկիանոսի ափերը: Ռուսաստանին է բաժին ընկնում աշխարհի անտառների 25 %-ը: Անտառները պարունակում են արժեքավոր շատ ծառատեսակներ՝ սոճի, մայրի, կաղնի, հաճաքենի և այլն:

Ռուսաստանն ապահովված է գրեթե ամեն տեսակ ռեսուրսներով (Տես աղյուսակ 41):

Աղյուսակ 41

Ռուսաստանի և աշխարհի ապահովվածությունը օգտակար հանածոների հետախուզված պաշարներով (անցյալ դարի վերջի տվյալները)¹

Օգտակար հանածոներ	Ապահովվածությունը (տարածքներ)	
	Ռուսաստան	Աշխարհ
Նավթ	30	50
Քարածուխ	180	187
Երկաթաքար	42	148
Պղինձ	40	45
Կապար	15	26
Ցինկ	18	26
Նիկել	40	62
Վոլֆրամ	37	46
Մոլիբդեն	40	40
Ոսկի	30	21
Ֆոսֆորիտներ	52	280
Կալիումական աղեր	112	340

¹ Կազմված է ըստ «Нефтегазовой Комплекс России», Альманах. М. АСМО пресс, 1997:

Ուսաստանում բնական ռեսուրսների օգտագործման կուլտուրան շատ ցածր է: Ընդերքից հանած հումքի 1/3-ը կորչում է թափոնների մեղք: Պատճառը ռեսուրսախնայողության տնտեսական գործոնների թերությունն է և ռեսուրսային պետական սխալ քաղաքականությունը:

Պետական կառուցվածքը և վարչատարածքային բաժանումը:

Ուսաստանի դաշնային հանրապետություն է: Օրենսդրական մարմինը Դաշնային ժողովն է (պառլամենտը), որը կազմված է երկու պալատներից՝ Պետական դումայից և Դաշնության խորհրդից: Պետական դումայի պատգամավորներն ընտրվում են կուսակցական ցուցակով և միամանդատային օկրուգներով:

Պետության ղեկավարը նախագահն է, որն ընտրվում է 4 տարի ժամկետով՝ համաժողովրդական փակ գաղտնի քվեարկությամբ: Նախագահի տարիքը պետք է 35-ից մեծ լինի: Նախագահն ունի լայն լիազորություններ, նա Պետական դումայի համաձայնությամբ նշանակում է պետության վարչապետին և ընդունում է որոշում նրա ազատման մասին: Նախագահը կարող է ցրել Պետական դուման: Իր հերթին Պետական դուման կարող է հեռացնել նախագահին հայրենիքին դավաճանելու և ծանր հանցագործություն կատարելու դեպքում:

Ուսաստանը Դաշնային Հանրապետությունը ունի քսանմեկ հանրապետություններ, մեկ ինքնավար մարզ, տաս ինքնավար (ազգային) օկրուգներ, երկու դաշնային քաղաք, վեց երկրամաս:

Աղյուսակ 42

Ուսաստանի Դաշնության վարչատարածքային բաժանումը
(հանրապետություններ)

Հանրապետություններ	Մայրաքաղաքը	Տարածքը իզ քվմ	Բնակչությունը, իզ մարդ
1. Ադիգեյի	Մայկոպ	7,6	450,5
2. Ալթայի	Գառնո Ալթայակ	92,6	201,6
3. Բաշկորտոստանի	Ուֆա	143,6	4096,6
4. Բուրյաթիայի	Ուլան-Ուդե	341,3	1052,5
5. Դաղստանի	Մախաչկալա	50,3	2097,5
6. Թաթարստանի	Կազան	68,0	3765,0
7. Ինգուշիայի	Նազրան	-	299,7

* Չեչենիայի և Ինգուշիայի միմյանց հետ ունեցած սահմանները որոշված չեն:

արդյունաբերական կենտրոններում: Թաթարները, բաշկիրները, ուղմուրտները, բուրյաթները, կալմիկները և պետական կազմավորում ունեցող մյուս ժողովուրդներն ապրում են իրենց հանրապետություններում: Ռուսաստանի ամենաբազմամարդ տարածաշրջանը Յուսիսային Կովկասն է: Այստեղ բնակվում են ժաբարդիները, ադիգեյներ, օսեր, ինգուշներ, չեչեններ, հայեր, ռուսներ: Դառչտանում կան 25-ից ավելի ժողովուրդներ՝ ավարներ, լեզգիներ, կումիկներ, լակեր և այլն: Յուսիսային շրջանների ընդարձակ տարածությունների վրա ապրում են նենեցներ, կորյակներ, եվեններ, խանտիներ, էվենկներ, յակուտներ, չուկչիներ: Յուրաքանչյուր ժողովուրդ իր սովորություններով, առանձնահատկություններով, կենցաղով, մշակույթով իր միջավայրի ծնունդն է: Լ.Ն. Գումիլևի խոսքերով՝ «խառնված են իրենց լանդշաֆտին»:

Լեզվական առումով Ռուսաստանի ժողովուրդները պատկանում են մի քանի խմբերի՝ սլավոնական (ռուսները, ուկրաինացիները, բելառուսները, լեհերը), ուգրո-ֆիննական (կարելները, մորդվաները, ուղմուրտները, մարիները), թյուրքական (թաթարները, բաշկիրները, չուվաշները, ալթայցիները, յակուտները), մոնղոլական (կալմիկները, բուրյաթները):

Կրոնական կազմը: Ռուսաստանի բնակչության գերակշիռ մասը՝ ռուսները, ուկրաինացիները, բելառուսները, հայերը քրիստոնյաներ են: Լայն աշխարհագրություն ունեն մահմեդականները՝ բաշկիրները, չուվաշները, չեչենները, ադիգեյները, ինգուշները, ավարները, լեզգիները, լակերը և այլք: Բուդդայական են կալմիկները, բուրյաթները: Յուսիսի փոքր ժողովուրդների մոտ տարածված է հեթանոսությունը: Ռուսաստանի ազգային, կրոնական ու լեզվական խնդիրները ունեն առանձնահատուկ բնույթ: Դեռևս Խորհրդային Միության առաջին տարիներին, երբ ստեղծվեցին ազգային ինքնավարություններ, վարչական սահմանները գծվեցին այնպես, որ միևնույն երեսը հայտնվեց տարբեր ինքնավարությունների մեջ: Մեծ Կովկասի հյուսիսում ապրող օսերը մնացին Ռուսաստանի կազմում, հարավում ապրողները՝ Վրաստանի կազմում: Յուսիսային Կովկասի եթնիկական տարածքները կիսվեցին առանձին ինքնավարությունների և երկրամասերի միջև: Մինչև այսօր անորոշ են Ինգուշիայի և Չեչնիայի սահմանները:

Երկրորդ աշխարհամարտից հետո Յուսիսային Կովկասից չեչենների, ինգուշների, կարաչայների, բալկարցիների մի մասը աքսորվեց Դազախստան և Սիբիր: Ավելի ուշ նրանց մեծ մասը վերա-

դարձավ, սակայն հանդիպեց իրենց բնօրրանում ապրող այլազգիների: Այս ամենը հանգեցրեց միջէթնիկական հակասությունների՝ չեչենների և ինգուլների, չեչենների և ռուսների, կազակների և տեղաբնիկ այլ ժողովուրդների միջև:

Ռուսաստանի հյուսիսիում ապրող ժողովուրդների մեծ մասը կանգնած է ուժացման եզրին: Ծանր է նրանց վիճակը, քիչ են աշխատատեղերը, մեծ չափերի է հասնում գործազրկությունը:

Տարիքային կազմը: Բնակչության 14,2%-ը 1-14 տարեկաններն են, 65 և ավելի տարիք ունեն բնակչության 14,4%-ը: Երեխաների ցածր տոկոսը և ծերերի բարձր տոկոսը հետևանք են բնական սահմանափակ աճի: Ռուսաստանը «ծերացող» պետություն է:

Կյանքի միջին տևողությունը 67,08 տարի է, կանայք՝ 74,1, տղամարդիկ՝ 60,45: Տղամարդկանց մեծ մասը մահանում է մինչև 65 տարին հասնելը: 65-ից ավելի տարիքի տղամարդկանց թիվը 6,5 մլն է, կանանց՝ 14,0 մլն:

Բնակչության խտությունը: Բնակչության միջին խտությունը 8,3 մարդ է մեկ քվադրատ կմ-ում: Այս ցուցանիշով գրավում է վերջին տեղերից մեկը:

Ռուսաստանի ներքին շրջաններում բնակչությունը անհավասար է տեղաբաշխված: Առավել խտաբնակ է եվրոպական մասը և Ուրալը: Այստեղ է ապրում երկրի բնակչության 80 %-ը, Սիբիրում և Հեռավոր Արևելքում՝ 20 %-ը, և դա այն դեպքում, երբ նրանք գրավում են երկրի տարածքի 74,6 %-ը:

Սիբիրում և Հեռավոր Արևելքում բնակչության նոսր բնակեցվածության պատճառներն են բնակլիմայական ծանր պայմանները, ենթակառուցվածքների ցածր մակարդակը, կենտրոնական զարգացած շրջաններից մեծ հեռավորությունը: Սիբիրում և Հեռավոր Արևելքում բնակչության միջին խտությունը 2,5 մարդ է 1 քվադրատ կմ-ում: Ըստ տնտեսական շրջանների ամենախտաբնակը կենտրոնականն է՝ 61,3 մարդ մեկ քվադրատ կմ-ում: Ամենախտաբնակ հանրապետությունը Չյուսիսային Օսիան է՝ 83 մարդ/քվադրատ կմ-ում, խտաբնակ են նաև Կաբարդինա-Բալկարիան, Թաթարստանը: Յակուտիայում 10 քվադրատ կմ-ում է 3 մարդ:

Ուրբանիզացիան: Ռուսաստանում քաղաքներ են համարվում այն բնակավայրերը, որոնց բնակչության մեծ մասը զբաղված է արդյունաբերության, տրանսպորտի և կապի ոլորտներում և ունի ոչ պակաս քան 10 հզ բնակիչ: Քաղաքներում է ապրում բնակչության 73

%-ը: երկրում կան 1000-ից ավելի քաղաքներ, որոնցից 13-ը ունեն 1մլն-ից ավելի բնակիչ: Խոշոր քաղաքներն են՝ Մոսկվան, Սանկտ Պետերբուրգը, Նիժնի Նովգորոդը, Նովոսիբիրսկը, Օմսկը, Ուֆան, Կազանը, Վոլգոգրադը, Դոնի Ռոստովը, Պերմը, Սամարան, Եկատերինբուրգը, Չելյաբինսկը: Խոշոր քաղաքների շուրջը ձևավորվել են ագլոմերացիաներ: Առավել մեծ են Մոսկվայի և Սանկտ Պետերբուրգի ագլոմերացիաները: Ամենաուրբանացված տնտեսական շրջանը Հյուսիսարևմտյանն է՝ 86,7 %: Դաշնության սուբյեկտներից քաղաքայնացման գործընթացը ամենից ցածր է Ալթայում՝ 24,0 %, Չելյախյում՝ 36,5 %:

Գյուղական տարաբնակեցումը. Գյուղերում ապրում է շուրջ 40 մլն մարդ: Այն ունի նվազման միտում: Ավելի մեծ չափերով են հեռանում եվրոպական մասերի գյուղերից: Այդ գյուղերի մի մասում մնացել են միայն ծերերը: Գյուղերը առավել խիտ են Կրասնոդարի երկրամասում, Դաղստանում:

Հայերը Ռուսաստանում. ՀՀ-ից հետո աշխարհում ամենից շատ հայեր ապրում են Ռուսաստանում՝ շուրջ 2,2 մլն: Առաջին հայկական գաղութը ստեղծվել է XI-XII դարերում Կիևյան Ռուսիայում: XIII-XIV դարերում հայկական գաղութներ են հիմնվում Մոսկվայում, Նովգորոդում, Կազանում, Աստրախանում, Հյուսիսային Կովկասում:

1779 թ. Դրինից գաղթած հայերը Դոն գետի ափին հիմնադրում են Նոր Նախիջևան քաղաքը (այժմ Դոնի Ռոստովի մի շրջանը): 1839 թ.՝ Արմավիրը:

Հայերի գաղթը դեպի Ռուսաստան մեծացել է Թուրքիայի եղեռնագործության տարիներին:

1988 թ. Սպիտակի երկրաշարժի և Հայաստանի սոցիալ-տնտեսական ծանր պայմանների հետևանքով մեծ քանակությամբ հայեր են գաղթել դեպի Կրասնոդարի, Ստավրոպոլի երկրամասեր, Ռոստովի մարզ, Մոսկվա, Ուրալ, Սիբիր և այլուր: Ռուսաստանի հայկական գաղութը ստվարացրել են նաև Ադրբեջանից և Աբխազիայից գաղթածները:

Ներկայումս հայկական խոշոր գաղութներ կան Մոսկվայում՝ շուրջ 500 հզ, Սանկտ-Պետերբուրգում՝ 60 հզ., Կրասնոդարի երկրամասում՝ 400 հզ., (Կրասնոդարում՝ 150 հզ., Անապայում՝ 25 հզ., Արմավիրում՝ 25 հզ., Սոժիում՝ 150 հզ), Ստավրոպոլի երկրամասում՝ 400 հզ., Ռոստովի մարզում՝ 135 հզ., Կալինինգրադի մարզում՝ 60 հզ. մարդ: Հայկական խոշոր գաղութներ կան նաև Վոլգոգրադի, Սա-

րատովի, Աստրախանի, Իվանովոյի, Սվերդլովսկի, Օրենբուրգի, Օմսկի մարզերում և այլ շրջաններում (Մանրամասն տե՛ս հավելված աղյուսակ 1):

Ընդ որում՝ Ռուսաստանի հայկական գաղութը ունի մեծանալու միտում:

Տնտեսությունը: Համախառն ներքին արդյունքը 1,72 տրիլիոն դոլար է: Մեկ շնչի հաշվով այն կազմում է 12100 դոլար: Այս ցուցանիշները Ռուսաստանի նման բնական և աշխատանքային հարուստ ներուժ ունեցող երկրի համար զգալիորեն ցածր են: Պատճառը արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ կիրառվող տեխնիկական միջոցների հնությունն է, մաշվածությունը, վնասով աշխատող բազմաթիվ ձեռնարկությունների առկայությունը, վերամշակող ճյուղերի զարգացման ցածր մակարդակը, միջազգային շուկայում արտադրանքի անմրցունակությունը, պետության կողմից խրախուսման անբավարար քաղաքականությունը, ներքին շուկայի սահմանափակությունը, բարձր տեխնոլոգիաների զարգացման ցածր մակարդակը, գիտահետազոտական աշխատանքի նվազագույն չափերը, տարածաշրջանների զարգացման աններդաշնակությունը, ներկրվող ապրանքների մեծ ծավալը:

Տնտեսական վերելքն ապահովելու համար անհրաժեշտ է բնականոն տեղաբաշխել արտադրողական ուժերը, համալիր կերպով օգտագործել բնական ռեսուրսները, ներդնել անթափոն արտադրություններ, զարգացնել վերամշակող ճյուղերի հատկապես մեքենաշինության և քիմիական արդյունաբերության նորագույն ուղղությունները, բարձրացնել բնակչության ընդհանուր կրթական մակարդակը, սոցիալական ապահովվածությունը, վերացնել արտադրության, բնակչության սոցիալական պայմանների ռեգիոնալ մեծ տարբերությունները, աշխատանքի տարածքային բաժանումը դարձնել ավելի նպատակային՝ հաշվի առնելով շուկայական տնտեսության առանձնահատկությունները:

Արդյունաբերությունը տնտեսության գլխավոր ճյուղն է: Այն տալիս է ՀՆԱ-ի 36,6%-ը: Այս ոլորտում է զբաղված աշխատուժի 29,1%-ը:

Արդյունաբերության մեջ կարևոր դեր է կատարում ջերմաէներգետիկան. նավթի, բնական գազի, ածխի, այրվող թերթաքարերի արդյունահանումը և վերամշակումը: Նավթը և գազը կարևոր նշանակություն ունեն արտահանման, եկամուտների ձեռք բերման գործում:

Նավթարդյունաբերություն: Նավթի առավելագույն հանույթը եղել է 569,5 մլն տ (1987թ): Հետխորհրդային տարիներին այն սկսել է կտրուկ իջնել և 1996թ. եղել է 301,4 մլն տ., 2005թ.՝ 545,5 մլն տոննա: Պատճառը նավթահանքերում արտադրողականության նվազումն է: Շահագործվող հանքավայրերի պաշարների մոտ կեսն արդեն արդյունահանել են, ընդ որում, ավելի շատ՝ խոշոր հանքավայրերինը:

Նավթարդյունաբերությունը ամենից շատ եկամուտներ բերող տնտեսության ճյուղերից է, սակայն այստեղ էլ կան որոշ խնդիրներ՝ նավթահորերի մի մասն աշխատում է վնասով. չկան միջոցներ դրանց վերականգնման համար: Տնտեսապես չարդարացնելով իրենց՝ վնասով աշխատող նավթահորերը փակվում են:

Նավթարդյունաբերության մեջ կիրառվող տեխնիկական միջոցները հին են, մաշված. ցածր է նորագույն տեխնոլոգիաների կիրառման մակարդակը:

Ռուսաստանի նավթի արդյունահանման գլխավոր բազաներն են՝ Արևմտասիբիրականը, Վոլգա-ուրալյանը, Տիմանո-պեչորյանը:

Արևմտյան Սիբիրին է բաժին ընկնում Ռուսաստանի նավթի հետախուզված պաշարների 75 %-ը: Շահագործվող խոշոր հանքավայրերն են Սամոտլորը, Ուստ Բալիկը, Նիժնի Վորտովսկը, Մուրզուկը, Մեգիոնը: Այս շրջանում նավթի տարեկան հանույթը հասել է մինչև 200 մլն տ (1998թ), սակայն հետագայում կիսով չափ նվազել է:

Վոլգա - ուրալյան շրջանում նախկինի համեմատ նավթի հանույթը նույնպես պակասել է (40%-ով): Ամենից շատ նավթ է արդյունահանվում Թաթարստանում, երկրորդ տեղում է Բաշկորտոստանը, այնուհետև Պերմի, Սամարայի, Օրենբուրգի մարզերը: Այս շրջանում նավթի խոշոր հանքավայրերն են Ալմետևսկը, Տույմազին, Բուգուրուլանը, Առլանը և Նեֆեկանսկը:

Տիմանո պեչորյան ավազանում նույնպես նավթի հանույթը նվազել է: Բացի ցամաքից, այստեղ նավթի զգալի պաշարներ կան Բարենցի ծովի շելֆում:

Հյուսիսային Կովկասում նավթ արդյունահանվում է Դաղստանում, Գրոզնիում, Ստավրապոլի և Կրասնոդարի երկրամասերում: Այստեղ նույնպես նավթի հանույթը խիստ պակասել է: Նավթի պաշարների շուրջ 80%-ը արդեն սպառվել է:

Ռուսաստանի նավթարդյունաբերության համար մեծ հեռանկարներ կան Հեռավոր Արևելքում: Ռուսաստանում արդյունահան-

վող նավթի շուրջ 43,5 %-ը արտահանվում է: Երկրում ստեղծվել է նավթամուղների հզոր ցանց: Խոշոր նավթամուղներից են «Բարեկամություն»-ը, որի ուղին է Ալմետևսկ-Սամարա- Օրյոլ-Մոզիր: Այստեղ նա բաժանվում է երկու ճյուղի. մեկը գնում է դեպի Լեհաստան, Գերմանիա, մյուսը՝ Ուկրաինա, Սլովակիա, Յունգարիա, Չեխիա: «Բարեկամություն» նավթամուղը նավթը ստանում է Սուրգուտ- Նիժնի Վարտովսկ-Սամարա խողովակաշարով Արևմտյան Սիբիրից:

Տնտեսական կարևոր նշանակություն ունեն նաև Սուրգուտ-Վոլգոգրադ-Նովոռոսիյսկ, Նիժնիվարտովսկ-Կրասնոյարսկ-Անգարսկ նավթամուղները:

Գազի արդյունաբերություն: Ռուսաստանին բաժին է ընկնում աշխարհի բնական գազի պաշարների 40 %-ը: Գազի արդյունահանումն ունի նվազելու միտում: Այսպես, 1991թ. արդյունահանվել է 643, 1996թ.՝ 600,2, 2005թ.՝ 641 մլրդ խմ գազ:

Գազի պաշարների և արդյունահանման գլխավոր բազան Արևմտյան Սիբիրն է: Այստեղ են շահագործվող խոշորագույն հանքավայրերը՝ Ուրենգոյը, Յամբուրգյանը, Մեդվեժյեն: Երկրորդ բազան Օրենբուրգի մարզն է: Բնական գազ են արդյունահանում Աստրախանի մարզում, Յուսիսային Կովկասում: Գազի հեռանկարային պաշարներ կան Յամալ թերակղզում, Սախայում, Բարենցի ծովի շելֆում:

Գազի վերամշակման ձեռնարկություններ գտնվում են Օրենբուրգում, Ալմետևսկում, Նիժնեվարտովսկում, Սուրգուտում, Սարատովում:

Գազամուղների ընդհանուր երկարությունը 140 հազ. կմ է: Գազամուղների միջոցով գազը հացնում են ներքին սպառողներին, և արտահանում են: Տարեկան արտահանվում է 216,8 մլրդ խմ: Արտահանման համար աշխատում է Ուրենգոյ-Ուժգորոդ գազամուղը, որը ռուսական գազը հասցնում է Եվրոպա, Յունգարիա, Չեխիա, Սլովակիա, Լեհաստան, Բուլղարիա, Ռումինիա, Գերմանիա, Ֆրանսիա: Ուկրաինական գազային միջանցքից խուսափելու համար կառուցվել է Կովկաս-Տրապիզոն գազամուղը, որն անցնում է Սև ծովի հատակով: Լեհինգրադի մարզից կառուցվում է դեպի Գերմանիա գնացող գազամուղ, որը կանցնի Բալթիկ ծովի հատակով: Ռուսաստանը գազ է մատակարարում նաև Ուկրաինային, Բելոռուսին, Հայաստանին և այլ երկրների: Ռուսաստանը տարեկան ներմուծում է 36,6 մլրդ խմ գազ, որի մեծ մասն արտահանվում է: Հեռանկարում նախատես-

վում է գազամուղներ կառուցել դեպի Չինաստան, Հյուսիսային և Հարավային Կորեա:

Ածխարդյունաբերություն: Ածուխ օգտագործվում է վառելիքաւներգետիկ արդյունաբերության մեջ, տրանսպորտում, կենցաղում, ինչպես նաև սև մետաղաձուլության համար կոքս ստանալու նպատակով:

Արդյունահանվում է և՛ քարածուխ, և՛ գորշ ածուխ: Քարածխի 45,6 %-ը տալիս է Կուզնեցկի ավազանը: Կուզնեցկի քարածխի 1/3-ը կատարվում է բաց եղանակով, այդ պատճառով էլ էժան է: Քարածուխ է արդյունահանվում նաև Պեչորայի և Հարավային Յակուտիայի ավազաններում, Ռոստովի մարզում: Գորշ ածուխի ամենախոշոր ավազանը Կանսկ-Ալչինսկն է, որտեղ ածուխ ստանում են բաց եղանակով: Գորշ ածուխ կա նաև Իրկուտսկի մարզում: Ածխի տարեկան հանույթը 309 մլն տ է:

Ռուսաստանը տարեկան շուրջ 43,4 մլն տ ածուխ է արտահանում, որի 28%-ը կոքսացող է: Ռուսաստանյան ածխի հիմնական ներմուծողներն են Ճապոնիան, Լեհաստանը, Մեծ Բրիտանիան, Թուրքիան:

Ածխի արդյունաբերությունը նույնպես ներկայումս ճգնաժամ է ապրում: Հանքահորերը գտնվում են վատ վիճակում, մեքենաները և սարքավորումները հնացած են, վերականգնողական աշխատանքներ գրեթե չեն կատարվում: Ածխահանքերում հաճախակի են վթարները, մարդկային զոհերը: Շուկայական հարաբերությունների պայմաններում ածխահանքերի մեծ մասը փակվում են: Խնդրի լուծման համար վնասով աշխատող հանքավայրերը վաճառվում են մասնավոր ընկերություններին: Սեփականաշնորհման գործընթացն աստիճանաբար ավելի մեծ չափեր է ընդունում:

Էլեկտրաէներգետիկա: Էլեկտրաէներգիայի արտադրությունը կազմում է 952,4 մլրդ կվտ ժամ, որի 66,3%-ը տալիս են ջերմաէլեկտրակայանները, 16,4 %-ը՝ ատոմային էլեկտրակայանները: Ջերմաէլեկտրակայաններն աշխատում են բնական գազով, գորշ ածուխով, այրվող թերթաքարերով, տորֆով: Խոշորագույն ՁԷԿ -եր են Սուրգուտինը, Կոստրոմայինը, Ռեֆտինյանը: Ամենախոշոր ջրաէլեկտրակայանները գտնվում են Եմիսեյի (Սայանո Շուշինսկոյե, Կրասնոյարսկ), Անգարայի (Բրատսկ, Ուստիլիմյան), Վոլգայի (Վոլգյան, Սարատովի) վրա:

Ատոմային խոշոր էլեկտրակայաններից են Կուրսկի, Սմոլենսկի, Տվերի, Լենինգրադի, Բելոյարսկի, Կոլայի կայանները:

Մակընթացային փորձնական էլեկտրակայան է կառուցվել Կոլա թերակղզում (Կիսկոգուբյան). երկրաջերմային էլեկտրակայան՝ Կամ-չատկայում (Պաուլժետյան):

Սև մետաղածուլությունն արդյունաբերության հնագույն ճյուղերից մեկն է և իր կարևոր դերն է ունեցել երկրի տնտեսության մեջ: Նրա զարգացման համար բազա են հանդիսացել տեղական վառելիքը և հանքային հումքը: Սև մետաղածուլության գլխավոր խնդիրներն են՝ բարձրացնել արտադրանքի որակը, ներդնել էկոլոգիապես նոր տեխնոլոգիաներ, հրաժարվել մետաղածուլության մեջ օգտագործվող մարտենյան եղանակից, լրիվ անցում կատարել պողպատի ստացման թթվածնային և էլեկտրաձուլման եղա-նակներին, ընդարձակել ծովային նավթամուղների և գազամուղների համար անհրաժեշտ բարձրորակ պողպատների և խողովակների արտադրությունը:

Ռուսաստանում առանձնացվում է սև մետաղածուլության երեք բազա՝ Ուրալի, Կենտրոնական, Սիբիրի:

Ուրալի բազան երկրում ամենահինն և ամենահզորը: Նրա զարգացմանը նպաստել են սեփական հանքային հումքը և Կուզնեցկի ավազանի քարածուխը: Երկաթաքարի խոշոր հանքավայրերն են Կաչկանարը, Բակալը և Մագնիտնայան: Այս և տեղական մյուս հանքավայրերը չեն բավարարում մետաղածուլական ձեռնարկությունների պահանջները, ուստի երկաթի հանքաքար է բերվում նաև Ղազախստանից և ԿՄԱ-ից: Ուրալի սև մետաղածուլության խոշոր կենտրոններ են Մագնիտագորսկը, Նիժնի Տագիլը, Զելյաբինսկը: Դրանք տալիս են երկրում արտադրվող թուջի և պողպատի 1/2-ը:

Կենտրոնական բազան հիմնվում է ԿՄԱ-ի երկաթաքարի և Կուզնեցկի ավազանի քարածխի վրա: Կենտրոնի մետաղածուլական խոշոր օջախներն են՝ Լիպեցկը, Ստարի Օսկոլը, Տուլան, էլեկտրոստալը, Կուրսկը: Մոսկվայի «էլեկտրոստալ», «Սերպ և մոլոտ» գործարանները աշխատում են մետաղի ջարդոնի հիմքի վրա և արտադրում են շատ բարձրորակ պողպատներ: Կենտրոնական բազայի գլխավոր խնդիրներից է էկոլոգիան: ԿՄԱ հանքավայրը շահագործվում է բաց եղանակով, որի հետևանքով շարքից դուրս են գալիս բերրի սևահողերը: Սև մետաղածուլությանը խանգարում է նաև տեխնիկական ջրի պակասը:

Միբիրի բազան աշխատում է Կուզնեցկի ավազանի քարածուխով, Լեռնային Շորիայի և Մերձանգարյան շրջանի երկաթաքարով: Սև մետաղածուլության գլխավոր կենտրոնը Նովոկուզնեցկն է՝ լրիվ ցիկլի երկու կոմբինատներով: Սև մետաղ են ծուլում նաև Կրասնոյարսկում, Ամուրի Կոնսոմոլսկում, Նովոսիբիրսկում:

Սև մետաղածուլության գլխավոր խնդիրը տեխնիկական վերազինումն է: Ռուսաստանում պողպատածուլության մեջ շարունակում են կիրառվել մարտենյան վառարանները, որոնք զարգացած երկրներում վաղուց արդեն չեն օգտագործվում: Մեծ աշխատանքներ են տարվում մետաղածուլական ձեռնարկությունների վերակառուցման ուղղությամբ՝ հաշվի առնելով, որ այս շրջանը ամենափեռանկարայինն է: Բացի այս երեք շրջաններից կան նաև մետաղածուլական առանձին բազաներ, խոշոր մեքենաշինական ձեռնարկություններին կից արտադրամասեր: Դրանցից ամենախոշորը Չերեպովեցի մետաղծուլական կոմբինատն է, որը աշխատում է Կարելիայի երկաթաքարի և Պեչորայի քարածխի բազայի վրա: Ստացված մետաղը ուղարկվում է Սանկտ Պետերբուրգ:

Գունավոր մետաղածուլություն: Ռուսաստանում գործում են գունավոր մետաղածուլության բոլոր ճյուղերը: Պղնձածուլությունը զարգացած է Մեդնեգորսկում և Կրասնոուրալսկում, օգտագործում են Գայի պղնձի հանքաքարը: Ալյումին են ծուլում Կամենսկ Ուրալսկում, Կրասնոտուրինսկում, Վոլխովում, Կանդալիշայում, Բրատսկում, Կրասնոյարսկում, Սայանոգորսկում, Ալինսկում (վերջինս երկրում ալյումինի ամենախոշոր արտադրողն է): Նիկելի արտադրություն կա Օրսկում, Ռեժում, Նորիլսկում (պղինձ և նիկել), անագ են ծուլում Պոդոլսկում: Դեռավոր Արևելքում արդյունահանում և վերամշակում են ոսկու հանքաքար:

Ռուսաստանի գունավոր մետաղածուլության բոլոր ձեռնարկություններն աշխատում են հայրենական հումքի վրա:

Քիմիական արդյունաբերության զարգացմանը նպաստել է հումքային ռեսուրսների առկայությունը և ընդարձակ շուկան: Քիմիական արդյունաբերության կառուցվածքը շատ բարդ է և աստիճանաբար ավելի է բարդանում. մեծանում է արտադրանքի տեսականին, օգտագործման ոլորտները, վերամշակվող հումքը ավելի լիարժեք մշակման է ենթարկվում:

Քիմիական արդյունաբերության աշխարհագրությունը նույնպես բարդ է՝ կապված հումքային, վառելիքային, էներգետիկ, ջրային սպառման գործոնների հետ:

Քիմիական արդյունաբերության կառուցվածքի մեջ են մտնում լեռնաքիմիան, հիմնական քիմիան, օրգանական սինթեզի քիմիան, պոլիմերների, պլաստմասսաների արտադրությունը, դեղագործությունը, կենցաղային քիմիան:

Լեռնաքիմիան զարգացած է հումքի արդյունահանման շրջաններում՝ Ապատիտներում, Սոլիկամսկում, Բերեզնիկիում: Այստեղ արդյունահանում են ապատիտներ, ֆոսֆորիտներ, կալիումական աղեր:

Չիմնական քիմիայի ձեռնարկություններն արտադրում են սոդա (Ստերլիտամսկում և Սոլիկամսկում), ծծմբական թթու (Բերեզնիկիում, Պերմում), պարարտանյութեր, ֆոսֆորական (Բոյանսկում, Սանկտ Պետերբուրգում), կալիումական (Սոլիկամսկում, Բերեզնիկիում), ազոտական (Նովոմոսկովսկում, Կեմերովոյում, Չերեպովեցում, Նովոգորոդում) նյութեր:

Սինթետիկ կաուչուկի արտադրությունը զարգացած է նավթի և գազի արդյունաբերության կենտրոններին և սպառողին մոտ շրջաններում՝ Տոյատիում, Նիժնեկամսկում, Օմսկում, Յարոսլավլում: Սինթետիկ կաուչուկն, իր հերթին, օգտագործվում է ավտոդողերի արտադրության մեջ:

Սինթետիկ խեժերի և պլաստմասսաների արտադրության համար օգտագործում են նավթ, բնական գազ և կոքսագազեր: Արտադրության այս ճյուղը զարգացած է հումքի աղբյուրներին մոտիկ՝ Վոլգոգրադում, Կազանում, Կեմերովոյում, Տյումենում, Սանկտ Պետերբուրգում:

Մեքենաշինությունն երկրի արդյունաբերության ամենահզոր ճյուղն է՝ իր համախառն արտադրանքով, աշխատուժի ընդգրկվածության չափով, բազմաճյուղությամբ, ընդարձակ աշխարհագրությամբ: Արդյունաբերության այս ճյուղը ներկայումս զգալի դժվարություններ է կրում գիտահետազոտական աշխատանքների փոքր ծավալի, նորարարությունների անբավարար կիրառման, կապիտալ սուղ ներդրումների պատճառով:

Մեքենաշինական ձեռնարկությունների արտադրանքը հիմնականում սպառվում է ներքին շուկայում, որովհետև արտաքին շուկայում դրանք մրցունակ չեն:

Ծանր մեքենաշինության ձեռնարկություններն արտադրում են լեռնահանքային, լեռնամետալուրգիական արդյունաբերությանն անհրաժեշտ մեքենաներ ու սարքավորումներ, խոշոր էներգետիկ սարքեր: Այս ճյուղի ձեռնարկությունները գտնվում են սպառողի մո-

տիկ շրջաններում՝ Ուրալում՝ Եկատերինբուրգ, Չելյաբինսկ, Նիժնի Տազիլ, Սիբիրում՝ Լավոկուգնեկ կենտրոնվի:

Էներգետիկ մեքենաշինությունը զարգացած է բարձրորակ աշխատուժին և տրանսպորտային հարմար ուղիներին (ծովային, գետային) մոտ շրջաններում: Սանկտ Պետերբուրգում արտադրվում են շոգետուրբիններ, կաթսաներ, գեներատորներ, ջրատուրբիններ, Վոլժսկում՝ ատոմային ռեակտորներ:

Տրանսպորտային մեքենաշինություն: Ռուսաստանն արտադրում է ժամանակաից տրանսպորտի բոլոր տեսակները: Տեսականիով հիմնականում բավարարում է երկրի պահանջները, սակայն քանակապես և որակապես դեռևս անբավարար վիճակում է: Ռուսական մեքենաներն արտասահմանյան շուկայում մասամբ մրցունակ չեն: Դրանք գլխավորապես սպառվում են ներքին շուկայում, որոշ չափով՝ նաև ԱՊՀ երկրներում:

Ռուսաստանն արտադրում է ինքնաթիռներ՝ Մոսկվայում, Կոռոլևում, Սմոլենսկում, Սամարայում, Ուլան Ուդեյում, ավտոմեքենաներ՝ Տոլյատիում, Մոսկվայում, Նաբերեժնի Չելենիում, Ուլյանովսկում, Իժևսկում:

Ծովային նավեր են արտադրում Սանկտ Պետերբուրգում, Վիբորգում, Մուրմանսկում, Արխանգելսկում, Աստրախանում, Կամչատկայի Պետրոպավլովսկում: Գետային նավեր՝ Նիժնի Նովգորոդում, Կրսնոյարսկում: Երկաթուղային շարժակազմի արտադրությունը զարգացած է (էլեկտրաքարշեր)՝ Սանկտ Պետերբուրգում, Կոլոմնայում (ջերմաքարշեր), Նիժնի Տազիլում, Սանկտ Պետերբուրգում, Մոսկվայում (վագոններ):

Տրակտորների արտադրության խոշոր կենտրոններ են Չելյաբինսկը, Վոլգոգրադը, Սանկտ Պետերբուրգը, Տագանրոգը, Վլադիմիրը: Հացահատիկային կոմբայներ են արտադրվում Դոնի Ռոստովում, Կրասնոյարսկում, կարտոֆիլահավաք՝ Տվերում:

Էլեկտրոնային հաշվիչ մեքենաներ, ինքնակառավարվող սարքեր արտադրում են բարձրորակ աշխատուժ, հզոր գիտահետազոտական բազա ունեցող Մոսկվայում, Սանկտ Պետերբուրգում, Նովոսիբիրսկում:

• *Գյուղատնտեսությունը:* Գյուղատնտեսությունը Ռուսաստանի տնտեսության ավանդական, հնագույն ճյուղն է, որը կարևոր դեր է կատարում բնակչությանը սննդով ապահովելու, արդյունաբերության որոշ ճյուղերին հումք մատակարարելու գործում:

Գյուղատնտեսությունը տալիս է համախառն ներքին արդյունքի 5,3%-ը: Այս ճյուղում զբաղված են աշխատուժի 10,8%-ը: Գյուղատնտեսության մեջ առաջնային դեր է կատարում բուսաբուծությունը, որի համար հիմք են հանդիսանում տարածքի 7,17%-ը կազմող վարելահողերը և 0,11% կազմող բազմամյա տնկարկները: Այս ցուցանիշներով նա շատ համեստ տեղ է գրավում աշխարհում: Առավել ցածր է ոռոգովի հողերի տարածքը՝ 4,6 մլն հա, որը շատ ցածր ցուցանիշ է այդպիսի ընդարձակ տարածք և ոռոգման համար նպաստավոր պայմաններ ունեցող երկրի համար: Խնդիրը բնության կողմից տրված հնարավորությունների օգտագործմանն է վերաբերում:

Ռուսաստանի գյուղատնտեսության մեջ դեռևս ցածր է մեքենայացման, քիմիացման, թունաքիմիկատների օգտագործման, անասունների խնամքի մակարդակը: Երկրի հողերի գերակշիռ մասը ենթարկվել են աղակալման, հողմնահարման, ճահճացման, անապատացման: Հատուկ խնամքի կարիք ունեն վարելահողերի 58%-ը, արոտավայրերի 95%-ը: Հողաբարելավման աշխատանքները շատ ցածր մակարդակի վրա են կամ էլ ուղղակի գոյություն չունեն:

Բուսաբուծությունը տալիս է գյուղատնտեսության համախառն ներքին արդյունքի 40%-ը: Ամենից մեծ տարածք են գրավում հացահատիկային մշակաբույսերը՝ ցորենը, տարեկանը, կորեկը, հնդկացորենը, բրինձը: Դրանք օգտագործվում են որպես սննդի միջոց և անասնակեր:

Ավելի բարձր բերք է ստացվում աշնանացան ցորենից՝ 21-23 ց/հա-ից: Նրա ցանքատարածությունները մեծ աշխարհագրություն ունեն Հյուսիսային Կովկասում և Կենտրոնական սևահողային շրջաններում, որտեղ ձմեռները առատ ծյուն է գալիս, որը ցանքսերը պահպանում է ցրտահարություններից: Գարնանացան ցորեն մշակում են Վոլգայից արևելք ընկած շրջաններում՝ անտառատափաստանային և տափաստանային զոնաներում: Գարնանացան ցորենի մեջ կարևոր նշանակություն ունեն կոշտ տեսակները, սակայն դրանց բերքատվությունը ցածր է՝ 12-13 ց/հա-ից:

Աշնանացան տարեկան մշակում են եվրոպական մասի անտառատափաստանների և տափաստանների շրջանում:

Եգիպտացորենի ցանքատարածությունները 647,7 հզ հա են. ընդարձակ տարածություններ են գրավում Պովոլժիեում, Հյուսիսային Կովկասում, Դոնի հովտում: Տարեկան ստանում են 2,1 մլն տ բերք (2003 թ.): Ավելի հյուսիս ընկած շրջաններում եգիպտացորեն են մշակում անասնակերի կանաչ զանգված ստանալու համար:

Վոլգայի ստորին հոսանքի շրջանում մշակում են բրինձ:

Տեխնիկական մշակաբույսերից ցանում են երկարաթել վուշ՝ եվրոպական շրջանի հյուսիս- արևմուտքում, հատկապես Վոլգա-Վյատկայի տնտեսական շրջանում:

Յուղատու մշակաբույսերից են արևածաղիկը, սոյան: Երկրի յուղատու գլխավոր մշակաբույսն արևածաղիկն է, որի ցանքատարածությունները տարածված են Կենտրոնական սևահողային շրջանում, Յուսիսային Կովկասում, Ալթայի երկրամասում: Սոյայի մշակման հիմնական շրջանը Յեռավոր Արևելքն է:

Շաքարի ճակնդեղը պահանջկոտ է հողի որակի և օդի խոնավության նկատմամբ, աշխատատար է: Շաքարի ճակնդեղի մշակումը կենտրոնացած է Կենտրոնական սևահողային և Յուսիսային Կովկասի բերրի սևահողերի շրջանում:

Կարտոֆիլի մշակումն ավելի ընդարձակ աշխարհագրություն ունի Կենտրոնական սևահողային, Կենտրոնական, Վոլգա-Վյատկայի, Պովոլժիեյի, Ուրալի, Յուսիսային Կովկասի շրջաններում: Կարտոֆիլն օգտագործվում է սննդի, սպիրտի և օսլայի արտադրության մեջ: Կրասնոդարի երկրամասում մշակում են թեյ:

Պտղաբուծության գլխավոր շրջանը Յուսիսային Կովկասն է:

Անասնապահության զարգացման համար հիմք է հանդիսանում բուսաբուծությունը, ինչպես նաև սննդի արդյունաբերության թափոնները և բնական արոտավայրերը:

Սկսած 1990 թվականից անասնապահությունը մեծ անկում ապրեց: Ջանգվածաբար կրճատվեց անասունների գլխաքանակը, դրա հետևանքով պակասեց մսի, կաթի, բրդի, ձվի արտադրությունը:

Խոշոր եղջերավոր անասնապահությունը տալիս է երկրում արտադրվող մսի 40%-ը: Կաթնա-մսատու անասնապահությունը զարգացած է տափաստանային, անտառատափաստանային, անտառային շրջաններում, կաթնատու անասնապահությունը՝ խոշոր քաղաքներում:

Խոզաբուծությունը տալիս է մսամթերքի 1/3-ը: Խոզաբուծությունն ընդարձակ աշխարհագրություն ունի: Այն ավելի տարածված է հացահատիկի, կարտոֆիլի, արևածաղկի, շաքարի ճակնդեղի մշակության շրջաններում՝ Յուսիսային Կովկասում, Պովոլժիեում, Կենտրոնական սևահողային շրջաններում, նաև՝ խոշոր քաղաքների մերձակայքում:

Ոչխարաբուծությունը նույնպես մեծ աշխարհագրություն ունի և կարևոր դեր է կատարում մսի ու բրդի արտադրության գործում: Այն զարգացած է Հյուսիսային Կովկասում, Ուրալի հարավում, Ալթայի երկրամասում, Պովոլժեիում:

Տրանսպորտը: Տնտեսության կարևորագույն ոլորտներից մեկն է: Նրա դերն առանձնապես մեծ է հսկայական տարածք, մեծ ծավալի բնառեսուրսային կարողություններ, հզոր լեռնահանքային արդյունաբերություն ունեցող երկրի համար:

Երկաթուղային տրանսպորտ: Երկաթուղիների ընդհանուր երկարությունը 87,1 հազ. կմ է: Երկաթուղային ճանապարհների ցանցը համեմատաբար խիտ է Եվրոպական մասում: Այստեղ կան միջօրեականների և զուգահեռականների ուղղությամբ ձգվող մի քանի խոշոր մայրուղիներ՝ Մոսկվա-Սանկտ Պետերբուրգ-Մուրմանսկ, Մոսկվա-սևծովյան նավահանգիստներ, Մոսկվա-Եկատերինբուրգ, Օմսկ-Նովոսիբիրսկ-Կրասնոյարսկ-Իրկուտսկ-Ուլան Ուդե-Խաբարովսկ-Վլադիվոստոկ, Տյումեն-Ուրենգոյ:

Երկաթուղային տրանսպորտը կարևոր դեր է կատարում բեռնափոխադրումների և՛ ուղևորափոխադրումների գործում: Երկաթուղային տրանսպորտի դերն առանձնապես կարևոր է ձմեռային անբարենպաստ եղանակներին՝ հատկապես Սիբիրում և Հեռավոր Արևելքում մնալով փոխադրության միակ միջոցը: Երկաթուղիները տրանսպորտային եզակի ապահով կապն են Արևմտյան Սիբիրի նավթագազային շրջանների և Եվրոպական շրջանների միջև: Սիբիրի և Հեռավոր Արևելքի համար կարևոր է Բայկալ - Ամուրյան երկաթուղին, որն Ուստ-Կուտից ձգվում է մինչև Խաղաղ օվկիանոսի ափերը 3145 կմ: Այս մայրուղու նշանակությունն ավելի կմեծանա ապագայում Ատլանտյան և Խաղաղ օվկիանոսների միջև ցամաքային կապն ընդլայնելու համար: Ռուսաստանի Եվրոպական մասի երկաթուղիներն արդեն միավորվել են Արևելյան և Արևմտյան Եվրոպայի տրանսպորտային միջանցքների հետ: Այս գործընթացը կարող է շարունակվել նաև Ռուսաստանի արևելյան շրջաններում:

Երկաթուղային խոշոր հանգույցներն են Մոսկվան, Սանկտ Պետերբուրգը, Նովոսիբիրսկը:

Ռուսաստանի երկաթուղիների գլխավոր խնդիրն է՝ երկաթգծերի և շարժակազմի նորացումը, արագընթաց ճանապարհների կառուցումը, տարանցիկ բեռնափոխադրումների ծավալի մեծացումը:

Ավտոմոբիլային տրանսպորտ: Ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը 871 հազ. կմ է, որից 25 հազ. կմ-ը արագընթաց ճանապարհներ են: Ավտոճանապարհների ցանցը համեմատաբար խիտ է եվրոպական մասում: Մոսկվայից դուրս են գալիս 12 ավտոմայրուղիներ դեպի Սանկտ Պետերբուրգ, Կիև, Մինսկ, Կովկաս, Չեխբինսկ և այլն:

Ավտոճանապարհային ցանցը շատ նոսր է Սիբիրում և Հեռավոր Արևելքում: Միայն դրանց հարավային մասով ձգվում են արևմուտքն արևելքի հետ կապող ավտոմայրուղիներ: Տայգայում ավտոճանապարհները շատ սակավ են, իսկ տունդրայի զոնայում բացակայում են, եղածներն էլ շատ կարճ են: Հավերժական սառածության և ճահճապատ տարածություններում ճանապարհների կառուցումը, ինչպես նաև հետագա խնամքը կապված են մեծ ծախսերի հետ:

Ծովային տրանսպորտ: Ռուսաստանը ելք ունի դեպի Յուսիսային սառուցյալ, Ատլանտյան և Խաղաղ օվկիանոսներ: Նրա ծովափնյա գիծը 37653 կմ է: Դեպի տասներկու ծով ելք ունեցող երկրի համար, բնականաբար, մեծ է ծովային տրանսպորտի դերը: Ծովային տրանսպորտով կատարվում են առափնյա և հեռավոր փոխադրումներ:

Բեռնափոխադրումների ծավալով առաջին տեղում է Խաղաղ օվկիանոսյան ավազանի նավատորմը, որն ամմիջական կապ է հաստատում Ասիայի և Ավստրալիայի հետ: Այս ավազանում խոշոր նավահանգիստներ են Վլադիվոստոկը, Կամչատկայի Պետրոպավլովսկը: Երկրորդը Բալթիկ ծովի ավազանն է, որը կապ է ապահովում Եվրոպայի և Ամերիկայի երկրների հետ: Այստեղ խոշոր նավահանգիստներն են Սանկտ Պետերբուրգը, Կալինինգրադը: Սև ծովի նավահանգիստները՝ Նովոռոսիյսկը, Տուապսեն, հիմնականում օգտագործվում են նավթ արտահանելու համար:

Յուսիսային ծովային ուղին նշանակալի է Սիբիրի և Հեռավոր Արևելքի հետ կապ պահպանելու համար: Մեծ է Մուրմանսկի չսառչող նավահանգստի, Արխանգելսկի դերը: Յուսիսային ծովային ուղիով դեպի արևելք են տարվում մեքենաներ ու սարքավորումներ, սննդամթերք, հակառակ ուղղությամբ բերվում են անտառանյութ, հանքային հումք, մորթիներ:

Գետային տրանսպորտ: Ռուսաստանի գետերի մեծ մասը ջրառատ են: Դրանց ձգվում են միջօրեականների ուղղությամբ, որ ավելի է մեծացնում նրանց տրանսպորտային նշանակությունը: Եվրոպական մասի գետերը՝ Վոլգան, Դոնը, Նևան, Վոլգա - Դոն, Սպիտակ -

Բալթյան, Վոլգա - Բալթյան ջրանցքներով միացած են միմյանց, ջրային կապ ապահովելով Բալթիկ, Սպիտակ, Սև, Ազովի և Կասպից ծովերի միջև:

Գետային տրանսպորտով փոխադրում են անտառանյութ, շինանյութ, սննդամթերք, մեքենաներ ու սարքավորումներ: Սիբիրի, Հեռավոր Արևելքի և Եվրոպական մասի հյուսիսային գետերն օգտագործվում են անտառանյութ և այլ բեռներ տեղափոխելու համար: Այս գետերի առավելությունն հատկապես մեծանում է ցամաքային ուղիների գրեթե բացակայության պայմաններում:

Օդային տրանսպորտը կարևոր նշանակություն ունի արտաքին և ներքին ուղևորափոխադրումների և բեռնափոխադրումների համար: Օդային տրանսպորտը Սիբիրի և Հեռավոր Արևելքի բազմաթիվ բնակավայրեր կենտրոնին կապող միակ միջոցն է: Երկրի օդային գծերի խոշարագույն հանգույցը Մոսկվան է: Մեծ է նաև Սանկտ Պետերբուրգի, Նովոսիբիրսկի և այլ քաղաքների դերը օդագնացության բնագավառում:

Խողովակաշարային տրանսպորտ: Առաջին տեղում է բեռնափոխադրումների գործում: Նրան բաժին է ընկնում բեռնափոխադրումների ծավալի 56,7 %-ը: Գործում են նավթամուղներ, գազամուղներ և ապրանքամուղներ, որոնք իրար հետ ունեն 211 հզ կմ-ից ավելի երկարություն: Ռուսաստանի գազամուղները համակարգված են Կենտրոնական Ասիայի գազամուղների հետ: Այդ համակարգից են սկիզբ առնում Եվրոպա, Հարավային Ասիա գնացող գազամուղները:

Գիտական ենթակառուցվածքները: Ռուսաստանն ունի հզոր գիտահետազոտական բազա: Միայն Մոսկվայում հաշվում են 1000-ից ավելի գիտահետազոտական հիմնարկներ, որոնք կազմում են երկրի գիտական կարողությունների 40%-ը: Մոսկվայի մերձակայքում են գտնվում գիտական խոշոր կենտրոններ Դուբնան, Պուլշինոն, Տրոիցկը, Օբինինսկը, Ջելենոգրադը և այլն: Սանկտ Պետերբուրգում կան 360 գիտահետազոտական օջախներ: Գիտահետազոտական կենտրոններ են Եկատերինբուրգը, Նովոսիբիրսկը, Կրասնոյարսկը, Իրկուտսկը, Սամարան, Կազանը, Սարատովը:

Ռուսաստանում սկսվել է տեխնոպոլիսների, տեխնոպարկերի, սիլիկոնային հովիտների ստեղծումը: Դրանց համար հիմք են հանդիսանում խոշոր գիտահետազոտական կենտրոնները: Այս գործընթացում, բացի քաղաքացիական «բաց» կենտրոններից, կօգտագործվեն նաև ռազմական «փակ» կենտրոնների (Արզամաս-16 (մի-

ջուկային հետազոտությունների գծով), Չեյաբինսկ-70, Պենզա-19, Տոմսկ-7, Կրասնոյարսկ-7) ներուժը:

Խոշոր տեխնոպարկ է ստեղծվում Մոսկվայի պետական համալսարանի բազայի վրա: Նովոսիբիրսկ ակադեմիական քաղաքում ձևավորվում է «Սիլիկոնային տայգա» կենտրոնը:

Արտաքին տնտեսական կապերը: Ռուսաստանի արտահանման ծավալները հասնում են 317,6 մլրդ դոլարի: Ընդ որում արտահանման չափերն արժեքային առումով արագ աճում են. 2000-2007թթ. ընթացքում արտահանման ծավալներն ավելացել են երեք անգամ, որը հիմնականում պայմանավորված է միջազգային շուկայում էներգակիրների, հանքային հումքի, անտառանյութի գների կտրուկ աճով:

Արտահանվող հիմնական ապրանքներն են՝ նավթը և նավթամթերքները, բնական գազը, սև և գունավոր մետաղները, անտառանյութը, քիմիկատները, թանկարժեք քարերը, տրանսպորտային միջոցները, զենքը ու զինամթերքները: Արտահանման ծավալների 10,3%-ը բաժին է ընկնում Նիդերլանդներին, 8,3%-ը՝ Գերմանիային, երրորդ տեղում Չինաստանն է, այնուհետև՝ Ուկրաինան, Թուրքիան:

Ներմուծման ծավալները 171,5 մլրդ դոլար են: Ներմուծման ծավալները մեծանում են՝ 2000-2007թթ 3,9 անգամ: Ներմուծում է մեքենաներ ու սարքավորումներ, տրանսպորտային միջոցներ, սննդամթերք, հագուստ, կոշիկ, կենցաղային ապրանքներ: Ներմուծման գլխավոր գործընկերներն են Գերմանիան՝ 13,6 %, Ուկրաինան՝ 8%, Չինաստանը՝ 7%, ճապոնիան, Բելառուսը, ԱՄՆ-ն, Իտալիան, Չադային Կորեան:

ՆԵՐՔԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

Ընդարձակ տարածքում բազմատեսակ բնական ռեսուրսների անհավասար տեղաբաշխումը, բնակլիմայական պայմանների խիստ բազմազանությունը, աշխարհագրական դիրքի մեծ տարբերությունները, պատմական զարգացման այլազան ուղիները տարբեր պայմաններ են ստեղծել առանձին շրջանների զարգացման համար: Եվ յուրաքանչյուր շրջան իր որոշակի տեղն է գրավել աշխատանքի աշխարհագրական բաժանման մեջ:

Ռուսաստանում առանձնացվում են 11 տնտեսական շրջաններ՝ Կենտրոնական, Յուսիս-արևմտյան, Յուսիսային, Կենտրոնական-սևահողային, Վոլգա-Վյատկայի, Պովոլժիեի, Յուսիսային Կովկասի, Ուրալի, Արևմտյան Սիբիրի, Արևելյան Սիբիրի, Յեռավոր Արևելքի:

Շրջանային բաժանումը հնարավորություն է տալիս կարգավորել նպատակային պլանավորումը, պայմաններ ստեղծել կայուն գործընթացի իրագործման համար, աստիճանաբար մեղմել երկրի տարբեր ռեգիոնների միջև առկա սոցիալ-տնտեսական պայմանների անհավասարությունը:

Աղյուսակ 44

Դաշնային օկրուգների տարածքը, բնակչությունը և ՀՆԱ¹

N	Օկրուգ	Տարածքը հազ. քկմ	Բնակչու- յունը	Համախառն ներքին արտադրանքը մլրդ ռուբլի
1.	Կենտրոնական	650,7	37546	3227,8
2.	Հյուսիս-Արևմտյան	1677,9	13731	937,2
3.	Հարավային	589,2	22821	743,2
4.	Մերձվոլգյան	1038,0	30821	1677,2
5.	Ուրալի	1788,9	12279	1421,6
6.	Սիբիրի	5114,8	19279	1022,4
7.	Հեռավոր Արևելքի	6515,9	6593	4853


1. Կենտրոնական տնտեսական շրջան: Տարածքը՝ 486 հազ. քկմ: Շրջանի կազմի մեջ են մտնում Բրյանսկի, Իվանովոյի, Կալուգայի, Կոստրոմայի, Մոսկվայի, Սմոլենսկի, Տուլայի, Տվերի, Վլադիմիրի, Ռյազանի, Օրյոլի, Յարոսլավլի մարզերը, Մոսկվա քաղաքը:

Կենտրոնական տնտեսական շրջանն ունի հարմար աշխարհագրական դիրք, գտնվում է երկրի ամենագարգացած եվրոպական մասի կենտրոնում, բանուկ երկաթուղային, ավտոմոբիլային, օդային ճանապարհների խաչմերուկում. ջրային ճանապարհներով ելք ունի դեպի Սև, Ազովի, Կասպից, Սպիտակ և Բալթիկ ծովեր: Շրջապատված է բնական ռեսուրսներով հարուստ Կենտրոնական սևահողային, Վոլգա-Վյատկայի, Հյուսիսային, Հյուսիս-արևմտյան տնտեսական շրջաններով: Արևմուտքում նրա հարևաններն են Բելառուսը-Ուկրաինան:

Մոսկվայի զարգացմանը նպաստել է մայրաքաղաքային կարգավիճակը, հզոր գիտահետազոտական բազան: Այստեղ են կենտրոնացված բազմաթիվ բարձրագույն ուսումնական հաստատու-

¹ Կազմված է ըստ Վ.Ի.Բուտովի Экономическая и социальная география зарубежного мира и Российской Федерации, Москва, Ростов на Дону, 2006 с., 187;

յուններ, գիտահետազոտական հիմնարկներ, ունի բարձրորակ աշխատանքային ներուժ:



Նկ. 38. Մոսկվայի Մեծ թատրոնը

Բնական ռեսուրսներով աղքատ է: Կան գորշ ածխի, ֆոսֆորիտների, կրաքարի, ավազի, տորֆի պաշարներ:

Բնակչությունը: Երկրի ամենախտաբնակ շրջանն է. մեկ քվմ-ի վրա ապրում է շուրջ 60 մարդ: Առավել խտաբնակ է Մոսկվայի մարզը: Բարձր է ուրբանիզացման մակարդակը: Այստեղ հաշվում են 250-ից ավելի քաղաքներ:

Տնտեսության գլխավոր ճյուղը *արդյունաբերությունն* է: Դեռևս անցյալ դարի սկզբներից այստեղ սկսել է զարգանալ թեթև արդյունաբերությունը: Մոսկվայում և Իվանովոյում, Վլադիմիրում, Օրեխովո Ջուլեվոյում և շատ այլ քաղաքներում ստեղծվել են բամբակյա և բրդյա գործվածքների արտադրության ձեռնարկություններ: Բրյանսկում և այլ քաղաքներում արտադրում էին շոգեքարշեր, վագոններ: Խորհրդային տարիներին հիմնադրվեցին մեքենաշինական, սարքաշինական, էլեկտրատեխնիկական արդյունաբերություն, քիմիական, տպագրական նոր ձեռնարկություններ:

Շրջանն ունի էլեկտրաէներգետիկ հզոր տնտեսություն: Խոշոր ՋէԿ-եր կան Մոսկվայում, Ռյազանում, Կոստրոմայում, Տվերում, ատոմային էլեկտրակայաններ՝ Օբնինսկում, Կոստրոմայում, Տվերում, Սմոլենսկում:

Ձարգացած է բազմաճյուղ մեքենաշինությունը: Արտադրում են ջերմաքարեր՝ Կոլոմնայում և Մուրոմում, վագոններ՝ Տվերում և Միտիշչիում, ավտոմեքենաներ՝ Մոսկվայում և Լիկինո-Դուլևոյում, տրակտորներ՝ Վլադիմիրում: Այդ և մյուս մեքենաշինական ձեռնարկություններին բարձրորակ պողպատներ է մատակարարում Էլեկտրոստալ գործարանը: Շրջանում են գտնվում երկրի գնդառանցկայների երկու խոշոր գործարանները: Ձարգացած է էներգետիկ, էլեկտրատեխնիկական, էլեկտրոնային մեքենաշինությունը, սարքաշինությունը:

Քիմիական արդյունաբերության ձեռնարկություններն արտադրում են ազոտական և ֆոսֆորական պարարտանյութեր, լաքեր, ներկեր, սինթետիկ կաուչուկ, դեղորայք: Քիմիական արդյունաբերության խոշոր կենտրոններն են Վոսկրեսենսկը, Նովոմոսկովսկը, Յարոսլավլը, Եֆրեմովը:

Ձարգացման բարձր մակարդակի վրա է գրատալությունը: Սա երկրի հրատարակչական գլխավոր շրջանն է:

Գյուղատնտեսության հիմնական նպատակը շրջանի կարիքների բավարարումն է: Մերձքաղաքային շրջաններում մշակում են բանջարեղեն, ծաղիկներ: Ձարգացած է կաթնատու անասնաբուծությունը, խոզաբուծությունը, թռչնապահությունը:


Տրանսպորտը: Շրջանը երկրի տրանսպորտային գլխավոր հանգույցն է: Ունի բարձրորակ ավտոճանապարհներ և հզոր ավտոպարկ: Երկաթուղային խիտ ցանցը հնարավորություն է տալիս ապահովել բեռների և ուղևորների անխափան փոխադրումները: Շրջանի երկաթուղիներն աստիճանաբար ինտեգրվում են եվրոպական տրանսպորտային միջանցքներին: Մոսկվան երկրի խոշորագույն օդային դարպասն է:

2. Յյուսիս-արևմտյան տնտեսական շրջան: Սրա կազմի մեջ են մտնում Լենինգրադի, Նովգորոդի, Պսկովի մարզերը և Սանկտ Պետերբուրգը:

Շրջանի զարգացմանը նպաստել է հարմար աշխարհագրական դիրքը, 200 տարվա մայրաքաղաքային վիճակը, եվրոպական զարգացած երկրներին և բնառեսուրսային մեծ կարողություն ունեցող Յյուսիսային տնտեսական շրջանի մոտիկությունը:

Նովգորոդը և Պսկովը եղել են Ռուսական պետության գլխավոր օջախներից: Սանկտ Պետերբուրգը հիմնադրումից հետո աստիճանաբար վերածվել է գիտակրթական, մշակութային, արդյունաբերա-

կան խոշոր կենտրոնի: Նրա զարգացմանը նպաստել է Վոլգա-Բալթյան, Սպիտակ-Բալթյան ջրային ուղիների կառուցումը:



Նկ.39. Սանկտ Պետերբուրգ

Շրջանի մակերևույթը հարթավայրային է՝ ծածկված սառցադաշտային նստվածքներով, ճահիճներով և անտառներով: Սառցադաշտային ծագում ունեն յոթ հազարից ավելի լճերը՝ Լադոգան, Օնեգան, Չուզը, Պսկովը և այլն:

Շրջանով հոսում են ջրառատ շատ գետեր՝ Նևան, Նարվան և այլն:

Ընդերքում կան այրվող թեթաքարերի, հրակայուն կավերի, ֆոսֆորիտների, բոքսիտների պաշարներ:

Բնակչությունը: Շրջանը նոսր է բնակեցված, նրա 8,3%-ը ապրում է քաղաքներում: Գյուղական բնակավայրերը փոքր են, միմյանցից գտնվում են մեծ հեռավորության վրա: Սանկտ Պետերբուրգի շուրջը ձևավորվել է խոշոր ագլոմերացիա: Մյուս նշանավոր քաղաքներն են Նովգորոդը, Պսկովը:

Տնտեսությունը: Շնորհիվ գիտակրթական բարձր մակարդակի շրջանն ունի զարգացած տնտեսություն: Նրա առաջատար ճյուղը մեքենաշինությունն է՝ էլեկտրակայանների համար անհրաժեշտ գեներատորների, տուրբինների արտադրությունը, նավաշինությունը, տրակտորաշինությունը, էլեկտրոնային, էլեկտրատեխնիկական, սարքաշինական արդյունաբերությունը: Մեքենաշինական խոշոր կենտրոններ են Սանկտ Պետերբուրգը, Նովգորոդը, Պսկովը, Վիբորգը:

Տիխվինի բոքսիտների բազայի վրա Վոլխովոյում զարգացած է ալյումինաձուլությունը:

Քիմիական արդյունաբերության ձեռնարկություններն արտադրում են հանքային պարարտանյութեր՝ Կուրեսարիայում, պլաստմասաներ, դեղորայք:

Թեթև արդյունաբերության ձեռնարկություններն արտադրում են գործվածքներ, կոշկեղեն, հագուստեղեն:

Բարձր մակարդակի վրա է տպագրությունը, որի խոշոր կենտրոնը Սանկտ Պետերբուրգն է:

Գյուղատնտեսության գլխավոր ճյուղը կաթնատու անասնապահությունն է, որի համար բազա են հանդիսանում ընդարձակ արոտավայրերը և մշակովի կերաբույսերը: Ջարգացած են նաև խոզաբուծությունը և թռչնաբուծությունը: Մշակում են վուշ, կարտաֆիլ, բանջարեղեն:

Տրանսպորտը: Սանկտ Պետերբուրգով են անցնում Կենտրոնական շրջանը Բարենցի ծով- Սպիտակ ծով- Բալթիկ ծով տանող երկաթուղային, ջրային ուղիները: Սանկտ Պետերբուրգը «պատուհան» է դեպի Եվրոպա, երկրի խոշոր նավահանգիստներից մեկը: Նրա վրայով են անցնում Սպիտակ-Բալթյան, Վոլգա-Բալթյան բեռնուղիները: Շրջանի համար կարևոր նշանակություն կունենա Լենինգրադի մարզից դեպի Արևմտյան Եվրոպա գնացող ստորջրյա նավթամուղի կառուցումը:

Շրջանի տնտեսության կարևորագույն ճյուղերից է զբոսաշրջությունը: Սանկտ Պետերբուրգը, Նովգորոդը, Պսկովը պատմա-ճարտարապետական կոթողներով, թանգարաններով, մշակույթի օջախներով դեպի իրենց են գրավում բազմաթիվ զբոսաշրջիկների:

3. Հյուսիսային տնտեսական շրջան: Սրա կազմի մեջ են մտնում Արխանգելսկի, Մուրմանսկի, Վոլգոդայի մարզերը, Կարելական և Կոմի հանրապետությունները:

Շրջանը աշխատանքի աշխարհագրական բաժանմանը մասնակցում է լեռնահանքային, անտառային արդյունաբերությամբ, գունավոր մետաղաձուլությամբ: Նա կարևոր տեղ է գրավում ծովային բեռնափոխադրումներով: Այստեղից է սկսվում Հյուսիսային ծովային մեծ ուղին:

Բնական պայմանները և ռեսուրսները: Շրջանի տարածքի հարավային մասն ընկած է Ռուսական մեծ հարթավայրի հյուսիսում: Այստեղ ամառները զով են, ձմեռները՝ ցուրտ, տեղումների քանակը՝

200-300 մմ: Կարելիայի և Կոլա թերակղզու կլիման համեմատաբար մեղմ է, ծայր հյուսիսում նույնիսկ ձմռանը ծովը չի սառչում:

Բարեխառն խոնավ կլիմայի շնորհիվ տարածքի մեծ մասը անտառապատ է, մնացածը ճահիճներ են: Ընդարձակ տարածք են գրավում սառցադաշտային հազարավոր լճերը: Գետերը ջրառատ են և հոսում են դեպի Յուսիսային Սառուցյալ օվկիանոս: Դրանք օգտագործվում են նավարկության, լաստառաքման, ջրաէներգետիկ նպատակներով:

Մակերևույթը հարթավայրային է՝ ծածկված հզոր նստվածքներով: Կոլա թերակղզում կան ոչ մեծ բարձրության լեռներ: Պեչորայի ավազանում հայտնաբերված են քարածխի մեծ պաշարներ: Կոմի հանրապետության տարածքում և Բարենցի ծովի շելֆում՝ նավթի և բնական գազի, Արխանգելսկի մարզում՝ բոքսիտների, Կարելիայում՝ երկաթաքարի, գրանիտների, Կոլա թերակղզում՝ պղնձի, նիկելի, կապարի, ցինկի, ապատիտների պաշարներ:

Բնակչությունը: Ռուսաստանի ամենանոսր բնակեցված շրջաններից է: Բնակչության գերակշիռ մասը ռուսներ են, ապրում են նաև կարելներ, կոմիներ, նենեցներ:

Տնտեսության գլխավոր ճյուղը լեռնահանքային արդյունաբերությունն է: Արդյունահանում են նավթ և բնական գազ, քարածուխ, սև և գունավոր մետաղներ, բոքսիտներ, ապատիտներ, գրանիտ: Դրանց բազայի վրա զարգացած է սև մետաղաձուլությունը՝ Չերեպովեցում, պղնձի և նիկելի ձուլումը՝ Մոնչեգորսկում, ալյումինի՝ Կանդալակշայում և Նադվոդնոյում: Նավթավերամշակման խոշոր ձեռնարկություն կա Չերեպովեցում:

Զարգացած է էլեկտրաէներգետիկ արդյունաբերությունը: Ջերմաէլեկտրակայաններն աշխատում են քարածխի և բնական գազի հիման վրա: Կարելիայում և Մուրմանսկի մարզում կա մակընթացային: Կոլա թերակղզում՝ տոմային:

Շրջանում բարձր մակարդակի վրա է գտնվում փայտամշակումը, թղթի և ցելյուլոզի արտադրությունը: Թղթի արտադրության խոշոր կենտրոններն են Արխանգելսկը, Սիկտիվկարը, Կոնդոպոգան, Սեգեժան, Պետրոզավոդսկը:

Պյուղատնտեսություն: Շրջանի ծայր հարավում՝ Վոլոգդայի մարզում, զարգացած է կաթնատու անասնապահությունը, վուլչի մշակումը: Յուսիսային շրջաններում զբաղվում են եղջերվապահությամբ, ձկնորսությամբ, որսորդությամբ:

Տրանսպորտը: Ճանապարհային ցանցը շատ նոսր է: Ամենաբանուկ երկաթուղային գիծը Սանկտ Պետերբուրգ-Մուրմանսկն է: Կարևոր նշանակություն ունեն նաև դեպի Չերեպովեց, Արխանգելսկ, Վորկուտա գնացող երկաթուղիները: Ավտոճանապարհային ցանցը խիտ է քաղաքների մերձակայքում, իսկ ավելի հեռու տարածքները ճանապարհագուրկ են:

Շրջանի համար կարևոր նշանակություն ունի ծովային տրանսպորտը: Չմոռան ամիսներին, երբ սառացակալման պատճառով անգործության են մատնվում Բալթիկ ծովի նավահանգիստները, բեռնափոխադրումների ամբողջ ծավալը կատարվում է Մուրմանսկի չսառչող նավահանգստի միջոցով: Կարևոր դեր ունի նաև Արխանգելսկը, հատկապես անտառանյութի փոխադրման գործում:

4. Կենտրոնական սևահողային տնտեսական շրջանի կազմի մեջ են մտնում Բելգորոդի, Լիպեցկի, Կուրսկի, Վորոնեժի, Տամբովի մարզերը:

Կենտրոնական սևահողային շրջանն աշխատանքի աշխարհագրական բաժանմանը մասնակցում է երկաթաքարի արդյունահանմամբ և վերամշակմամբ, հացահատիկի, տեխնիկական կուլտուրաների մշակմամբ, շաքարի, բուսայուղի, մսի, կաթի արտադրությամբ:

Նրա զարգացմանը նպաստել են հարուստ բնառեսուրսային կարողությունները, հարմար աշխարհագրական դիրքը:

Բնական պայմանները և ռեսուրսները: Տարածաշրջանի մակերևույթը հարթավայրային է: Ռուսական պլատֆորմի վրա կուտակված հզոր նստվածքային շերտերը պարունակում են երկաթաքարի, ֆոսֆորիտների, շինանյութերի մեծ պաշարներ: Կուրսկի մագնիսական անոմալիայի (ԿՄԱ) հանքավայրի պաշարները 40 մլրդ տ են, հանքաքարի մեջ մետաղի պարունակությունը բարձր է՝ 60%: ԿՄԱ-ի հանքավայրի (հանքաբեր դաշտի) ընդարձակ տարածքի վրա առանձնանում են Ստարի Օսկոլյանի և Միխայլովսկու հանքային շրջանները:

Բնակչությունը: Բերրի հողերը, զարգացած տնտեսությունը նպաստել են բնակչության մեծ խտությանը (շուրջ 50 մարդ մեկ քվմ վրա): Ուրբանիզացման մակարդակը 63% է: Ռուսական հնագույն քաղաքներից են Կուրսկը, Բելգորոդը, Վորոնեժը, Տամբովը: Տիրապետում են խոշոր գյուղական բնակավայրերը:

Տնտեսությունը: Սեփական երկաթաքարի և Կուզբասի քարածուխի հիման վրա Ստարի Օսկոլում, Նովոլիպեցկում, Կուրսկում զարգացած է սև մետաղածուլությունը: Մետաղածուլության հետագա ընդարձակմանը խանգարում են տեխնոլոգիական ջրի պակասը, երկաթի հանքավայրերի շրջանում բերրի սևահողերի առկայությունը:

Բարձրորակ մետաղների բազայի վրա զարգացած է տրակտորաշինությունը (Լիպեցկում), էքսկավատորների, գյուղատնտեսական մեքենաների արտադրությունը, ծշգրիտ մեքենաշինությունը (Կուրսկում):

Քիմիական արդյունաբերության ձեռնարկություններն արտադրում են ռետինատեխնիկական իրեր և ավտոդողեր՝ Վորոնեժում, ներկեր՝ Տամբովում, քիմիական մանրաթելեր՝ Կուրսկում, կոքսագազերի հիման վրա՝ ազոտական պարարտանյութեր:

Երկրի սննդի արդյունաբերության գլխավոր շրջաններից մեկն է: Զարգացած է ալրադաջ, շաքարի, կաթնամթերքի, մսի, բուսայուղի, ծխախոտի արտադրությունը:

Գյուղատնտեսությունը: Բերրի սևահողերի վրա ցանում են աշնանացան ցորեն, եգիպտացորեն, տարեկան, գարի, արևածաղիկ, շաքարի ճակնդեղ, ծխախոտ: Մշակում են նաև կարտոֆիլ, բանջարեղեն: Ինտենսիվ բուսաբուծությունը նպաստում է խոշոր եղջերավոր անասնապահությանը, խոզաբուծությանը, թռչնաբուծությանը:

Տրանսպորտը: Զարգացած է երկաթուղային և ավտոմոբիլային տրանսպորտը: Նրա վրայով են անցնում Կենտրոնական շրջանը Ուկրաինային, Բելառուսին կապող ցամաքային ճանապարհները:

5. Վոլգա-Վյատկայի տնտեսական շրջանը ընդգրկում է Մարի Էլ, Մորդվական, Զուվաշական հանրապետությունները, Կիրովի և Նիժնի Նովգորոդի մարզերը: Ունի հարմար աշխարհագրական դիրք, շրջապատված է տնտեսապես զարգացած շրջաններով: Վոլգա գետով կապվում է մյուս շրջանների հետ:

Վոլգա-Վյատկայի վրայով են անցնում Կենտրոնական, Հյուսիս-արևմտյան, Ուրալի, Պովոլժիեի շրջանները միմյանց հետ կապող բանուկ ճանապարհները:

Աշխատանքի աշխարհագրական բաժանմանը մասնակցում է մետաղածուլությամբ, մետաղամշակմամբ, անտառամշակմամբ, կաթնամթերքի և մսամթերքի արտադրությամբ:

Բնական պայմանները և ռեսուրսները: Մակերևույթը հարթավայրային է՝ ծածկված հզոր նստվածքային շերտերով: Այդ նստվածքների հետ էլ կապված են ֆոսֆորիտների և շինանյութերի ռեսուրսները:

Կլիման բարեխառն է՝ տաք ամառներով, տեղումների քանակը բավարարում է անտառային լանդշաֆտի առաջացմանը, տեղ-տեղ հանդիպում են ճահիճներ:

Բնակչությունը բազմազգ է, մեծ մասը ռուսներ են, ապրում են նաև մորդվաներ, չուվաշներ, թաթարներ, ուզմուրտներ, մարիներ: Սարիները և մորդվաներն ուգրո-ֆիննական լեզվախմբի ժողովուրդներ են, թաթարները և չուվաշները՝ թուրքական:

Բնակչության խտությունը 32 մարդ/քկմ է: Ամենխտաբնակը Չուվաշիան է:

Ուրբանիզացման մակարդակը 70% է, խոշոր քաղաքներն են Նիժնի Նովգորոդը, Չեբոկսարին, Կիրովը:

Տնտեսությունը: Նպաստավոր աշխարհագրական դիրքը, բարձրորակ աշխատուժի առկայությունը, Ուրալի մետաղածուլական շրջանի մոտիկությունը, գիտահետազոտական հզոր բազայի առկայությունը պայմաններ են ստեղծել արդյունաբերության, հատկապես մեքենաշինության և քիմիական արտադրության զարգացման համար: Մշակման են ենթարկվում նաև անտառային հարուստ ռեսուրսները:

Ձարգացած է տրանսպորտային մեքենաշինությունը: Ավտոմոբիլային խոշոր կենտրոններն են Նիժնի Նովգորոդը (բեռնատար և մարդատար մեքենաներ), Պավլովոն (ավտոբուսներ), Սարանսկը (բեռնատարեր): Նիժնի Նովգորոդում արտադրում են նաև գետային նավեր: Կիրովում և Չեբոկսարիում արտադրում են տրակտորներ, ամենազնացներ:

Քիմիական արդյունաբերության ձեռնարկությունները զբաղվում են նավթավերամշակմամբ, պլաստմասսաների, հանքային պարտանյութերի արտադրությամբ:

Անտառային արդյունաբերության ձեռնարկություններն արտադրում են լրագրային թուղթ (երկրում առաջին տեղը), և այլ ապրանքներ: Խոշոր կենտրոններն են Բալախնան, Վոլժսկը:

Գյուղատնտեսության գլխավոր ճյուղը անասնապահությունն է՝ տավարաբուծությունը, խոզաբուծությունը, ոչխարաբուծությունը: Դրա համար կերային բազա են հանդիսանում բնական արոտավայրերը:

Մշակում են կարտոֆիլ, բանջարեղեն, կերաբույսեր:

Տրանսպորտի համար կարևոր դեր է կատարում Վոլգա գետը: Շրջանը ունի նաև ցամաքային ճանապարհների խիտ ցանց:

6. Պովոլժեի տնտեսական շրջան: Տարածքը՝ 536 հզ քկմ: Նրա կազմի մեջ են մտնում Աստրախանի, Պենզայի, Սամարայի, Սարատովի, Ուլյանովսկի, Վոլգոգրադի մարզերը, Թաթարական և Կալմիկական հանրապետությունները:

Աշխատանքի աշխարհագրական բաժանմանը մասնակցում է տրանսպորտային միջոցների, գյուղատնտեսական մեքենաների, տրակտորների, հանքային պարարտանյութերի, ռետինատեխնիկական ապրանքների, պլաստմասսաների, գյուղատնտեսական ապրանքների արտադրությամբ:

Ձարգացմանը նպաստել են հարուստ բնառեսուրսային կարողությունները, հարմար աշխարհագրական դիրքը: Նա սահմանակից է Վոլգա-Վյատկային, Կենտրոնական սևահողային, Ուրալի, Հյուսիսային Կովկասի տնտեսական շրջաններին: Պովոլժիեով են անցնում համապետական նշանակություն ունեցող բազմաթիվ երկաթուղային և ավտոմոբիլային ճանապարհներ, Վոլգա գետը, որը կապ է պահպանում հինգը ծովերի՝ Սև, Ազովի, Բալթիկ, Սպիտակ, Կասպից նավահանգիստների հետ: Դեպի Պովոլժիե են գալիս, այնուհետև այստեղից այլ շրջաններ ու երկրներ են գնում մի շարք նավթամուղներ, գազամուղներ, այդ թվում՝ «Բարեկամություն» նավթամուղը:

Բնական պայմանները և ռեսուրսները: Մակերևույթը հարթավայրային է, միայն առանձին տեղերում՝ բլրապատ: Կան ոչ մեծ բարձրության լեռներ:

Կլիման բարեխառն է, ամառները շոգ են, ձմեռները՝ ցուրտ: Մթնոլորտային տեղումները հյուսիսից հարավ նվազում են, որոնց հետևանքով էլ հյուսիսում տարածվում են անտառները, դեպի հարավ դրանց փոխարինում են տափաստանները, այնուհետև անապատները: Հյուսիսում անտառային գորշահողեր են, միջին մասում՝ սևահողեր, հարավում՝ ավազահողեր, աղուտահողեր:

Մթնոլորտային տեղումները նվազում են նաև արևմուտքից արևելք: Չմռանը աջափնյա շրջանը ձնառատ է, ձախափնյա շրջանում ձյան շերտը բարակ է, իսկ հարավային մասում կայուն ձնածածկը շատ կարճ է տևում, ավելի հաճախ՝ չի հաստատվում:

Պովոլժիեի ընդերքը հարուստ է նավթի և բնական գազի, ֆոսֆորիտների, կերակրի աղի, շինանյութերի մեծ պաշարներով:

Բնակչությունը բազմազգ է, մեծ մասը ռուսներ են: Երկրորդ եթնիկական խումբը թաթարներ են, որոնք հիմնականում ապրում են Թաթարստանում: Հարավում ապրում են կալմիկները, որոնք Եվրո-

պայի բուդդայական կրոնի (լամայականության ուղղության) միակ ժողովուրդն են: Ապրում են նաև գերմանացիներ և այլ ազգեր:

Տնտեսությունը: Պովովժին աշխատանքի աշխարհագրական բաժանմանը մասնակցում է նավթի հանույթով և վերամշակումով, մեքենաշինությամբ, էլեկտրաէներգիայի և գյուղատնտեսական մթերքների արտադրությամբ: Տեղական և Սիբիրից բերվող նավթի բազայի վրա Սիզրանում, Սամարայում, Նովոկույբիշևում զարգացած է նավթավերամշակումը:

Տնտեսության համար կարևոր է էլեկտրաէներգետիկան, որն ունի համապետական նշանակություն: Առաջնայինը Վոլգա-Կամայի համակարգն է՝ Սամարայի, Սարատովի, Վոլգոգրադի և այլ ջրաէլեկտրակայաններով: Խոշոր ջերմաէլեկտրակայաններ կան Ջաինսկում (Թաթարստան), Տոլյատիում, Նովոկույբիշևում և այլն: Ատոմային էլեկտրակայաններ են գործում Դիմիտրովգրադում, Բալակովոյում և Բաշկորկոստանում:

Քիմիական արդյունաբերության զարգացման նախադրյալ են տեղական և բերովի հումքը, արտադրանքի մեծ պահանջարկը, հարմար տրանսպորտային դիրքը, տեխնոլոգիական ջրի առկայությունը:

Քիմիական արդյունաբերությունն արտադրում է հանքային պարարտանյութեր՝ Տոլյատիում, Պերմում, Բերեզնիկիում, Սուլիկամսկում, պլաստմասսաներ՝ Սամարայում, Կազանում: Օրգանական քիմիան զարգացած է Սարատովում, Նովոկույբիշևում, Սամարայում և այլն:

Տարածաշրջանը հզոր է իր մեքենաշինությամբ: Այս ճյուղի ձեռնարկությունների գերակշիռ մասը գտնվում է Վոլգայի համակարգի գետերի ափերին: Սա երկրի ավտոմոբիլային գլխավոր շրջանն է իր տասը գործարաններով, որոնք գտնվում են Նաբերեժնիե Չելնիում, Տոլյատիում, Ուլյանովսկում, Իժմսկում, Նիժնի Նովոգորոդում, Պավլովոյում և այլն:

Շրջանը երկրում առաջինն է ինքնթիռաշինության բնագավառում (Սարատովում, Սամարայում, Կազանում): Մեքենաշինության կարևոր ճյուղերից է նավաշինությունը (Նիժնի Նովոգորոդում, Տոլյատիում, Սարատովում): Էլեկտրատեխնիկական արդյունաբերությունը զարգացած է Պենզայում, Ուլյանովսկում, Սամարայում:

Գյուղատնտեսության գլխավոր ճյուղը բուսաբուծությունն է: Մշակում են տարեկան, աշնանացան ցորեն, մանանեխ, շաքարի ճակնդեղ, արևածաղիկ: Զարգացած է նաև մսակաթնատու անասնապահությունը:

Տրանսպորտը: Երկաթուղիները և ավտոճանապարհները Վուգա գետը հատում են զուգահեռականի ուղղությամբ: Կան նաև միջօրեականներով ձգվող ճանապարհներ: Բեռնափոխադրումները կատարվում են Վուգա գետով: Արևմտյան Սիբիրից դեպի արևմուտք գնացող նավթամուղների և գազամուղների գերակշիռ մասն անցնում է Մերձվոլգյան տնտեսական շրջանով:

7. Հյուսիսային Կովկասի տնտեսական շրջան: Սրա կազմի մեջ են մտնում Ադիգեյի, Դաղստանի, Ինգուշեթիայի, Հյուսիսային Օսեթիայի, Կաբարդինա-Բալկարական, Կարաչայ-Չերկեսական, Չեչենական հանրապետությունները, Կրասնոդարի և Ստավրոպոլի երկրամասերը, Ռոստովի մարզը:

Շրջանը գրավում է 355,1 հազ. քվմ տարածք, ուր ապրում է 17,7 մլն մարդ: Այստեղ բնակվում են 42 տարբեր ազգություններ: Հյուսիսային Կովկասը կարելի է համարել ազգերի թանգարան: Հյուսիսային Կովկասի յուրաքանչյուր հանրապետությունում կան տասնյակ ազգերի ներկայացուցիչներ, միայն Դաղստանում՝ 25-ից ավելի: Այստեղ մեծ թիվ են կազմում նաև հայերը, որոնք հիմնադրել են Նոր Նախիջևանը, ներկայիս Դոնի Ռոստովը: Մեր հնամենի մայրաքաղաքն է հիշեցնում հայաշատ Արմավիրը: Այսօր հզորացել է Սոչիի հայկական գաղութը:

Ընդերքը հարուստ է վառելիքի, մետաղի, շինանյութերի, հանքային ջրերի ռեսուրսներով: Քարածխի պաշարներ կան Ռոստովի մարզում, նավթ՝ Կրասնոդարի երկրամասում, Չեչնիայում, Ինգուշեթիայում և Դաղստանում, բնական գազ՝ Ստավրապոլի երկրամասում և Դաղստանում, վոլֆրամ և մոլիբդեն՝ Տիրնիաուզում, պղինձ՝ Ուռուպում և այլն:

Մեծ Կովկասի լեռները հարուստ են ջրաէներգետիկ ռեսուրսներով, հանքային ջրերով՝ Միներալնիե վոդի, Ժելեզնովոդսկ, Կիսլովոդսկ: Մեղմ կլիման, հավերժական ձնապատ լեռները, հրաշալի լողափերը, բնակիչների յուրահատուկ սովորույթները բարենպաստ պայմաններ են ստեղծում հանգստացողների համար: Սա Ռուսաստանի առողջարանային գլխավոր կենտրոնն է, ունի զարգացած զբոսաշրջություն, հատկապես՝ լեռնագնացության ենթակառուցվածքներ:

Բերրի սևահողերը, բարենպաստ ագրոկլիմայական պայմանները հիմք են հանդիսանում գյուղատնտեսության զարգացման համար: Գյուղատնտեսությունը տալիս է շրջանի համախառն ներքին արդյունքի 1/2-ը:

Գյուղատնտեսության գլխավոր ճյուղը բուսաբուծությունն է: Մշակում են աշնանացան ցորեն, եգիպտացորեն, բրինձ, արևածաղիկ, շաքարի ճակնդեղ, թեյ, բանջարեղեն: Նաև ցիտրուսներ, թուզ, նուռ, խաղող:

Բուսաբուծությունը և բնական արոտավայրերը, իրենց հերթին, բազա են հանդիսանում անասնապահության համար: Զբաղվում են խոշոր եղջերավոր անասնապահությամբ, ոչխարապահությամբ, խոզաբուծությամբ, թռչնապահությամբ:

Արդյունաբերության գլխավոր խնդիրը գյուղատնտեսական հումքի վերամշակումն է և գյուղատնտեսությանը մեքենաներով, սարքավորումներով, հանքային պարարտանյութերով ապահովումը: Արտադրում են հացահատիկահավաք կոմբայներ (Դոնի Ռոստովում և Տագանռոգում): Արտադրում են շաքար, բուսայուղ, կենդանական յուղ, կաթնամթերք, մսի, մրգի և բանջարեղենի պահածոներ, գինիներ:

Լեռնահանքային ձեռնարկություններն արդյունահանում են քարածուխ, նավթ, բնական գազ, գունավոր մետաղների հանքաքար: Դրանց բազայի վրա զարգացած են վերամշակող ճյուղերը՝ նավթավերամշակումը, մետաղածուլությունը, մեքենաշինությունը, սարքաշինությունը:

Շրջանը ՌԴ սննդի արդյունաբերության գլխավոր կենտրոններից է: Գյուղատնտեսության հումքի բազայի վրա զարգացած է ալրաղաց արտադրությունը. արտադրում են մեծ քանակությամբ բուսայուղ, կենդանական յուղ, կաթնամթերք, մսամթերք, շաքար, գինիներ:

Տրանսպորտը: Երկաթուղային և ավտոմոբիլային տրանսպորտը կարևոր դեր է կատարում ներքին բեռնափոխադրումների համար՝ պահպանելով կապը Զարավային Կովկասի և Ռուսաստանի միջև: Շրջանից դեպի Ղրիմ գործում է լաստանավ: Զարգացած է ծովային տրանսպորտը: Այստեղով են անցնում Ռուսաստանը միջերկրածովային երկրների հետ կապող ծովային ուղիները:

8. Ուրալյան տնտեսական շրջանի մեջ են մտնում Բաշկորկստանի և Ուդմուրտիայի հանրապետությունները, Կուրգանի, Զելյաբինսկի, Պերմի, Օրենբուրգի, Սվերդլովսկի մարզերը:

Ուրալի տնտեսական շրջանի զարգացմանը նպաստել են բնառեսուրսային մեծ կարողությունները, հարմար աշխարհագրական դիրքը:

Ուրալը հարուստ է մետաղային ռեսուրսներով, էներգակիրներով, քիմիական հումքով: Ամենատարածվածը երկաթի հանքավայրերն են:

Հարյուրավոր հանքավայրերից շահագործվում են երեք տասնյակը: Ընդ որում հարուստ հանքաբեր շերտեր ունեցող հանքավայրերն արդեն սպառվել են, այդ պատճառով էլ շահագործվում են ավելի աղքատ հանքավայրերը, որոնցից ամենախոշորը Գայինն է:

Հյուսիսային Ուրալում կան բոքսիտների մեծ պաշարներ (այստեղի հանքավայրերի մի մասը նույնպես սպառվել է): Ուրալը հարուստ է պղնձի, նիկելի, ցինկի ռեսուրսներով:

Կամա գետի վերին հոսանքի շրջանում կան կալիումական աղերի (Օրենբուրգի մարզում), կերակրի աղի մեծ պաշարներ: Բաշկորկստանում, Պերմի և Օրենբուրգի մարզերում՝ նավթի պաշարներ, իսկ Օրենբուրգում՝ նաև բնական գազ:

Հյուսիսային Ուրալը՝ Սվերդլովսկի և Պերմի մարզերը, հարուստ է անտառներով: Հարավային Ուրալում կան բերրի հողեր:

Շուրջ երեք հարյուր տարի է, որ Ուրալի բնական ռեսուրսները շահագործվում են, որի պատճառով հանքավայրերի մի մասը սպառվել կամ աղքատացել է: Զգալիորեն տուժել են անտառները, որովհետև երկար տարիներ դրանք օգտագործվել են փայտածուխ ստանալու համար:

Արդյունաբերության ավանդական ճյուղը սև մետաղածուլությունն է, որի գլխավոր հումքը Կուզբասից և Կարագանդայից բերվող քարածուխն է, ԿՄԱ-ից և Կուստանայից՝ երկաթաքարը: Սև մետաղածուլության խոշոր կենտրոններն են Նիժնի Տագիլը, Մագնիտագորսկը, Չելյաբինսկը: Պղնձածուլությունը զարգացած է Կրասնոուրալսկում և Մեդնեգորսկում:

Ուրալը քիմական արդյունաբերության շրջան է: Բերեզնիկիում և Սուլիկամսկում արտադրում են կալիումական պարարտանյութեր: Տեղական հումքի հիման վրա զարգացած է նավթաքիմիան՝ Ուֆայում, Տոյմազիում, Ստեռլիտամսկում, գազաքիմիան՝ Օրենբուրգում:

Ուրալն ունի հզոր մեքենաշինություն: Արտադրում են լեռնահանքային, լեռնամետալուրգիական, լեռնաքիմիական ձեռնարկություններին անհրաժեշտ մեքենաներ, հաստոցներ, ինչպես նաև վագոններ, ավտոմեքենաներ, էլեկտրատեխնիկական ապրանքներ: Մեքենաշինական խոշոր կենտրոններն են Եկատերինբուրգը, Չելյաբինսկը, Նիժնի Տագիլը, Իժմսկը:

Անտառային արդյունաբերության ձեռնարկություններն արտադրում են ցելյուլոզ, թուղթ:

Գյուղատնտեսության գլխավոր ճյուղը բուսաբուծությունն է: Մշակում են ցորեն, վարսակ, տարեկան, վուշ, շաքարի ճակնդեղ, արևածաղիկ, կարտոֆիլ: Զարգացած է խոշոր եղջերավոր անասնաբուծությունը, ոչխարաբուծությունը, բրդատու այծաբուծությունը:

Տրանսպորտը: Ուրալով են անցնում ՌԴ Եվրոպական մասն Ասիականին կապող կարևորագույն երկաթուղիները: Շրջանի ավտոճանապարհները բարեկարգ են:

9. Արևմտյան Սիբիրի տնտեսական շրջանի մեջ են մտնում Ալթայի երկրամասը, Ալթայի հանրապետությունը, Կեմերովոյի, Նովոսիբիրսկի, Օմսկի, Տոմսկի, Տյումենի մարզերը,

Շրջանն աշխատանքի աշխարհագրական բաժանմանը մասնակցում է նավթի, բնական գազի, քարածխի հանույթով և վերամշակումով, սև ու գունավոր մետաղների արտադրությամբ, ծանր մեքենաշինությամբ, քիմիական, անտառային արդյունաբերությամբ, զարգացած գիտակրթական համակարգով: Այստեղից են սկսվում դեպի Եվրոպա գնացող նավթամուղների մեծ մասը: Շրջանի հարավով են անցնում երկրի արևմուտքն արևելքին կապող երկաթուղային և ավտոմոբիլային ճանապարհները, հյուսիսով՝ Ղյուսիսային ծովային մեծ ուղին:

Արևմտյան Սիբիրը երկրի ամենաարագ զարգացող տարածաշրջանն է: Եվ ապագայում էլ մեծ կլինի նրա դերը երկրի արտահանման, արտարժույթի ներկրման (ստացման) գործում:

Բնական պայմանները և ռեսուրսները: Շրջանի տարածքի մեծ մասը զբաղեցնում է Արևմտասիբիրական ընդարձակ ճահճապատ և անտառապատ հարթավայրը: Սիայն ծայր հարավում կան ոչ մեծ բարձրության լեռներ:

Ղյուսիսից հարավ հսկայական ձգվածության պատճառով կլիմայական պայմանները տարբեր են: Ղյուսիսային մասում ամբողջ տարին ջերմաստիճանները ցածր են, կղզիներում նույնիսկ ամռանը ցուրտ է: Հարավում կլիման բարեխառն է՝ ամառները տաք, ձմեռները՝ ցուրտ: Հաճախ խիստ սառնամանիքներ են լինում նաև ծայր հարավում, ուր թափանցում են արկտիկական սառը օդային զանգվածները: Մթնոլորտային տեղումները հարավից հյուսիս նվազում են:

Տարածաշրջանի հյուսիսում խոնավության ավելցուկի և հողաշերտերի բազմամյա սառածության պատճառով մեծ տարածություն են գրավում ճահիճները:

Արևմյան Սիբիրում մեծ տարածություն են գրավում անտառները, ծայր հարավում տարածվում են տափաստանները:

Ընդերքը հարուստ է քարածխի, նավթի, բնական գազի, մետաղային ռեսուրսներով: Քարածխի խոշորագույն ավազանը Կուզնեցկում է: Նավթի խոշորագույն հանքավայրերն են Ուստ Բալիկը, Սամոտլորը, Նիժնեվարտովսկը, Սուրգուտը, բնական գազինը՝ Ուրենգոյը, Մեդվեժեն, Յամբուրգը: Երկաթաքարի մեծ պաշարներ կան Լեռնային Ալթայում, կապար և ցինկ՝ Բելովոյում:

Բնակչությունը 15,0 մլն է, միջին խտությունը՝ 1 մարդ/քկմ: Առավել խտաբնակ են հարավային մասերը՝ Կեմերովոյի մարզը և Անդրսիբիրյան երկաթգծի շրջակայքը: Նոսր են բնակեցված ծայր հյուսիսային շրջանները:

Արևմտյան Սիբիրը բազմազգ շրջան է: Խոշոր քաղաքների, արդյունաբերական կենտրոնների բնակչության մեծամասնությունը ռուսներ են, ծայր հյուսիսում ապրում են խանտիներ, մանսիներ, հարավում՝ ալթայցիներ, չորիացիներ, դազախներ:

Ուրբանիզացման մակարդակը բարձր է՝ 70%: Քաղաքային բնակավայրերի ստեղծումը կապված է լեռնահանքային, նավթավերամշակման, մետաղաձուլության, մեքենաշինության զարգացման հետ:

Տնտեսությունը. Գլխավոր ճյուղը նավթի և բնական գազի արդյունահանումն է: Նավթի մի մասը վերամշակվում է Օմսկում, Տոմսկում, Սուրգուտում, Տոբոլսկում: Քարածուխ է արդյունահանվում Կուզբասում: Դրա մեծ մասը տարվում է այլ շրջաններ:

Սեփական քարածխի և երկաթաքարի բազայի վրա Նովոկուզնեցկում, Կեմերովոյում զարգացած է սև մետաղաձուլությունը: Բելովոյում արտադրում են ցինկ, Նովոկուզնեցկում՝ ալյումին:

Մեքենաշինական ձեռնարկություններն արտադրում են լեռնահանքային, մետաղաձուլական արդյունաբերությանն անհրաժեշտ մեքենաներ (Նովոսիբիրսկում և Նովոկուզնեցկում), տրակտորներ (Ռուբցովսկում), ավտոմեքենաներ (Ամժերո – Սուժենսկում): Նովոսիբիրսկում գիտությունների ակադեմիայի և համալսարանի բազայի վրա ստեղծվում է բարձր տեխնոլոգիաների մշակման և արտադրության կենտրոններ՝ «սիլիկոնային տայգա»:

Գյուղատնտեսության գլխավոր մասնագիտացումը հյուսիսում եղջերվապահությունն է, հարավում՝ հացահատիկի մշակումը, խոշոր եղջերավոր անասնապահությունը, ոչխարաբուծությունը, պանտային եղջերվապահությունը:

Տրանսպորտը: Շրջանի տարածքով են անցնում Անդրսիբիրյան, Հարավսիբիրյան երկաթուղային մայրուղիները, հյուսիսում՝ Հյուսիսսիբիրական երկաթուղին: Մշտնջենական սառածության և ճահճային շրջաններում երկաթուղային և ավտոմոբիլային ճանապարհների կառուցումը կապված է մեծ ծախսերի հետ:

Շրջանն ունի նավթամուղների և գազամուղների լայն ցանց: Գլխավոր նավթամուղներից են Ուստ Բալիկ – Ուֆա - Ալմեյտևսկ, Ալեքսանդրովսկ – Տոմսկ - Անգարսկ: Գազամուղների մեծ մասը ձգվում են դեպի արևմուտք: Միայն Ուրենգոյից սկսվում է 6 գազամուղ: Կառուցվում է Յամալ - Եվրոպա գազամուղը:

10. Արևելյան Սիբիրի տնտեսական շրջան: Սրա կազմի մեջ մտնում են Բուրյաթիայի, Խակասիայի և Տուվայի հանրապետությունները, Կրասնոյոթսկի երկրամասը, Իրկուսկի, Հիտայի մարզերը:

Շրջանը գրավում է 5,9 մլն քվմ տարածք, ուր ապրում է 9 մլն - մարդ:

Շրջանը ձգվում է Հյուսիսային Սառուցյալ օվկիանոսից մինչև երկրի հարավային պետական սահմանը: Մի կողմից՝ բնակլիմայական պայմանները մեծ դժվարություն են առաջացնում տարածքի յուրացման համար, մյուս կողմից՝ շրջանն ունի բնառեսուրսային հսկայական ներուժ տնտեսական զարգացման համար:

Շրջանի գրեթե ամբողջ տարածքն ընկած է մշտնջենական սառածության գոտում, որը մեծ դժվարություններ է առաջացնում շինարարության, ընդերքի հարստությունների յուրացման գործում: Տարածքի մոտ 1/3-ը ընկած է բևեռային շրջագծից հյուսիս՝ տունդրայի և անտառատունդրայի զոնայում, որից հարավ մինչև պետական սահման ձգվում է տայգայի զոնան: Եվ՝ տունդրայի, և՛ անտառատունդրայի զոնան ճահճապատ է, դժվարանցանելի:

Ընդերքը հարուստ է օգտակար հանածոներով: Քարածխի մեծ պաշարներ կան Տունգուսկանների ավազանում, գորշ ածուխ՝ Կանսկ - Աչինսկի և Լենայի ավազաններում, նավթ՝ Պոդկամեննայա Տունգուսկա գետի հովտում, երկաթաքար՝ Անգարայի հովտում: Շրջանում կան նաև պղնձի, նիկելի, կապարի, ցինկի, ոսկու մեծ պաշարներ:

Հսկայական ջրաէներգետիկ ռեսուրսներ ունեն շրջանի գետերը: Դրանք ունեն նաև տրանսպորտային նշանակություն: Բայկալ լիճն ունի քաղցրահամ ջրի մեծ պաշարներ. համաշխարհային պաշարների 1/5-ը: Շրջանը հայտնի է անտառային ռեսուրսներով:

Բնակչությունը. Տարածաշրջանը շատ նոսր է բնակեցված, հատկապես՝ տունդրայի և տայգայի զոնաները: Բնակչության մեծա-

մասնությունն ապրում է հարավային շրջաններում, Անդրսիբիրյան և Բայկալ-Ամուրյան երկաթգծերի շրջակայքում, Բայկալ լճի և խոշոր գետերի ափերին: Ուրբանիզացման մակարդակը 70% է: Քաղաքների մեծ մասը ձևավորվել է բանուկ մայրուղիների, լեռնահանքային շրջանների և խոշոր ջրաէլեկտրակայանների հարևանությամբ:

Տնտեսությունը: Գլխավոր ճյուղն էլեկտրաէներգետիկան է, որը հիմք է հանդիսանում մյուս ճյուղերի զարգացման համար: Ենիսեյ գետի և նրա Անգարա վտակի վրա կառուցվել են Սայանո Շուշինսկոյեի, Կրասնոյարսկի, Բրատսկի, Ուստ Իլիմյան, Իրկուտսկի ջրաէլեկտրակայանները: Խոշոր ջերմաէլեկտրակայաններ կան Նազարովոյում, Զիտայում, Նորիլսկում: Էժան էլեկտրաէներգիայի հիման վրա ալյումինաձուլության խոշոր ձեռնարկություններ են գործում Շելեխովոյում, Բրատսկում, Կրասնոյարսկում, պղնձի և նիկելի ձեռնարկություն՝ Նորիլսկում: Զարգացած է նաև թղթի, ցելյուլոզի արտադրությունը, մի շարք խոշոր ձեռնարկություններ կան Բայկալի ափին: Ընդ որում այդ ձեռնարկություններն աղտոտում են լճի ափերը՝ վատթարացնելով նրա էկոլոգիական վիճակը: Թղթի, ցելյուլոզի արտադրության խոշոր կենտրոններ են Կրասնոյարսկը, Բրատսկը, Ուստ Իլիմսկը:

Նավթավերամշակման խոշոր ձեռնարկություններ են գործում Անգարսկում, Աչինսկում: Կրասնոյարսկում արտադրում են էքսկավատորներ, Զիտայում՝ ավտոմոբիլներ:

Պյուղատնտեսությունը զարգացած է հարավային շրջաններում, որտեղ մշակում են ցորեն, գարի, կարտոֆիլ, կերաբույսեր: Դարավում զբաղվում են նաև խոշոր եղջերավոր անասնապահությամբ, ոչխարաբուծությամբ, հյուսիսում՝ եղջերվապահությամբ, տայգայում՝ որսորդությամբ, Բայկալում, գետերում, առափնյա ջրերում՝ ձկնորսությամբ:

Տրանսպորտային ցանցը թույլ է զարգացած: Շրջանի հարավով անցնում է Անդրսիբիրյան մայրուղին, նրանից հյուսիս՝ ԲԱՄ-ը, որ սկսվում է Ուստ Կուտից և հասնում է մինչև Դեռավոր Արևելք: Ավտոտրանսպորտը թույլ է զարգացած. միայն հարավի խոշոր քաղաքներն են միմյանց հետ կապված ավտոճանապարհներով: Աշխույժ երթևեկություն և լաստառաքում է կատարվում գետերով: Դյուսիսով անցնում է Դյուսիսային ծովային ուղին, որն օգտագործվում է անտառանյութ, պատրաստի ապրանքներ, մորթիներ փոխադրելու համար: Այստեղ են գտնվում Իգարկա և Դուդինկա նավահանգիստները:

11. Հեռավոր Արևելքի տնտեսական շրջան: Տարածքը 7,3 մլն քլմ է: Նրա կազմի մեջ են մտնում Պրիմորիեի և Խաբարովսկի երկրամասերը, Յակուտիայի (Սախայի) հանրապետությունը, Ամուրի, Կամչատկայի, Մագադանի, Սախալինի մարզերը, Հրեական Ինքնավար մարզը, Չուկոտական և Կորյակական օկրուգները:

Հեռավոր Արևելքի տնտեսական շրջանն աշխատանքի աշխարհագրական բաժանմանը մասնակցում է գունավոր և թանկարժեք մետաղների, թանկարժեք քարերի արդյունահանմամբ, անտառանյութի, արժեքավոր մորթիների մթերմամբ, ձկան որսով:

Շրջանը մի կողմից՝ հեռու է Ռուսաստանի կենտրոնից, թույլ է տրանսպորտային կապը, մյուս կողմից՝ մոտ է զարգացած տնտեսություն ունեցող ճապոնիային, ԱՄՆ-ին, Հինաստանին:

Բնական պայմանները և ռեսուրսները: Մակերևույթի մեծ մասը լեռնային է, միայն ծայր հյուսիսում կան ընդարձակ հարթավայրեր: Արևելյան շրջաններում՝ Կամչատկայում և Կուրիլյան կղզիներում, հաճախակի են կործանարար երկրաշարժերը, շարունակվում են հրաբխային ժայթքումները: Սեյսմիկ ակտիվ գոտում է գտնվում նաև Սախալին կղզին:

Կլիման ներքին շրջաններում ցամաքային է, ամառները տաք են, ձմեռները՝ սառնամանիքային: Այստեղ է աշխարհի բնակելի մասի ամենացուրտ վայրը՝ Վերխոյանսկը: Դեպի հյուսիս կլիման ավելի ցամաքային է դառնում. արևելյան ծովափնյա շրջաններում ամառները մառախլապատ են, ձմռանը առատ ձյուն է գալիս, նույնիսկ ամառային ամիսներին այստեղ եղանակները նպաստավոր չեն գյուղատնտեսության զարգացման համար:

Գետային ցանցը խիտ է, գետերը ջրառատ են, նավարկելի, վերին հոսանքների շրջանում ունեն ջրաէներգետիկ մեծ կարողություններ:

Ընդերքը հարուստ է քարածխի (Լենայի, Հարավային Յակուտիայի ավազաններում), նավթի (Սախալինում), ոսկու (Մագադանում) պաշարներով: Սախայում արդյունահանում են ալմաստ, գունավոր մետաղներ:

Բնակչությունը 7,3 մլն է: Հիմնական մասն ապրում է Պրիմորիեի և Խաբարովսկի երկրամասերում, Ամուրի և Սախալինի մարզերում: Նոսր են բնակեցված Կամչատկան, Չուկոտկան:

Բազմազգ տարածաշրջան է. հիմնական բնակիչները ռուսներ են, որոնք ապրում են քաղաքային բնակավայրերում: Բնիկ ժողովուրդներն են՝ յակուտները, էվենկները, էվենները, յուկագիրները,

նանայները, չուկչիները, կոռյակները, էսկիմոսները, ալեուտները, որոնք զբաղվում են որսորդությամբ, ձկնորսությամբ, եղջերվապահությամբ:

Տնտեսության գլխավոր ճյուղը լեռնահանքային արդյունաբերությունն է: Այստեղ արդյունահանում և վերամշակում են բազմամետաղների, ոսկու, անագի, սնդիկի հանքաքար: Ոսկի են արդյունահանում Ձեյա, Բուրեյա գետերի հովիտերում, Սիխոտե Ալինի լեռներում, ավաստ՝ Սախայում (Միրնի): Քարածուխ արդյունահանվում է Հարավ-Յակուտական ավազանում, նավթ և բնական գազ՝ Սախալինում:

Տեղական քարածխի ու բնական գազի հիման վրա Յակուտիայում աշխատում են ՋԷԿ-եր, Բիլիբինսկում՝ ատոմային էլեկտրակայան, Կամչատկայում՝ երկրաջերմային կայան, Ձեյա գետի վրա՝ ջրաէլեկտրակայան:

Տեղական քարածխի և երկաթաքարի բազայի վրա Կոմսոմոլսկում զարգացած է սև մետաղաձուլությունը: Ամուրի ավազանում՝ Խաբարովսկի և Պրիմորիեի երկրամասերում, ինչպես նաև Սախալինում կատարվում է անտառանյութի մթերում, որի մի մասը վերածվում է սղոցանյութի (Բլազովեշենսկում, Լեսոգավոդսկում, Խաբարովսկում): Դրա մյուս մասը արտահանվում է: Սախալինում կան թղթի և ցելյուլոզի արտադրության ձեռնարկություններ:

Մեքենաշինական ձեռնարկություններն արտադրում են նավեր՝ Կամչատկայի Պետրոպավլովսկում և Ամուրի Կոմսոմոլսկում, էներգետիկ մեքենաներ՝ Խաբարովսկում:

Շրջանի համար առանձնակի նշանակություն ունի սննդի արդյունաբերությունը, որը երկրում առաջին տեղում է բարձրարժեք ձկների, խեցգետինների, ծովային գազանների որսով: Ծովից արդյունահանվում են նաև ջրիմուռներ:

Գյուղատնտեսությունը: Շրջանի հարավում մշակում են բրինձ, սոյա, կարտոֆիլ, բանջարեղեն: Ծայր հարավում զարգացած է խոշոր եղջերավոր անասնապահությունը, հյուսիսում՝ եղջերվաբուծությունը:

Տրանսպորտը: Այստեղ են ավարտվում Անդրսիբիրյան և ԲԱՄ-ի երկաթուղային մայրուղիները: Լաստանավով երկաթուղային կապ է գործում նաև Սախալինի հետ: Ավտոմոբիլային մայրուղիները լեռնահանքային շրջանները կապում են ծովային նավահանգիստների հետ: Չնռանը սկսում են աշխատել «սառցե» ավտոճանապարհները: Ցամաքային ճանապարհների մեծ մասը գտնվում են հարավային մասերում, հյուսիսում դրանք քիչ են: Հսկայական տարածություններ

ճանապարհագրուրկ են: Նավարկության համար օգտագործվում են գետերը:

Կարևոր նշանակություն ունի ծովային տրանսպորտը: Խոշոր նավահանգիստներն են Վլադիվոստոկը, Նախոտկան, Կամչատկայի Պետրոպավլովսկը:

Կալինինգրադի մարզ: Տարածքը 15,1 հզ քմ է, բնակչությունը՝ 951,3 հզ մարդ:

Գտնվում է Ռուսաստանի ծայր արևմուտքում: Դաշնային միակ սուբյեկտն է, որը մայր երկրի հետ անմիջական սահման չունի:

Մարզում կան նավթի, բնական գազի, գորշ ածխի, քարաղի զգալի պաշարներ:



Նկ. 40. Կալինինգրադի ընդհանուր տեսքը

Ունի զարգացած տնտեսություն, որի գլխավոր ճյուղը *արդյունաբերությունն է*: Արդյունահանում է նավթ՝ տարեկան մոտ 1 մլն տ: Արտադրում են վերամբարձ կռունկներ, ավտոմեքանիզմներ, ճանապարհաշինական մեքենաներ, էլեկտրաշարժիչներ:

Զարգացած է թղթի, ցեյուլոզի, փայտամշակման արդյունաբերությունը (Կարելիայից և Արխանգելսկից բերված անտառանյութերով):

Արտահանում և վերամշակում են սաթ: Այստեղ է գտնվում աշխարհի ամենախոշոր սաթի հանքավայրը:

Տնտեսության գլխավոր ճյուղը մնում է ձկնորսությունը և ձկան վերամշակումը:

Գյուղատնտեսությունը: Բնական արոտավայրերի հիմքի վրա զարգացած է կաթնատու անասնապահությունը: Մշակում են աշնանացան ցորեն, տարեկան, գարի, կերակրախոտեր, կարտոֆիլ:

Արդյունաբերական խոշոր կենտրոնը Կալինինգրադն է: Չսառչող նավահանգիստ է: Ունի զարգացած մեքենաշինություն, սննդի, թղթի, ցելյուլոզի արդյունաբերություն, նավավերանորոգման գործարաններ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչպիսի՞ն են ՌԴ վարչատարածքային բաժանումը, որո՞նք են դաշնության սուբյեկտները:
2. Ինչպիսի՞ն են ՌԴ բնառեսուրսային կարողությունները, ո՞րն է էներգակիրների դերը ռեսուրսային ներուժի մեջ:
3. Ցույց տվե՞ք ընդերքի ռեսուրսների տեղաբաշխման առանձնահատկությունները, բնութագրե՞ք առավել հարուստ շրջանները, ավազանները, հանքավայրերը:
4. Ինչպիսի՞ն է ՌԴ դերը համաշխարհային տնտեսական համակարգում:
5. Տվե՞ք բնակչության ընդհանուր բնութագիրը, ժողովրդագրական, միջէթնիկական հակասությունների պատճառները:
6. Որո՞նք են ՌԴ տնտեսության զարգացման միտումները:
7. Որո՞նք են հետխորհրդային տարիներին ՌԴ տնտեսական ճգնաժամի պատճառները:
8. Որո՞նք են այն ուղիները, միջոցները, որոնք կարող են ՌԴ տնտեսությունը դուրս հանել ճգնաժամից:
9. Որո՞նք են արդյունաբերության հիմնական ճյուղերը: Նշել նավթագազային արդյունաբերության բացառիկ դերը երկրի տնտեսության մեջ:
10. Որո՞նք են գյուղատնտեսության գլխավոր ճյուղերը, ինչպիսի՞ն են դրանց զարգացման հեռանկարները, որո՞նք են առկա խնդիրները:
11. Բնութագրե՞ք ՌԴ տրանսպորտի դերը երկրի տնտեսության մեջ:
12. Ի՞նչ դեր են կատարում էներգակիրները երկրի տնտեսության մեջ:

ՀԱԿԵԼՎԱԾ

ՈՒՄԱՍՍԱՆԻ ՀԱՅ ՍՓՅՈՒԹԸ (2003 թթ.)^{*}

	Հազար մարդ
1. Մոսկվա քաղաք	500
2. Սանկտ Պետերբուրգ քաղաք	60
3. Կրասնոդարի երկրամաս	800
այդ թվում՝ Կրասնոդար	150
Սոճի	100
Անապա	25
Արմավիր	25
Նովոռոսիյսկ	20
Տուապսե	15
4. Ստավրոպոլի երկրամաս	400
այդ թվում՝ Ստավրոպոլ	15
Պյատիգորսկ	35-40
Կիսլովոդսկ	10
Բուդյոնովսկ	8
Ժելեզնովոդսկ	5
Գեորգիևսկ	5
Եղեսիա	3,6
Միներալնիե Վոդի	2,5
5. Ռոստովի մարզ	135
6. Կալինինգրադի մարզ	60
7. Նովոսիբիրսկի մարզ	45
8. Սարատովի մարզ	20
9. Սվերդլովսկի մարզ	10
10. Օմսկի մարզ	10
11. Օրենբուրգի մարզ	10
12. Հյուսիսային Օսեթիայի հանրապետություն	30
այդ թվում՝ Վլադիկավկազ	20
Մոզդոկ	4
13. Ադիգեյի	25
14. Սախայի (Յակուտիաի) հանրապետություն	8
15. Իվանովոյի մարզ	20 (6)
16. Մուրմանսկ	2,5
17. Կարելիայի հանրապետություն	2

^{*} Ոչ պաշտոնական տվյալներով:

Ըստ «Հայ Սփյուռք հանրագիտարանի», Ե., 2003 թ.:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՐՁԱՆՆԵՐԸ

1. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՐՁԱՆ¹

Դաշնության սուբյեկտ	Մայրաքաղաք կենտրոն	Տարածքը իզ ըլմ	Բնակչութ. իզ մարդ
1. Բրյանսկի մարզ	Բրյանսկ	34,9	1451,0
2. Իվանովյոյի մարզ	Իվանովո	21,8	1282,3
3. Կալուգայի մարզ	Կալուգա	29,9	1087,5
4. Կոստրոմայի մարզ	Կոստրոմա	60,1	786,9
5. Մոսկվայի մարզ	Մոսկվա	47,2	6500,5
6. Յարոսլավլի մարզ	Յարոսլավլ	36,4	1425,1
7. Ոյազանի մարզ	Ոյազան	39,6	89,5
8. Սմոլենսկի մարզ	Սմոլենսկ	49,8	1142,7
9. Վլադիմիրի մարզ	Վլադիմիր	29,0	1617,9
10. Տուլայի մարզ	Տուլա	25,7	1763,4
11. Տվերի մարզ	Տվեր	84,1	1613,5
12. Օրյոլի մարզ	Օրյոլ	24,7	902,5
13. Մոսկվա, դաշնային նշանակության քաղաք ²	-	-	8538,2

2. ՀՅՈՒՄԱՎՈՐԵԿԱՏՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՐՁԱՆ

Դաշնության սուբյեկտ	Մայրաքաղաք կենտրոն	Տարածքը իզ ըլմ	Բնակչութ. իզ մարդ
1. Լենինգրադի մարզ	Սանկտ Պետեր- բուրգ ³	85,9 ⁴	1673,7
2. Նովոռոդի մարզ	Նովոռոդ	55,3	733,9
3. Պսկովի մարզ	Պսկով	55,3	811,1
4. Սանկտ Պետերբուրգ, դաշնային նշանակության քաղաք	-	-	4728,1

3. ՀՅՈՒՄԱՍՅՈՒՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՐՁԱՆ

Դաշնության սուբյեկտ	Մայրաքաղաք	Տարածքը իզ ըլմ	Բնակչութ. իզ մարդ
1. Կարելիայի հանրապետություն	Պետրոգավոդսկ	172,4	785,0
2. Կոմի հանրապետություն	Սիկտիվկար	415,9	1185,5
3. Արխանգելսկի մարզ	Պետրոգավոդսկ	587,4	1478,0
4. Մուրմանսկի մարզ	Մուրմանսկ	144,9	1018,1
5. Վոլոգդայի մարզ	Վոլոգդա	145,7	1328,1
6. Նենեցական ինքնավար օկրուգ ⁵	Նարյան Մար	176,7	45,5

¹ Շատ Ե.Բ.Ջայալովի և Ն.Վ.Ուդիշևայի “Экономическая география в схемах и таблицах” М., 2005:

² 1929 թ. մարզը բաժանվել է քաղաքից:

³ Դաշնության առանձին սուբյեկտ:

⁴ Վերցված է նաև Սանկտ Պետերբուրգի տարածքը

⁵ Ստեղծվել է Արխանգելսկի մարզի մեջ:

4. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՍԵՎԱԴՐՈՂԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Դաշնության սուբյեկտ	Մայրաքաղաք	Տարածքը իզ քկմ	Բնակչութ. իզ մարդ
1. Բելգորոդի մարզ	Բելգորոդ	27,1	1489,5
2. Լիպեցկի մարզ	Լիպեցկ	24,1	1244,9
3. Կուրսկի մարզ	Կուրսկ	29,8	1323,5
4. Վորոնեժի մարզ	Վորոնեժ	52,4	247,10
5. Տամբովի մարզ	Տամբով	34,3	1283,7

5. ՎՈԼԳԱ-ՎՅԱՏԿԱՅԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Դաշնության սուբյեկտ	Մայրաքաղաք, կենտրոն	Տարածքը իզ քկմ	Բնակչութ. իզ մարդ
1. Մարի էլի հանրապետություն	Յոշկար-Օլա	23,2	766,3
2. Մորդովական հանրապետություն	Սարանսկ	26,2	955,8
3. Չուվաշական հանրապետություն	Չերոկսարի	18,3	1360,8
4. Կիրովի մարզ	Կիրով	120,8	1603,2
5. Նիժնի Նովգորոդի մարզ	Նիժնի Նովգորոդ	76,9	3687,7

6. ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Դաշնության սուբյեկտ	Մայրաքաղաք, կենտրոն	Տարածքը իզ քկմ	Բնակչութ. իզ մարդ
1. Ադիգեյայի հանրապետություն	Մայկոպ	7,6	450,5
2. Դաղստանի հանրապետություն	Մախաչկալա	50,3	2097,5
3. Հյուսիսային Օսեթիայի հանրապետություն	Վլադիկավկազ	8,0	662,6
4. Ինգուշեթիայի հանրապետություն	Նազրան	-	299,7
5. Կաբարդինա-Բալկարիայի հանրապետություն	Նալչիկ	12,5	789,9
6. Կարաչայ-Չերկեսական	Չերկեսկ	14,1	436,3
7. Չեչենական հանրապետություն	Գրոզնի		865,1
8. Կրասնոդարի երկրամաս	Կրասնոդար	76	5009,9
9. Ստավրոպոլի երկրամաս	Ստավրոպոլ	66,5	2969,9
10. Ռոստովի մարզ	Դոնի Ռոստով	100,8	4367,9

8. ՊՈԿՈԼՈՒԵԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Դաշնության սուբյեկտ	Մայրաքաղաք կենտրոն	Տարածքը իզ քկմ	Բնակչութ. իզ մարդ
1. Թաթարական հանրապետություն	Կազան	68,0	3760,5
2. Կալմիկական հանրապետություն	Էլիստա	76,1	318,5
3. Աստրախանի մարզ	Աստրախան	44,1	1019,5
4. Պենզայի մարզ	Պենզա	43,2	1541,8
6. Սամարայի մարզ	Սամարա	53,6	3305,3
7. Սարատովի մարզ ¹	Սարատով	100,2	2719,0
8. Ուլյանովսկի մարզ	Ուլյանովսկ	37,3	1472,1

9. ՈՒՐԱԼԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Դաշնության սուբյեկտ	Մայրաքաղաք կենտրոն	Տարածքը իզ քկմ	Բնակչութ. իզ մարդ
1. Բաշկորկստանի հանրապետություն	Ուֆա	143,6	4096,6
2. Ուլմուրտիայի	Իժևսկ	42,1	1639,1
3. Կուրգանի մարզ	Կուրգան	71,0	1102,1
4. Չելյաբինսկի մարզ	Չելյաբինսկ	87,9	3678,1
5. Պերմի մարզ	Պերմ	160,6	2969,7
6. Սվերդլովսկի մարզ	Եկատերինբուրգ	194,8	4631,0
7. Օրենբուրգի մարզ	Օրենբուրգ	124,0	2225,5
8. Կոմի Պերմյակներին հնքնավար օկրուգ	Կուդինկար	32,9 ¹	151,4 ²

10. ԱՐԵՎՍՏՅԱՆ ՍԻԲԻՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Դաշնության սուբյեկտ	Մայրաքաղաք, կենտրոն	Տարածքը իզ քկմ	Բնակչութ. իզ մարդ
1. Ալթայի հանրապետություն	Գոռնո-Ալտայսկ	92,6	201,6
2. Ալթայի երկրամաս	Բառնաուլ	169,1	2664,8
3. Կեմերովոյի մարզ	Կեմերեվո	95,5	3002,1
4. Նովոսիբիրսկի մարզ	Նովոսիբիրսկ	178,2	2748,2
5. Տյումենի մարզ 2,3	Տյումեն	1435,2	3243,5
6. Տոմսկի մարզ	Տոմսկ	316,9	1072,2
7. Օսմկի մարզ	Օմսկ	139,7	2179,7
8. Յամալո-Նենեցական հնքնավար օկրուգ ³	Սալեխարդ	750,3	506,8
9. Խանտի Մանսիների օկրուգ ⁴	Խանտի Մանսիյսկ	523,1	1383,5

¹ Ստնում է Պերմի մարզի կազմի մեջ:

² Ստնում է Տյումենի մարզի կազմի մեջ:

³, ⁴ Ստնում է Տյումենի մարզի կազմի մեջ:

11. ԱՐԵՎԵԼՅԱՆ ՍԻՔԻՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Դաշնության սուբյեկտ	Մայրաքաղաք	Տարածքը իզ քվմ	Բնակչութ. իզ մարդ
1. Բուրյաթիայի հանրապետություն	Ուլան-Ուդե	351,3	1052,5
2. Խակասիայի հանրապետություն	Աբական	61,9	585,8
3. Տուվայի հանրապետություն	Կիզիլ	170,5	309,7
4. Կրասնոյարսկի երկրամաս	Կրասնոյարսկ	2339,0	3075,6
5. Իրկուտսկի մարզ	Իրկուտսկ	767,9	2758,2
6. Չիտայի մարզ	Չիտա	431,5	1265,5
7. Թայմիրի (Ղուգանո-Նենցական ինքնավար օկրուգ) ¹	Ղուդինկա	862,1	44,3
8. Էվենական ինքնավար օկրուգ ²	Տուրա	767,6	19,4
9. Ուստ-Օրդինսկի ինքնավար օկրուգ ³	Ուստ-Օրդինսկ	22,4	143,2
10. Ազինսկոյեի Բուրյաթական ինքնավար օկրուգ ⁴	Ազինսկ	19	79,1

12. ՀԵՌԱՎՈՐ ԱՐԵՎԵԼԹԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Դաշնության սուբյեկտ	Մայրաքաղաք կենտրոն	Տարածքը իզ քվմ	Բնակչութ. իզ մարդ
1. Սախայի (Յակուտիա) հանրապետություն	Յակուտսկ	3103,2	1022,8
2. Խաբարովսկի երկրամաս	Խաբարովսկ	788,6	1523,3
3. Պրիմորիեյի երկրամաս	Վլադիվոստոկ	165,9	2194,6
4. Ամուրի մարզ	Բլազովեչենսկ	363,7	1007,7
5. Կամչատկայի մարզ	Կամչատկայի Պետրոպոլիսկ	472,3	396,1
6. Մագադանի մարզ	Մագադան	461,4	246,1
7. Սախալինի մարզ	Յուժնո Սախալինսկ	87,1	246,1
8. Կորյակական ինքնավար օկրուգ	Պալանա	301,5	30,8
9. Չուկոտական ինքնավար օկրուգ	Անադիր	737,7	83,1
10. Հրեական ինքնավար մարզ	Բիրոբիջան	36	200,9

¹, ², մտնում է Կրասնոյարսկի երկրամասի կազմի մեջ:

³ մտնում է Իրկուտսկի մարզի կազմի մեջ:

⁴ մտնում է Չիտայի մարզի կազմի մեջ:

1. Баранский Н.Н., Избранные труды. Становление Советской экономической географии. М. 1980.
2. Брук С.И. Население мира. Этнодемографический справочник. М. 1986.
3. Горчикова И.Н., Международные организации. М. 2002.
4. Ломакин В.К., Мировая экономика. М. 2003.
5. Малая энциклопедия городов. М. 2001.
6. Машбиц Я.Г., Новые рубежи страноведения. В. Сб. статей "Проблемное страноведение и мировое развитие", Смоленск, 1998.
7. Мироненко Н.С., Страноведение, теория и методы. М. 2001.
8. Петрова Н.Н., География. Современный мир. М. 2005.
9. Погорелцкий А.И., Экономика зарубежных стран, М. 2001.
10. Социально-экономическая география зарубежного мира. Под. ред. В.В.Вольского, М. 2001.
11. Экономическая и социальная география. Основы науки. М. 2004.
12. www.cia.gov/cia/publications/factbook/countryeistinghtml.



Նկ. 1. Սիրիա, Բեսաբի հայկական եկեղեցի



Նկ.2. Հալեպցի տղա



Նկ.3. Իմանի մզկիթը Սպահան քաղաքում



Նկ. 4. Դուբայ: Օղակաձև ճանապարհ



Նկ.5. Բանգլադեշիներ



Նկ.6. Մյանմացիներ



Նկ.7. Հնդիկ աղջիկներ



Նկ.8. Յանգոն, Ոսկե մեխյանը



Նկ.9. Երկնաքերներ Էմիրություններում



Նկ.10. Բրունեյ, Օմար Ալի Սաիֆուդինի մզկիթը



Նկ.11. Բանգկոկ թագավորական պալատ



Նկ.12. Ճապոնական այգի




Նկ.13. Տեսարան Տոկիոյից




Նկ.14. Աստանա



Նկ.15. Թուրքմեն երիտասարդը



Նկ.16. Ամենափրկիչ Քրիստոսի Տաճարը Մոսկվայում:
Կառուցվել է 1837-1883 թ.թ.: 1931թ. տաճարը քանդվել է,
1994-1999 թ.թ.-ին նորից վերակառուցվել է:



Նկ.17. Մոսկվա, Վասիլի Երանելիի տաճարը

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան	3
Գլուխ I	
Ասիայի ընդհանուր բնութագիրը	6
1. Քաղաքական քարտեզի ծեփորումը	6
2. Քաղաքակրթությունները	8
3. Միջազգային տնտեսական կազմակերպությունները	9
Գլուխ II	
Ասիայի տնտեսության ընդհանուր բնութագիրը	17
1. Տնտեսության զարգացման նախադրյալները	17
2. Տնտեսության հենքային ճյուղերի բնութագիրը	28
Գլուխ III	
Տարածաշրջանները և պետությունները	38
1. Հարավարևմտյան Ասիայի ընդհանուր բնութագիրը	39
Թուրքիա	60
Իրան	72
Իսրայել	82
Սիրիա	89
Ադրբեջան	98
Վրաստան	103
2. Հարավային Ասիա: Տնտեսության ընդհանուր բնութագիրը	112
Հնդկաստան	126
Պակիստան	143
3. Հարավարևելյան Ասիա: Տնտեսության ընդհանուր բնութագիրը	149
Ինդոնեզիա	162
Մալայզիա	173
Վիետնամ	179
4. Արևելյան Ասիա: Տնտեսության ընդհանուր բնութագիրը	187
Չինաստան	200
Ճապոնիա	219
Կորեայի հանրապետություն (Հարավային Կորեա)	231

5. Կենտրոնական Ասիա: Տնտեսության ընդհանուր բնութագիրը.....	237
Ղազախստան.....	246
Ուզբեկստան	256
6. Ռուսաստանի Դաշնություն: Տնտեսության ընդհանուր բնութագիրը	262
Ներքին տարբերությունները (տնտեսական շրջանները).....	284
Հավելված.....	307
Գրականության ցանկ.....	312

ԱՎԱԳՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ ՌՈՍՏՈՄԻ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍ II


ԱՍԻԱ

Հրատ. խմբագիր՝	Հ.Բ. Պետրոսյան
Տեխ. խմբագիր՝	Վ.Ջ. Բդոյան
Համակարգչային ձևավորող՝	Լ.Բ. Մելիքյան

Ստորագրված է տպագրության 20.10. 2009 թ.:
Դափսը՝ 60x84¹/₁₆ : Թուղթը՝ օֆսեթ: Հրատ. 17.6 մամուլ,
տպագր. 19.75 մամուլ +8 էջ ներդիր, պայմ. 18.4 մամուլ:
Տպաքանակ՝ 300: Պատվեր՝ 144:

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1:

Երևանի պետական համալսարանի
օպերատիվ պոլիգրաֆիայի ստորաբաժանում
Երևան, Ալ. Մանուկյան 1:



Աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա.Ռ. Ավագյանը ծնվել է 1942 թ. Իրանի Արակ քաղաքում: 1946 թ. վերադարձել է հայրենիք: 1960 թ. ավարտել է Արտաշատ քաղաքի թիվ 2 միջնակարգ դպրոցը: 1961 թ. ընդունվել և 1966 թ. ավարտել է ԵՊՀ աշխարհագրության ֆակուլտետը:

Աշխատել է ՀՀ երկրաբանական վարչությունում, որպես գեոմորֆոլոգ: 1969թ.-ից մինչ օրս աշխատում է ԵՊՀ սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնում:

1975 թ. ստացել է թեկնածուի գիտական աստիճան, 1982 թ.-ին՝ դոցենտի կոչում, 2001 թ. ստացել է դոկտորի գիտական աստիճան, 2007թ.-ին՝ պրոֆեսորի կոչում, 2006 թ.-ից սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի վարիչն է:

Հեղինակ է դպրոցական աշխարհագրության չորս դասագրքերի (7-րդ, 8-րդ դասարաններ): Նրա գրչին են պատկանում «Ռեգիոնալ աշխարհագրություն, մաս I, Եվրոպա», «Արտասահմանյան երկրների սոցիալ-տնտեսական աշխարհագրություն, մաս II, Ասիա» բուհական դասագրքերը, «ՀՀ ընդերքի ռեսուրսների աշխարհագրական գնահատականը» և մի շարք այլ մենագրություններ, շուրջ չորս տասնյակ գիտական հոդվածներ:

Գիտական աշխատանքների զգալի մասը վերաբերում է բնական ռեսուրսների գնահատման, բնօգտագործման ու բնապահպանության, աշխարհագրական գիտության հումանիզացման հիմնահարցերին: